

Գ.Ա.ԲԱԼԻՍՅԱՆ

ԹՈՒՐ-ՀՈՂԱԿԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԷ

1908-1914 թթ.



Գ. Ս. ԲԻԼԻՄՉՅԱՆ

ԹՈՒՐԹ-ՀՈՒՆԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1908—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



Խ մ բ ա գ ի ռ՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ**,  
Գ ռ ա խ ո ս՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐՅԱՆ**.

**Քիլիմջյան Գ. Ս.**

**Ք534** Թուրք-հունական հարաբերությունները 1908—1914 թվականներին / (Խմբ.՝ **Հ. Գ. Ինճիկյան**), Երևանի պետ. համալս.— Եր.: Երևանի համալս հրատ., 1988, 208 էջ.  
Վերնախորագր.՝ Երևանի պետ. համալս.:

Գրքում քննարկվում են թուրք-հունական հարաբերությունները առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ կապված Կրետե կղզու, թուրքական տիրապետության տակ գտնվող հունական մարզերի, Էգեյան ծովի կղզիների, ինչպես նաև բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելքի հետ: Զգալի տեղ է հատկացված Բալկաններում և արևելյան միջերկրածովյան շրջանում իմպերիալիստական տերությունների, հատկապես Օսմանյան կայսրության վարած նվաճողական քաղաքականության բացահայտմանը:

050000000  
Բ  $\frac{\quad}{704 (02) - 88}$  61—88

ԳՍԴ 63.3(0)53:

КИЛИМДЖЯН ГЕВОРК СТЕПАНОВИЧ  
ТУРЕЦКО-ГРЕЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ В  
1908—1914 гг.

(на армянском языке)  
Издательство Ереванского университета  
Ереван—1988



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան կայսրությունը 20-րդ դար թևակոխեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամով: Առանձնապես ծանր էր նրա ներքաղաքական վիճակը: Ֆեոդալամիապետական, բռնակալական այս կայսրության փլուզման ընթացքն հատկապես արագացավ 19-րդ դ. 70-ական թվականներին՝ թուրքական գերիշխանության տակ հեծող բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի և 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով, երբ թուրքական տիրապետությունը իրավական և փաստական առումով տապալվեց Բալկանյան թերակղզու մի շարք երկրներում: Ռուսական զենքի հաղթանակների շնորհիվ Թուրքիան հարկադրվեց ճանաչել նախկին վասալական իշխանություններ Սերբիայի, Չեռնոգորիայի և Ռումինիայի, որպես ազգային ինքնուրույն պետությունների, քաղաքական անկախությունը: Բալկանյան լեռնաշղթայից հյուսիս կազմավորվեց բուլղարական ինքնավար իշխանությունը, որի հետ 1885 թ. միավորվեց Արևելյան Ռումելին: 1881 թ. մայիսի 24-ին Կ. Պոլսում կնքված կոնվենցիայով Հունաստանին անցավ թուրքական տիրապետության տակ գտնվող հունական հողերից Թեսալիայի սոսկ մի մասը և Էպիրոսի Արտայի շրջանը՝ 13,2 հազար քառ. կմ. ընդհանուր տարածությամբ և 300 հազար բնակչությամբ: Այդպիսով, 19-րդ դ. 70—80-ական թթ. հարավ-արևելյան Եվրոպայում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքով թուլացավ թուրքական գերիշխանությունը: 20-րդ դարի սկզբին, 1905—1907 թթ. ռուսական հեղափոխության անմիջական ազդեցությամբ, ազգային-ազատագրական, հեղափոխական պայքարը աննախընթաց վերելք ապրեց դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող Ալբանիայում, Էպիրոսում, Թեսալիայում, Կրետեում,



Էգեյան ծովի մի շարք կղզիներում և առանձնապես՝ Մակեդոնիայում, որտեղ դասակարգային ճնշումը կրում էր ազգային ու կրոնական բնույթ. «Մակեդոնիայում կալվածատերերը թուրքեր և մահմեդականներ են,— գրում է Վ. Ի. Լենինը,— իսկ գյուղացիները— սլավոններ ու քրիստոնյաներ: Այդ պատճառով էլ դասակարգային հակասությունները սրվում են կրոնական ու ազգային հակասություններով»<sup>1</sup>:

Կայսրության հետագա անկումը և քայքայումը կասեցնելու նպատակով երիտասարդ թուրքերը, որոնք արտահայտում էին լիբերալ հողատերերի և նոր զարգացող թուրքական ազգային բուրժուազիայի շահերը, հենվելով բանակային ուժերի վրա, 1908 թ. հուլիսին սուլթան Աբդուլ Համիդին ստիպեցին վերականգնել 1876 թ. սահմանադրությունը: Այս իրադարձությունը, որ հայտնի է երիտթուրքական հեղափոխություն անունով, կոչված էր բեկում մտցնելու կայսրության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Սակայն այդ հեղափոխությունը Վ. Ի. Լենինի բնութագրմամբ կես հաղթություն էր կամ նույնիսկ հաղթության մի փոքր մասն էր<sup>2</sup>: Վերլուծելով XX դարի հեղափոխությունները՝ Վ. Ի. Լենինը ընդգծում է, որ ո՛չ պորտուգալական և ո՛չ էլ թուրքական հեղափոխությունները «ժողովրդական» չեն, որովհետև ժողովրդի մասսան, նրա վիթխարի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելիորեն հանդես չի գալիս այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ»<sup>3</sup>: 1908 թ. թուրքական «հեղափոխության» խնդիրները խիստ սահմանափակ էին և դուրս չէին գալիս 1876 թ. օսմանյան հակադեմոկրատական սահմանադրության վերականգնման և մի շարք այլ քաղաքական չափավոր միջոցառումների շրջանակներից:

Երիտթուրքերի քաղաքական գործունեության դասակարգային սահմանափակվածությունը և նրանց բարեփոխումների խիստ չափավոր բնույթը հետևանք էր թուրքական ազգային բուրժուազիայի քաղաքական ու տնտեսական հետամնացության և թուլության: Անցնելով իշխանության գլուխ՝ երիտթուրքերը չլուծեցին ոչ միայն բուրժուադեմոկրատական բնույ-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 22, էջ 226:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 17, էջ 211:

<sup>3</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 33, էջ 49—50:



թի, այլև՝ հակաֆեոդալական ու հակաիմպերիալիստական պայքարի խնդիրները: Ընդհակառակը, արտահայտելով նաև թուրքական բոլոր շահագործող ու տիրապետող դասակարգերի և արտոնյալ դասերի ջահերն ու ձգտումները, երիտթուրքերը փոխհամաձայնության եկան միապետական, ֆեոդալակղերական տարրերի հետ՝ համայն կայսրության մեջ ուժեղացնելով դասակարգային ճնշումը, դաժանորեն հետապնդելով համադեմոկրատական ու ազգային-ազատագրական շարժումները:

Կայսրության նոր ղեկավարների քաղաքական սահմանափակությունը արտահայտող ամենաարտառոց փաստերից է այն, որ օսմանյան համակայսերական պառլամենտի հնգամսյա նստաշրջանում (17. 12. 1908—13. 4. 1909) «հեղափոխական» երիտթուրքական կուսակցությունը չլուծեց պետության ներքին կյանքում կուտակված բազմաթիվ պրոբլեմներից և ոչ մեկը, չընդունեց համապետական բնույթի ոչ մի օրենք<sup>4</sup>: Բուլղարիայի «Պրավդան» վերլուծելով երիտթուրքերի հակաժողովրդական, հակահեղափոխական էությունը, նշում է, որ նրանք դրսևորեցին լիբերալ բուրժուազիայի բոլոր արատներն ու թուլությունները և, մյուս կողմից, իշխանության գլուխ գտնվող ռազմասպայական կաստայի ամբողջ բռնապետությունը<sup>5</sup>:

Հաստատելով իրենց բռնապետությունը՝ երիտթուրքերը բոլոր հիմնական հարցերում շարունակեցին Աբդուլ Համիդ II-ի քաղաքականությունը և նույնիսկ գերազանցեցին ոճրագործ բռնապետին, գործի դնելով նրա մեթոդները, նրա մարդկանց և հին չինովնիկական ապարատը<sup>6</sup>:

Երիտթուրքերը գերակշիռ մեծամասնությամբ համիդյան դարաշրջանի օսմանիզմի և պանիսլամիզմի հետադիմական, շովինիստական գաղափարախոսությունների մոլեռանդ կողմնակիցներ էին: Օսմանիզմի տեսությամբ երիտթուրքերը հետապնդում էին կայսրության կազմի մեջ մտնող բոլոր ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման, նրանց ազգային զարգացումը կասեցնելու և խեղդելու շովինիստական նպատակներ:

<sup>4</sup> См. В. И. Шилькова, Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977, էջ 206:

<sup>5</sup> См. «Правда», 27 июля 1912 г., № 76:

<sup>6</sup> См. О. Г. Инджикян, К оценке младотурецкого движения, «Արևելագիտության ժողովածու», հ. 2, Երևան, 1964, էջ 228:



Պանիսլամիզմը նախատեսում էր Թուրքիայի գերիշխանությամբ Օսմանյան կայսրության մեջ միավորել Արևելքի իսլամական երկրները, ճնշել ոչ թուրք մահմեդական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Պանիսլամիզմը, որոշակի առումով, երիտթուրքերի արտաքին քաղաքականության մեջ կրում էր նաև շեշտված հակառուսական ուղղվածություն՝ դրսևորելով ագրեսիվ զավթողական նպատակներ Ռուսաստանի կազմի մեջ մտնող մահմեդական երկրների նկատմամբ:

Օսմանիզմը և պանիսլամիզմը, որպես երիտթուրքերի պաշտոնական գաղափարախոսություններ, գոյատևեցին մինչև 1911—1912 թթ. իտալա-թուրքական և բալկանյան պատերազմները, որոնք լիովին ապացուցեցին այդ ուսմունքների անանկությունը և հակապատմական, հետադիմական էությունը:

Լիակատար պարտություն կրելով այդ գաղափարախոսությունների իրականացման ճանապարհին՝ 1912 թ. սկսած թուրքական ազգայնական բուրժուազիան առաջ քաշեց թուրքիզմի, պանթուրքիզմի, պանթուրանիզմի և մասամբ պանիսլամիզմի նույնքան շովինիստական հետադիմական ուսմունքները՝ հետապնդելով Թուրքիայի գերիշխանությամբ բոլոր թուրքալեզու ժողովուրդներին քաղաքականապես միավորելու նպատակը:

Երիտթուրքերի դավանած օսմանիզմի և պանիսլամիզմի հետադիմական, շովինիստական գաղափարախոսությամբ է բացատրվում կայսրության մեջ բնակվող տեղաբնիկ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ դաժան հալածանքները, ջարդերը, զանգվածային բռնագաղթերն ու արտաքսումները և արևմտահայության ցեղասպանության ոճրաժին քաղաքականությունը: Բոլշևիկյան «Պրավդան» երիտթուրքերին բնութագրում է որպես «ամենաթունոտ սևհարյուրակային ազգայնամոլությամբ և գթազուրկ բուրժուական եսասիրությամբ» ներժժված գործիչների<sup>7</sup>: Օսմանյան կայսրության մեջ սլավոնների, հայերի, հրեաների, հույների և այլոց թուրքացնելու նրանց ձգտումը, — գրում է «Պրավդան», — ընդունեց ավելի կոպիտ ու համառ բնույթ, քան՝ Աբդուլ Համիդի ժամանակ<sup>8</sup>:

Երիտթուրքերի հետադիմական, ազգայնական գաղափարախոսությունները խորապես բացահայտված ու վերլուծված են

<sup>7</sup> «Правда», 27 июля 1912 г., № 76.

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում:



սովետական պատմաբաններ Ռ. Հ. Սիմոնյանի<sup>9</sup>, Է. Յու. Հասանովայի<sup>10</sup>, Յու. Ա. Պետրոսյանի<sup>11</sup>, Հ. Զ. Ալինի<sup>12</sup>, Վ. Ի. Շախկովայի<sup>13</sup>, Ա. Ա. Կոլեսնիկովի<sup>14</sup>, Ի. Լ. Ֆադեևայի<sup>15</sup>, Ռ. Ա. Սաֆրաստյանի<sup>16</sup> և այլ ուսումնասիրողների արժեքավոր աշխատություններում, որոնք լայն հնարավորություններ են ընձեռում ըստ ամենայնի հասկանալու և պարզաբանելու նրանց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ամբողջ համակարգը, մասնավորապես՝ կայսրության նախկին տարածքային ամբողջականությունը վերականգնելու և ամրապնդելու՝ երիտթուրքերի ամենահիմնական ձգտումներից մեկը, որը պանիսլամիզմի գործնական կիրառումն էր արտաքին քաղաքականության մեջ: Նրանց արտաքին քաղաքականության զավթողական նպատակներն ու ծրագրերը ներքին հետադիմական քաղաքականության անմիջական ու տրամաբանական հետևանքն ու շարունակությունն էին: Այդ ծրագրերի իրականացման համար նրանք կողմնորոշվեցին դեպի կալզերական Գերմանիան, որի համաշխարհային իմպերիալիստական նպատակները համընկնում էին երիտթուրքերի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներին ու շահերին:

Երիտթուրքական կառավարության վարած արտաքին քաղաքականության հարցերը սովետական պատմագրության մեջ ուսումնասիրված են բավականին հանգամանորեն: Սակայն հե-

<sup>9</sup> Տե՛ս Սիմոնյան Հ. Ռ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986:

<sup>10</sup> Տե՛ս Զ. Յու. Гасанова, Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908—1914), Баку, 1966:

<sup>11</sup> Տե՛ս Յու. А. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX—начало XX в.), М., 1971:

<sup>12</sup> Տե՛ս Գ. Յու. Алиев, Турция в период правления младотурок (1908—1918 гг.), М., 1972:

<sup>13</sup> Տե՛ս Բ. И. Шпилькова, Младотурецкая революция 1908—1909 гг., М., 1977:

<sup>14</sup> Տե՛ս А. А. Колесников, Народные дома в общественно-политической и культурной жизни турецкой республики, М., 1984:

<sup>15</sup> Տե՛ս И. Л. Фадеева, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (Османизм-панисламизм) XIX—начало XX в., М., 1985:

<sup>16</sup> Տե՛ս Р. А. Сафрастян, Доктрина османизма в политической жизни Османской империи (50—70 гг. XIX в.), Ереван, 1985:



տագնատողների ուշադրությունից համարյա դուրս է մնացել թուրք-հունական հարաբերությունների բնագավառը, որը մինչև առաջին համաշխարհային պատերազմը Հունաստանի և Օսմանյան կայսրության միջպետական հարաբերությունների, ինչպես նաև իմպերիալիստական տերությունների մերձավորարևելյան քաղաքականության կարևոր բնագավառներից մեկն է: Հետևաբար, սույն թեմայի լուսաբանումը կարող է ունենալ որոշակի գիտական հետաքրքրություն:

Միաժամանակ փորձ է արվում ցույց տալ երիտթուրքերի վարած արտաքին քաղաքականության որոշակիորեն ինքնուրույն, անկախ բնույթը, կայսրության նախկին ամբողջականությունը վերականգնելու և պանթուրքական կայսրություն ստեղծելու նրանց նվաճողական քաղաքականությունը, բացահայտել իմպերիալիստական տերությունների վարած քաղաքականությունը Արևելյան Միջերկրականում, նրանց ազդեցությունը փոքր և թույլ զարգացած պետությունների արտաքին քաղաքականության վրա, ազդեցություն, որն, անշուշտ, որոշակի դեր էր խաղում տվյալ երկրի պատմական զարգացման ընթացքում:

1908—1914 թվականների թուրք-հունական հարաբերությունների ուսումնասիրությունը հրատապ է ու արդիական նաև այն առումով, որ ժամանակակից Թուրքիայի կառավարող շրջանները, հենվելով իրենց անցյալի նվաճողական ավանդույթների և իմպերիալիստական տերությունների աջակցության վրա, հավակնություններ են ներկայացնում էգեյան ծովի մի շարք կղզիների նկատմամբ և զավթել են Կիպրոսի հանրապետության զգալի մասը:

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը թուրքական լծի դեմ ժամանակին ամենալայն ուշադրության է արժանացել Մարքսի, Էնգելսի, Լենինի կողմից: Նրանք մեծ ուշադրությամբ են հետևել Մերձավոր Արևելքում տերությունների քաղաքական հակասություններին, Օսմանյան կայսրությունը բաժանելու, նեղուցներում և Բալկաններում հաստատվելու համար նրանց միջև կատաղի պայքարին: Այսպես կոչված «Արևելյան հարցի» համակողմանի լուսաբանման են նվիրված Մարքսի ու Էնգելսի բազմաթիվ հոդվածները: Էնգելսի «Իրական վիճելի կետ Թուրքիայում»<sup>17</sup>, «Թուրքական

<sup>17</sup> *ՅՄ՝* К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, кн. 11—15:



հարցը»<sup>18</sup>, «Ի՞նչ է սպասում Եվրոպական Թուրքիային»<sup>19</sup> և այլ հոդվածներում վերլուծված է Մերձավոր Արևելքում և Բալկաններում պատմականորեն ստեղծված իրավիճակը, բացահայտված են եվրոպական տերությունների միջև սրված պայքարի տնտեսական, քաղաքական և ռազմական պատճառները՝ դրանք սերտորեն առնչելով բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հետ: Խնդրո առարկա հարցին մոտենալով հեղափոխության շահերի դիրքերից՝ Մարքսն ու Էնգելսը ողջունում էին օսմանյան լծի տակ տառապող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը՝ հանդես գալով որպես անկախ պետությունների կազմավորման ամենաջերմ կողմնակիցներ:

Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի խնդիրներին մեծ ուշադրություն է դարձրել Վ. Ի. Լենինը՝ «Համաշխարհային պատմության նոր գլուխը»<sup>20</sup>, «Սերբ-բուղարական հաղթանակների սոցիալական նշանակությունը»<sup>21</sup>, «Բալկանյան պատերազմը և բուրժուական շովինիզմը»<sup>22</sup> և այլ հոդվածներում նա խորապես բացահայտել է բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի սոցիալտնտեսական ու քաղաքական պատճառները, ցույց տվել նրանց հաղթանակների համաշխարհային-պատմական նշանակությունը:

Թուրք-հունական հարաբերությունները սովետական պատմագրության մեջ սովորաբար քննարկվել են 1912—13 թթ. բալկանյան պատերազմների ռազմաքաղաքական իրադարձությունների և եվրոպական տերությունների դիվանագիտության ընդհանուր ֆոնի վրա<sup>23</sup>: Ուստի համեմատաբար նեղ շրջա-

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 20—26:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 31—36:

<sup>20</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 22, էջ 188—189:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 225—227:

<sup>22</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 23, էջ 44—45:

<sup>23</sup> Տե՛ս А. А. Могилевич, М. Э. Айрапетян, На путях к мировой войне 1914—1918 гг., Л., 1940, И. С. Галкин, Образование балканского союза 1912 г. и политика европейских держав, «Вестник МГУ», сер. общ. наук, № 4, М., 1956, В. А. Жебокрицкий, Болгария накануне балканских войн. 1912—1913 гг., Киев, 1960, В. А. Жебокрицкий, Болгария во время балканских войн 1912—1913 гг., Киев, 1961.



նակներում են քննարկված այն հարցերը, որոնք ընդհանրապես վերաբերում են Օսմանյան կայսրության և Հունաստանի նախապատերազմյան տարիների փոխհարաբերությունների ամբողջ համակարգին:

XX դ. սկզբի Թուրքիայի արտաքին քաղաքականությունը սովետական պատմաբանները ընդհանուր առմամբ քննարկել են Օսմանյան կայսրության և եվրոպական տերությունների ռազմաքաղաքական ու տնտեսական հարաբերությունների առնչությամբ<sup>24</sup>:

Առանձին ուսումնասիրություններ միայն նվիրված են երիտթուրքերի արտաքին քաղաքականության կոնկրետ որևէ հարցի կամ բնագավառի հետազոտմանը<sup>25</sup>: Երիտթուրքերի բալկանյան քաղաքականության ուսումնասիրման գործում նըշանակալի ավանդ ունի սովետական ականավոր պատմաբան պրոֆ. Ի. Ս. Գալկինը՝ 1908—1912 թթ. հույն-թուրքական հարաբերություններին անդրադառնալով Կրետե կղզում ծավալված ազգային-ազատագրական պայքարի և իմպերիալիս-

История дипломатии, т. II, гл. XX. Автор тома В. М. Хвостов, М., 1963, П. В. Жогов, Дипломатия Германии и Австро-Венгрии и первая Балканская война 1912—1913 гг., М., 1969, М. В. Кирсенко, Роль Греции в образовании балканского союза 1912 г., «Советское славяноведение», № 3, М., 1973, Ю. А. Писарев, Великие державы и Балканы накануне первой мировой войны, М., 1985:

<sup>24</sup> Տե՛ս Գ. Ի. Нотович, Дипломатическая борьба в годы первой мировой войны, т. I, М.-Л., 1947, Ю. А. Боев, Ближний Восток во внешней политике Франции (1898—1914 гг.). Очерки истории дипломатической борьбы Франции за Ближний Восток, Киев, 1964, А. С. Аветян, Германский империализм на Ближнем Востоке. Колониальная политика германского империализма и миссия Лимана фон Сандерса, М., 1966, Е. Ф. Лудшувейт, Турция в годы первой мировой войны. 1914—1918 гг., М., 1966, З. П. Яхимович, Итало-Турецкая война 1911—1912. М., 1967, А. С. Силин, Экспансия германского империализма на Ближнем Востоке накануне первой мировой войны (1908—1914), М., 1976:

<sup>25</sup> Վ. Ա. Բալթուրդյան, Թուրք-իրանական հարաբերությունները (1900—1914 թ.թ.), Երևան, 1974, Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, 1914—1918, Երևան, 1964, Ա. Ս. Համբարյան, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908—1914 թ.թ.), Եր., 1979, Զ. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.—1914 թ.), Գիրքառաջին, Եր., 1982:



տական տերությունների քաղաքականության առնչությամբ<sup>26</sup>։ Աշխատությունը հիմնականում գրված է Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվային չիրապարակված փաստաթղթերի հիման վրա, որի հետևանքով խորապես պարզաբանված է կրետական հարցի շուրջ երիտթուրքերի և իմպերիալիստական տերությունների վարած քաղաքականությունը, բացահայտված են նրանց ռազմաքաղաքական շահերն ու հակասությունները։ Գալիկիոյ ցույց է տվել, որ Արևելյան Միջերկրականում՝ կրետական հարցի շուրջ իմպերիալիստական տերությունների պայքարը սերտորեն կապված էր Մերձավոր Արևելքում նրանց վարած գաղթողական քաղաքականության հետ։

Թուրքական պատմագրության մեջ 1908—1914 թթ. թուրքահունական հարաբերությունները լուսաբանված են խիստ մակերեսորեն։ Միայն ժամանակակից թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմեթ Բալուրի «Թուրքական հեղափոխության պատմությունը»<sup>27</sup> ծավալուն աշխատության մեջ են տվյալ ժամանակաշրջանի առավել կարևոր հանգամանքներն ու պատմությունը շարադրված հանգամանորեն։ Ուսումնասիրությունը հետաքրքրական է այն առումով, որ նա օգտագործել է Թուրքիայի պետական արխիվում պահպանվող և չիրապարակված մեծ թվով փաստաթղթեր, ինչպես նաև՝ քննարկվող շրջանի թուրք պետական ու հասարակական գործիչների հուշերը։

Օգտագործել ենք նաև այլ պատմաբանների աշխատություններ<sup>28</sup>, որոնցում նրանք բալկանյան երկրների, այդ թվ-

<sup>26</sup> См. И. С. Галкин, Дипломатия европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905—1912 гг., М., 1960:

<sup>27</sup> См. Y. H. Bayur, Türk inkılâbı tarihi, cilt 1—2 (kısm 1—3), İstanbul—Ankara, 1940—1951:

<sup>28</sup> См. Hâmit ve Muhsin, Türkiye tarihi, İstanbul, 1930, М. Bağır, İttihad ve Terakki tarihinde esrar perdesi, İstanbul, 1934, Y. Nabi, Balkanlar ve türklük, Ankara, 1936, М. К. Inal, Osmanlı devrinde son sadrîâzamlar, İstanbul, cilt XII, 1951, A. B. Kuran, Inkılâp tarihimiz ve “Jön Türkler”. İstanbul, 1945, A. B. Kuran, Osmanlı imparatorluğunda inkılâp hareketleri ve milli mücadele, İstanbul, 1956, T. Ünal, 1700-den 1958-e kadar türk siyasi tarihi, Ankara, 1958. I. H. Danismend, İzahlı Osmanlı tarihi kronolojisi, cilt 4, İstanbul, 1961, Yılmaz Öztuna, Türkiye tarihi, cilt 12, İstanbul, 1967:



վում նաև Հունաստանի հանդեպ երիտթուրքերի վարած քաղաքականության վերաբերյալ հանդես են բերում սուբյեկտիվ մոտեցում: Քննադատելով երիտթուրքերի արտաքին քաղաքականության տակտիկան թուրք-հունական և ընդհանրապես բալկանյան երկրների հանդեպ՝ թուրք պատմաբանները պաշտպանում են ու արդարացնում նվաճված ժողովուրդներին Օսմանյան կայսրության կազմում պահելու ու կեղեքելու երիտթուրքերի ռեակցիոն-շովինիստական տեսակետը: Այսպիսով, ազգային հարցում նրանց ըմբռնումը չի տարբերվում երիտթուրքերի մոլի ազգայնական տեսակետից: Վերջիններս քննադատվում են լոկ այնքանով, որքանով նրանք չկարողացան պահպանել այն հսկայական բազմազգ կայսրությունը, որը ժառանգել էին Աբդուլ Համիդից:

Երկրորդ բալկանյան պատերազմի և նրան հաջորդած շրջանի թուրք-հունական հարաբերությունների ուսումնասիրման համար առանձնահատուկ նշանակություն ունեն 1913—1916 թթ. Օսմանյան կայսրության Աթենքի դեսպանորդ Գալիբ Զեմալի բեյի «Հուշերը»<sup>29</sup>: Դրանցում հրապարակված են մեծ թվով փաստաթղթեր, որոնք վերաբերում են Թուրքիայի արտաքին գործերի մինիստրության հետ դեսպանի գաղտնի դիվանագիտական գրագրությանը: Հարցի լուսաբանման կարևոր սկզբնաղբյուրներից են երիտթուրքական կուսակցության պարագլուխներից մեկի՝ «Եռապետության» անդամ Ջեմալ փաշայի «Հուշերը»<sup>30</sup>: Չնայած դրանք կրում են խիստ միտումնավոր բնույթ և նենգափոխում են պատմական իրականությունը, սակայն բացահայտում են առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հունաստանի, Էգեյան ծովի կղզիների և թուրքահայատակ հույների հանդեպ կիրառած երիտթուրքերի քաղաքականությունը: Իբրև սկզբնաղբյուր, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում երիտթուրքական ռազմական ու դիվանագիտական գործիչներից մեկի՝ գեներալ Մահմուդ Սուխար փաշայի «Թուրքիան, Գերմանիան ու Եվրոպան»<sup>31</sup> աշխատությունը:

<sup>29</sup> Şevki Galib Kemali bey (Söylemezoğlu), Hatıraları, Atina sefa-  
fetti (1913—1916), İstanbul, 1946:

<sup>30</sup> Şevki Джемаль паша, Записки, 1913—1919, Тифлис, 1923:

<sup>31</sup> Şevki Général M. Moukhtar Pacha, La Turquie, l'Allemagne et



Պրոբլեմի հանգամանալից ուսումնասիրման առումով գիտական կարևոր նշանակություն ունեն հույն պատմաբաններ Գեորգիոս Վենտիրիսի «Հունաստանը 1910—1920 թթ.»<sup>32</sup> և մարքսիստ պատմաբան Յանիս Կորդատոսի «Հունաստանի պատմությունը»<sup>33</sup> աշխատությունները, որոնք, գրված լինելով արխիվային փաստաթղթերի հիման վրա, լայն պատկերացում են տալիս ուսումնասիրվող շրջանի հունական պետության ներքին ու արտաքին կացության, թուրք-հունական հարաբերություններում հունական կառավարության քաղաքականության մասին։ Օգտվել ենք այդ շրջանի հույն դիվանագետ Ա. Ֆ. Ֆրանգուլիսի աշխատությունից, որն իր պարունակած փաստական հարուստ նյութով խիստ արժեքավոր է Հունաստանի արտաքին քաղաքականության պատմության ուսումնասիրության համար<sup>34</sup>։ Այն հնարավորություն է ընձեռում գաղափար կազմելու մասնավորապես Էգեյան ծովի կղզիների հարցի շուրջը կատարված հույն-գերմանական բանակցությունների, ինչպես նաև՝ գերմանա-թուրքական նախապատերազմյան շրջանի հարաբերությունների վերաբերյալ։

Հունաստանի արտաքին քաղաքականության մի շարք կարևոր հարցերի ուսումնասիրման համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում վարչապետ Է. Վենիզելոսի ելույթները հունական պառլամենտում<sup>35</sup>։

Էգեյան ծովի կղզիների և Փոքր Ասիայի հունական բնակչության վերաբերյալ իրավական ու վիճակագրական նյութեր են պարունակում Ժ. Ստեֆանոպոլի<sup>36</sup> և Լ. Մաքասի<sup>37</sup> աշխատությունները։

Կարևոր սկզբնաղբյուրներ են Ս. Կերոֆիլասի՝ այդ շրջա-

l'Europe. Depuis le traité de Berlin jusqu'à la Guerre Mondiale, P., 1924:

<sup>32</sup> Տե՛ս Բ. Βεντήρη, 'Η Ελλάδα τοῦ 1910—1920, τ. 1, 'Αθήναι, 1970:

<sup>33</sup> Տե՛ս Բ. Κ. Κορδάτου, 'Ιστορία τῆς νεώτερης 'Ελλάδας (1900—1924), τ. 13, Αθήνα, 1958:

<sup>34</sup> Տե՛ս Α. F. Frangulis, La Grèce et la crise mondiale, t. 1, P., 1926:

<sup>35</sup> Տե՛ս Ε. Vénizélos, Cinq ans d'histoire Grecque, 1912—1917. Discours prononcés à la chambre des députés en août 1917, P., 1917:

<sup>36</sup> Տե՛ս J. Z. Stephanopoli, Les îles de l'Égée. Leurs privilèges. Avec documents et notes statistiques, Athènes, 1912:

<sup>37</sup> Տե՛ս L. Maccas, L'Hellénisme de l'Asie-Mineure. Son histoire, sa puissance, son sort, P., 1919:



նի Հունաստանի վարչապետ է. Վենիզելոսի քաղաքական գործունեությանը նվիրված կենսագրական գիրքը<sup>38</sup> և Վ. Վենիզելոսի համհարզ, շտաբսկապիտան 3. Մետաքսայի «Հուշերը»<sup>39</sup>:

Հույն-թուրքական հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր է լուսաբանել «Օրիան» թերթի դիրեկտոր Ն. Նիկոլալդեսը<sup>40</sup>, հատուկ ուշադրություն դարձնելով հույն-թուրքական մերձեցման քաղաքական հիմքերին:

Հույն-բուլղարական հարաբերությունները և թուրք-բուլղարական դիվանագիտական կոմբինացիաների ներքին ծալքերը բավականին հանգամանորեն են լուսաբանված այդ շրջանի Բելգրադի բուլղարական դեսպանորդ Ա. Տոշևի կողմից<sup>41</sup>:

Հույն-թուրքական հարաբերությունների ուսումնասիրման գործում նշանակալի ավանդ ունեն ֆրանսիական բուրժուական պատմաբանները: Ականավոր պատմաբան Էդուարդ Դրիոն հիշյալ հարաբերություններին հանգամանորեն անդրադարձել է Հունաստանի դիվանագիտության պատմությանը նվիրված իր ծավալուն և արժեքավոր աշխատության 5-րդ հատորում<sup>42</sup>: Դիվանագիտական հարուստ փաստաթղթերի, ինչպես նաև Աթենքի արխիվային նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ նա բացահայտել է եվրոպական տերությունների քաղաքականությունը կրետական հարցում, ցույց տվել նրանց միջև եղած հակասությունները: Սակայն կրետական և ընդհանրապես հույն-թուրքական հարաբերությունները քննելիս, Դրիոն գերազնահատում է Ֆրանսիայի քաղաքական դերը՝ իր երկիրը ներկայացնելով որպես Հունաստանի վաղեմի ու անշահախնդիր հովանավոր:

<sup>38</sup> Տե՛ս C. Kérofilas, Un homme d'Etat. E. Vénizélos. Sa vie, son oeuvre. P., 1915:

<sup>39</sup> Տե՛ս Օ. Դ. Μεταξάς Το προσοπικό του ήμερολόγιό, τ. 2, 1910—1920. Αθήναι, 1956:

<sup>40</sup> Տե՛ս N. Nicolaïdes, Les Grecs et la Turquie, Bruxelles, 1910:

<sup>41</sup> Տե՛ս A. Тошев, Балканските войни, тт. 1—2, София, Пловдив, 1929—1931:

<sup>42</sup> Տե՛ս Ed. Driault, Histoire diplomatique de la Grèce, t. V (1908—1921), P., 1926:



Երիտթուրքերի արտաքին քաղաքականության բացահայտման գործում Դրիոյի դերը նշանակալից է: Նա համոզիչ կերպով ցույց է տվել, որ նրանք ի սկզբանե վարել են ագրեսիվ, շովինիստական քաղաքականություն՝ հետապնդելով «անհնազանդ» կամ «ապստամբ» ժողովուրդներին բնաջնջելու և Օսմանյան կայսրության նախկին սահմանները վերականգնելու նպատակ:

1908—1914 թթ. թուրք-հունական հարաբերություններին անդրադարձել է Դը-Լա ժոնքիերը՝ Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված իր մեծածավալ աշխատության մեջ<sup>43</sup>: Մենք օգտվել ենք, մասնավորապես, 1912—1914 թթ. հուլյն-թուրքական հարաբերություններին վերաբերող նյութերից, հատկապես՝ թուրքական մամուլից կատարած նրա ընդարձակ քաղվածքներից:

Ուշագրավ են կրետական հարցին նվիրված Է. Մարկի<sup>44</sup>, Ա. Ռեյնակի<sup>45</sup>, Պ. Է. Բորդոյի<sup>46</sup>, Ժ. Ստ. Դուտկովսկու<sup>47</sup> աշխատությունները, որոնցում հիմնականում քննարկած են եվրոպական տերությունների քաղաքականությունը Կրետե կղզու նկատմամբ:

Կրետական իրադարձությունների ժամանակ գրված Մ. Չինգիզի<sup>48</sup> հոդվածը ներթափված է մոլի ազգայնականության ոգով. հեղինակը պաշտպանում է կղզում սուլթանի գերիշխանությունը պահպանելու երիտթուրքերի քաղաքականությունը:

Երիտթուրքերի ներքին ու արտաքին քաղաքականության տարբեր բնագավառների վերաբերյալ հրատարակվել են Է.

<sup>43</sup> Տե՛ս La Jonquière, Histoire de l'Empire Ottoman, t. II, P., 1914:

<sup>44</sup> Տե՛ս E. Marc, La question crétoise. "Nouvelle Revue" v 10, P., 1911:

<sup>45</sup> Տե՛ս A. Reinach, La question Crétoise, P., 1912:

<sup>46</sup> Տե՛ս Gen. P. E. Bordeaux, La fin de l'affaire Crète (1908—1913). "Revue des Etudes historiques", № 1—3, P., 1934:

<sup>47</sup> Տե՛ս J. St. Dutkowski, Une expérience d'administration internationale d'un territoire. L'occupation de la Crète (1897—1909), P., 1952:

<sup>48</sup> Տե՛ս M. Djinguiz. L'islam en Crète. "Revue du Monde Musulman", № 1—2, P., 1909:



Վերների<sup>49</sup>, Ռ. Պինոյի<sup>50</sup>, Շ. Վուդի<sup>51</sup>, Վ. Բերարի<sup>52</sup> աշխատությունները:

Երիտթուրքական դիվանագիտության որոշ ներքին ծախքեր են արտացոլված Կ. Պոլսում ամերիկյան<sup>53</sup> և ֆրանսիական<sup>54</sup> դեսպանների աշխատություններում:

Հուլների և հալերի դեմ երիտթուրքերի կազմակերպած դաժան հալածանքների ու կոտորածների մասին գրած ականատեսների աշխատություններից ուշագրավ են ֆրանսիացիներ, հնագետ Ֆ. Սարթիոյի<sup>55</sup>, կապիտան Հ. Սելնորբուքի<sup>56</sup> և գերմանական «Քյոլնիշե ցայտունգ» թերթի թղթակից Հ. Շտուրմերի<sup>57</sup> գրքերը:

Ներկա ուսումնասիրության համար խիստ արժեքավոր սկզբնաղբյուրներ են դիվանագիտական արխիվային փաստաթղթերի սովետական<sup>58</sup> և ֆրանսիական հրատարակությունները<sup>59</sup>, որոնք ամփոփում են Ռուսական կայսրության և Ֆրան-

<sup>49</sup> Տե՛ս Է. Վերներ, Թուրքիան Եռյակ միության և Անտանտի միջև 1914 թվականին: Պատրանքներ և իրականություն Բոսֆորի ափերին: «Լրաբեր հասարակական գիտությունների», 7 (326), Երևան, 1970:

<sup>50</sup> Տե՛ս R. Pinon. L'Europe et la Jeune Turquie, P., 1911:

<sup>51</sup> Տե՛ս H. Charles Woods, La Turquie et ses voisins, P., 1911:

<sup>52</sup> Տե՛ս V. Bérard, La mort de Stambul, P., 1913.

<sup>53</sup> Տե՛ս H. Morgenthau, Mémoires, P., 1919:

<sup>54</sup> Տե՛ս M. Bompard, L'entrée en guerre de la Turquie. "Revue de Paris", № 13, P., 1921:

<sup>55</sup> Տե՛ս F. Sartiaux, Le sac de Phocée et l'expulsion des Grecs Ottomans d'Asie-Mineure en juin 1914, "Revue des Deux Mondes", t. 24, P., 1914:

<sup>56</sup> Տե՛ս Capitaine H. Seignobosc, Turcs et Turquie, P., 1920:

<sup>57</sup> Տե՛ս H. Stuermer, Deux ans de guerre à Constantinople, P., 1917:

<sup>58</sup> Տե՛ս «Материалы по истории франко-русских отношений за 1910—1914 гг.», М., 1922 г., «Красный Архив», т. 3, М., 1923, т. I(8), М., 1925 г., т. 2(15), М., 1926 г., «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и Временного правительств 1878—1917», серия II, 1900—1913, тт. XVIII—XX, ч. I—II, Л., 1938—1940, серия III, 1914—1917, т. I—IV, М., 1931—1935:

<sup>59</sup> Տե՛ս Documents diplomatiques Français relatifs aux origines de la guerre Mondiale (1871—1914). 2-ème série (1901—1911), t. XI—XII, 3-ème série (1911—1914), t. I—IX, Paris, Ministère des affaires étrangères, 1929—1936:



սիական հանրապետության արտաքին գործերի մինիստրությունների՝ Հունաստանին և Օսմանյան կայսրությանը վերաբերող դիվանագիտական հարուստ նյութերը, նաև՝ այդ երկրների նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը բացահայտող բազմաթիվ փաստաթղթեր:

Կարևոր արժեք ունեն Բալկանյան պատերազմների վերաբերյալ հրապարակված ռուսական<sup>60</sup> և գերմանական<sup>61</sup> դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուները:

Դիվանագիտական կարևոր փաստաթղթերի ժողովածու է հրապարակված նաև Հունաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ<sup>62</sup>:

Հետազոտվող թեմայի համար անհրաժեշտ ու արժեքավոր են Ռուսաստանի արտաքին քաղաքականության (АВПР), Պետական կենտրոնական ռազմապատմական (ЦГВИА) և Ռազմածովային նավատորմի կենտրոնական պետական (ЦГАВМФ) արխիվներում պահպանվող փաստաթղթերը: Հիշյալ արխիվների համապատասխան ֆոնդերում են պահվում նաև Թուրքիայում Ռուսաստանի դիվանագիտական և ռազմական ներկայացուցիչների զեկուցագրերը, գործակալական հաղորդումներն ու տվյալները և այլ նյութեր:

Անգնահատելի արժեք է ներկայացնում մամուլը: Բոլշևիկյան «Պրավդան» հիմնականում հիմք է ծառայել ուսումնասիրվող ժամանակաշրջանը մարքսիստական տեսանկյունով մեկնաբանելու համար: Օգտվել ենք նաև ֆրանսիական սոցիալիստների օրգան «Յումանիտեից»:

XX դ. սկզբի Թուրքիայի պատմության ուսումնասիրման գործում առանձնահատուկ նշանակություն ունի արևմտահայ մամուլը: Պատմական դեպքերի բերումով հրատարակվելով Կ. Պոլսում, հայկական թերթերը, մասնավորապես «Ազատամարտը» և «Բյուզանդիոնը», լավատեղյակ են եղել կայսրության ներքին ու արտաքին անցուդարձին և նրանց հաղորդած

<sup>60</sup> *Տե՛ս* «Сборник дипломатических документов касающихся событий на Балканском полуострове. Август 1912—июль 1913», С., Пет., 1914:

<sup>61</sup> *Տե՛ս* Die Grosse Politik der Europäischen Kabinette. 1871—1914. 35 Band. Der Dritte Balkankrieg 1913, Berlin, 1927:

<sup>62</sup> *Տե՛ս* St. Strupp, La situation internationale de la Grèce (1821—1917), Zürich, 1918.



տեղեկությունները այժմ սկզբնաղբյուրի նշանակություն ունեն։  
Դրանց էջերում հատկապես շատ են Թուրքիայի, տվյալ դեպ-  
քում՝ երիտթուրքերի արտաքին քաղաքականության վերաբեր-  
յալ նյութերը, օսմանյան պառլամենտում թուրք պետական  
գործիչների արտասանած ճառերի հրապարակումները։ Արև-  
մըտահայ մամուլում թարգմանաբար արտատպվում էին թուր-  
քական պաշտոնական ու կիսապաշտոնական թերթերի խմբա-  
գրականները, արտաքին հարցերի վերաբերյալ արտահայտված  
պաշտոնական տեսակետներն ու կարծիքները, կառավարա-  
կան նոտաներն ու դիվանագիտական բնույթի այլ փաստա-  
թղթեր, մի հանգամանք, որը առաջնակարգ սկզբնաղբյուր է  
դարձնում հայկական մամուլը։

Լայնորեն օգտագործված է ռուսական մամուլը, որի էջե-  
րում կան ուսումնասիրվող հարցի վերաբերյալ ռազմաքաղա-  
քական ու դիվանագիտական բնույթի բազմաթիվ տեղեկու-  
թյուններ։ Խիստ կարևոր է այն հանգամանքը, որ ռուսական  
մամուլում թարգմանաբար տպագրվել են թուրքական, հունա-  
կան, իտալական, անգլիական, գերմանական, ֆրանսիական  
թերթերից քաղված ամենաբազմազան նյութեր։



## ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՅԸ 1908—1912 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1669 թվականից գտնվելով օսմանյան տիրապետության տակ՝ Կրետե կղզու հույն բնակչությունը երկարատև ու հերոսական պայքար էր մղում հանուն իր ազատագրության: Հունական անկախ պետության վերածնունդը նոր խթան հանդիսացավ կղզու ազգային-ազատագրական պայքարի վերելքի համար: Հունաստանի հետ միավորվելու նշանաբանով ընթացող ապստամբությունները հաջորդում էին իրար և, հակառակ արյունոտ ու անհաջող վախճանին, չէին հուսալքում կղզու անկուն բնակիչներին: 1894 թ. բռնկված նոր ապստամբությունն ընդգրկեց ամբողջ կղզին, և 1897 թ. փետրվարին ապստամբները հռչակեցին Կրետեի քաղաքական միությունը Հունաստանի հետ ու ռազմական աջակցություն ստացան նրանից:

Միաժամանակ, 1897 թ. ապրիլին, Թուրքիան պատերազմ հայտարարեց Հունաստանին և պարտության մատնեց: Սակայն, հակառակ դրան, Թուրքիան Կրետե կղզում կորցրեց իր փաստական իշխանությունը: Միությունն արգելելու նպատակով մեծ տերությունները հռչակեցին կղզու «ինքնավարությունը», որը պետք է գտնվեր այսպես կոչված «պաշտպան տերությունների»՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի հովանավորության ներքո: Հիշյալ տերությունների գործասերը գրավեցին կղզին և այն բաժանեցին 4 օկուպացիոն մասերի: Սուլթան Աբդուլ Համիդը հարկադրվեց ընդունել Կրետեի համար եվրոպական տերությունների մշակած միջազգային կանոնադրությունը, որի համաձայն 1898 թվականից կղզում հաստատվեց «ինքնավար» վարչություն: Սուլթանը կղզում պահպանեց իր «սյուզերեն իրավունքները», որոնք կրում էին միանգամայն առերևույթ ու ձևական բնույթ: Որպես սուլթանի «սյուզերեն» իրավունքների խորհրդանիշ, կղզու Սուդա նավահանգստի մուտքի մոտ գտնվող ժայռոտ մի կըղզ-



լակում թողնվեց թուրքական դրոշը: Թուրքական գանձարան էին հոսում կրետական փարոսներից և հեռագրատուրքերից ստացված հարկերը: Թեև Կրետեում ձևավորված վարչաքաղաքական կարգը իրականում պաշտպան տերությունների կողմից կղզում հաստատված օկուպացիոն վարչակարգ էր, այնուամենայնիվ մեծ էր կրետական ազատագրական պայքարի պատմական նշանակությունը, որի քաղաքական հետևանքը թուրքական միջնադարյան տիրապետության փաստական վերացումն էր:

Ստեղծված նոր քաղաքական իրադրության պայմաններում Կրետե կղզում ազատագրական, հեղափոխական պայքարը շարունակվեց Հունաստանի հետ միավորվելու նշանաբանով և անմիջականորեն ուղղված էր իմպերիալիստական տերությունների օկուպացիոն վարչակարգի վերացման նպատակին: Հունաստանի հետ միավորվելու շարժումը արտացոլում էր պատմականորեն ձևավորված տնտեսական, քաղաքական և մշակութային ընդհանրությունը, որ խախտված էր հունական պետության այդ հնամենի մասի թուրքական գրավմամբ<sup>1</sup>: Ազգային-ազատագրական շարժման հետևանքով մինչև 1908 թ. կղզում կատարվեցին վարչական բնույթի մի շարք վերափոխումներ, որոնք գրեթե նախապատրաստեցին նրա միավորումը Հունաստանի հետ<sup>2</sup>: Այսպիսով, Կրետեն փաստորեն դուրս եկավ թուրքական տիրապետությունից և, Օսմանյան կայսրության մի շարք նախկին նահանգների նման, քաղաքական կախում չունեցավ Կ. Պոլսից: Նույնիսկ թուրք պատմաբան Բայուրն է նշում, որ Կրետե կղզում եվրոպական տերությունների վերահսկողությամբ ստեղծված քաղաքական նոր վարչակարգի պայմաններում կրետական հարցը Թուրքիայի համար այլևս ընդունում էր ոչ թե իրավական, այլ միջազգային բնույթ<sup>3</sup>:

Սակայն երիտթուրքերը չէին հաշտվում կղզու կորստյան փաստի հետ և ուժերի հսկայական լարումով փորձում էին վե-

<sup>1</sup> См. И. С. Галкин, Дипломатия европейских держав в связи с освободительным движением народов Европейской Турции в 1905—1912 гг., М., 1960:

<sup>2</sup> См. I. St. Dutkowski, Une expérience d'administration internationale d'un territoire. L'occupation de la Crète (1897—1909), P., 1952:

<sup>3</sup> См. Y. H. Bayur, Türk inkılâbı tarihi, cilt I, s. 294, İstanbul, 1940:



րականգնել թուրքական տիրապետությունը ոչ միայն Կրետեում, այլև կայսրության բոլոր նախկին նահանգներում ու տերիտորիաներում: Երիտթուրքական պրոպագանդան պնդում էր, որ 1876 թ. սահմանադրության վերականգնմամբ «օսմանյան ժողովուրդը, ազատվելով համիդյան ինքնակալությունից ու բռնակալությունից, հաստատեց իր իշխանությունը»<sup>4</sup>: Սահմանադրության շնորհիվ, բարձրագույն հայտարարում էին նոր իշխանության ներկայացուցիչները, մոտ ժամանակներում Թուրքիան վերածվելու է ժամանակակից եվրոպական տերության, իրավահավասարության և եղբայրության սկզբունքներով առաջնորդվող սահմանադրությամբ ու օրենքներով: Ուրեմն, եզրակացնում էին նրանք, քանի որ սահմանադրության շնորհիվ հավասարություն և ազատություն է հաստատվել, օսմանյան նախկին նահանգները պետք է վերադարձվեն թուրքական իշխանությանը: Երիտթուրքերի համոզմամբ, ստեղծված քաղաքական նոր պայմաններում կայսրության նախկին տերիտորիաների վերադարձը Թուրքիային միանգամայն օրինական պահանջ էր<sup>5</sup>: Համաձայն այդ դրույթի Բոսնիան և Հերցեգովինան, Արևելյան Ռումելին, Կրետե կղզին, Կիպրոսը, Թունիսը, Մարոկկոն, Եգիպտոսը, Ալժիրը, որոնք փաստական ոչ մի կախում չունեին Կ. Պոլսից, պետք է վերադարձվեին Թուրքիային:

Առաջնորդվելով «օսմանիզմի» գաղափարներով, երիտթուրքերը միաժամանակ հանդես էին գալիս նաև իրենց ազգային անկախությունը արյունով նվաճած Բալկանյան թերակղզու պետությունները թուրքական գերիշխանության տակ վերադարձնելու ցնորամիտ ծրագրերով: Այսպես, 1908 թ. նոյեմբերի 21-ին երիտթուրքական «Շուրաի Ումմեթ» պաշտոնաթերթը գրում էր. եթե բալկանյան պետությունները ցանկանան հրաժարվել իրենց «մեծ գաղափարներից», ապա Թուրքիան պատրաստ է նրանց իր շուրջը համախմբելու և նրանց դաշնակիցը դառնալու<sup>6</sup>: Փաստորեն երիտթուրքերը բալկանյան երկրներին «խորհուրդ» էին տալիս հրաժարվել իրենց ինք-

<sup>4</sup> Yilmaz Öztuna, Türkiye tarihi, cilt 12, s. 189, İstanbul, 1967:

<sup>5</sup> Տե՛ս Yilmaz Öztuna, նշվ. աշխ., էջ 189, Tahsin Ünal, նշվ. աշխ., էջ 192:

<sup>6</sup> Տե՛ս M. Hauser, Histoire diplomatique de l'Europe (1871—1914), P., 1929, p. 213.



նորույն պետականությունից և դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող ազգային տերիտորիաների ազատագրումից և կամովին ենթարկվել թուրքական գերիշխանությանը: Երիտթուրքական մամուլում բացահայտորեն արտահայտվում էին ունանշիստական, զավթողական նպատակներ՝ ուղղված հարևան պետությունների դեմ: Կայսրության նախկին տերիտորիալ ամբողջականությունը վերականգնելու և ընդարձակելու, երբեմնի հզորությանը հասնելու հետևանքով, գրում էր թուրքական «Ստամբուլ» թերթը, «կիրականանան մեր ամենանվիրական, մեր ամենասօրինական հույսերը՝ դառնալ մի մեծ տերություն և առաջնակարգ դեր խաղալ աշխարհում»<sup>7</sup>: Դրան հասնելու նախնական պայմանը, հրատապ խնդիրը, թուրքերի համոզմամբ, Կրետե կղզին Թուրքիային վերադարձնելն էր:

Երիտթուրքական հեղափոխությունից մի քանի օր անց, հուլիսի 29-ին, «Սերվեթի ֆյունուն» թերթը նշեց, որ սահմանադրության հռչակմամբ լուծվեց նաև կրետական հարցը: Այն հույս էր հայտնում, որ Հունաստանը, հաշվի առնելով այդ քաղաքական իրողությունը, այլևս կհրաժարվի Կրետեն միացնելու գաղափարից և, ելնելով կայսրությունում բնակվող հույների շահերից, նույնիսկ գործնականորեն կաջակցի Թուրքիային: Մյուս կողմից՝ ակնկալվում էր, որ մեծ տերությունները պետք է նպաստեին կղզին Թուրքիային վերադարձնելուն<sup>8</sup>: Նման տրամադրությունների հրապարակային դրսևորումը արտակարգ վրդովմունք է առաջացնում Հունաստանում, որտեղ Կրետե կղզու քաղաքական ապագայի վերաբերյալ միանգամայն այլ կարծիք էր տիրում:

Շատ շուտով երիտթուրքերը գործնականում կրեցին առաջին լուրջ քաղաքական պարտությունը՝ կայսրության նախկին տերիտորիալ ամբողջականությունը վերականգնելու արկածախնդրական ծրագրերի և օսմանիզմի գաղափարախոսության իրականացման ճանապարհին: 1908 թ. հոկտեմբերի 5-ին Բուլղարիան հռչակեց իր քաղաքական լիակատար անկախությունը՝ այդպիսով վերջին հարվածը հասցնելով Թուրքիայից իր վասալական կախվածության կապին: Մի քանի օր անց, հոկ-

<sup>7</sup> Տե՛ս N. Nicolaïdes, Les Grecs et la Turquie, Bruxelles, 1910, p. 26:

<sup>8</sup> Տե՛ս Ed. Driault, Histoire diplomatique de la Grèce, t. V (1908—1921), P., 1926, էջ 3:



տեմբերի 12-ին, Կրետական Ազգային ժողովը հռչակում է կղզու քաղաքական անկախությունը և միությունը Հունաստանի հետ:

Կրետական Ազգային ժողովի իրոք այդ հեղափոխական գործողությունը, որը հենված էր կղզում ծավալվող ազգային-ազատագրական պայքարի վրա, վերջնականապես խորտակում է ոչ միայն թուրքական սուլթանի «սյուզերենությունը», այլև լրջորեն սպառնում իմպերիալիստական տերությունների օկուպացիոն վարչակարգին:

1908 թ. հոկտեմբերին Կրետե կղզում ծավալված քաղաքական իրադարձությունները լրջորեն անհանգստացրին իմպերիալիստական տերություններին, մասնավորապես՝ անգլիական կառավարող շրջաններին: Ռազմաստրատեգիական խոշոր նշանակություն ներկայացնող Կրետե կղզին իր վրա էր բեռեղ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի ուշադրությունը, որոնք որոշակի շահագրգռություն էին դրսևորում միջերկրականի այդ կարևոր հենակետում հաստատվելու համար: Առանձնապես մեծ եռանդ էին ցուցաբերում անգլիացիները, որոնց հետաքրքրում էին կրետական Սուդանավահանգիստը և նրա բնական հիանալի ծովածոցը: Օգտագործելով հույն-թուրքական վեճը և կղզում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը՝ անգլիական կառավարողները ցանկանում էին հավերժացնել կղզու զավթումը և այն վերածել բրիտանական ռազմածովային ուժերի կարևոր հենակետի: Անդրադառնալով այդ հավակնություններին՝ գերմանական «Բեռլիներ թագեբլաթ» թերթը գրում էր. «Անգլիան ենթադրում է, որ եթե իր ջանքերի շնորհիվ Թուրքիան պահի կղզին, ապա դրանով նա իր համար կապահովի Սուդայի ծոցը և դրա միջոցով՝ կղզու վերահսկողությունը: Անգլիան փափայում է այն միտքը, որ իրեն կհաջողվի այդ կայանը վերածել յուրահատուկ արևելյան Զիբրալթարի՝ պաշտպանելու համար Հնդկաստան տանող ծովային ուղին»<sup>9</sup>:

Կրետեն միջերկրածովյան ռազմածովային ուժեղ հենակետի վերածելու անգլիական իմպերիալիստների ձգտումը լուրջ անհանգստություն էր պատճառում ֆրանսիական կառավարող շրջաններին: Չնայած 1904 թ. կնքված անգլո-ֆրանսիական

<sup>9</sup> «С. Петербургские ведомости», 30.VII(12.VIII), 1909 г.



համաձայնությանը՝ համաշխարհային մասշտաբով տեղի ունեցող նրանց մրցակցությունը և պայքարը ազդեցության ոլորտների համար շարունակվում էր նախկին ուժով: Այդ քաղաքականության դրսևորումներից մեկը պայքարն էր հանուն Արևելյան Միջերկրականում ազդեցության ամրապնդման և, մասնավորապես, Կրետե կղզու համար<sup>10</sup>:

Հունական թագավորությունում ունենալով քաղաքական որոշակի ազդեցություն և տնտեսական ամուր դիրքեր՝ Ֆրանսիական կառավարությունը կողմնակից էր ճանաչելու Կրետեի քաղաքական միությունը Հունաստանի հետ: Շարունակվում էր Ֆրանսիական ավանդական ազդեցության ուժեղացումը Բալկանյան թերակղզու հարավում գտնվող այդ փոքրիկ երկրում: Սակայն Ֆրանսիական դիվանագիտությունը խուսափում էր բացահայտորեն հակադրվել Անգլիային:

Անգլիական հավակնությունները զսպելիս Ֆրանսիական դիվանագիտությունը անուղղակիորեն աջակցություն էր ստանում մյուս իմպերիալիստական երկրներից, որոնց ևս ձեռնտու չէր անգլիական ազդեցության ուժեղացումը Արևելյան Միջերկրականում, հետևաբար՝ Մերձավոր Արևելքում:

Կրետե կղզու ռազմաստրատեգիական նշանակությունը շատ բարձր էին գնահատում նաև Բեռլինում: Աշխարհի վերաբաժանմանը տենդորեն նախապատրաստվող գերմանական իմպերիալիզմի համար Կրետեն Արևելյան Միջերկրականում չափազանց կարևոր ստրատեգիական հենակետ կարող էր դառնալ անգլո-ֆրանսիական ռազմաժողովային ուժերի դեմ մղվելիք գոտեմարտերում: Ուստի կայզերական կառավարությունը չէր թաքցնում ռազմական նավատորմի համար Կրետեում հենակետ ստանալու իր մտադրությունը: Դեռևս 1908 թ. հոկտեմբերի 25-ին Կ. Պոլսի ռուսական դեսպանը հաղորդում է, որ գերմանական կառավարությունը բանակցություններ է սկսել Աթենքի հետ՝ Կրետեում ռազմակայան ձեռք բերելու համար: Դրա փոխարեն Բեռլինը կրետական հարցում Հունաստանին խոստանում էր իր դիվանագիտական աջակցությունը<sup>11</sup>: Միաժամանակ, Գերմանիան դիմեց Թուրքիային՝ համոզելով նրան

<sup>10</sup> St' u G. Hanotaux, La politique de l'équilibre, 1907—1911, P., 1912, t. 2, 203:

<sup>11</sup> St' u Архив внешней политики России (АВПР), ф. Канцелярия, 1908 г., д. 36, л. 320:



Կրետեում ստեղծել թուրքական նավատորմի բազա և գերմանական նավերին տրամադրել նավակայան<sup>12</sup>:

Գործելով եվրոպական տերությունների թիկունքում՝ գերմանական կառավարությունը ձևականորեն հայտարարում էր, որ ինքը կրետական հարցում չի ցուցաբերի ոչ մի նախաձեռնություն: Սրան համապատասխան, 1909 թ. մայիսի 29-ին կիսապաշտոնական «Լոկալ անցալգեր» թերթը հաղորդեց, որ գերմանական կառավարությունը շարունակում է աներկբայորեն հետևել չմիջամտելու քաղաքականությանը և որ «վերջին ժամանակներս Գերմանիայի կողմից ոչինչ չի ձեռնարկված, որը կարողանար ազդել առավել շահագրգռված շրջանների որոշմանը»<sup>13</sup>: Մի շաբաթ անց կանցլեր Բյուլովը հրահանգեց Աթենքի իր դեսպանին. «Կրետական հարցի առնչությամբ տարվող գրույցներում լինել զուսպ և սահմանափակվել սոսկ սառնասիրտ դիտողի դերով, որն առավել չափով համապատասխանում է Գերմանիայի քաղաքական շահերին»<sup>14</sup>:

Նմանօրինակ քաղաքականություն էր վարում նաև Գերմանիայի դաշնակից ավստրո-հունգարական կառավարությունը: Այդ շրջանում կրետական հարցին միջամտելը նպատակահարմար չէր Կենտրոնական տերություններին: Ինչպես նրշել է Աթենքի ավստրիական ուղեգրողը, Հունաստանի օգտին կատարված ավստրո-գերմանական միջամտությունը կարող էր ծառայություն մատուցել սոսկ իրենց հակառակորդներին և ընդմիջտ ոչնչացնել Եռյակ դաշինքի հույսերը Թուրքիայի նկատմամբ<sup>15</sup>:

Այսպիսով, Կրետե կղզում ռազմաստրատեգիական հենակետ ձեռք բերելու պայքարը, որ մղվում էր իմպերիալիստական եզոր տերությունների միջև՝ Մերձավոր ու Միջին Արևելքում ռազմաքաղաքական ու տնտեսական գերիշխանության համար, դարձավ կրետական հարցի վերջնական լուծման արգելքներից մեկը:

Պաշտպան տերությունների միջև կայացած երկարատև բանակցություններից հետո թուրքական կառավարության

<sup>12</sup> *St'a* Центральный государственный архив военно-морского флота (ЦГАВМФ), ф. 898, оп. I, д. № 6, л. 27:

<sup>13</sup> Н. С. Галкин, *Նշվ. աշխ.*, էջ 41:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> *St'a* Նույն տեղում, էջ 42:



պնդմամբ, որն աջակցություն գտավ Անգլիայի կողմից, որոշվեց կրետական հարցի լուծումը թողնել ապագային: Այդ ոգով կազմված՝ հոկտեմբերի 28-ի հայտարարությամբ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Իտալիան նշում էին, որ «Կրետեի միությունը Հունաստանի հետ առկախ է այն տերությունների համաձայնությունից, որոնք պարտավորություններ են ստորագրել Թուրքիայի հետ: Այսուհանդերձ, — հավաստիացնում էին տերությունները, — իրենք չեն հապաղի այդ հարցը Թուրքիայի հետ բարյացակամորեն քննարկելուց, եթե կղզում պահպանվի կարգը և երաշխավորվի մահմեդական բնակչության անվտանգությունը»<sup>16</sup>:

Տերությունների հայտարարությունը բարենպաստ տպավորություն թողեց Կրետեում և Հունաստանում: Հունական մամուլը եզրակացնում էր, որ պաշտպան տերությունների նոտան իր հիմքում պարունակում է միությունը ճանաչելու խոստում: «Կրետացիների դարավոր ցանկությունները, — գրեց պաշտոնական «Պատրիս» թերթը, — վերջապես, հրավիրեցին տերությունների ուշադրությունը, որոնք չեն հապաղի հավանության արժանացնել Կրետեի միացումը Հունաստանին»<sup>17</sup>:

Հունական կառավարությունը երկար ժամանակ չէր արձագանքում կրետական իրադարձություններին, որը, բնականաբար, ծայրահեղ դժգոհություն էր առաջացնում երկրի ներսում և Կրետեում: Գտնվելով ռազմաքաղաքական ու տնտեսական ծանր պայմաններում՝ Հունաստանը չէր կարող վճռականություն ցուցաբերել և ընդհարվել Թուրքիայի հետ: Ուստի հունական կառավարությունը հանդես եկավ Թուրքիայի հետ մերձենալու միտումով, հույս ունենալով, որ դիվանագիտական ճանապարհով կարող է հասնել դրական արդյունքի: Այդ նպատակի իրականացման համար որոշեց օգտագործել թուրք-բուլղարական լարվածությունը, որն առաջացել էր Բուլղարիայի անկախության հռչակման կապակցությամբ: Աշխատելով օգտվել Բուլղարիայի դեմ Թուրքիայում առաջացած թշնամական մթնոլորտից և ձգտելով նվազեցնել կրետական Ազգային ժողովի որոշման տպավորությունը՝ հունական կառավարությունը պատրաստակամություն արտահայտեց թուրք-բուլ-

<sup>16</sup> Ed. Driault, նշվ. աշխ., էջ 22:

<sup>17</sup> *Sk'u* "L'Humanité", 30. X, 1908:



դարական պատերազմի դեպքում թուրքական կառավարությա-  
նը տրամադրել ուղղակի օգնություն<sup>18</sup>: Այնուհետև կատար-  
վեցին մի շարք գործնական քալեր: 1908 թ. հոկտեմբերի  
20-ին Հունաստանի արտաքին գործերի մինիստրը Կ. Պոլսի  
իր դեսպանին հրահանգեց վարկավորել թուրքական հեղինա-  
կավոր մի թերթ, որը ղեկավարվեր «երկու ժողովուրդների և  
երկու պետությունների միջև համաձայնությունն ամրապնդելու»  
սկզբունքով<sup>19</sup>: Հույն-թուրքական հարաբերությունների բարե-  
լավման պրոպագանդայով էր զբաղված Հունաստանի նախկին  
մինիստր-պրեզիդենտ Ռալլին, որն այցելելով Օսմանյան կայս-  
րության մայրաքաղաք և եվրոպական նահանգները, արտահայ-  
տում էր երկու ժողովուրդների մերձեցման փափագ, ժողո-  
վուրդներ, որոնք, նրա արտահայտությամբ, ունեին «ընդհա-  
նուր ցանկություններ և ընդհանուր թշնամիներ»<sup>20</sup>: Թուրքա-  
կան «Սաբահ» թերթը, անդրադառնալով Թուրքիայի հետ հա-  
րաբերությունները բարելավելու հունական կառավարության  
ջանքերին՝ նշեց. «Հույները միջոցներ են փնտրում ուղղելու  
այն բացասական տպավորությունը, որ ստեղծվել է Հունաս-  
տանի կողմից Կրետեն միացնելու հետևանքով»<sup>21</sup>:

Սակայն թուրքական կառավարությունը մերժեց Հունաս-  
տանի հետ դաշնակցելու առաջարկությունը և հրաժարվեց  
Կրետեն Հունաստանին միանալու քաղաքական փաստը ճա-  
նաչելուց: Նա չէր ցանկանում համագործակցել Հունաստանի  
հետ, որովհետև վերիջնս միաժամանակ ազգային արտոնու-  
թյուններ էր պահանջում Օսմանյան կայսրությունում բնակ-  
վող հույների համար<sup>22</sup>: Իսկ թուրքական կառավարությունը,  
իր սասանված հեղինակությունը երկրի ներսում ամրապնդելու  
համար, որոշեց չզիջել կրետական հարցում, մանավանդ՝  
Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիայի ու Հերցեգովինայի  
բռնագրավումից և Բուլղարիայի անկախության հռչակումից  
հետո: Երիտթուրքերը այդպիսով հույս ունեին շեղել հասա-  
րակական կարծիքը ու կայսրության ժողովուրդների ուշադրու-

<sup>18</sup> *ՏԵՄ* Центральный государственный исторический архив (ЦГВИА), ф. 2000, оп. 1, д. № 6856, л. 239:

<sup>19</sup> *ՏԵՄ* Ed. Driault, նշվ. աշխ., էջ 8:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 8, ЦГВИА ф. 2000, оп. I, д. № 6851, лл. 70, 72:

<sup>21</sup> *ՏԵՄ* "Journal de St.-Petersbourg", 4(17), X, 1908:

<sup>22</sup> *ՏԵՄ* ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 6952, л. 41:



թյունը բոլորին հուզող հիմնական ներքին խնդիրներից և կրետական հարցը ծառայեցնել իրենց պրոպագանդիստական նպատակներին<sup>23</sup>: Հարցի նման լուծման միջոցով երիտթուրքերը հույս ունեին ծնշել հույների ազգային շարժումները նաև Էգեյան ծովի կղզիներում և, մասնավորապես, Սամոսում, որտեղ նույնպես ուժեղ էր Հունաստանի հետ միավորվելու ծրագրումը:

Չգտելով վերահաստատվել Կրետեում՝ երիտթուրքերը ցանկանում էին վերականգնել Թուրքիայի, որպես միջերկրածովյան տերության, նշանակությունը և անմիջական կապ հաստատել աֆրիկյան նահանգների հետ: Իսկ եվրոպական տերությունների հետ միջպետական հարաբերություններում նրանք կրետական հարցը դարձրին քաղաքական կապիտալ շահելու կարևոր միջոցներից մեկը: Կրետական հարցի սրումը ձեռնտու էր Թուրքիային, մանավանդ որ տերությունների հակասությունները խուսանավելու լայն հնարավորություններ էին ստեղծում երիտթուրքերի համար: Իսկ Թուրքիայի առջև կանգնած էր մի թույլ երկիր, որը դեռևս չէր ապաքինվել 1897 թվականի պատերազմից և շատ հեռու էր կրետական հարցում վճռական քաղաքականություն վարելուց:

1909 թվականի հունվարի 9-ին, երիտթուրքերի նախաձեռնությամբ, Կ. Պոլսի Սուլթան Ահմեդ հրապարակում կայացավ Կրետեի միացման դեմ ուղղված բազմահազարանոց միտինգ<sup>24</sup>, որը սկիզբ դարձավ զանգվածային ցույցերի և ազգայնական գրգռիչ ելույթների: Միտինգում որոշվեց «արյան գնով» պաշտպանել Թուրքիայի «իրավունքները» Կրետե կղզու նկատմամբ: Երիտասարդ թուրքերը օգտագործում էին ամեն միջոց հրահրելու թուրք մասսային՝ դրանով աշխատելով գործին տալ համաժողովրդական և համազգային բնույթ:

Հակահունական կամպանիայի ամենակարևոր միջոցառումներից էր հելլեն և թուրքահպատակ հույների դեմ ուղղված տնտեսական քաղաքականությունը: Բոլկոտի էին ենթակա կայսրության նավահանգիստները ժամանող հելլենական առևտրանավերը, Հունաստանից ներմուծվող ապրանքները և Թուրքիայում գործող հունական առևտրատնտեսական աշխարհի

<sup>23</sup> St' u Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 1, էջ 324:

<sup>24</sup> St' u АВПР, ф. Канцелярия, 1909 г., д. № 38, л. 545:



ներկայացուցիչները: Արդեն 1909 թ. հունվարին Զմյուռնիայում կազմակերպված միտինգում որոշում կայացվեց սկսել հակահունական տնտեսական բոլկոտ<sup>25</sup>: Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջումից կարճ ժամանակ անց կրետական հարցը թուրք-հունական հարաբերություններում դարձավ առանցքային: Երիտթուրքերի դիրքը Հունաստանի հանդեպ ընդունեց խիստ սպառնալի բնույթ և հղի էր ագրեսիվ պատերազմի վտանգով:

Դեռևս 1908 թ. աշնանը, թուրքական կառավարությունը տենդորեն համալրում և սպառազինում էր եվրոպական Թուրքիայում և, մասնավորապես, Մակեդոնիայում տեղաբաշխված զորքերը: Կ. Պոլսի ռուսական ռազմական կցորդի 1908 թ. սեպտեմբերի 28-ի հաղորդման համաձայն, թուրքական կառավարությունը ամեն օր 30 վագոն հրետանային մարտկոցներ, զենք ու զինամթերք էր առաքում եվրոպական Թուրքիայում տեղակայված իր բանակին<sup>26</sup>: Հոկտեմբերի 18-ի տրվյալներով, թուրքական զորքերի թիվը 2-րդ բանակային կորպուսում հասնում էր 82 հազարի, իսկ 3-րդում՝ 95—105 հազարի<sup>27</sup>: Այս ահռելի ուժերը նախատեսված էին Մակեդոնիայում ծավալվող ազատագրական շարժումները և բալկանյան պետությունների ազգային անկախությունը ծնշելու համար:

Կրետական հարցը երիտթուրքերին հնարավորություն էր ընձեռում Հունաստանի դեմ ագրեսիվ պատերազմ սկսելու: Սակայն անբարենպաստ միջազգային կացությունը, ներքին սուր պրոբլեմները և, մասնավորապես, 1909 թ. մարտի վերջին բռնկված ներքաղաքական սուր ձգնաժամը երիտթուրքերին ստիպեցին զբաղվել երկրի ներսում իրենց քաղաքական իշխանության ամրապնդման հարցերով: Ուստի Հունաստանի վրա հարձակվելու նրանց մտադրությունը չիրականացավ<sup>28</sup>:

Դեռևս 1908 թ. մայիսին պաշտպան տերությունների որոշմամբ օկուպացիոն ջոկատների դուրս բերումը Կրետեից կատարվելու էր աստիճանաբար, 12 ամսվա ընթացքում<sup>29</sup>:

<sup>25</sup> Տե՛ս "Journal de St. Petersburg", 17(30), I. 1909:

<sup>26</sup> Տե՛ս ЦГБИА, ф. 2000, оп. 1, д. № 6868, л. 24:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 62:

<sup>28</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 77:

<sup>29</sup> Տե՛ս J. St. Dutkowski, նշվ. աշխ., էջ 118:



Այդ ջոկատների առաջին էջերը Կրետեից դուրս բերվեց 1908 թ. հուլիսի 24-ին: Երկրորդ և վերջին էջերը կղզուց եվակուացվելու էր ուղիղ մեկ տարի հետո՝ 1909 թ. հուլիսի 24-ին<sup>30</sup>: Կղզուց օկուպացիոն զորամասերի վերջնական դուրս բերման որոշումը չափազանց մեծ դժգոհություն առաջացրեց թուրքական պետական և հասարակական շրջաններում: Թուրքական կառավարությունը տեսնում էր, որ միության վերաբերյալ կրետացիների որոշումը թեև չընդունվեց պաշտպան տերությունների կողմից, բայց կղզում կատարված վարչաքաղաքական ներքին փոփոխությունները տանում էին դեպի միության փաստական ամրապնդում: Նրանց համոզմամբ դեպքերի հետագա զարգացման հետևանքով չէր հապաղելու նաև Կրետեն Հունաստանին միանալու քաղաքական փաստի ճանաչումը<sup>31</sup>: Բացի այդ, երիտթուրքական կուսակցության պարագլուխները լավ էին հասկանում, որ Կրետեի վերջնական կորուստը անխուսափելիորեն նպաստելու էր նաև թուրքական տիրապետության տակ գտնվող Էգեյան բազմաթիվ կղզիների ազատագրական պայքարի հաղթանակին<sup>32</sup>: «Եթե մենք զիջենք կրետական հարցում, — 1909 թ. մայիսի 25-ին հայտարարեց Փարիզի թուրքական դեսպան Նաում փաշան Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Պիշոնին, — ապա մենք ստիպված կլինենք կատարել այլ զիջումներ ևս»<sup>33</sup>:

Համառորեն հետապնդելով իրենց քաղաքական տիրապետությունը կղզում վերականգնելու նպատակ՝ երիտթուրքերը հանդես էին գալիս սուլթանի գերիշխանության ներքո հարցը «ինքնավարության» սահմաններում լուծելու ծրագրով<sup>34</sup>: Նրանք պահանջում էին կղզու Սուդա ծոցը վերածել թուրքական ռազմաթովային հենակետի՝ ստանալով նաև կղզու ներքաղաքական իրադարձություններին ռազմականորեն միջամտելու իրա-

<sup>30</sup> St'a Ed. Driault, նշվ. աշխ., էջ 21:

<sup>31</sup> St'a DDF, 2—XII, № 278, էջ 407: Բոմպարը՝ Պիշոնին, 9—10 օգոստոսի 1909 թ.:

<sup>32</sup> St'a H. Charles Woods, La Turquie et ses voisins, P., 1911, էջ 262:

<sup>33</sup> DDF, 2—XII, № 201, էջ 266: Պիշոնը՝ դեսպաններին, 25 մայիսի 1909 թ.:

<sup>34</sup> St'a DDF, 2—XI, № 594, էջ 1012, Note du Directeur Politique. Entretien avec l'Ambassadeur de la Turquie au sujet de la Crète, 2 janvier, 1909:



վունք: Առաջ էին քաշում ազգային-ազատագրական շարժման ղեկավարներին կղզուց հեռացնելու և Կրետեի նախկին մահմեդական բնակիչներին վերադարձնելու ու վերաբնակեցնելու պահանջը: Նրանց մյուս պայմանները նույնպես վերաբերում էին Կրետեում թուրքական ազդեցության ուժեղացմանը<sup>35</sup>: Փաստորեն, կղզուն «ինքնավարություն» չնորհելու խոստման տակ թաքնված էր Կրետեի թուրքական սովորական նահանգ դարձնելու երիտթուրքերի միտումը: Սուդա նավահանգիստը թուրքական ռազմածովային բազայի վերածելու և «կղզում կարգը վերահաստատելու համար թուրքական ծովային հետևակի միջամտության իրավունքը» արդեն հնարավորություն էր տալիս երիտթուրքերին արյունալի հաշվեհարդար տեսնել կղզում ծավալվող ազգային-ազատագրական շարժման մասնակիցների հետ և այնտեղ վերահաստատել իրենց լիակատար իշխանությունը:

Միաժամանակ, երիտթուրքերը շարունակում էին ճնշումը Հունաստանի վրա՝ ահաբեկելով թուրքական նոր հաղթական արշավանքով: Արդեն 1909 թ. գարնանը թուրքական կառավարությունը ռազմական պատրաստություններ էր տեսնում հունական սահմանագլխում: Վերակառուցվում էին Էլասոնը թիկունքի հետ կապող ճանապարհները, առաքվում էր մեծ քանակությամբ ռազմանյութ: Էլասոն և Յանինա էին տեղափոխվում գինվորական ստորաբաժանումներ, իսկ թուրքական 3-րդ բանակը բերվում էր մոբիլիզացիոն վիճակի<sup>36</sup>: Հայտարարվում է նաև մասնակի զորակոչ: Գերմանական լավատեղյակ «Թագերլաթ» թերթը հաղորդում է, որ հուլիսի վերջերին ըսպասվում է թուրքական զորքերի ներխուժում Թեսալիա<sup>37</sup>:

Անգլիական մամուլը ոգևորում էր թուրքերին: «Թայմզ» թերթը սպառնում էր, որ հույները այս անգամ մեն-մենակ են թողնվելու թուրքերի դիմաց: «Վերածնված Թուրքիան պետք է այսուհետև ունենա իր ռազմական հաջողություններից օգտվելու իրավունքը, ինչպես այն ունեն մյուս տերությունները»<sup>38</sup> — գրում էր այն:

<sup>35</sup> SH<sup>u</sup> АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. № 33, л. 275, «С. Петербургские ведомости», 3 (16).VI.1909 г.:

<sup>36</sup> SH<sup>u</sup> ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 6870, л. 1:

<sup>37</sup> SH<sup>u</sup> «С. Петербургские ведомости», 16(29).VI.1909 г.:

<sup>38</sup> Ed. Driault, նշվ. աշխ., էջ 26:



Հունաստանի սահմանագծում թուրքական զորքերի կենտրոնացումները տազնապ առաջացրին երկրում: Խուսափելով պատերազմի անմիջական առիթ տալուց՝ հունական կառավարությունը, այնուամենայնիվ, պատրաստվեց դիմագրավելու թուրքական զորքերի հարձակմանը: Սահման ուղարկվեցին զինվորական համալրումներ, զորակոչվեցին մի քանի տարիքի երիտասարդներ: Կորնթոսում և Լարիսայում որոշ զորամասեր կատարեցին զորաշարժեր<sup>39</sup>: Թեսալիայում օր ու գիշեր կառուցվում էին ռազմաստրատեգիական ճանապարհներ և ռազմական բնույթի այլ կառույցներ: Հունական ռազմական գործարանները աշխատում էին ամբողջ Ժանրաբեռնվածությամբ: Իտալիայում, Գերմանիայում ռազմական պատվերներ էին կատարվում հունական բանակի համար<sup>40</sup>:

Աթենքի կառավարության անմիջական ղեկավարությամբ Մակեդոնիայի և հունական այլ մարզերի բնակչության մեջ սկսվեց տենդագին աշխատանք՝ թուրքական տիրապետության դեմ ապստամբություն նախապատրաստելու համար: Հունական բանակի սպաները այդ մարզերում կազմակերպում էին ապրտամբական ջոկատներ:

Նրանց զինելու համար հունական կառավարությունը զենք և զինամթերք էր առաքում Մակեդոնիա և Էպիրոս<sup>41</sup>: Հունաստանից ռազմական մատակարարումներ էին ստանում նաև Կրետեի հույները: Աթենքի «Բրիոնի» թերթը Օսմանյան կայսրությունում բնակվող հույներին կոչ էր անում զենք վերցնել և մասնակցել թուրքերի դեմ մղվելիք պատերազմին<sup>42</sup>:

Հունաստանի դեմ ռազմական նախապատրաստություններ կատարելուն զուգահեռ, թուրքական կառավարությունը շարունակում էր տերություններին համոզել, որ նրանք համաձայնվեն մինչև օկուպացիոն ջոկատների դուրս բերումը սուլթանի գերիշխանությամբ Կրետեում ստեղծել «ինքնավար» վարչություն և այդպիսով «ապահովել մահմեդական բնակչության անվտանգությունը»<sup>43</sup>: Երիտասարդ թուրքերը մեծ աղմուկ էին

<sup>39</sup> Տե՛ս «С. Петербургские ведомости», 1(14).VII.1909 г.:

<sup>40</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. I, д. № 7714, л. 127:

<sup>41</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. I, д. № 6870, л. 1:

<sup>42</sup> Տե՛ս «Ազատամարտ», 18.VI (1. VII.), 1909 թ.:

<sup>43</sup> DDF, 2—XII, № 228, էջ 316—317. Communication de l'Ambassade de Turquie à Paris, 20 juin, 1909:



բարձրացրել կղզում թուրքական բնակչության դեմ իբր կատարվող հունական «բռնությունների և հալածանքների» շուրջ: Նրանց նպատակն էր ցույց տալ, որ Կրետեին անկախություն շնորհելու կամ Հունաստանին միացնելու դեպքում լրջորեն կվտանգվի մահմեդականների կյանքի ապահովությունը: «Մահմեդականների ընդհանուր կացությունն այնպիսին է, — գրում էր թուրք լրագրողներից մեկը, — որ նրանք առ այսօր գերադասում են նորից ապրել Թուրքիայի նախկին ինքնակալական վարչակարգի պայմաններում, քան գտնվել այդպիսի իրավիճակում»<sup>44</sup>:

Կրետեի մահմեդականների հանդեպ կիրառված հունական «բռնությունները» չէին համապատասխանում իրականությանը: Հունաստանի հետ Կրետեի միությունը հռչակելուց հետո, կղզու կառավարության կողմից ձեռնարկված միջոցների հետևանքով կղզու ներքին խաղաղությունը չի խանգարվել, և մահմեդական ընտանիքները որևէ կերպ չեն անհանգստացվել: Ամբողջ կղզում չի եղել ոչ հալածանք և ոչ որևէ հուզում<sup>45</sup>: Կրետական Ազգային ժողովում իրենց պատգամավորական լիազորություններով էին ներկայացված կղզու թուրքական բնակչության ներկայացուցիչները, թուրքերեն լեզվով անարգել հրատարակվում էին «Ումիդ», «Խստիկբալ», «Իկդամ», «Հուրրիեթ» թերթերը, գործում էին մի շարք թուրքական ակումբներ և այլն: Այսուհանդերձ, թուրքական կառավարությունը, պառլամենտը, մամուլը չէին դադարում հունական «հալածանքների» մասին ահազանգելուց: Սա մի լուրջ երևույթ էր, որ չէր կարող անուշադրության մատնվել եվրոպական մամուլի կողմից: «Յումանիտեն» թուրքական մամուլի հրապարակած այդ լուրերն ու հաղորդումները անիրական ու ստահող էր համարում<sup>46</sup>:

Երկարատև վիճաբանություններից հետո պաշտպան տեղությունները մշակեցին համատեղ հայտարարություն, որը 1909 թ. հուլիսի 13-ին միաժամանակ հղեցին թուրքական, հունական և կրետական կառավարություններին: Այդ հայտա-

<sup>44</sup> M. Djinguiz, L'Islam en Crète. "Revue du Monde Musulman", № 1—2, P., 1909, էջ 101:

<sup>45</sup> St'a Gén. P. E. Bordeaux, La fin de l'affaire Crète (1908—1913). "Revue des études historiques", № 1—3, P., 1934, էջ 62:

<sup>46</sup> St'a "L'Humanité", 30.X.1908, 3.XI.1908:



րարությունը չէր նախատեսում Կրետեի քաղաքական ստատուտի որևէ փոփոխություն: Գործնական միջոցառումը, որ ցանկանում էին նրանք իրականացնել, միջազգային ջոկատների վերջնական դուրս բերումն էր կղզուց:

Կրետեի գործադիր կոմիտեին ուղղված հայտարարության մեջ նշված էր, որ զորքերը դուրս բերելու՝ պաշտպան տերությունների որոշումը հիմնված է այն համոզման վրա, որ կրետական իշխանությունները ի վիճակի կլինեն ապահովելու կարգը կղզում: Խոստանալով ապագայում ևս բարյացակամորեն վերաբերվել կրետական շահերին՝ տերությունները միաժամանակ ընդգծեցին, որ իրենց իրավունք են վերապահում անհրաժեշտության դեպքում «վերականգնել կղզու կարգն ու կանոնը»:

Թուրքական կառավարությանը հղված հայտարարության մեջ նշված էր, որ միջազգային ջոկատների դուրս բերումից հետո թուրքական և պաշտպան տերությունների դրոշների պահպանության համար Սուդայի ծոց պետք է ուղարկվեն յուրաքանչյուր տերության մեկական ռազմական: Դրանց առկայությունը վկայելու էր «Կրետեի նկատմամբ սուլթանի ունեցած գերագույն իրավունքները և տերությունների հովանավորությունը»<sup>47</sup>: Միաժամանակ, տերությունները նշում էին, որ հետագայում իրենք թուրքական կառավարության հետ վերջնականորեն կորոշեն Կրետեի ապագա քաղաքական ոեժիմը: Կրետեից այդ ջոկատների դուրս բերման որոշումը սխալ չըմբռնելու համար տերությունները խորհուրդ տվեցին հունական կառավարությանը չկատարել այնպիսի քայլեր, որոնք կարող էին Թուրքիայի կողմից ընդունվել իբրև մարտահրավեր և Կրետեի ու Հունաստանի համար ստեղծել նվազ բարենպաստ վիճակ, քան այն, որ գոյություն ունեւ գորքերի էվակուացիայի շրջանում:

Տերությունների հայտարարությունը գոհացուցիչ տպավորություն թողեց հունական կառավարության վրա: Արտաքին գործերի մինիստրը արտահայտեց իր շնորհակալությունը կրետացիների և հույների ազգային ձգտումների նկատմամբ տերությունների ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի առթիվ: Հունական կառավարությունը բավարարված էր նրանով, որ հայտարարությունները միաժամանակ կատարվեցին Կ. Պոլ-

<sup>47</sup> АВПР, ф. Канцелярия, 1909 г., д. № 35, л. 281.



սում, Աթենքում ու Կանեայում, և որ տերությունները, վերջապես, անմիջականորեն դիմեցին կրետական կառավարությանը ու դրանով իսկ փաստորեն ճանաչեցին նրան: Սակայն Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ռիաֆաթ փաշան հայտարարեց, որ իրենք տերությունների հայտարարությունը ընդունում են ցավով: Թուրք կառավարողները հասկանում էին, որ կղզուց օկուպացիոն ջոկատների դուրս բերումը նշանակում էր Կրետեի անկախության փաստի ճանաչում: Ծգնելով որևէ կերպ պահպանել Կրետեի վրա ունեցած «իշխանությունը»՝ մեծ վեզիրը դիմեց անգլիական դեսպանին՝ խնդրելով պաշտպան տերությունների չորս պահականավերին միացնել գոնե մեկ թուրքական ռազմանավ<sup>48</sup>: Բայց այդ դիմումը ոչ մի ուշադրության չարժանացավ:

Կրետեից միջազգային գործերի դուրս բերումը կատարվեց հուլիսի 27-ին: Նախքան այդ Սուդա ժամանեցին պաշտպան չորս տերությունների պահականավերը: Նրանց հեռանալուց անմիջապես հետո բոլոր պահակատեղերը գրավվեցին կրետական ժանդարմերիայի և միլիցիայի կողմից: Կրետացիները Սուդայի ծոցի կղզյակի դրոշակաձողից հանեցին թուրքական դրոշը, որը թափանցում էր չորս տերությունների դրոշների հետ և բարձրացրին հունականը: Այդ իրադարձությունները և թուրքական դրոշի հետ կապված միջադեպը ավելի բորբոքեցին հակահունական մթնոլորտը: Պառլամենտում թուրք պատգամավորները սկսեցին արտասանել ռազմատենչ ճառեր՝ պահանջելով արյան գնով Կրետեն պահել կայսրության կազմում<sup>49</sup>: Մեծ վեզիր Հիլմի փաշան սպառնաց, որ Թուրքիան կանգ չի առնի իր նավատորմը գործողության մեջ դնելու առջև՝ չվախենալով անգամ նոր Նավարինի հեռանկարից<sup>50</sup>: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ պաշտպան տերությունները օգոստոսի 4-ին կրետական կառավարությունից պահանջեցին իջեցնել հունական դրոշը, բայց հանդիպեցին մերժման:

Իրենց հերթին երիտասարդ թուրքերը Կ. Պոլսում և Սալոնիկում ցույցեր կազմակերպեցին կրետական կառավարության այդ քայլի դեմ և առաջ քաշեցին Կրետեն թուրքական

<sup>48</sup> St'a DDF, 2—XII, № 249, p. 347:

<sup>49</sup> St'a «Ազատամարտ», 17/30/. VII, 1909 թ.:

<sup>50</sup> St'a ABIP, ф. Канцелярия, 1909 г., д. № 38, л. 448:



գորքերով զավթելու պլանը<sup>51</sup>։ Կատարվեց մասնակի գորահավաք, և թուրքական նավատորմը Ջմյուռնիայից շարժվեց Կրետեից 40 մղոն հեռավորության վրա գտնվող Կարպատոս կղզին։

Ստեղծված պայմաններում Աթենքում Օսմանյան կայսրության դեսպան Գալիբ Բեմալի բեյը օգոստոսի 6-ին հունական կառավարությանը հանձնաժև վերջնագրով պահանջեց հայտարարել, որ վերջինս հավանություն չի տալիս դրոշակի հետ կապված Կանեայի միջադեպին և շահագրգռված չէ Կրետեն միացնելու գործում<sup>52</sup>։ Վերջնագիրը խիստ ծանր դրության մեջ դրեց հունական թագավորությանը։ «Եթե տերությունները մերձակա օրերում որևէ ելք չգտնեն, — նշեց «Բեռլիներ թագերլաթ» թերթը, — ապա շատ շուտով պետք է սպասել պատերազմի պայթմանը»<sup>53</sup>։

Լրջորեն անհանգստացած Թուրքիայի սպառնալից վերաբերմունքից՝ հունական կառավարությունը պաշտպանություն է խնդրում Պետերբուրգից և Փարիզից։ Ռուսական կայսրության արտաքին գործերի մինիստր Սազոնովը, օգոստոսի 7-ին ընդունելով Օսմանյան կայսրության դեսպան Թուրխան փաշային, խստորեն նախազգուշացնում է նրան՝ Հունաստանի նրկատմամբ նրա կառավարության վարած քաղաքականության վերաբերյալ<sup>54</sup>։ Սազոնովը պահանջում է դադարեցնել կայսրության մեջ հույների նկատմամբ իրագործվող հալածանքները և վերջ տալ կրետական հարցում Հունաստանի վրա ուղնչով չարդարացվող հարձակման մշտական առիթ փնտրելուց<sup>55</sup>։ Նույն օրը Կ. Պոլսի ռուսական դեսպան Չարիկովին հղած հեռագրում հրահանգվեց թուրքական կառավարության ուշադրությունը լրջորեն հրավիրել այն վտանգների վրա, որ սպառնում են Թուրքիային՝ Կրետեի, Հունաստանի և ընդհանրապես հույների նկատմամբ բռնած գրգռիչ ու անհաշտելի դիրքի պատճառով<sup>56</sup>։

<sup>51</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 1, էջ 310։

<sup>52</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 274, էջ 403, Պանաֆիոն՝ Պիշոնին, 7 օգոստոսի, 1909 թ.։

<sup>53</sup> «С. Петербургские ведомости», 29.VII (II.VIII), 1909 г.

<sup>54</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 274, էջ 403, Պանաֆիոն՝ Պիշոնին, 7 օգոստոսի, 1909 թ.։

<sup>55</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, 1909 г., д. № 37, л. 35։

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում։



Ֆրանսիական կառավարությունը իր հերթին նշեց, որ Թուրքիան կրետական հարցում պետք է դիմի միայն կղզու պաշտպան տերություններին և զգուշացրեց, որ իրերի ներկա դրությամբ նա չի կարող ռազմաժողովին էսկադրա ուղարկել կրետական ջրերը<sup>57</sup>: Օգոստոսի 13-ին տերությունները համանման նոտա հղեցին թուրքական կառավարությանը<sup>58</sup>:

Այնուամենայնիվ, կրետական հարցում չունենալով տերությունների լուրջ պաշտպանությունը՝ Հունաստանը տեղի տրվեց: Օգոստոսի 10-ին հունական կառավարությունը հայտարարեց Թուրքիային, որ ինքը բացարձակապես մասնակից չէ միացման համար ջարժմանը և ապագայում նույնպես կշարունակի պահպանել վերապահ դիրք<sup>59</sup>: Նույն օրը կրետական կառավարությունը հայտարարեց նաև, որ հունական դրոշի բարձրացման խնդրում ենթարկվելու է տերությունների որոշմանը<sup>60</sup>: Օգոստոսի 14-ին հունական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց չորս տերություններին կրետական գործերում Հունաստանի չեզոքության մասին<sup>61</sup>:

Հունաստանին սպառնացող թուրքական հարձակումը կասեցնելու և ընդհանրապես թուրք-հունական հարաբերությունների լարվածությունը թուլացնելու համար պաշտպան տերությունները օգոստոսի 18-ին դիմեցին թուրքական կառավարությանը՝ նշելով, որ կրետական հարցի առնչությամբ նա իրավունք չունի անմիջականորեն դիմելու Հունաստանին<sup>62</sup>: Նույն օրը տերությունների 250 նավաստիներ ժամանեցին Կրետե կղզու Կանեա նավահանգիստը և իջեցրին հունական դրոշը: Ռա կրկին բարձրացումը կանխելու նպատակով միջազգային այդ գորախմբի 22 նավաստիների հանձնարարվեց տեղում պահակություն կատարել:

Որոշ ժամանակ անց, նոյեմբերի 3-ին, թուրքական կառավարությունը դիմեց պաշտպան տերություններին՝ վերջնականապես լուծելու կրետական հարցը: Սակայն այդ հարցի

<sup>57</sup> St' u DDF, 2—XII, № 276, էջ 405—406:

<sup>58</sup> St' u ABIP, ф. Канцелярия, 1909 г., д. № 35, л. 354, 531:

<sup>59</sup> St' u DDF, 2—XII, № 279, էջ 409:

<sup>60</sup> St' u նույն տեղում, № 280, էջ 410:

<sup>61</sup> St' u Ed. Driault, նշվ. աշխ., էջ 31:

<sup>62</sup> St' u DDF, № 291, էջ 422, Բոմպարը՝ Պիշոնին, 19 օգոստոսի,



վերջնական լուծումը ձգձգվում էր իմպերիալիստական տերությունների պատճառով: Մասնավորապես Անգլիան ցանկանում էր կղզու ներքաղաքական իրադարձությունների այնպիսի զարգացում, որն իրեն հնարավորություն ընձեռեր իր վրա վերցնելու «կարգի պահպանումը»: Զորքեր մտցնելով Կրետե, անգլիացիները վերջնականապես կիրականացնեին Սուդայի ծոցը բրիտանական ռազմածովային ուժերի միջերկրածովյան կարևոր հենակետի վերածելու նպատակը: Միաժամանակ, անգլիական կառավարող շրջանները ելնելով Օսմանյան կայսրությունում իրենց քաղաքական ազդեցությունը պահպանելու նրկատառումից, կղզում անձեռնմխելի էին թողնելու սուլթանի այսպես կոչված «գերագույն իրավունքները»<sup>63</sup>: Բրիտանական կառավարությունը համոզված էր, որ կրետական հարցը առավել դյուրությամբ հնարավոր էր լուծել կղզու «ինքնավարությունը» թուրքական սյուզերենությանը ենթարկելու պայմանով<sup>64</sup>: Լոնդոնում հասկանում էին, որ եթե Կրետեն միանա Հունաստանին, ապա ռազմաստրատեգիական բացառիկ նշանակություն ունեցող Սուդայի ծոցը կորած է բրիտանական շահերի համար, ուստի չէին շտապում կրետական հարցը լուծելու: Նրանց բավարարում էր Կրետեի շուրջ ստեղծված քաղաքական վիճակը, որի հետևանքով Սուդայի ծոցում տնօրինություն էին անում բրիտանական ռազմածովային ուժերը<sup>65</sup>:

Թուրք-հունական հարաբերությունների ծայրագույն լարվածության այդ շրջանում խիստ կերպով վատթարացավ Օսմանյան կայսրության մեջ բնակվող հույների կացությունը: Տնտեսական ճնշումից բացի հույները ենթարկվում էին կատաղի և դաժան հալածանքների: Չերբակալվում էին բազմաթիվ հույներ, թուրքական զորքերը պատժիչ գործողություններ էին կատարում հունական գյուղերում: Փոքր Ասիայի առափնյա շրջաններում, որտեղ գերակշռում էր հունական բնակչությունը, հալածանքները հետզհետե ընդունում էին վայրագ բռնույթ: Հույները ենթարկվում էին ամեն տեսակի բռնությունների, ջարդերի, բանտարկության, հանձնվում էին ռազմական ատյաններին: Անդրադառնալով այդ իրադարձություններ-

<sup>63</sup> *СГВ ЦГВБМФ*, ф. 418, оп. I, д. № 4196, л. III:

<sup>64</sup> *Ст'а DDF*, 2—XII, № 307, էջ 451, Պիշոնը՝ դեսպաններին, 10 սեպտեմբերի, 1909 թ.:

<sup>65</sup> *Ст'а И. С. Галкин*, նշվ. աշխ., էջ 42:



րին՝ Պետերբուրգի հեղինակավոր թերթերից մեկը «Երիտա-  
սարդ թուրքերի գազանությունները և մոլեգնությունը ուղղա-  
փառ հույների նկատմամբ» հոդվածում գրեց. «Ուղղափառ  
հույներին ենթարկում են զանազան տանջանքների և նույ-  
նիսկ մահվան, դրանով հիշեցնելով պատմության ամենամը-  
ռայլ ժամանակաշրջանները: Թուրքական տիրապետության  
ամբողջ մթնոլորտը այժմ լցված է հասարակ, դժբախտ մարդ-  
կանց ողբ ու հառաչով, որոնց վիճակված է... մեռնել մտրակի  
ու խզակոթի հարվածների տակ»<sup>66</sup>:

Օսմանյան կայսրությունում բնակվող հույն ժողովրդի հան-  
դեպ իրականացվող միջնադարյան հալածանքները բխում էին  
երիտթուրքերի օսմանիստական, հետադիմական, շովինիս-  
տական քաղաքականությունից: Թուրքական ազգայնականու-  
թյունը զարգանում էր ազգային ճնշման և թուրքական քաղա-  
քականության հետագա ուժեղացման պայմաններում: Եթե  
չլինեք կայսրության ոչ թուրք ժողովուրդների հետզհետե ա-  
ճող ազգային-ազատագրական շարժումը, երիտթուրքերը, ինչ-  
պես հավաստիացնում էր նրանց պաշտոնաթերթ «Թանինը»,  
«առանց վայրկյան մը իսկ կորսնցնելու կը թրքացնեին այսօր  
Օսմ. կայսրության մեջ գտնվող բոլոր ցեղերը: Այս մասին  
բնավ պետք չէ տարակուսել»<sup>67</sup>:

Երիտթուրքերը, որոնք համիդյան ժամանակաշրջանում ա-  
ռաջ էին քաշում «ազգային իրավահավասարության» լոզունգ-  
ներ, իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո կայս-  
րությունում սկսեցին բորբոքել ազգային թշնամանք և, հեղա-  
փոխության շրջանում արտահայտած իրենց խոստումներին  
հակառակ, հանդես եկան ոչ թուրք ժողովուրդների ազգային-  
ազատագրական շարժումները խեղդողի դերում<sup>68</sup>:

Հույն-թուրքական հարաբերությունների Ժայռահեղ լարվա-  
ծությունը նպաստավոր առիթ էր կայսրության սահմաններում,  
մասնավորապես հունաբնակ տերիտորիաներում, ազգային շար-  
ժումները խեղդելու համար: Այդ քաղաքականությունը երիտ-  
թուրքերը առանձնապես շեշտված կերպով փորձեցին իրա-

<sup>66</sup> «С. Петербургские ведомости», 29.IX(12.X), 1909.

<sup>67</sup> «Ազատամարտ», 19/1. IX, 1909:

<sup>68</sup> См. Г. З. Алиев, Турция в период правления младотурок (1908—1918 гг.), М., 1972, т. 2 180:



կանացնել թուրքական տիրապետության տակ գտնվող Էգեյան ծովի կղզիների նկատմամբ:

1909 թ. հուլիսի սկզբներին երիտթուրքական կառավարությունը վճռականորեն հանդես եկավ Էգեյան կղզիների, այդ թվում նաև Դոդեկանեզյան արշիպելագի ազգային արտոնությունների և տեղական սահմանափակ ինքնավարությունների լիակատար ոչնչացման որոշումով: Այդ խնդրի կենսագործումը դյուրացնելու նպատակով որոշվեց նաև Էգեյան կղզիները ենթարկել նոր վարչական բաժանման՝ կայսրության նահանգներին միացնելու միջոցով: Միաժամանակ, կղզիների բնակչությունը հարկադրվեց աննախադեպ ծանր պետական հարկերով ու տուրքերով: Թուրքերենը հռչակվեց որպես միակ պաշտոնական լեզու: Կղզիների բնակչության հավանական դիմադրությունը ամենայն դաժանությամբ ճնշելու նպատակով Դոդեկանեզյան կղզիների նահանգապետը հրահանգ ստացավ՝ Ջմյուռնիայից ռազմական համալրումներ պահանջելու՝ տեղական կայազորներին օգնության հասնելու համար: Սակայն կղզիներում ծավալվող ազգային-ազատագրական շարժման հետևանքով 1910 թ. ապրիլին թուրքական կառավարությունը հարկադրված էր հրաժարվել իր ծրագրերից<sup>69</sup>:

Երիտթուրքերը համոզված էին, որ միայն հունական պետության լիակատար ջախջախման դեպքում հնարավոր կլիներ ընդմիջտ վերջ տալ կայսրությանը հպատակ հույն ժողովրդի մի ստվար զանգվածի ազգային-ազատագրական շարժմանը: Այդ տեսակետից հատկանշական է Բելգրադի թուրքական դեսպանության աշխատակիցներից մեկի կարծիքը. «Կրետեն այս իրադարձություններում խաղում է միայն երկրորդական դեր, — նշում էր նա: Մենք հասկանում ենք, որ կղզին ավելի կամ նվազ չափով կորած է մեզ համար: Սակայն մեզ համար անհրաժեշտ է մեկընդմիջտ ոչնչացնել համահելլենական ազիտացիայի ակունքները»<sup>70</sup>: Թուրք դիվանագետի այս հայտարարությունը անհիմն չէր: 1910 թ. օգոստոսին Սալոնիկում կայացած երիտթուրքական փակ համագումարում ներքին գործերի մինիստր Թալեաթը հայտարարեց, որ օսմանականաց-

<sup>69</sup> St. J. Z. Stéphanopoli, Les Iles de l'Égée. Leurs privilèges. Avec documents et notes statistiques, Athènes, 1912, էջ 44—47:

<sup>70</sup> «С. Петербургские ведомости», 23.VII(10.VIII), 1909 г.



ման քաղաքականությունը կարող է հաջողություն ունենալ միայն և միայն այն դեպքում, երբ լիովին ջախջախվեն բալկանյան պետությունները: «Օսմանականացման գաղափարը ձախողվում է և կծախողվի այնքան ժամանակ, քանի դեռ մեր շուրջը գոյություն ունեն բալկանյան անկախ պետություններ, որոնք սնուցում, աջակցում և խրախուսում են այդ սեպարատիստական ձգտումները»<sup>71</sup>: Մենք անպայման հաջողություն կունենանք, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ մենք խաղաղեցնենք մեր հարևաններին, — ընդգծում էր նա<sup>72</sup>:

Հունաստանի ռազմաքաղաքական ու ֆինանսական ծանր վիճակը, անգլո-ֆրանսիական կապիտալից ունեցած կախվածությունը, կրետական հարցում ցուցաբերած անվճռականությունը խոր դժգոհություն էր առաջացնում հունական բուրժուազիայի և բնակչության լայն շրջաններում: Հունական առաջադեմ սպաների մի խումբ, որը կապված էր բուրժուական ընդդիմադիր շրջանների հետ, 1908 թ. ստեղծեց Ռազմական լիգա կազմակերպությունը, որը հանդես էր գալիս Հունաստանի ներքաղաքական կյանքի դեմոկրատացման, տնտեսական վերափոխումների ու ռազմական ուժերի ամրապնդման ծրագրով: Օգտագործելով կրետական հարցը և միապետական վարչակարգի դեմ երկրի ներսում գոյություն ունեցող դժգոհությունը՝ գնդապետ Ջորբայի ղեկավարությամբ Ռազմական լիգան 1909 թ. օգոստոսի 28-ին կատարեց պետական հեղաշրջում<sup>73</sup>:

Հունաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը վերահսկող Ռազմական լիգան կրետական հարցում ցուցաբերեց հետևողական քաղաքականություն և Կրետեի քաղաքական ղեկավարների հետ համագործակցելու ձգտում: Կրետեի ականավոր գործիչներից է. Վենիզելոսը 1909 թ. դեկտեմբերին արդեն դարձավ Ռազմական լիգայի խորհրդակալը<sup>74</sup>: Հունվարի սկզբին նա ժամանեց Աթենք և հանդիպումներ ունեցավ Հունաստանի քաղաքական կուսակցությունների ղեկավարների, ինչպես նաև՝ Անգլիայի դեսպան Էլիոտի հետ<sup>75</sup>:

<sup>71</sup> René Pinon, նշվ. աշխ., էջ 101:

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>73</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 140:

<sup>74</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 165:

<sup>75</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 168, 172:



Վենիգելուսի և Ռազմական լիգայի միջև ընթացող բանակցությունների հետևանքով որոշվեց համաձայնեցնել Հունաստանում և Կրետեում կատարվող գործողությունները<sup>76</sup>։ Վենիգելուսի քաղաքական դերը այդ ժամանակվանից ի վեր դարձավ որոշակի։ Նա Աթենք հրավիրվեց արդեն որպես պատգամավորներից մեկը, որոնց, ըստ «Ռեչ» թերթի կանխատեսման, Կրետացիները ապագայում պետք է ուղարկեին հունական պառլամենտ<sup>77</sup>։

Սակայն ներքաղաքական ճգնաժամը Հունաստանում շարունակվում էր։ Անվճռական քաղաքականություն վարող Մավրոմիխալիսի կառավարությունը Ռազմական լիգայի պահանջով հրաժարական տվեց։ 1910 թ. հունվարի 18-ից Դրագումիսի գլխավորած կառավարության ստեղծումը, որի կազմում տեղ գրավեցին Ռազմական լիգայի պարագլուխ գնդապետ Զորբան և Կալերգին, Կ. Պոլսում գնահատվեց որպես «հույնթուրքական հարաբերությունների հետագա սրման նշան»<sup>78</sup>։

Հունաստանի ներքաղաքական կյանքը դեմոկրատացնելու, արտաքին դրությունը կայունացնելու և կրետական հարցում վճռական դիրք գրավելու համար Ռազմական լիգան, արտահայտելով հունական բուրժուազիայի շահերը, որոշակի մտադրություն էր դրսևորում միապետական վարչակարգը երկրում տապալելու ուղղությամբ։

Հունաստանում իշխող և որոշակիորեն Անտանտի երկրների քաղաքական ազդեցության տակ գտնվող միապետական վարչակարգի տապալումը հղի էր գերմանական դիրքերի ուժեղացման հեռանկարով։ Քաղաքական այդ հնարավոր շրջադարձը՝ իր հավանական հետևանքներով, լուրջ անհանգստություն առաջացրեց Եռյակ համաձայնության ճամբարում, մասնավորապես՝ Ռուսաստանում։ Պետերբուրգից հնչեցին նախագգուշացման լուրջ սպառնալիքներ։ «Հուսահատված Կրետեի միության ձգձգումից, — գրում էր ռուսական արտգործմինիստրության օրգանը, — Վենիգելուսի կողմնակիցները չեն կարողանում այլ միջոց գտնել Եվրոպային հրահրելու, բացի դինաստիական ճգնաժամ առաջացնելուց։ Սակայն, — նշում էր թերթը, — այդ քայլը պաշտպան տերությունների կողմից ոչ

<sup>76</sup> См. И. С. Галкин, *Уд. ш.ш.*, т. 2, 58.

<sup>77</sup> См. «Речь», 19.1 (I. II), 1910.

<sup>78</sup> И. С. Галкин, *Уд. ш.ш.*, т. 2, 58.



մի գնով չի կարող թուլատրվել: Եվրոպան հարկադրված կլինի եռանդուն կերպով միջամտել՝ լինի դա Կրետեն շրջափակելով և կամ այն վերստին օկուպացնելով»<sup>79</sup>:

Թուրք-հունական լարված հարաբերությունների այս շրջանում կատարվեցին թուրքական զորքերի կենտրոնացումներ, իսկ թուրքական ռազմանավերը շարժվեցին դեպի կրետական ջրերը<sup>80</sup>: «Թուրքական զորքերի կողմից կղզու վերագրավումը միայն կարող է հեռացնել թուրք-հունական պատերազմը» — փետրվարի 6-ին գրեց «Թանինը»<sup>81</sup>: Բորբոքելով պատերազմի մթնոլորտը, թուրքական մամուլը սպառնում էր, որ այն վայրկյանին, երբ հունական պառլամենտ կընդունվեն կրետական պատգամավորները, թուրքական ռազմանավերը ոմբակոծելու են Պիրեոնը, իսկ բանակը խուժելու է Լարիսայի դաշտը<sup>82</sup>:

Թուրք-հունական հարաբերությունների լարվածությունը ստիպեց պաշտպան տերություններին հանդես գալու հարցի կարգավորման տարբեր առաջարկներով: Փետրվարի 18-ին Կրետեի Գործադիր կոմիտեին ներկայացված հայտարարությամբ նրանք նշեցին, որ չեն կարող թուլատրել կղզու բընակչության մասնակցությունը Հունաստանում կայանալիք պառլամենտական ընտրություններին: Հակառակ դեպքում, սպառնում էին նրանք, գործնական միջոցներ կձեռնարկվեն արգելելու համար այդ նպատակի իրագործումը<sup>83</sup>:

Այսուհանդերձ, 1910 թ. մարտի 7-ին կայացան Կրետեի Ազգային ժողովի ընտրությունները: Մայիսի 9-ին Գործադիր կոմիտեի նախագահ Սկուլիդիսը Հունաստանի թագավորի անունից «կրետացիների հեղինական ժողովը» հայտարարեց բացված, որից հետո Հունաստանի թագավորին հավատարմության երդում տրվեց: Այս կապակցությամբ 16 թուրք պատգամավորները բողոք հայտնեցին, որի հետևանքով դաիլիժում քաջքըրտոց առաջացավ: «Կորչե՛ն մահմեդականները» բացականչությունների տակ թուրք պատգամավորները դուրս եկան ժողովարանից և պաշտպան տերությունների ավագ հյուպատոսին

<sup>79</sup> "Journal de St.-Petersbourg", 11(24).11.1910.

<sup>80</sup> Տե՛ս Ed. Driault, նշվ. աշխ., էջ 37:

<sup>81</sup> Տե՛ս V. Bérard, La mort de Stambul. P., 1913, էջ 146:

<sup>82</sup> Տե՛ս «Ազատամարտ», 20(2). II, 1910:

<sup>83</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 425, p. 647:



հանձնեցին իրենց բողոքը<sup>84</sup>: Նույն օրվա երեկոյան տեղական թուրքական թերթերը հրապարակեցին թուրք պատգամավորների հայտարարությունը, որտեղ նրանք «հիմնավորում են իրենց իրավունքները բացառապես թուրքական սուլերեն իշխանության նկատմամբ և Կրետեում չեն ծանաչում այլ կարգ, բացի թուրքական կառավարության շնորհած ինքնավարությունից»<sup>85</sup>:

Չկամենալով բարդացնել կղզու և տերությունների հարաբերությունները, կրետական Ազգային ժողովի նախագահ Վենիզելոսը, Միխելիդակիսը և ազատագրական շարժման այլ գործիչներ նույն երեկոյան այցելելով մահմեդական ակումբ՝ ավստոսանք հայտնեցին կատարված միջադեպի վերաբերյալ: Բացի այդ, Վենիզելոսը իր «Կիրիքս» թերթում դատապարտեց Ազգային ժողովում կատարվածը<sup>86</sup>: Մայիսի 13-ին թուրքական կառավարությունը պաշտպան տերություններին բողոքեց կրետական Ազգային ժողովում տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ<sup>87</sup>: Կրետական հարցը կրկին քննարկվեց օսմանյան պառլամենտում: Արտաքին գործերի մինիստր Ռիֆաթ փաշան հրապարակեց պաշտպան տերությունների հայտարարությունը: Այնտեղ ասվում էր, որ կրետական Ազգային ժողովի անդամների մեկ մասի կողմից Հունաստանի թագավորին երդվելը չի կարող փոխել կղզու քաղաքական ստատուս քվոն<sup>88</sup>: Մինիստրն ասաց. «Այժմ էն կրնամ անհատաբար հայտարարել, որ այս պատասխանը գոհացուցիչ չէ: «Ստատուս քվոն պիտի պահպանվի» խոսքը մենք պիտի ընդունենք իբրև պահպանումը մեր վեհապետական իրավունքներուն ու ըստ այնմ պիտի պատասխանենք...: Կրետեի կացությունը փոխել՝ կրետացիներուն ձեռքը չէ, ու ինչ որ ալ ընեն, Կրետե Թուրքիո մեկ մասը պիտի մնա»<sup>89</sup>: Երիտթուրքական մամուլը, սպառնալով Հունաստանին, պահանջում էր, որպեսզի նա հայտարարի,

<sup>84</sup> Տե՛ս И. С. Галкин, նշվ. աշխ., էջ 64—65:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>86</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>87</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 493, էջ 760, Բ. Ղոան նոտան պաշտպան տերություններին, 13 մայիսի, 1910 թ.:

<sup>88</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 499, էջ 777, Պաշտպան տերությունների նոտան Բ. Ղոանը, 22 մայիսի, 1910 թ.:

<sup>89</sup> «Ազատամարտ», 29.4/12. V, 1910:



որ ինքը հավանություն չի տալիս կրեոացիների ընթացքին: «Արդեն ուշ կամ կանուխ պիտի ստիպվի այսպես ընել, կամովին կամ բռնի, — գրում էր «Իկդամը» և ահաբեկում, — Կրետե Հունաստանի գերեզմանը պիտի ըլլայ»<sup>90</sup>:

Կրետական Ազգային ժողովում կատարված միջադեպը վերստին օգտագործվեց հակահունական հալածանքները ուժգնորեն ծավալելու համար: Երիտասարդ թուրքերի ղեկավարությամբ բազմահազարանոց միտինգների մասնակիցները պատրաստակամություն էին արտահայտում իրենց արյան վերջին կաթիլը թափել հանուն Կրետեում օսմանյան «իրավունքների» պաշտպանության, կոչ էին անում բոլոր օսմանցիներին՝ կամավորական գնդեր կազմելու և Կրետեի վրա շարժվելու համար: Երիտթուրքերի անմիջական նախաձեռնությամբ Էգեյականի նավահանգիստ Սալոնիկում կազմվեց «Կրետեի ազգային պաշտպանության կոմիտե», որի նպատակն էր աջակցել Կրետեի վերաբերյալ թուրքական կառավարության որոշումներին, պատերազմի ժամանակ կամավորներ հավաքագրել և աջակցել Կարմիր մահիկին<sup>91</sup>: Կրետեի մահմեդական բնակիչները, իրենց հերթին, հրահրում էին թուրքական կառավարության միջամտությունը՝ տագնապալի հեռագրերով ահազանգելով, որ կղզու մահմեդականների կյանքը վտանգի մեջ է<sup>92</sup>:

Կրետե կղզում քաղաքական իրադրությունը բորբոքելու և այն թուրքական գերիշխանության տակ վերադարձնելու ուղղությամբ մեծ եռանդ էր դրսևորում Կ. Պոլսում ստեղծված գաղտնի կրետական կոմիտեն, որը մեծ ազդեցություն ուներ կղզու մահմեդականների վրա և իր բազմաթիվ անդամներն ու գործակալներն ուներ Կրետեում<sup>93</sup>:

Երիտասարդ թուրքերը բացահայտորեն պատերազմ էին ցանկանում՝ իբր դրա մեջ տեսնելով սահմանադրական կարգերը փրկելու միակ միջոցը: «Միակ ռեժիմը, որ Թուրքիո կարելի պիտի դարձնե վերածնունդը, սահմանադրական ռեժիմն է, — հայտարարեց սենատի նախագահ Խալիլ Բեյը: Արդ, սահմանադրությունը ծանրապես և թերևս առհավետ պիտի

<sup>90</sup> «Բյուզանդիոն», 5(18). V, 1910:

<sup>91</sup> Տե՛ս «Ազատամարտ», 3(16). VI, 1910:

<sup>92</sup> Տե՛ս Նույն տեղում, 8(21). V, 1910:

<sup>93</sup> M. Djinguiiz, նշվ. աշխ., էջ 101—102:



վտանգվի՝ եթե Թյուրքիա ձախողեր Կրետեի խնդրոյն մեջ: Ահա թե ինչու համար այժմու կացութեան հանդեպ չպիտի վարանիլ պատերազմ հայտարարելու, ինչ ալ ըլլան հետևանքները»<sup>94</sup>:

Ուրեմն, փոխանակ կայսրութեան տնտեսական, քաղաքական, ազգային և մշակութային կյանքում արմատական և լուրջ վերափոխումներ կատարելու, երիտասարդ թուրքերը սահմանադրական կարգի փրկութիւնը տեսնում էին... Կրետե կղզին վերանվաճելու մեջ: Դա արկածախնդրական քաղաքականություն էր, որի մեջ երիտթուրքերը փնտրում էին երկրի ներքին և արտաքին ձգնաժամից դուրս գալու ելքը:

1910 թ. մայիսի 25-ի հաղորդման մեջ Կ. Պոլսի ոռոսական դեսպան Չարիկովը նշում էր. «Արդի թուրքական կառավարութիւնը հունական արկածախնդրութեան մեջ է ներքաշվում հանուն իր, «Միություն և առաջադիմություն» կուսակցութեան և Թուրքիայի սահմանադրական կարգի փրկութեան»<sup>95</sup>: Այս միտքը հաստատում էին երիտթուրքերը խոսքով ու գործով: «Թուրքական նավատորմը, — գրեց «Թանիւնը», — պետք է կրետական ջրերը վերադառնա և խարխիս ձգելով Սուդանում, իր վերջնագիրը հաղորդի կրետացի ըմբոստներին»<sup>96</sup>: Թերթը այնուհետև սպառնում էր. «Քանի որ Եվրոպան չի կարողանում պաշտպանել օսմանյան շահերը, Թուրքիան ինքը կպաշտպանի, և եթե մեծ տերութիւնները ցանկանում են, կարող են անել մի երկրորդ Նավարին»<sup>97</sup>:

Կրետական հարցում դրսևորած երիտթուրքերի սպառնալի տոնը հակահարված ստացավ ոռոսական դիվանագիտութեան կողմից: «Այդ վերաբերմունքը և այդ լեզուն ավելի քան վտանգավոր են և թուրքական կառավարութեան շահերը պահանջում են անհապաղորեն վերջ տալ դրան», — նշեց ոռոսական արտգործմինիստրութիւնը և նախազգուշացրեց, որ թուրքական կառավարութիւնը իրավունք չունի անգամ երազելու իր նավատորմը կրետական ջրերը ուղարկելու մասին<sup>98</sup>: Սակայն հակահունական մոլուցքը չէր զսպվում: «Թուրքիան, — սպառ-

<sup>94</sup> «Ազատամարտ», 14 (27). V. 1910:

<sup>95</sup> АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. № 33, л. 255.

<sup>96</sup> «Journal de St.-Petersbourg», 14 (27). V. 1910.

<sup>97</sup> Նույն տեղում:

<sup>98</sup> Տե՛ս նույն տեղում:



նում էր «Թանինը», — կարող է կործանվել, բայց նա իր հետ արյան վիհը կնետի նաև ուրիշներին»<sup>99</sup>:

Հունաստանի վրա ծնշում գործադրելու միջոցներից մեկը հունական առևտուրը բոլկոտի ենթարկելու և դրանով իսկ հույներին տնտեսական մեծ հարված հասցնելու քաղաքականությունն էր: Խոսելով հակահունական բոլկոտի տնտեսական հետևանքների մասին «Թանինը» նշում էր. «Այս միջոցառումը ամենաօրինականն է և ամենատրամաբանականը: Չնայած մեծ վնասներին, որ անխուսափելիորեն սկզբնական շրջանում հանգեցնելու է այս տնտեսական պատերազմը, Թուրքիայի ապագա օգուտները լինելու են խիստ նշանակալի, որովհետև հունական դրոշը և հունական ապրանքները ստիպված կլինեն թողնել այն մարզը, որտեղ այժմ գնում է այս պատերազմը: Այդ տեղը գրավվելու է օսմանյան առևտրի կողմից»<sup>100</sup>:

4. Պոլսում ոռոսական դեսպան Չարիկովը 1910 թ. հուլիսի 12-ի հաղորդման մեջ նշում էր, որ ինքը և մյուս դեսպանները այդ բոլկոտը դիտում են որպես տնտեսական հողի վրա մղվող պայքար: Հակահունական բոլկոտը, նրանց կարծիքով, ուղղված էր «Թուրքիայում տիրապետող հույների առևտրական և տնտեսական գերիշխանության դեմ»<sup>101</sup>: Սակայն թուրքերի կողմից բոլկոտը դիտվում էր նաև որպես Հունաստանի դեմ պատերազմ հրահրելու միջոց: Այդ միտումը շատ պարզորեն արտահայտեց երիտասարդ թուրքերի Մոնաստիրի պաշտոնական օրգան «Նուր հաքիքաթը»՝ նշելով, որ բոլկոտի նպատակն է ստիպել Հունաստանին խզելու դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի հետ, որը պետք է հանդիսանա պատերազմի նախանշան<sup>102</sup>: Օրինակ, 4. Պոլսի և Սալոնիկի բոլկոտը կազմակերպող հանձնաժողովները կոչ էին անում շարունակել պայքարը հելլենների դեմ, «որոնք ուզում են ձեռք մեկնել սիրելի Կրետեին, որն անբաժանելի մեկ մասն է մեր սիրելի հայրենիքի»<sup>103</sup>:

Բոլկոտի հետևանքով դադարեց հելլենական առևտրանավերի գործունեությունը օսմանյան ջրերում: «Թանինը» ընդ-

<sup>99</sup> V. Bérard, նշվ. աշխ., էջ 151:

<sup>100</sup> «С. Петербургские ведомости», 18.VI(I.II), 1910 г.

<sup>101</sup> АВПР, ф. Канцелярия, 1910 г., д. № 38, л. 38.

<sup>102</sup> Stéu V. de la Jonquièrre, նշվ. աշխ., էջ 268:

<sup>103</sup> «Ազատամարտ», 5(18). IV, 1910:



գծում էր, որ անհրաժեշտ է 100 կամ 200 հազար ֆունտով գնել հունական առևտրականները, որոնք բոլկոտի հետևանքով անգործության էին մատնվել և վերսկսել առևտրական գործառնությունները<sup>104</sup>:

Բոլկոտի ծանրությունը իրենց վրա կրեցին նաև թուրքահայատակ հույները: Կառավարության գիտությամբ ու հովանավորությամբ ստեղծվում էին զինված խմբեր, որոնք բռնությամբ փակում էին հունական խանութները և սպառնում էին կազմակերպել հունական բնակչության ջարդ<sup>105</sup>: Մահմեդականների արտակարգ գրգռվածությունը, որ հրահրվում և բորբոքվում էր խոջաների կողմից մզկիթներում, խիստ սպառնալի բնույթ էր ընդունում մասնավորապես Կ. Պոլսում, որտեղ հուզումն ու լարվածությունը հասել էր ծայր աստիճանի<sup>106</sup>: Սալոնիկում ամբողջ իշխանությունը փաստորեն անցել էր բոլկոտի հանձնաժողովի ձեռքը, որն, ինչպես յուրօրինակ կառավարություն, պատժում և ողորմում էր ում որ ցանկանում էր և ինչպես ուզում էր<sup>107</sup>: Հալաթանքները հանգեցրին նաև հունական բնակչության մասնակի ջարդերի<sup>108</sup>:

Հակահունական կամպանիան ընդգրկեց նաև Կրետեն: Եվ զարմանալի է, որ այդ կղզում, թուրքական վարչության բացակայության պայմաններում անգամ, մահմեդականների կողմից թույլ տրվեցին «սանձարձակ բռնությունների բազմաթիվ դեպքեր»<sup>109</sup>:

Երիտթուրքերը տնտեսական պատերազմ հայտարարեցին նաև օտարերկրացիներին՝ հուսալով դրանով ճնշում գործադրել տերությունների վրա՝ կրետական հարցը իրենց շահերին համապատասխան լուծել տալու համար: Օտարերկրյա կապիտալին հասցվող վնասը կանխելու նպատակով, 1910 թ. հունիսի վերջին Կ. Պոլսի դեսպանները թուրքական կառավարությանը պահանջ ներկայացրին՝ հակահունական բոլկոտը և դրա հետ կապված հալաթանքները դադարեցնելու<sup>110</sup>:

<sup>104</sup> Տե՛ս «С. Петербургские ведомости», 18.VI (I.VII), 1910 г.:

<sup>105</sup> Տե՛ս «Новое время», 16(29).V.1910 г.:

<sup>106</sup> Տե՛ս «С. Петербургские ведомости», 17(30).VI, 1910 г.:

<sup>107</sup> Տե՛ս «Новое время», 16(29).V, 1910 г.:

<sup>108</sup> Տե՛ս И. С. Галкин, նշվ. աշխ., էջ 83:

<sup>109</sup> «L'Humanité», 20.8, 1910:

<sup>110</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 522, էջ 807, Բոմպարը՝ Պիշոնին, 28 հու-



Խզելով առևտրական հարաբերությունները Հունաստանի հետ և չունենալով սեփական առևտրական նավատորմ, Թուրքիան զրկվեց նաև հելլենական առևտրական միջնորդ նավատորմի ծառայություններից: Բավական է նշել, որ թուրքական բոլոր մեծ ու փոքր նավահանգիստները ժամանող օտարերկրյա առևտրական նավերի գրեթե կեսը պատկանում էր հելլեն նավատերերին: Քննադատելով երիտթուրքերի այդ անհեռատես միջոցառումը՝ Կ. Պոլսում հրատարակվող «Լևանտ Հերալդ» թերթը գրում էր. «Պետք է կատարելապես անտեղյակ լինել մեր երկրի տնտեսական կամ առևտրական վիճակին՝ հելլենական նավերի դեմ բոլկոտի որոշում կայացնելու համար»<sup>111</sup>: «Ստամբուլ» թերթը նույնպես նշում էր, որ բոլկոտի կազմակերպիչները ամենևին հաշվի չեն առել տնտեսական «այն աղետը, որ նրանք պատճառում են իրենց համաքաղաքացիների հսկայական մեծամասնությանը»<sup>112</sup>: Ինքնըստինքյան հասկանալի է, որ թուրքական մամուլը լրջորեն մտահոգված էր միայն կայսրության տնտեսական շահերով, որոնք լրջորեն տուժում էին երիտթուրքերի կազմակերպած հակահելլենական բոլկոտի հետևանքով: Նույն «Լևանտ Հերալդ» թերթի վկայությամբ, Թուրքիան Հունաստանին տարեկան վաճառում էր 500 հազ. լիրա արժողությամբ ապրանք, իսկ նրանից գնած ապրանքների արժեքը հասնում էր 700 հազարի:

Տերությունների ձնշմամբ, թուրքական կառավարությունը հուլիսի 1-ի շրջաբերականով տեղական իշխանություններին խորհուրդ տվեց հրաժարվել բոլկոտից, սակայն դա կրում էր սուկ ձևական բնույթ: «Բոլկոտը ոչ միայն վերջ չի գտել, այլև ավելի է ծավալվում», — հուլիսի 11-ին հաղորդեց Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնը<sup>113</sup>: Հակահունական բոլկոտի հետևանքով միայն հելլենահպատակներին հասցված վրնասը կազմեց 20 միլիոն ֆրանկ<sup>114</sup>:

Կրետական հարցի վերջնական լուծման ձգձգման պատճառներից մեկն էլ այն էր, որ կարգավորման ուղիների վե-

<sup>111</sup> N. Nicolaïdès, նշվ. աշխ., էջ 27:

<sup>112</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>113</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 582, էջ 819, Պ. Կամբոնը՝ Պիշոնին, 11 հուլիսի, 1910 թ.:

<sup>114</sup> Տե՛ս Ed. Driault, նշվ. աշխ., էջ 54:



րաբերյալ պաշտպան մտնությունները միջև միասնական կար-  
ծիք գոյություն չունեն։ Այդ հանգամանքը, իր հերթին, պայ-  
մանավորված էր վերջիններիս և Օսմանյան կայսրության տղ-  
յալ շրջանի քաղաքական ու տնտեսական փոխհարաբերու-  
թյուններով։ Օրինակ, Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հա-  
մաձայն էին մասնակցել կղզու վերջնական ստատուսի որոշ-  
մանը, եթե այն չհակասեր օսմանյան սուվերենությանը<sup>115</sup>։  
Գերմանիան, նշում էր Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Բոմ-  
պարը, կրետական հարցը ցանկանում է օգտագործել որպես  
մի ցատկահարթակ՝ Թուրքիայում իր ազդեցությունը հաստա-  
տելու համար<sup>116</sup>։ Իսկ Չարիկովի հունիսի 12-ի հաղորդման  
համաձայն Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր  
Էթենտալը Ռիֆաթ փաշային մեծ համակրանք էր արտահայ-  
տել Կրետեի նկատմամբ Թուրքիայի ունեցած իրավունքների  
վերաբերյալ<sup>117</sup>։ Պաշտոնապես չմասնակցելով կրետական հար-  
ցի լուծմանը՝ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան անմիջա-  
կանորեն աջակցում էին Թուրքիային և պատրաստակամու-  
թյուն էին հայտնում՝ թուրք-հունական պատերազմի դեպքում  
արգելել հոգուտ Հունաստանի որևէ միջամտություն<sup>118</sup>։

Այս հակասությունները երիտթուրքերին հնարավորություն  
ընձեռեցին խուսանավել տերությունների երկու խմբավորում-  
ների միջև ու կրետական հարցը ծառայեցնել կայսրության  
ընդհանուր քաղաքական շահերին։ Իրենց պաշտոնական մա-  
մուլում նրանք սկսեցին արժարժել այն միտքը, ըստ որի Թուր-  
քիան միանալու էր այն դաշինքին, որը գործնականում կնը-  
պաստեր կղզին կայսրությանը վերադարձնելուն։ 1910 թ. հու-  
նիսի 5-ին «Թանինը» գրեց. «Եվրոպայի հավասարակշռությու-  
նը պահպանելու կոչված տերությունների երկու խմբավորում-  
ներում Թուրքիան կկարողանա խաղալ նշանակալի դեր։ Եթե  
առայժմ նա մի կողմ էր թողնված, ապա կրետական հարցը  
առիթ է դառնում դուրս գալու իր չեզոքության քաղաքակա-  
նությունից և արտահայտվելու հոգուտ այս կամ այն կողմի։

<sup>115</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 505, էջ 789, Բոմպարը՝ Պիշոնին, 31 մա-  
իսի, 1910 թ.։

<sup>116</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>117</sup> Տե՛ս АВІР, ф. Канцелярия, 1910 г., д. № 37, л. 870։

<sup>118</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 531, էջ 825, Ղեվիլը՝ Պիշոնին, 13 հուլի-  
սի, 1910 թ.։



Այս տեսակետից ծիշտ է ասել, որ կրետական հարցը կարող է անդրադառնալ եվրոպական ամբողջ քաղաքականության վրա»<sup>119</sup>:

1910 թ. հունիսի 26-ին պաշտպան տերությունները հայտարարեցին Կրետեի գործադիր կոմիտեին, որ եթե Ազգային ժողովը իր ապագա նիստում առանց երդում պահանջելու չընդունի մահմեդական պատգամավորներին, ապա «իրենք կձեռնարկեն այնպիսի միջոցառումներ, որոնք հարմար կդատեն»։ Միաժամանակ նրանք որոշել էին կրետական ջրերում ուժեղացնել իրենց նավատորմը: «Ընդունելով այս միջոցառումները, չորս տերությունները մեկ անգամ ևս վկայում են Ն. Ս. Սուլթանի սուլերեն իրավունքները պահպանելու իրենց մտադրությունը», — հաստատում էին նրանք: Նոտայում պաշտպան տերությունները հաղորդում էին, որ Կրետեի վերջնական ստատուտի մշակմանը պետք է մասնակցեն նաև Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան<sup>120</sup>: Ինչպես երևում է, նոտան ավելի շուտ դիվանագիտական քայլ էր՝ այդ երկու տերություններին կրետական հարցի լուծման ասպարեզը ներգրավելու համար: Ղրանով նրանք հույս ունեին ձախողելու այն գաղտնի աջակցությունը, որ թուրքական կառավարությունը ստանում էր հանձին Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի:

Հուլիսի 7-ին «Թանինը» գրեց. «Եթե ավստրո-գերմանական պետական գործիչները Թուրքիայի անկեղծ բարեկամներն են, նրանք չպետք է վախենան կրետական հարցին միջամտելուց»<sup>121</sup>: Երիտասարդ թուրքերը չէին թաքցնում իրենց երախտագիտությունը հիշյալ նոտայի և այդ երկրներից ստացած դիվանագիտական աջակցության համար ու մեծ հույսեր էին փայփայում ապագայում ևս ստանալու այդ օգնությունը: «Ժեռն թյուրքերը (երիտթուրքերը — Գ. Բ.) կհուսան, — հայտարարեց մեծ վեզիր Հակկը փաշան, — որ Գերմանիա և Ավստրիա պիտի օժանդակեն իրենց և շնորհակալ են այն երկրներին ու մամուլին ցարդ հրատարակված հոդվածների համար, որով ուժ տվին Ժեռն թյուրքերու ազդու ընթացքին և այսպես դյուրացրին խնդրի Թյուրքիո ի նպաստ լուծումը»<sup>122</sup>:

<sup>119</sup> Ed. Driault, նշվ. աշխ. էջ 40:

<sup>120</sup> St'u DDF, 2—XII, № 518, էջ 802: 26 հունիսի, 1910 թ.:

<sup>121</sup> "Journal de St.-Petersbourg", 29.VI(12.VII).1910.

<sup>122</sup> «Բյուզանդիոն», 23.IV (6. VII), 1910:



Տերությունների հունիսի 26-ի սպառնալի նոտան ստիպեց Վենիզելոսին հայտարարել, որ ինքը կառաջարկի կրետական Ազգային ժողովին՝ հպատակվել տերությունների կամքին: Հունական կառավարությունը նույնպես խորհուրդ տվեց կրետացիներին ենթարկվել տերությունների պահանջին<sup>123</sup>: Սակայն կրետական Ազգային ժողովը դիմադրում էր: Դիմադրում էր հատկապես Միխելիդակիսի կուսակցությունը, որը բացարձակապես անհաշտելի դիրք էր գրավել մահմեդական պատգամավորների հարցում<sup>124</sup>: Այդ համառությունը հենվում էր այն համոզման վրա, որ կրետացիները զիջելու են ոչ թե պաշտպան տերություններին, այլ Թուրքիային: Սյուս կողմից, նման վերաբերմունքը բխում էր Միխելիդակիսի և նրա կողմնակիցների իշխանության գլուխ անցնելու ձգտումից, որոնք օգտագործելով մահմեդական պատգամավորների հետ կապված միջադեպը, փորձում էին ժողովրդականություն չվայելող այդ հարցում հեղինակագրկել Վենիզելոսին և հեշտացնել իշխանության անցումը Միխելիդակիսի կողմնակիցներին<sup>125</sup>:

Հուլիսի 8-ին պաշտպան տերությունները սպառնացին, որ իրենց զինվորները կգրավեն կղզու մաքսատներն ու կառավարական հաստատությունները, եթե Ազգային ժողովը իր առաջիկա նիստում առանց երդման չընդունի իսլամ պատգամավորներին և չպահպանի նրանց պաշտոնները: Ի վերջո, հաջորդ օրը, Կրետեի գործադիր կոմիտեի ղեկավար Վենիզելոսը հաղթանակ տարավ<sup>126</sup>: Գնահատելով այդ ուղղությամբ կատարած նրա ջանքերը՝ Կրետեի ռուսական գլխավոր հյուպատոս Շեբունինը հաղորդեց Սազոնովին. «Վենիզելոսը գերմարդկային ճիգեր գործադրեց, որպեսզի զիջելու համոզի իր հակառակորդներին»<sup>127</sup>: Հարթելով թուրք պատգամավորների հետ կապված միջադեպը, Վենիզելոսը, այդպիսով, կարողացավ Կրետեն գերծ պահել տերությունների նոր միջամտությունից և դրանով պահպանել կղզու քաղաքական ստատուս քվոն:

Այսուհանդերձ, թուրք-հունական հարաբերությունների լարվածությանը ավելացավ մի նոր բարդություն ևս: Դա Վենի-

<sup>123</sup> Տե՛ս Ed. Driault, նշվ. աշխ., էջ 42:

<sup>124</sup> Տե՛ս ЦГБИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 223:

<sup>125</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>126</sup> Տե՛ս Ed. Driault, նշվ. աշխ., էջ 42:

<sup>127</sup> ЦГБИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 223.



գելուսի և կրետացի չորս այլ գործիչների՝ հունական պառլամենտի պատգամավորներ ընտրվելու հարցն էր: Աթենքում կրետացի պատգամավորների գործունեությունը նոր ուժով առաջ էր մղելու կղզու քաղաքական միության համար մղվող պայքարը: Առանձնապես Վենիզելուսի ներկայությունը նոր հեռանկար էր բացում Կրետեի վերջնական միացման խնդրում: Այդ հանգամանքը, բնականաբար, հասկանում էին բոլորը և առաջին հերթին՝ թուրքական կառավարությունը: Փորձելով պատերազմի սպառնալիքով կանխել կրետացի պատգամավորների մուտքը հելլենական պառլամենտ՝ թուրքական կառավարությունը հայտարարեց, որ եթե կրետացիները իբրև պատգամավորներ հունական պառլամենտ ներկայանան, որի հետևանքով հռչակվի Կրետեի միացումը, ապա դա Թուրքիայի կողմից կհամարվի որպես պատերազմի առիթ<sup>128</sup>: Ապա Թուրքիան պաշտպան տերություններին հաղորդեց, որ եթե Վենիզելուսը հելլենահպատակ է, ապա չի կարող լինել կրետական կառավարության ղեկավար, իսկ եթե կրետացի է, ուրեմն բացառվում է հելլենական պատգամավոր լինելու հնարավորությունը<sup>129</sup>: Այդպիսով, կրետացի պատգամավորների հելլենական պառլամենտ ընտրվելու հարցը դարձավ պաշտպան տերությունների միջամտության առարկա: Նրանք փորձեցին Վենիզելուսին հետ պահել հելլենական պառլամենտում ընտրվելու մտադրությունից<sup>130</sup>: Պաշտպան տերություններից միայն Անգլիան էր, որ ցանկանում էր դժվարություն հարուցել: Իտալիան, օրինակ, խոստացել էր աջակցել Վենիզելուսին<sup>131</sup>, իսկ Ֆրանսիական կառավարությունը դեսպան Նաում փաշային բացատրեց, որ կրետացիների ընտրությունը առանձին կուսակցության գործ է, ուստի հունական կառավարությունը այդ հարցում չի կարող պատասխանատվություն կրել<sup>132</sup>:

Ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա նա պատրաստ էր մեկընդմիջտ ծանաչելու Կրետեի միացումը Հունաստանին,

<sup>128</sup> Տե՛ս «Բյուզանդիոն», 14 (27) VII, 1910:

<sup>129</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 546, էջ 854, Պիշոնը՝ դեսպաններին, 9 օգ.

1910 թ.:

<sup>130</sup> Տե՛ս ЦГБИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 247:

<sup>131</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 206:

<sup>132</sup> Տե՛ս DDF, 2—XII, № 554, էջ 867, Պիշոնը՝ Նաում փաշային, 29



Եթե մյուս տերությունները չառարկեին: «Մենք պատրաստ ենք ընդառաջ գնալու կրետական կառավարության ցանկություններին,— Կրետեի ոռոսական հյուպատոս Շեբունինին ուղղված օգոստոսի 7-ի հեռագրում ընդգծեց Սազոնովը,— սակայն խնդիրը այնքան էլ հեշտ լուծելի չէ, ինչպես դուք եք ենթադրում»<sup>133</sup>: Նախ, խոսք անգամ լինել չի կարող կրետական հարցում Ռուսաստանի միանձնյա ելույթի մասին, որովհետև այն ենթակա է տերությունների ընդհանուր համաձայնությանը: Այնուհետև, իրական արդյունքների հասնելու համար կրետացիները չպետք է մնացյալ հարցերում իրենց նույնացնեն Հունաստանի հույների հետ, օրինակ՝ հունական պառլամենտի ընտրություններին մասնակցելու գործում<sup>134</sup>:

Այսուհանդերձ, կրետացի պատգամավորների ընտրության շուրջ ընթացող բանակցությունները չավարտված՝ բոլոր հինգ կրետական թեկնածուները դարձան հունական պառլամենտի լիիրավ անդամներ:

1910 թ. օգոստոսի 21-ին Հունաստանում կայացած պառլամենտական ընտրությունների ժամանակ Վենիզելոսը, որպես Ատտիկայի և Բեոլտիայի պատգամավորության թեկնածու, ստացավ 30.703 ձայն ու գրավեց առաջին տեղը<sup>135</sup>: Վենիզելոսի այս հաջողությունը բացատրվում է նրա քաղաքական մեծ հեղինակությամբ: Հույն ժողովուրդը արտակարգ հույսեր էր կապում կրետացի գործչի հետ: Աթենքի ոռոսական միսիայի ներկայացուցիչ Տատիշչևը խոստովանում էր, որ կրետացի հինգ պատգամավորներից հելլենական ժողովրդի անկեղծ ընտրելով կարելի է համարել միայն Վենիզելոսին<sup>136</sup>: Կարճ ժամանակ անց նա գլխավորեց հունական կառավարությունը՝ իր ձեռքում կենտրոնացնելով նաև երկրի ցամաքային ու ծովային ուժերի ղեկավարությունը:

Ընտրվելով հունական պառլամենտի անդամ՝ Վենիզելոսը շարունակեց իր դեմ լարված պահել թուրք պետական և հասարակական կարծիքը: Թուրքական մամուլը շարունակում էր կատաղի հարձակումները պառլամենտի նորընտիր կրետացի անդամների դեմ: «Իկդամը» սպառնում էր, որ թուրքահպա-

<sup>133</sup> ЦГБИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 55.

<sup>134</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>135</sup> Տե՛ս Դ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 206:

<sup>136</sup> Տե՛ս ЦГБИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 178:



տակ կրետացիների մասնակցությունը հելլենական պառլամենտի աշխատանքներին, եթե անգամ նրանք հրաժարվեն Կրետեում ունեցած իրենց պաշտոններից, Թուրքիայի կողմից գնահատվելու է որպես պրովոկացիա և պատերազմի շարժառիթ<sup>137</sup>։ Վենիզելուսի և կրետացի մյուս քաղաքական գործիչների թեկնածության առաջադրումը նոր առիթ դարձավ շարունակելու հակահունական կամպանիան։ Այժմ արդեն բոլկոտի ենթարկվեցին կրետացիներն ու կրետական ապրանքները<sup>138</sup>։ Լարվաժությունը Կրետեում հասցնում է փոխադարձ սպանությունների և զանազան բռնությունների։ Օսմանյան կայսրությունում դեպքերը շարունակվում էին նույն ընթացքով։ Աթենքի կառավարության ղեկավար դառնալու՝ Վենիզելուսի հավանական հեռանկարը գրգռում էր երիտթուրքերին։ «... Արդարև, դեպքերեն այնպես կերևա թե պ. Վենիզելուս պարզ պատգամավոր չպիտի մնա, — եզրակացնում էր «Թանիներ», — թերևս պաշտոն տրվի իրեն նոր դահլիճն ալ կազմելու։ Ուրեմն, Հունաստանի վարչապես պիտի ըլլայ։ Յաչս օսմանյան կառավարության, օսմ. հպատակությունը լքող ոճրապարտ մը պիտի ըլլա ան»<sup>139</sup>։ Երիտթուրքերի օրգանը սպառնում էր, որ երբ Վենիզելուսը Հունաստանի վարչապետ դառնա, այլևս հարկ չի լինի դիմելու պաշտպան տերություններին, քանի որ դա կրետական խնդիր չէ, այլ նոր հարց՝ որ վերաբերում է Հունաստանին և Թուրքիային։ «Ուրեմն, հարցը Հունաստանի հետ պիտի կարգադրենք», — ահաբեկում էր «Թանիներ»<sup>140</sup>։

Հակահունական կողմնորոշումը բխում էր Թուրքիայի արտաքին քաղաքականությունից, որն իր հերթին համընկնում էր Կենտրոնական տերությունների ռազմաքաղաքական նպատակներին։ Աջակցելով Թուրքիային՝ Գերմանիան կրկին առաջ քաշեց դեռևս 1908 թվականին մշակած ծրագիրը, ըստ որի կովկասյան ռազմաճակատում թուրքերը Ռուսաստանի դեմ պետք է հանեին 250 հազարանոց բանակ, որի փոխարեն Բեռլինը երաշխավորում էր Թուրքիայի եվրոպական տիրույթների անձեռնմխելիությունը և Կրետե կղզու նկատմամբ ունեցած

<sup>137</sup> Տե՛ս «Ազատամարտ», 13(26). 8, 1910:

<sup>138</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 37:

<sup>139</sup> «Ազատամարտ», 13(26). VIII, 1910:

<sup>140</sup> Նույն տեղում, 17(30). VIII, 1910:



սովերենիտետը<sup>141</sup>: Դրանից բացի, Գերմանիան մեծ օգնություն էր ցույց տալիս թուրքական ռազմական նավատորմը հզորացնելուն, այն հաշվով, որ երկու տարուց այն կարողանար բացահայտ գերակշռությամբ մրցել ռուսական սևծովյան նավատորմի հետ<sup>142</sup>: Թուրք-հունական հարաբերությունների այդ լարված շրջանում էր, որ Թուրքիան Գերմանիայից գնեց երկու զրահանավ և 4 հակաականակիր, որոնք օգոստոսին ժամանեցին թուրքական ջրերը<sup>143</sup>:

Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական, նվաճողական ծրագրերի իրականացման ուղղությամբ երիտթուրքերը չափազանց մեծ կարևորություն էին տալիս ռազմածովային հզոր նավատորմի ստեղծմանը: Այդ է պատճառը, որ երիտթուրքական հեղաշրջումից անմիաջպես հետո նրանք աճապարանքով ձեռնամուխ եղան արդիական ռազմական նավատորմ ստեղծելուն՝ Էգեյան ծովի կղզիներում և Փոքր Ասիայի ծովափում թուրքական գերիշխանությունը ամրապնդելու համար<sup>144</sup>: «Թուրքիան,— ֆրանսիական դեսպանի հետ զրուցելիս հայտարարեց մեծ վեզիր Հիլմի փաշան,— Էգեյան ծովում պետք է պահպանի իր ռազմական նավատորմի գերազանցությունը Հունաստանի հանդեպ»<sup>145</sup>:

Թուրքական նավատորմի հզորացման բուն նպատակը քողարկելու համար երկրի կառավարող շրջանները սովորաբար նշում էին, որ դա ուղղված է սոսկ Հունաստանի դեմ: Այսպես. «Թանիներ» հավաստիացնում էր, որ «Թուրքական նավատորմի ուժեղացումը ուղղված է Հունաստանի և ոչ թե Ռուսաստանի դեմ»<sup>146</sup>: Իրականում, թուրքական նավատորմը որոշակի դեր էր կատարելու ոչ միայն Հունաստանի, այլև ընդհանրապես բալկանյան երկրների դեմ մղվելիք պատերազմներում: Սակայն Թուրքիայի արտաքին նվաճողական քաղաքականությունը իր սուր ծայրով ուղղված էր Ռուսական կայսրությանը: Այդ հիանալի էին հասկանում ինչպես ռուսական

<sup>141</sup> ՏԵՍ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 3246, л. 33:

<sup>142</sup> ՏԵՍ նույն տեղում:

<sup>143</sup> ՏԵՍ ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 3246, л. 35:

<sup>144</sup> ՏԵՍ Gén. M. Moukhtar, նշվ. աշխ., էջ 270:

<sup>145</sup> DDF, 2—XII, № 389, էջ 594: Բոմպարը՝ Պիշոնին, 5 հունվարի, 1910 թ.:

<sup>146</sup> «Речь», 31.VIII.(13.IX), 1910 г.



դիվանագետները, այնպես էլ ռազմաժողովային կցորդները: Իրենց հաղորդումներում միշտ և ամենուրեք նրանք իրենց կառավարության ամենալուրջ ուշադրությունն են հրավիրել այն բանի վրա, որ թուրքական նավատորմի հզորացումը ուղղված է գլխավորապես Ռուսաստանի դեմ: Գերմանական խմբավորման հետ համագործակցելու հետևանքով 1910 թվականից Թուրքիայի վարած արտաքին հակառուսական քաղաքականությունը բացահայտ բնույթ էր կրում<sup>147</sup>: Սակայն Եռյակ դաշինքը չէր ցանկանում Թուրքիայի անժամանակ ելույթը՝ վախենալով միջազգային բարդություններից: Այդ էր պատճառը, որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան պայմանավորվածություն ունեին կանխելու թուրք-հունական պատերազմը, որը նրանց կարծիքով հղի էր շատ ծանր հետևանքներով<sup>148</sup>: Մինչդեռ Հունաստանի կառավարությունը պատերազմի վտանգը համարում էր իրական, որը արձանագրվեց օգոստոսի վերջին գումարված հատուկ խորհրդակցության փաստաթղթերում: «Արտաքին իրավիճակը այն աստիճանի է սրված, — նշում էր Հունաստանի արտաքին գործերի մինիստրը ռուսական դեսպանորդ Տատիշչևին, — որ հնարավոր չէ նախատեսել, թե ինչպիսի՞ ուղղությամբ կընթանան իրադարձությունները»<sup>149</sup>: Այնուամենայնիվ, մինիստրը նշում էր, որ իրերի նման ընթացքը չի կարող այդպես երկար շարունակվել, և որ երբևէ անհրաժեշտ կլինի վերջ տալ այդ անհանդուրժելի վիճակին<sup>150</sup>:

Անհանգստացած Թեսալիայի սահմանում թուրքական զորքերի կենտրոնացումից՝ հունական կառավարությունը որոշեց զորակոչի ենթարկել 1906 և 1907 թվականների պահեստայիններին<sup>151</sup>: Ուժեղացվեց թուրք-հունական սահմանը և զինվեցին սահմանամերձ հունական գյուղերը<sup>152</sup>: Որոշվեց նաև պատերազմի դեպքում կամավորներ հավաքագրել Ամերիկայում բնակվող հույներից, ինչպես նաև բանակային առանձին միավորում կազմել կրետացիներից<sup>153</sup>: Թուրքիայի դեմ մղվելիք

<sup>147</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 7704, л. 62:

<sup>148</sup> Տե՛ս ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4209, л. 62:

<sup>149</sup> ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 184.

<sup>150</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>151</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 163:

<sup>152</sup> Տե՛ս ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4209, л. 142:

<sup>153</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 143:



պատերազմում մեծ տեղ էր հատկացվում հունական նավատորմին: «Բուռն գործունեություն է նկատվում հունական ծովային մինիստրությունում,— հոկտեմբերի 8-ին հաղորդեց Թուրքիայի ներկայացուցիչը:— Նավատորմն ամբողջ անձնակազմով զոր ու գիշեր կատարում է զորավարություններ»<sup>154</sup>: Սակայն հունական զինված ուժերը դեռևս պատրաստ չէին պատերազմի: Աթենքի ռուսական զինվորական կցորդի կարծիքով այդ շրջանում հունական բանակը ընդհանրապես բավարար պատրաստվածություն չունեի ռազմական գործողություններ սկսելու համար<sup>155</sup>: Այս չափազանց կարևոր հանգամանքից զատ, կար նաև անգլիական կառավարության անբարյացակամ վերաբերմունքը: Գրեյը հայտարարեց, որ պաշտպան տերությունների հովանավորության տակ է գտնվում միայն Կրետե կղզին և ոչ թե Հունաստանը, այնպես որ նա պետք է պատասխանի իր գործողությունների համար<sup>156</sup>: Իսկ Կրետեում ստատուս քվոյի փոփոխման դեպքում Գրեյը սպառնում էր կրկին գրավել այն<sup>157</sup>:

Հունական կառավարող շրջաններին պարզ էր, որ առանց ժամանակակից սպառազինության ու մարզված բանակի պատերազմը Թուրքիայի դեմ կնշանակեր 1897 թվական՝ հունական պետության պարտություն: Մեծ նշանակություն էր ստանում Հունաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման հարցը: Վենիզելոսի համոզմամբ Հունաստանը իր արտաքին քաղաքական ծրագիրը կարող էր իրականացնել միայն Եռյակ համաձայնության՝ Անտանտի միջոցով: «Բարեկամանալով Գերմանիայի հետ,— նշում էր հունական կառավարության ղեկավարը,— Հունաստանը ոչինչ չի կարող շահել, բայց լինելով Եռյակ համաձայնության հետ՝ նա կարող էր շահել կրետական հարցը, որի լուծումը գտնվում է Անգլիայի ձեռքում»<sup>158</sup>: Այդ կողմնորոշման գործում որոշակի դեր ունեցավ Հունաստանի կախվածությունը անգլո-ֆրանսիական, մասնավորապես՝ անգլիական կապիտալից: Հունաստանի ռազմաժո-

<sup>154</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. № 4225, л. 117.

<sup>155</sup> СБ<sup>у</sup> ЦГВИА, ф. 2000, оп. I, д. № 6861, л. 185:

<sup>156</sup> СБ<sup>у</sup> ЦГВИА, ф. 2000, оп. I, д. № 6861, л. 187.

<sup>157</sup> СБ<sup>у</sup> DDF, 2—XII, № 586, էջ 936—937:

<sup>158</sup> Օ. Մ. I. Μεταξās, նշվ. աշխ., էջ 69:



վային ուժերի վերակառուցումը հանձնարարվեց անգլիական ու ֆրանսիական զինվորական միսիաներին:

Միաժամանակ, հունական կառավարող շրջանները սկսեցին որոշակի դիվանագիտական ջանքեր գործադրել՝ բալկանյան երկրների հետ ռազմաքաղաքական համաձայնության գալու և թուրքական տիրապետությունը Բալկաններում վերջնականապես վերացնելու նպատակով: Այդ իմաստով առանձնակի նշանակություն էր ստանում հույն-բուլղարական դաշինքը, որի կարևորությունը շատ բարձր գնահատեցին Աթենքում:

Հույն-բուլղարական դաշինքի գաղափարը Հունաստանը առաջ էր քաշել դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին: Սակայն բալկանյան հիշյալ երկրների միջև առկա էին տերիտորիալ սուր տարաձայնություններ, որոնք բխում էին Մակեդոնիայի և Թրակիայի նկատմամբ նրանց հավակնություններից: Ռա լուրջ արգելք էր հակաթուրքական դաշինքի ստեղծման ճանապարհին:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո, երբ սուր բնույթ էին ստացել հարաբերությունները Թուրքիայի և Բուլղարիայի միջև, 1909 թ. հուլիսին Բուլղարիան Հունաստանին ներկայացրեց Մակեդոնիայի շուրջ համաձայնության գալու առաջարկություն, սակայն փոխըմբռնման չհանգեցին<sup>159</sup>: Կրետական հարցի հետևանքով առաջացած հույն-թուրքական լարվածությունը ստիպեց հունական կառավարող շրջաններին կրկին համաձայնության փորձեր անել իր հարևանի հետ: «Աթենքի կառավարությունը, նկատի առնելով Թուրքիայի հետ հարաբերությունների խզման վերահաս վտանգը, — 1910 թ. սեպտեմբերի 2-ի հաղորդման մեջ նշում էր Տատիշչևը, — հանդես է բերում Սոֆիայի կառավարության հետ համաձայնության գալու և պատերազմի դեպքում Բուլղարիայի աջակցությունը ապահովելու միտում»<sup>160</sup>: Բայց այս անգամ ևս, գլխավորապես տերիտորիալ հարցերի պատճառով, հույն-բուլղարական բանակցությունները ավարտվեցին անհաջողությամբ: Սրանում կար մեկ այլ կարևոր պատճառ ևս: Հունաստանը ռազմական բնագավառում Բուլղարիային շատ քիչ բան էր խոստանում, և Սոֆիայի կառավարությունը վախենում էր սրել հարաբե-

<sup>159</sup> Ст'а А. Тошев, *нշվ. աշխ., հ. 1, էջ 278*:

<sup>160</sup> ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 91.



րությունները Թուրքիայի հետ<sup>161</sup>: Այնուամենայնիվ, բանակցությունները շարունակվեցին Վենիզելոսի իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, որը մեծ ջանքեր գործադրեց բալկանյան երկրների հետ համաձայնության գալու համար: Սոֆիայի հունական դեսպան Պանասին հրահանգվեց շարունակել գաղտնի բանակցությունները բուլղարական կառավարության հետ<sup>162</sup>: Հակաթուրքական ճակատ ստեղծելու բալկանյան երկրների ջանքերը աստիճանաբար (1910 թվականի վերջերից) սկսեցին արդյունք տալ<sup>163</sup>:

Մինչդեռ կրետական հարցը շարունակում էր մնալ հույն-թուրքական հարաբերությունների լարվածության ամենահիմնական պատճառը: Վստահ չլինելով Հունաստանի ռազմական հզորությանը և դեռևս չունենալով դաշնակիցներ, ինչպես նաև խուսափելով կղզին կրկին ենթարկել պաշտպան տերությունների ռազմական օկուպացիային՝ հունական կառավարող շրջանները հարկադրված էին սպասել քաղաքական իրադարձությունների բարենպաստ շրջադարձին: «Հունաստանն այժմ չի գտնվում այնպիսի վիճակում, որպեսզի Կրետեի պատճառով վիճաբանի Թուրքիայի հետ»<sup>164</sup>, — Աթենքի դիրքորոշումն էր պարզաբանում Կրետեի վենիզելական թերթերից «Կենտրան»: Այսուհանդերձ այդ շրջանում, երիտթուրքերի կարծիքով, Օսմանյան կայսրության առաջին թշնամին համարվում էր Հունաստանը<sup>165</sup>:

1911 թ. սեպտեմբերին Եռյակ դաշինքի անդամ Իտալիան պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ՝ աֆրիկյան նահանգներ Տրիպոլիտանիան ու Կիրենաիկան գրավելու համար: Ռազմական գործողություններն ընդգրկեցին նաև Էգեյան ծովի ավազանը: 1912 թ. մայիսի 4-ին իտալական ռազմածովային ուժերը գրավեցին Ռոդոսը և այնուհետև Ղոդեկանեզյան արշիպելագի մնացյալ կղզիները:

Ղոդեկանեզյան արշիպելագի գրավումով Իտալիան նախ և առաջ լուրջ հարված էր հասցնում Էգեյան կղզիների նկատմամբ Հունաստանի քաղաքական ծրագրերին և կղզիներում

<sup>161</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. № 6861, л. 84:

<sup>162</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 278—279:

<sup>163</sup> Տե՛ս А. Тошев, նշվ. աշխ., էջ 301:

<sup>164</sup> Տե՛ս «С. Петербургские ведомости», 20.VIII(2.IX).1910 г.

<sup>165</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 1, էջ 62:



Ծավալվող ազգային-ազատագրական պայքարին: Այս կապակցությամբ Աթենքի ուսական դեսպանորդը Սազոնովին հաղորդելով հունական կառավարող շրջանների տրամադրությունը նշում էր, որ «հույներին անհանգստացնում է Բտալիայի կողմից հիշյալ կղզիների զավթումը, նկատի ունենալով, որ մնալով այդ տերության իշխանության տակ, դրանք կարող են վերջնականապես կորսվել Հունաստանի համար<sup>166</sup>: Նման պայմաններում հունական կառավարող շրջանները նույնիսկ նախընտրում էին, որ Ռոդեկանեզյան արշիպելագի կղզիները որոշակի պայմաններով ու երաշխիքներով շարունակեին մընալ թուրքական տիրապետության տակ, հուսալով, որ ապագա ավելի բարենպաստ քաղաքական իրադրության պայմաններում դրանք կմիացվեն Հունաստանին<sup>167</sup>:

Հետապնդելով իրենց ուղղափառ քաղաքական նպատակները՝ Անտանտի տերությունները դիմադրում էին Էգեյան ծովի ավազանում Եռյակ դաշինքի անդամ Բտալիայի էքսպանսիային: Ուստի Անտանտի երկրների դիվանագիտական ծնշման ներքո Բտալիան ստիպված էր հրաժարվել Էգեյան ծովի մընացյալ կղզիները գրավելու պլաններից<sup>168</sup>: Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարող շրջանների համոզմամբ Ռոդեկանեզյան արշիպելագում իտալական տիրապետությունը «կսպառնար խախտել քաղաքական հավասարակշռությունը Միջերկրական ծովի արևելյան շրջանում»<sup>169</sup>: Այդ էր պատճառը, որ արշիպելագից Բտալիային հեռացնելու նպատակը դարձավ Անտանտի դիվանագիտության կարևոր խնդիրներից մեկը<sup>170</sup>:

Ռոդեկանեզյան կղզիների հունական բնակչությունը իտալացիներին դիմավորեց որպես ազատարարների՝ նրանց ըստ ամենայնի օգնելով թուրքական կալազորների դեմ մղած մարտերում: Կղզիների հունական բնակչությունը հուսով էր, որ Բտալիայի և եվրոպական տերությունների աջակցությամբ Ռո-

<sup>166</sup> *Տե՛ս* МОЭИ, с. II, т. XX, ч. I, № 46, էջ 38, Свербеев-Сазонову, от 21/8 мая 1912 г.:

<sup>167</sup> *Տե՛ս* նույն տեղում:

<sup>168</sup> *Տե՛ս* З. П. Яхимович, նշվ. աշխ., էջ 140—141:

<sup>169</sup> «Красный архив», М., 1923, т. 3, стр. 26. Доклады 6. министра ин. дел С. Д. Сазонова Николаю Романову, 1910—1912 гг.:

<sup>170</sup> *Տե՛ս* նույն տեղում:



դեկանեզյան արշիպելագի կղզիները կտրվեն Հունաստանին<sup>171</sup>։ 1912 թ. հունիսի 6-ին Դոդեկանեզյան արշիպելագի Պատմոս կղզում հրավիրված ժողովը, արտահայտելով հունական բնակչության ազգային ձգտումները, որոշում է ընդունում Հունաստանին միանալու մասին։ Այդ նպատակի իրականացման համար ժողովը ստեղծում է ինքնավար «Էգեյան նահանգ» միությունը՝ իր դրոշով, խորհրդով և այլն<sup>172</sup>։ Սակայն կղզիների հույն բնակչության ազգային ձգտումները ամենևին չէին համապատասխանում իտալական իմպերիալիզմի զավթողական նպատակներին ու քաղաքական շահերին։ Իտալական իշխանությունները ձնշեցին հույների ազատագրական պայքարը և, փաստորեն, Դոդեկանեզյան արշիպելագում մնացին մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի վերջը։

Իտալա-թուրքական պատերազմը քաղաքական նոր իրադրություն ստեղծեց Էգեյան ծովի ավազանում։ Իտալական ռազմական նավատորմի հաջողությունները ազգային-ազատագրական պայքարի նոր վերելք առաջացրին թուրքական տիրապետության տակ գտնվող կղզիներում՝ Իկարիայում և Սամոսում։ 1912 թ. հուլիսի 16-ին Իկարիայի Այոս-Կիրիկո բնակավայրում բռնկված հակաթուրքական ապստամբությունը տարածվեց և ընդգրկեց ամբողջ կղզին։

Ազգային-ազատագրական ապստամբությունը առանձնապես մեծ թափ ստացավ Սամոս կղզում։ Դեռևս 1832 թ. Լոնդոնի արձանագրությամբ Սամոսը ստացել էր տեղական ինքնավարություն։ Սակայն թուրքական իշխանությունները առիթը բաց չէին թողնում կղզու առանց այն էլ սահմանափակ ինքնավարությունը վերացնելու և ազգային-ազատագրական շարժումը ձնշելու համար։ 1906 թ., խախտելով Լոնդոնի արձանագրությունը, սուլթանի կառավարությունը գործ մտցրեց Սամոս։ Երիտթուրքերը, ղեկավարվելով օսմանիզմի գաղափարներով, շարունակեցին սուլթանի քաղաքականությունը կըղզում։

1912 թ. սեպտեմբերի 6-ին Սամոսի Մարաթոկամպոս վայրում բռնկվեց նոր ապստամբություն։ Ապստամբները պահանջում էին կղզուց հեռացնել թուրքական կայազորը և վերա-

<sup>171</sup> Տե՛ս 3. П. Яхимович, նշվ. աշխ., էջ 139։

<sup>172</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 262։



կանգնել 1832 թ. Լոնդոնի արձանագրությամբ տրված վարչական իրավունքները<sup>173</sup>։ Թուրքական կառավարությունը օգնական ուժեր ուղարկեց Սամոսի կայազորին։ Էգեյան ծովում պարեկություն անող իտալական նավատորմի հրամանատարությունը Հոռմից հրաման ստացավ արգելք չհարուցել թուրքական ռազմանավերին՝ կղզում զորքեր ափ հանելու համար<sup>174</sup>։ Սակայն թուրքական ռազմանավերին չհաջողվեց զորք իջեցնել Սամոս։ Ապստամբները իրենց ղեկավար Թ. Սոֆուլիսի գլխավորությամբ ծովային ճակատամարտում պարտության մատնեցին թուրքական նավերին։

Ազգային-ազատագրական շարժումը թուրքական տիրապետության դեմ Էգեյան կղզիներում շարունակվեց մինչև առաջին բալկանյան պատերազմը, երբ հունական ռազմական նավատորմը նրանց ազատագրեց թուրքական տիրապետությունից։

Իտալա-թուրքական պատերազմը, Օսմանյան կայսրության ներքաղաքական ծանր ճգնաժամը, կայսրության ժողովուրդների հետզհետե ուժեղացող ազգային-ազատագրական շարժումը որոշակի հույսեր առաջացրին հունական կառավարող շրջաններում՝ Իտալիայի դաշնակցությամբ Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու համար։ Եղավ մի պահ, երբ Վենիզելոսը իտալական կառավարությանն առաջարկեց Թեսալիայից ցամաքային ճակատ բացել թուրքերի դեմ, ընդ որում հունական բանակը ևս պետք է մասնակցեր ռազմական գործողություններին<sup>175</sup>։

Սակայն իտալական կառավարությունը ամենևին տրամադրություն չունեի իտալական զենքի հաջողությունները ծառայեցնել հունական շահերին։ Մյուս կողմից, վախենալով Բալկաններում իտալական ազդեցության ուժեղացումից և ազգային-ազատագրական շարժման հետագա վերելքից, տերությունները դեմ էին «տրիպոլիտական հարցը բալկանյանի վերաթելուն»<sup>176</sup>։

Բայց դեռևս պատրաստ չլինելով ռազմականապես և չունե-

<sup>173</sup> Տե՛ս Բ. Կործάτου, նշվ. աշխ., էջ 263։

<sup>174</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>175</sup> Տե՛ս Օ. Մ. Μεταξάς, նշվ. աշխ., էջ 113։

<sup>176</sup> 3. П. Яхимович, նշվ. աշխ., էջ 103։



նալով դաշնակիցներ՝ Հունաստանն ընդունեց սպասողական դիրք և հոկտեմբերի 9-ին հայտարարեց իր չեզոքությունը իտալա-թուրքական պատերազմում: Նրա կողմից ակտիվ ելույթ կարելի է սպասել միայն այն ժամանակ, — հաղորդում էր Տատիշչևը, — երբ Ավստրո-Հունգարական կամ բալկանյան պետությունները իրենց նպատակները իրականացնելու պահը համարեն նպատակահարմար<sup>177</sup>:

Օսմանյան կայսրության արտաքին ծանր կացության պայմաններում Հունաստանի չեզոքությունը գոհունակությամբ ընդունվեց թուրք կառավարողների կողմից: Նոյեմբերի 16-ին երիտթուրքերը հանդիսավորությամբ ավարտված հայտարարեցին հակահունական կամպանիան և տնտեսական բոյկոտը<sup>178</sup>: Հունաստանի չեզոքությունը դրվատվեց թուրքական կառավարող շրջանների և մամուլի կողմից: Նույնիսկ Կրետեի վերաբերյալ եղան համաձայնության գալու խոսակցություններ<sup>179</sup>: Սակայն դրանք թուրքերի կողմից ընդունված կեղծ և անորոշ խոսքեր էին<sup>180</sup>: Բայուրը նշում է, որ իտալա-թուրքական պատերազմի շրջանում թուրքական կառավարությունը վարել է Հունաստանին սիրաշահելու քաղաքականություն<sup>181</sup>: Այնուհետև նա եզրակացնում է, որ հակահունական հալածանքների և տնտեսական բոյկոտի դադարեցումը, Հունաստանի հետ մերձենալու առերևույթ տրամադրությունը հետապնդում էին վերջինիս պատերազմից հետ պահելու նպատակ և «ժամանակ շահելուց բացի այլ բան չէին նշանակում»<sup>182</sup>:

Այնուամենայնիվ, Ադրիականից իտալացիների հարձակումը կանխելու պատրվակով երիտթուրքերը Մակեդոնիայում, առանձնապես Էպիրոսում կենտրոնացնում են բանակային խոշոր միավորումներ<sup>183</sup>: Կ. Պոլսի ռուսական ռազմական կցորդը 1912 թ. մայիսի 8-ի հաղորդման մեջ նշում էր, որ ռազ-

<sup>177</sup> Տե՛ս МОЭИ, с. III, т. XVIII, ч. II, № 599, стр. 142, Татищев-Нератову, 12 октября (29 сентября), 1911 г.:

<sup>178</sup> Տե՛ս Ed. Driault, նշվ. աշխ., էջ 60:

<sup>179</sup> Տե՛ս DDF, 3—I, № 211, էջ 193, Ղը Սելվը՝ Ղըվիլին, 24 նոյեմբերի, 1911 թ.:

<sup>180</sup> Տե՛ս նույն տեղում, № 218, էջ 198, Ղըվիլը՝ Ղը Սելվին, 25 նոյեմբերի, 1911 թ.:

<sup>181</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հատ. 2, մաս 1, էջ 222:

<sup>182</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>183</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 222:



մական տեսակետից թուրքերի դրությունը Մակեդոնիայում կարելի է համարել ավելի ուժեղ, քան երբևէ<sup>184</sup>: Թուրքական ուժերը հիմնականում նախատեսվում էին Հունաստանի դեմ, որի ամեն մի անգգույշ քայլը հաշվեհարդարի առիթ էր ընձեռելու թուրքերին, որոնք իտալացիներից կրած պարտությունների ողջ մաղձը մեծագույն հաճույքով ցանկանում էին թափել հույների վրա<sup>185</sup>:

Հունական հասարակական կարծիքը այդ բոլորը ընկալեց որպես Հունաստանի նկատմամբ ագրեսիա կատարելու ձրգտում: Թուրքական մամուլում այդ միտումը հաստատող հոդվածներ երևացին և էնվերը հայտարարեց, որ Թուրքիան Եվրոպայի հետ խաղաղության մասին կարող է խոսել Աթենքը գրավելուց հետո միայն<sup>186</sup>: Սերբիայում ռուսական զինվորական կցորդը սեպտեմբերի 25-ի հաղորդման մեջ ևս նշեց, որ Տրիպոլիում կրած անհաջողությունների հետևանքով Թուրքիան դրսևորում է Բալկաններում ուսանշ վերցնելու ցանկություն<sup>187</sup>: Հունաստանի հանդեպ ձեռք բերած ենթադրյալ հաղթանակով երիտթուրքերը հույս ունեին հոգուտ կայսրության լուծել կրետական հարցը և վերականգնել իրենց հեղինակությունը, որ խախտվել էր 1908 թ. հոկտեմբերից ունեցած տերիտորիալ կորուստներով<sup>188</sup>:

1911 թ. աշնանը միության համար ծավալվող շարժումը Կրետեում բորբոքվում է նոր ուժով: Միաժամանակ, արագացնելու համար կղզու միացումը Հունաստանին, Կրետեի նորընտիր հեղափոխական ժողովը որոշում է հունական պառլամենտ ուղարկել իր պատգամավորներին<sup>189</sup>:

Կրետական իրադարձությունները կրկին աշխուժացրին անգլիական իմպերիալիստներին, որոնք ցանկություն հայտնեցին օգտագործել Աթենական պառլամենտ կրետական պատ-

<sup>184</sup> ՏՄՍ ՍԳՎԻԱ, ֆ. 2000, օպ. 1, ժ. № 3827, լ. 426:

<sup>185</sup> ՏՄՍ ՄՕՅԻ, Կ. II, Դ. XVIII, Կ. II, № 599, Կ. 142, Դատիշև-Կերատով, 12 օկտյաբր (29 Կ. Կ. Կ.), 1911 Կ.:

<sup>186</sup> ՏՄՍ Նույն տեղում:

<sup>187</sup> ՏՄՍ ՍԳՎԻԱ, ֆ. 2000, օպ. 1, ժ. № 7382, լ. 16.

<sup>188</sup> ՏՄՍ Նույն տեղում:

<sup>189</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Ի. Տ. Գալկին, նշվ. աշխ., էջ 85—



գամավորներ ուղարկելու հանգամանքը և այն առիթ դարձնել կղզին վերագրավելու համար:

Կրետեում հաստատվելու անգլիացիների մտադրությունը լուրջ դժգոհություն էր առաջացնում իմպերիալիստական մյուս տերությունների շրջանում: Այդ է պատճառը, որ նրանք կըրկին հանդես եկան կղզին վերագրավելու Գրեյի ծրագրի դեմ: Դեռևս օգոստոսին, երբ հայտնի դարձավ Հեղափոխական ժողով հրավիրելու կրետացիների մտադրությունը, Ռուսական կայսրության արտաքին գործերի մինիստրի օգնական Ներատովը անմիջապես հրահանգեց խափանել ժողովի հրավիրումը, որը կարող էր առիթ ստեղծել կղզու վերագրավման համար<sup>190</sup>:

Ֆրանսիական դիվանագետները իրենց հերթին հասկանում էին, որ տերությունների անունից կատարվող օկուպացիան օգտագործվելու է անգլիացիների կողմից հարատև դարձնելու իրենց տիրապետությունը Կրետեում և այդպիսով ամրապնդելու իրենց գերիշխանությունը Արևելյան Միջերկրականում: «Մենք համոզված ենք, — նշում էր Աթենքի Ֆրանսիական դեսպանորդը իր և իր ռուս պաշտոնակցի մասին, — որ Անգլիան ցանկանում է Կրետեի վերագրավումը և երբեք չի հեռանա Սուդայի ծոցից, եթե այդտեղ վերադառնա»<sup>191</sup>: Մյուս կողմից, կըրկին վերագրավելու անգլիական նկրտումները հղի էին քաղաքական լուրջ հետևանքներով: Այն, նախ և առաջ, որպես հետևանք նպաստելու էր Հունաստանը կառավարող անտանտամետ խմբավորման տապալմանը և, այդպիսով, Անտանտի քաղաքական դիրքերի վերացմանը: Եթե Անգլիան, հենվելով իր միջերկրաթովյան ուժերի, մասնավորապես Մալթայում խորոխված ռազմական նավատորմի վրա, կարող էր իր ազդեցությունը պահպանել, ապա նույնը չէր կարելի ասել Ֆրանսիայի համար: Գերմանամետ ուժերի հաղթանակը Աթենքում լիովին սպառնալիքի տակ կոներ Ֆրանսիական ավանդական ազդեցությունը Հունաստանում և Ֆրանսիայի համար կստեղծեր լրացուցիչ բարդություններ Արևելյան Միջերկրականում: Հունաստանում գերմանական ազդեցության ուժեղացումը բը-

<sup>190</sup> *St. u. MOZH*, c. II, т. XVIII, ч. 1, № 374, стр. 392, Нератов-Извольскому, 31/18 августа, 1911 г.:

<sup>191</sup> DDF, 3—I, № 387, էջ 393, Դըվիլըմ' Դը Սելվին, 23 դեկտեմբերի, 1911 թ.:



նավ չէր համապատասխանում նաև Ռուսական կայսրության քաղաքական շահերին: Միաժամանակ, Կրետեի վերագրավումը հավանության չէր կարող արժանանալ նաև իտալական կառավարող շրջանների կողմից, որոնք այդ քայլը գնահատում էին որպես Արևելյան Միջերկրականում իրենց հակառակորդ տերության ռազմաքաղաքական ու տնտեսական ազդեցության հետագա ուժեղացում: Վերոհիշյալ հանգամանքները ստիպում էին թե՛ Ռուսաստանին, թե՛ Ֆրանսիային և թե՛ Իտալիային հանդես գալու կղզին գրավելու անգլիական ձեռնարկների դեմ:

Արտահայտվելով Կրետեն վերագրավելու անգլիական առաջարկի շուրջ՝ նոյեմբերի 27-ին ռուսական կառավարությունը կտրականապես մերժեց կղզում զինվորական ջոկատներ իջեցնելու զաղափարը<sup>192</sup>: Ռուսաստանի և Ֆրանսիայի բացասական վերաբերմունքը ստիպեց Անգլիային համաձայնվելու իր դաշնակիցների՝ կրետական ջրերում միայն ռազմանավերի քանակը ավելացնելու առաջարկության հետ: Այնուամենայնիվ, հեղափոխական շարժումների բուռն ծավալման դեպքում պաշտպան տերությունները մարտանավերից զորք էին իջեցնելու Կրետե<sup>193</sup>:

Կրետեում ծավալվող հեղափոխական շարժումից խիստ մտահոգված հունական կառավարությունը միջոցներ էր փնտրում՝ արգելելու կրետական պատգամավորների մուտքը Աթենական պառլամենտ: Նույն նպատակն էին հետապնդում պաշտպան տերությունները: Աթենքի ռուսական դեսպանորդ Սվերբենը այցելեց Վենիզելոսին, և նրանց միջև կայացած «բարեկամական ու կիսապաշտոնական» զրույցից հետո հունական կառավարության ղեկավարը նոյեմբերի 23-ին, ի պատասխան պառլամենտում իրեն ուղղված հարցապնդմանը, հայտարարեց. «Հունական կառավարությունը խստորեն դատապարտում է արդի շարժումը և ոչ մի դեպքում չի ընդունի կրետացի լիազորներին: Եթե հասարակական կարծիքը իրեն չպաշտպանի այս հարցում, ապա կառավարությունը կիրաժարվի իշխանությունից»<sup>194</sup>: Հունական կառավարությունը վա-

<sup>192</sup> Տե՛ս նույն տեղում, № 505, էջ 521, Հուլիսի մինիստրի համար, 1911 թ., դեկտեմբեր:

<sup>193</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>194</sup> Նույն տեղում:



խենում էր, որ կրետական իրադարձությունների հետևանքով կղզին կարող էր նորից օկուպացվել պաշտպան տերությունների կողմից, որի հետևանքով նոր բարդություններ կառաջանային կղզին Հունաստանին միացնելու գործում: Մյուս կողմից, օտարերկրյա օկուպացիան ժողովրդականությունն չվայելելով ոչ կղզում և ոչ էլ Հունաստանում, խիստ կծանրացներ Աթենքի կառավարության վիճակը<sup>195</sup>:

Կղզու վերագրավման անցանկալի հեռանկարից խուսափելու համար Վենիզելոսը ստիպված համաձայնվում է, որ պաշտպան տերությունների ուժերը կրետացի պատգամավորներին ձերբակալեն մեկնելու առաջին իսկ փորձ կատարելիս և, նույնիսկ, հունական դրոշը կրող նավերի վրա<sup>196</sup>: Անգլիայի նախաձեռնությամբ Վիեննայում և Բեռլինում համաձայնություն կայացվեց, որ ավստրիական և գերմանական նավերը հրաժարվեն փոխադրել կրետացի պատգամավորներին<sup>197</sup>: Դեկտեմբերի 15-ին, երբ Հեղափոխական ժողովի կողմից ընտրված պատգամավորները փորձեցին հունական «Կոնդի» նավով մեկնել Աթենք, ձերբակալվեցին ֆրանսիացիների կողմից և արգելափակվեցին նավերում: Խիստ հետապնդումների հետևանքով ոչ մի պատգամավոր չխուսափեց ձերբակալումից<sup>198</sup>:

Կրետացի պատգամավորների հանդեպ կիրառված բռնությունը հուզմունքի մեծ ալիք բարձրացրեց Կրետեում և Հունաստանում: Այդ հանգամանքը աշխատեցին օգտագործել քաղաքական ընդդիմադիր շրջանները: Նախկին ռազմական միևիստր Լոպասիոտին փորձեց հեղաշրջում կատարել և տապալել Վենիզելոսի կառավարությունը, բայց անհաջողություն կրեց<sup>199</sup>:

Կրետացի պատգամավորների նկատմամբ հունական կառավարության դիրքը հարկադրյալ էր, և նա ապագայում չէր կարող վարվել նույն կերպ: Ուստի հունական կառավարություն-

<sup>195</sup> *ՏԵՍ* МОЭИ, с. II, т. XIX, ч. I, № 99, стр. 95. Свербеев-Нератову, 25/12 ноября, 1911 г.:

<sup>196</sup> *ՏԵՍ* նույն տեղում, № 173, прим. 1, стр. 161, Пустошкин-Нератову, 9 декабря/26 ноября, 1911 г.:

<sup>197</sup> *ՏԵՍ* DDF, 3—I, № 505, էջ 521—522, Note pour le Ministre, 1911, XII:

<sup>198</sup> *ՏԵՍ* МОЭИ, с. II, т. XIX, ч. I, стр. 221, Пустошкин-Сазонову, 16/3 декабря, 1911 г.:

<sup>199</sup> *ՏԵՍ* ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 2933, л. 11:



նը կրետական հարցի վերջնական լուծման համար կրկին դիմեց պաշտպան տերություններին: Սակայն բրիտանական կառավարությունը կրկին անուշադրության մատնեց կրետական հարցը վերջնականապես լուծելու հունական կառավարության դիմումը: Արտաքին գործերի մինիստրն այդ վերաբերմունքը հիմնավորեց նրանով, որ միջազգային այդպիսի բարդ իրադրության պայմաններում տերությունների միջամտությունը թուրքական հարձակման առիթ կթառայի<sup>200</sup>:

Միության նկատմամբ Անտանտի, մասնավորապես Անգլիայի բացասական վերաբերմունքից խիստ դժգոհ՝ հունական դիվանագիտական և ղեկավար շրջաններում սկսեցին ակտիվություն ցուցաբերել Եռյակ դաշինքին համակիր տարրերը: Վերջիններս հույս ունեին Կենտրոնական տերությունների օգնությամբ լուծել թագավորության առջև ծառացած այդ ամենամեծ խնդիրը: Նրանք համոզված էին, որ այդ դեպքում Թուրքիան կցուցաբերի հաշտվողական վերաբերմունք կրետական գործերի նկատմամբ<sup>201</sup>: Այդ նպատակով հունական կառավարության կազմում տեղի ունեցան փոփոխություններ: Արտաքին գործերի մինիստրի պաշտոնում հաստատվեց Վիեննայում Հունաստանի նախկին դեսպան Ստրելտը, որը հայտնի էր Եռյակ դաշինքի հետ սերտորեն համագործակցելու ձգտումներով: Իրենց նպատակների իրականացումը այժմ սպասելով գերմանական խմբավորումից՝ նրանք հույս ունեին, որ կրետական հարցը կլուծվի հունական պառլամենտի ընտրություններից անմիջապես հետո<sup>202</sup>:

Միաժամանակ, Փարիզում մտածում էին կրետական հարցի լուծմանը մասնակից դարձնել Գերմանիային ու Ավստրո-Հունգարիային, որոնք իրենց «չեզոքությամբ» պաշտպանում էին Թուրքիային և դրանով ամրապնդում իրենց քաղաքական դիրքերը Օսմանյան կայսրությունում: Ֆրանսիական դիվանագետները հասկանում էին, որ Կենտրոնական տերությունները կիրաժարվեն միասնաբար գործելուց և կվարկաբեկվեն հույների մոտ: «Կասկածից դուրս է, որ այդ տերությունները ներ-

<sup>200</sup> Տե՛ս DDF, 3—I, № 381, էջ 386, Պ. Կամբոնը՝ դը Սելվին, 21 դեկտեմբերի, 1911 թ.:

<sup>201</sup> Տե՛ս Նույն տեղում, № 542, էջ 562:

<sup>202</sup> Տե՛ս Նույն տեղում, № 564, էջ 576, Պ. Կամբոնը՝ Պուանկարեին: 30 հունվարի, 1912 թ.:



կա շրջանում կիրառարվեն ամեն մի միջոցառումից, որը Թուրքիայի կողմից կարող է մեկնաբանվել որպես իր սուվերենության նվազում», — նշում էր Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը<sup>203</sup>:

Կրետական հարցի լուծմանը Գերմանիային և Ավստրո-Հունգարիային ներգրավելու նախաձեռնությունը իր ձեռքը վերցրեց Անգլիան: 1912 թ. փետրվարի 27-ի նոտայով անգլիական կառավարությունը հրավիրում էր այդ տերություններին տեսակետներ փոխանակելու կրետական հարցի շուրջ և կանխելու թուրք-հունական պատերազմը<sup>204</sup>:

Ինչպես որ սպասվում էր, Կենտրոնական տերությունները հրաժարվեցին Անտանտի հետ համատեղ գործելուց: Նրանք ցանկություն էին հայտնել մասնակցելու կրետական հարցի քննարկմանը միայն այն դեպքում, երբ օրակարգում դրվեր կղզու միջազգային կացության հիմնական փոփոխության հարցը<sup>205</sup>:

Այդ ընթացքում Թուրքիայի տնտեսական ու ներքաղաքական լուրջ բարդությունները, ինչպես նաև իտալա-թուրքական պատերազմում կրած պարտությունների հետևանքով Սաիդ-փաշայի գլխավորած երիտթուրքերի վարկաբեկված կառավարությունը 1912 թ. հուլիսի 16-ին հարկադրվեց հրաժարվել իշխանությունից: Հուլիսի 22-ին կայսրության պետական մեքենան անցավ երիտթուրքերին հակառակորդ «Ազատություն և համաձայնություն» ընդդիմադիր կուսակցության ձեռքը՝ Ղազի Ահմեդ Մուհթար փաշայի գլխավորությամբ: Արտաքին քաղաքականության վատթար վիճակը և նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ուժեղացումը հարկադրեցին Թուրքիայի նոր ղեկավարներին ուղիներ փնտրել ստեղծված ճգնաժամից դուրս գալու համար: Եվ քանի որ 1912 թ. ամռանը առանձնապես մեծ թափ էր ստացել հակաթուրքական ապստամբությունը Ալբանիայում, կառավարությունը

<sup>203</sup> Նույն տեղում, № 384, էջ 389: Դը Սելվը՝ Դըվիլին, 22 դեկտեմբերի, 1911 թ.:

<sup>204</sup> St'a DDF, 3—II, № 112, էջ 106—107, Ժ. Կամբոնը՝ Պուանկարեն, 27 փետրվարի, 1912 թ.:

<sup>205</sup> St'a Նույն տեղում, № 142, 159:



նը ստիպված էր վարչական բնույթի որոշ բարեփոխումներով բավարարել ապստամբների մի շարք պահանջները<sup>206</sup>։

Ալբանական ապստամբության հաջողությունները նոր խրթան հանդիսացան թուրքական տիրապետության տակ գտնվող բալկանյան հողերում, առանձնապես Մակեդոնիայում և կայսրության մյուս մասերում ազգային-ազատագրական շարժումների վերելքի համար։

Երիտթուրքական հեղաշրջումից կարճ ժամանակ անց «նոր» Թուրքիայի քաղաքական ղեկավարները առանձնահատուկ մոլեգնությամբ վերսկսեցին համիդյան դարաշրջանի դաժան հալածանքները մակեդոնական ազգային-ազատագրական շարժման և նրա ղեկավարների նկատմամբ։ Երիտթուրքերը համոզված էին, որ հույների և սլավոնների սիստեմատիկ ջարդերով և ֆիզիկական բնաջնջմամբ իրականացվող «օսմանիզմի» քաղաքականությամբ պատմական կարճ ժամանակաշրջանում «Մակեդոնիայում չի մնա և ոչ մեկ քրիստոնյա»<sup>207</sup>։

1912 թ. հուլիսի 31-ին Մակեդոնիայի Կոչանա քաղաքի շուկայում պրովոկացիոն նպատակներով նետված երկու ումբերի պայթյունից զոհվեցին և վիրավորվեցին շուրջ մեկ տասնյակ մարդ, այդ թվում նաև մի քանի մահմեդական։ Ռումբերի որոտը դեռ չմարած՝ թուրք ոստիկանները և զինվորները խուժեցին բուլղարների տները և այնտեղ ապաստանած խուճապահար բնակիչներից ձերբակալեցին կասկածելի թվացող երիտասարդների մի մեծ խմբի։ «Այդ դժբախտ երիտասարդներին, — իր զեկուցագրում հաղորդում էր Ուսկյուբի (Կոսովո) ֆրանսիական հյուպատոսը, — այնուհետև տարան հրապարակ և այնտեղ սպաների հրամանով գնդակահարեցին ու սվինահարեցին»<sup>208</sup>։ Տեղական իշխանությունների աջակցությամբ թուրք զինվորներն ու բաշիբոզուկները անգութ ջարդ սկսեցին մակեդոնական քրիստոնյա բնակչության շրջանում։ Ջարդարարները չէին խնայում ոչ ոքի՝ առանց սեռի ու տարիքի խտրության, ենթարկում էին միջնադարյան տանջանքների։ Ջարդի ժամանակ միայն սպանվածների թիվը հասնում էր 46

<sup>206</sup> Ст'ю И. С. Галкин, նշվ. աշխ., էջ 169։

<sup>207</sup> И. Е. Гешов, Балканский союз, Воспоминания и документы, Пгр, 1915 г., стр. 12.

<sup>208</sup> DDF, 3—III, № 246, էջ 323—324, Կարլիեն՝ Բրիանին, 5 օգոստոսի, 1912 թ.։



մարդու, իսկ վիրավորներինը՝ 170-ի: Ընդամին վիրավորները իրականում ավելի մեծ թիվ էին կազմում, որոնցից ծանրերը մահանում էին: «Այդ ջարդը, — ամփոփում է ֆրանսիական հյուպատոսը, — իրականացրին ոստիկաններն ու զինվորները»<sup>209</sup>:

Թուրք շովինիստների ջարդարարական քաղաքականությունը ավելի բորբոքեց Բալկաններում շիկացած մթնոլորտը: Ազգային-ազատագրական պայքարի վերելքը Ալբանիայում, Մակեդոնիայում և Կրետեում, Թուրքիայի պարտությունը իտալաթուրքական պատերազմում արագացրին բալկանյան երկրների ռազմական ելույթը:

Վերլուծելով 1912 թ. աշնանը ստեղծված կայսրության ներքին ու արտաքին ծանր կացությունը՝ այդ ժամանակվա ռազմաժողովին մինիստր Մահմուդ Մուխթար փաշան խոստովանում է. իրադրությունը երբեք այդքան բարենպաստ չէր եղել բալկանյան երկրների կողմից Թուրքիայի դեմ զինված ելույթ սկսելու համար, մանավանդ որ վերջինս գտնվում էր ֆինանսապես քայքայված ու ռազմական տեսակետից ահավոր թույլ վիճակում<sup>210</sup>:

Հունաստանը ևս տենդորեն պատրաստվում էր մոտալուտ պատերազմին: Ռազմական տեսակետից նա արդեն պատրաստ էր մարտական գործողությունների: Ռազմական կցորդների կարծիքով հունական նավատորմը անգլիական միսիայի ջանքերով հասել էր «հույժ գոհացուցիչ հաջողությունների, իսկ ֆրանսիական սպաների ղեկավարությամբ ցամաքային ուժերի վերակառուցումը տվել էր հիանալի արդյունքներ»<sup>211</sup>: Այդ հանգամանքը հունական կառավարող շրջաններին հիմք էր տալիս կարծելու, որ պատերազմի դեպքում հունական բանակը կարող էր ոչ միայն կասեցնել թուրքական հարձակումը, այլև հաջողությամբ ռազմական գործողություններ ծավալել թշնամու տերիտորիայում<sup>212</sup>:

Միաժամանակ, Հունաստանը հասել էր դիվանագիտական հաջողությունների: 1910 թ. հոկտեմբերից Բուլղարիայի հետ

<sup>209</sup> Տե՛ս DDF, 3—III, № 246, էջ 324:

<sup>210</sup> Տե՛ս Gén. M. Moukhtar, նշվ. աշխ., էջ 144:

<sup>211</sup> ЦГБМФ, ф. 418, оп. 1, д. № 2933, л. 11.

<sup>212</sup> Տե՛ս DDF, 3—II, № 145, էջ 137, Ղըվիլը՝ Պուանկարեին, 2 մարտի, 1912 թ.:



հարաբերությունները բարելավելու ջանքերը 1912 թ. մայիսի 16 (29)-ին պսակվեցին երեքամյա պաշտպանական դաշնակցային գաղտնի պայմանագրի կնքմամբ<sup>213</sup>: Պայմանագիրը կրում էր պաշտպանական բնույթ, սակայն նրանում առկա էին այնպիսի տարրեր, որոնք հնարավորություն էին տալիս այն վերածելու հարձակողականի: Կողմերը պարտավորվում էին օգնության հասնել ոչ միայն հարձակման դեպքում, այլև պայմանագրերից ու միջազգային իրավունքից բխող իրավունքների խախտման դեպքում: Քանի որ թուրքական կառավարությունները չէին իրականացնում Բեռլինի կոնգրեսի որոշումները Մակեդոնիայի քրիստոնյա բնակչության վերաբերյալ, արդեն այդ հանգամանքն իսկ հնարավորություն էր ընձեռում հույն-բուլղարական պաշտպանական պայմանագիրը վերածելու հարձակողականի: Սակայն բուլղարական կառավարությունը չկամենալով պարտավորություն ընդունել կրետական հարցում, հրաժարվում է այն որպես պատերազմի առիթ ընդունելուց: Պայմանագրին կից հատուկ հայտարարության մեջ նշված էր, որ կրետացի պատգամավորներին հունական պառլամենտ ընդունելու հետևանքով առաջացած հույն-թուրքական պատերազմի դեպքում բուլղարական կառավարությունը պարտավորվում է «Հունաստանի հանդեպ պահպանել բարյացակամ չեզոքություն»<sup>214</sup>:

Հույն-բուլղարական հարաբերություններում առկա էր, սակայն, չլուծված մի մեծ, կարևոր պրոբլեմ: Դա Մակեդոնիայի հարցն էր, որի բաժանման շուրջը սուր պայքար էր գնում երկու երկրների բուրժուա-միապետական շրջանների միջև: Հենց այդ անհաշտելի հակասություններն էին պատճառը, որ նրանք ի վերջո չկարողացան հանգել ընդհանուր համաձայնության: Արտահայտելով հունական բուրժուա-միապետական շրջանների տրամադրությունները՝ վարչապետ Վենիզելոսը դեռևս դա-

<sup>213</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Dem. J. D. Drossos, La fondation de L'Alliance Balkanique. Etude d'histoire diplomatique, Athènes, 1929, И. Е. Гешов, Балканский союз. Воспоминания и документы, Пгр., 1915 г., И. С. Галкин, Образование балканского союза 1912 г. и политика европейских держав. «Вестник МГУ», сер. общ. наук, № 4, М., 1956, М. В. Кирсенко, Роль Греции в образовании балканского союза 1912 г., «Советское славяноведение», № 3, М., 1973:

<sup>214</sup> В. А. Жебокрицкий, նշվ. աշխ., էջ 180:







րական դեսպանը հաղորդում էր. «Այստեղ հրաժարվում են անհապաղ պատերազմական գործողություններ սկսելուց և ցանկանում են որոշել ապագա սահմանները»<sup>220</sup>: Բուլղարական կառավարությունը, իր հերթին, հրաժարվում է այդ հարցում Հունաստանի հետ համաձայնվելուց՝ հույսը դնելով Մակեդոնիայի ռազմական նվաճման վրա:

Նախապատրաստվելով ապագա իրադարձություններին, թուրքական կառավարությունը սեպտեմբերի 11 (24)-ին Ադրիանապոլսի վիլայեթում զորակոչ հայտարարեց: Միաժամանակ, կայսրության մայրաքաղաքում «Ազատություն և համաձայնություն» կառավարող կուսակցության և առանձնապես երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» ընդդիմադիր կուսակցության գլխավորությամբ տեղի էին ունենում շոքինիստական աղմկալի ցույցեր ու միտինգներ՝ «Կեցցե՛ պատերազմը» նշանաբանով: Միտինգներում հնչում էին ռազմամուլ կոչեր՝ բալկանյան երկրները ջախջախելու և թուրքական տիրապետությունը նրանցում վերականգնելու բովանդակությամբ<sup>221</sup>: Սեպտեմբերի 21-ին (հոկտ. 4-ին) Կ. Պոլսի Սուլթան Ահմեդ հրապարակում Թալեաթի նախագահությամբ տեղի ունեցած բազմահազարանոց միտինգում, որին մասնակցում էին քաղաքական տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, իթթիհատական գործիչներից մեկը կոչ արեց՝ «Երթալ թքնելու այդ մեկ քանի ձղձիմ ազգերու երեսն ի վեր» և ցանկություն հայտնեց թուրքական դրոշների փողփողալը տեսնել Սոֆիայում, Բելգրադում, Աթենքում և Ցետինեում<sup>222</sup>: Այնուհետև միտինգի մասնակիցները սուլթան Ֆաթիհի գերեզմանի վրա ուխտեցին ի կատար ածել բալկանյան երկրները ջախջախելու իրենց երդումը<sup>223</sup>: Կարճ ժամանակ անց, պատերազմի հռչակման օրը, Կ. Պոլսում հրատարակվող «Ժոնթուրք» թերթը հրապարակեց հոդված՝ Հունաստանի դեմ ուղղված սպառնալիքներով. «Մենք անհրաժեշտ ենք համարում ամբողջ սրտով կրկնելու 1897 թ. Հունաստանին տրված դա-

<sup>220</sup> Նույն տեղում, էջ 370:

<sup>221</sup> Տե՛ս M. Bağır, նշվ. աշխ., էջ 124—126:

<sup>222</sup> Տե՛ս «Ազատամարտ», 21.9 (4.10), 1912:

<sup>223</sup> Տե՛ս Նույն տեղում:



ար, որը նա այդքան շուտ է մոռացել: Այս անգամ այն կլինի տևական և ավելի հիմնական»<sup>224</sup>:

Թուրքական զորակոչը հարկադրեց բուլղարական կառավարությանը իր դաշնակիցներին ուղբի հանելու: Սեպտեմբերի 13 (26)-ին Գեշովը հեռագրեց Աթենք, Բելգրադ և Ցետինե՝ կոչելով սկսել զորահավաքը<sup>225</sup>: Հունաստանի անհապաղ ելույթը ապահովելու համար բուլղարական կառավարության ղեկավարը այժմ համաձայնվում էր կրետական հարցը դնել ռազմական համաձայնության հիմքում<sup>226</sup>:

Մակեդոնական հարցում եղած տարաձայնություններին հակառակ, հունական կառավարող շրջանները, այնուամենայնիվ, ստիպված էին վերջնականորեն պարզել իրենց դիրքը ապագա պատերազմի նկատմամբ: Նրանք շատ լավ էին հասկանում, որ իրենց մեկուսացման հետևանքով Հունաստանին ապառնում է Մակեդոնիայից և ընդհանրապես թուրքական տիրապետության տակ գտնվող հունական հողերից զրկվելու վտանգը: Ուստի 1912 թ. օգոստոսի 29-ին Մինիստրների խորհրդի նիստում որոշվեց մասնակցել պատերազմին<sup>227</sup>: Արդեն սեպտեմբերի սկզբներից Հունաստանում սկսեցին զորակոչվին ու ռազմական պատրաստություններ<sup>228</sup>: Մյուս կողմից, կրետական հարցի վերաբերյալ բուլղարական կառավարության առաջարկը Հունաստանի համար դիվանագիտական նշանակալի հաջողություն էր: Ամրապնդելու համար այդ հաջողությունը, հունական կառավարությունը պահանջեց, որպեսզի բուլղարական կողմը որոշակիորեն հաստատի, որ կրետական հարցը կազմում է երկու տերությունների դաշինքի հիմնական պայմանը<sup>229</sup>: Դրանից հետո միայն, սեպտեմբերի 17 (30)-ի առավոտյան, հունական կառավարությունը հայտարարեց ընդհանուր զորակոչ, իսկ սեպտեմբերի 22-ին (հոկտ. 5) Սոֆիայում կնքվեց հուլիս-բուլղարական ռազմական կոնվենցիան: Ղեկավար համաձայն Թուրքիայի դեմ մղվող պատերազմում Հունաստանը հանելու էր 120, իսկ Բուլղարիան՝ 300 հազարանոց

<sup>224</sup> C. Kerofilas, նշվ. աշխ., էջ 66:

<sup>225</sup> Տե՛ս A. Томев, նշվ. աշխ., էջ 385:

<sup>226</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 287:

<sup>227</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 286:

<sup>228</sup> Տե՛ս DDF, 3—III, № 385, p. 475:

<sup>229</sup> Տե՛ս Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 287:



բանակ: Ռազմական կոնվենցիան ուժի մեջ մտավ նրա ստորագրումից անմիջապես հետո և հանդիսացավ 1912 թ. գարնանը կնքված հույն-բուլղարական պայմանագրի բաղկացուցիչ մասը: Այժմ արդեն պատերազմի նախապատրաստությունները Հունաստանում ծավալվեցին բուռն թափով: Հյուսիսային սահման սկսեցին առաքվել ռազմական նյութերով բեռնված գնացքներ և հրետանային մարտկոցներ<sup>230</sup>: Միաժամանակ, հունական կառավարության հավանությամբ, Հունաստանում տեղի ունեցան ժողովրդական բողոքի միտինգներ ու ցույցեր ընդդեմ թուրքական ճնշումների՝ ի պաշտպանություն Թուրքիայում տառապող իրենց հայրենակիցների: Այդպիսով, հունական հասարակայնության լայն շրջանները նախապատրաստվում էին ապագա իրադարձություններին<sup>231</sup>:

Բալկաններում հասունացող իրադարձությունները կանխելու նպատակով Բլամիլ փաշայի կառավարությունը սեպտեմբերի 24-ին որոշեց դիմել դիվանագիտական փորձված հնարքի՝ խոստանալով կյանքի կոչել 1880 թ. հաստատված օրինագիծը, որը բխում էր Բեռլինի համաձայնագրի 23-րդ հոդվածից, որով թուրքական կառավարությունը Եվրոպական Թուրքիայում պետք է անցկացներ տեղական պայմաններից բխող վարչական բնույթի բարենորոգումներ, որոնք տասնյակ տարիներ ի վեր չէին կենսագործվում: Սակայն այս անգամ ևս թուրքական կառավարողները ամենևին տրամադրված չէին իրականացնել բարենորոգումները: Թուրք պատմաբաններից մեկի խոստովանությամբ՝ դա մի քալ էր, որը բխում էր սոսկ ժամանակ շահելու տակտիկայից և կենսագործվելու ոչ մի երաշխիք չէր պարունակում<sup>232</sup>:

1912 թ. աշնանը Բալկաններում հասունացող իրադարձությունները չէին համապատասխանում ռուսական դիվանագիտության շահերին: Մերձավորարևելյան խնդիրների շուրջ Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև տեղի ունեցած բանակցություններում բացահայտվեց, որ վերջինս տրամադիր չէ աջակցել Ռուսաստանին: Մյուս կողմից, Ռուսական կայսրությունը

<sup>230</sup> *ՏԷՍ* МОЭИ, с. II, т. XX, ч. II, № 777, стр. 282, Урсов-Непатову, 25/15 сентября, 1912 г.:

<sup>231</sup> *ՏԷՍ* DDF, 3—III, № 385, էջ 475: Դու Նալգեն՝ Պուանկարեին, 8 սեպտեմբերի, 1912 թ.:

<sup>232</sup> *ՏԷՍ* M. Bağır, նշվ. աշխ., էջ 119—120:



դեռևս պատրաստ չէր պատերազմի: Նման պայմաններում Բալկանյան պետությունների ընդհարումը Թուրքիայի հետ նրան ոչ մի օգուտ չէր խոստանում և հղի էր անցանկալի բարդություններով, ուստի ռուսական դիվանագիտությունը հանդես եկավ վերահաս պատերազմը կանխելու միջոցառումներով: Արտաքին գործերի մինիստր Սազոնովը սեպտեմբերի 29-ին հանձնարարեց Բալկանյան երկրներում հավատարմագրված՝ Ռուսաստանի ներկայացուցիչներին գործադրել բոլոր ջանքերը՝ տեղական կառավարություններին զորակոչից անհապաղ հետ պահելու համար: Միաժամանակ, թուրքական կառավարությանը խորհուրդ տրվեց զորքեր չկենտրոնացնել սահմանների մոտակայքում<sup>233</sup>:

Քաղաքական մի շարք նկատառումներով այդ շրջանում պատերազմ չէր ցանկանում նաև Ավստրո-Հունգարիան՝ Բալկաններում Ռուսաստանի կատաղի հակառակորդը: Այդ էր պատճառը, որ դեռևս 1912 թ. օգոստոսի 14-ին ավստրո-հունգարական կառավարությունը հանդես էր եկել Ալբանիայում և Մակեդոնիայում վարչական բնույթի բարենորոգումներ անցկացնելու ծրագրով: Սակայն դիվանագիտական այդ նախաձեռնությունը աջակցություն չգտավ ոչ միայն Անտանտի երկրների, այլև Եռյակ դաշինքի անդամ Իտալիայի կողմից<sup>234</sup>:

1912 թ. աշնանը Բալկաններում ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի քաղաքական տարբեր շահերի համընկնումը երկու տերությունների միասնական ելույթի պայման հանդիսացավ: Հոկտեմբերի 8-ին նրանք Բալկանյան երկրներին հանձնեցին նոտա, որտեղ նշված էր, որ տերությունները իրենց ձեռքն են վերցնում Եվրոպական Թուրքիայում բարեփոխումներ անցկացնելու գործը, առանց, սակայն, վնասելու սուլթանի գերագույն իշխանությանը և Օսմանյան կայսրության տերիտորիալ ամբողջականությանը: Նոտայում շեշտվում էր, որ պատերազմ ծագելու դեպքում, անկախ ամեն տեսակի հետևանքներից, տերությունները չեն կարող թույլ տալ ստատուս քվոյի որևէ

<sup>233</sup> *СГ* МОЭИ, с. II, т. XX, ч. II, стр. 306, Сазонов-Нератову, 29/16 сентября 1912:

<sup>234</sup> *СГ* J. Larmeroux, La politique extérieure de l'Autriche-Hongrie, 1875—1914, t. II. La politique d'asservissement, 1908—1914, P., 1918, էջ 241—243:



փոփոխություն: Երկու օր անց, հոկտեմբերի 10-ին, տերությունները նույնանման նոտա հղեցին նաև թուրքական կառավարությանը:

Հոկտեմբերի 13-ին բալկանյան պետությունները ներկայացրին իրենց միասնական պատասխանը: Ընդգծելով, որ թուրքիան երբեք չի կատարել քրիստոնյա հպատակ ժողովուրդների նկատմամբ իր պարտավորությունները, իրենք անհրաժեշտ են համարում անմիջականորեն դիմել սուլթանի կառավարությանը՝ առաջարկելով նրան այն սկզբունքները, որոնց համաձայն «պետք է իրականանան բարեփոխումները և երաշխիքները, որոնք պետք է տրվեն որպես դրանց իրականացման գրավական»<sup>235</sup>: Ինչպես և պետք էր ակնկալել, հոկտեմբերի 14-ին թուրքական կառավարությունը մերժեց բարեփոխումներ անցկացնելու օտարերկրյա միջամտությունը և նշեց, որ ինքն արդեն սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացրել մոտ ապագայում պառլամենտի քննարկմանը ներկայացնել 1880 թ. ընդունված օրինագիծը<sup>236</sup>:

Բալկանյան դաշնակիցները դիմեցին վճռական քայլի: Հոկտեմբերի 13-ին թուրքական կառավարությանը ներկայացրած միասնական նոտայում, ելնելով Բեռլինի դաշնագրի 23-րդ հոդվածից, նրանք շարադրեցին բարենորոգումների իրենց պահանջները: Բարենորոգումների իրականացումը հսկելու համար նրանք առաջարկում էին մեծ վեգիլությանը կից հիմնել քրիստոնյաների ու մահմեդականների հավասար քանակից կազմված բարձրագույն խորհուրդ: Այդ խորհրդի գործունեության հսկողությունը հանձնարարվելու էր Կ. Պոլսի մեծ տերությունների և բալկանյան 4 պետությունների դեսպաններին: Առաջարկված ծրագիրը կատարելու համար դաշնակիցները թուրքական կառավարությանը տրամադրում էին 6 ամիս ժամանակ և որպես բարենորոգումների իրականաց-

<sup>235</sup> МОЭИ, с. II, т. XX, ч. II, № 1012, стр. 441. Нота болгарского, греческого и сербского правительств посланникам России и Австро-Венгрии в Софии, Афинах и Белграде от 13 октября, 30 сентября 1912 г.

<sup>236</sup> Տե՛ս նույն տեղում, № 1031, էջ 455, Нота туреккого правительства представителям Австро-Венгрии, Англии, Франции и Германии в К. поле, от 14/1 октября, 1912 г.:



ման երաշխիք պահանջում էին չեղյալ հայտարարել թուրքական բանակի զորակոչի հրամանը<sup>237</sup>:

Թուրքական կառավարությունը մերժեց դաշնակիցների պահանջները և հոկտեմբերի 15-ին որոշեց հետ կանչել Աթենքի, Բելգրադի ու Սոֆիայի օսմանյան դեսպանորդներին ու խզել դիվանագիտական հարաբերությունները այդ երկրների հետ:

Այդ շրջանում, այնուամենայնիվ, թուրք պետական գործիչները փորձում էին ուղիներ որոնել վերահաս վտանգը նվազեցնելու համար: Միակ երկիրը, որի հետ հույս ունեին համաձայնություն կայացնել, Հունաստանն էր: Լիովին գիտակցելով, որ Կրետեն այլևս կորած է Թուրքիայի համար, նրանք առաջարկում էին այն հանձնել Հունաստանին՝ ենթադրելով այդպիսի գործարքով նրան հետ պահել պատերազմից<sup>238</sup>: Սակայն պարզ էր, որ Հունաստանն այլևս չէր կարող բավարարել միայն Կրետեով, քանի որ պատմականորեն ստեղծված պայմանները խոսում էին հոգուտ կղզու միության: Մյուս կողմից, Հունաստանը չէր կարող չմասնակցել Թուրքիայի դեմ ուղղված պատերազմին, քանի որ բալկանյան դաշինքի հաղթանակը հնարավորություն էր տալու թուրքական դարավոր տիրապետությունից ազատագրելու Մակեդոնիան, Թրակիան, Էպիրոսը և Էգեյան ծովի ավազանը:

Թուրք-հունական հարաբերությունների խզման նախօրյակին կրետացի պատգամավորները վերջապես դարձան Աթենական պառլամենտի լիիրավ անդամներ: Հոկտեմբերի 1/14-ին, բուռն խանդավառության մթնոլորտում բաց անելով պառլամենտի առաջին նիստը, հունական կառավարության ղեկավարը հանդիսավորությամբ հռչակեց Կրետեի վերամիավորումը Հունաստանին:

Հաջորդ օրը թուրքական դեսպանորդը այդ առթիվ բողոքներկայացրեց հունական կառավարությանը և ոչ մի պատասխան չստանալով, ամբողջ միսիայով մեկնեց մայրաքաղաքից: Հոկտեմբերի 18-ին Հունաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:

<sup>237</sup> St' u նույն տեղում, № 1013, էջ 442, Нота болгарского, греческого и сербского правительств турецкому правительству от 13 октября/30 сентября 1912 г., Приложение к ноте:

<sup>238</sup> St' u Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 282:



## ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԱՌԱՋԻՆ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Բալկանյան պատերազմը նոր իրավիճակ ստեղծեց միջագային հարաբերություններում: Պայքար էր ծավալվել թուրքական ֆեոդալական պետության դեմ՝ ազատագրելու կայսրության եվրոպական մասի ժողովուրդներին: Վերջապես հասել էր այն պատմական պահը, երբ բալկանյան երկրների միահամուռ ջանքերով պետք է իրականանար դեռևս թուրքական լծի տակ տառապող հայրենակիցների ազատագրումը և հունական պետության ազգային միավորման ավարտումը:

Առանձնապես մեծ էր ոգևորությունը հերոսական Կրետեում, որի քաջարի բնակիչները պատերազմը Թուրքիայի դեմ գնահատեցին որպես իրենց ազգային իղձերի իրականացման վերջնական միջոց: Վճռելով անհապաղ մասնակցել պատերազմին, կրետական կառավարությունը հոկտեմբերի 2-ին իսկ զորակոչ հայտարարեց և որոշեց հունական թագավորությանը տրամադրել կղզու միլիցիան՝ լրիվ սպառազինությամբ ու ռազմամթերքով, ինչպես նաև օգնել զենքի, հանդերձանքի մատակարարման ու կամավորական ջոկատների առաքման գործում<sup>1</sup>:

Լայն ծավալ ստացավ կամավորական շարժումը, որն ընդգրկեց ոչ միայն Հունաստանը, այլև՝ արտասահմանում բնակվող հույներին: Թուրքիայից, Ռուսաստանից, եվրոպական երկրներից, Ամերիկայից ու հեռավոր Ավստրալիայից Հունաստան էին աճապարում բազմահազար հույն կամավորներ՝ հաճախ արդեն կազմավորված զինվորական միավորումներով: Ար-

<sup>1</sup> См. МОЭИ, с. II, т. XX, ч. II, № 865, стр. 338—339, Шебунин-Нератову, 2 октября/19 сентября, 1912 г.:



տասահմանյան հունական բուրժուական շրջանները կառավարությանը օժանդակեցին նաև հսկայական դրամական նվիրատվություններով: Կամավորական շարժումն ընդգրկեց նաև զանազան ազգերի ներկայացուցիչներին: Նրանցից կազմվեց Գարիբալդիական լեգեոն՝ գեներալ Գարիբալդի Ռիչորթիի հրամանատարությամբ: Հատկանշական է, որ Հունաստանի համար մարտնչող կամավորական այդ գնդում զինվորագրված էին բազմաթիվ հայեր:

Կարճ ժամանակամիջոցում դաշնակիցները հասան ռազմական մեծ հաջողությունների: Հոկտեմբերի 22-ից 24-ը Կըրք-Քիլիսեում տեղի ունեցած առաջին խոշոր ճակատամարտում հաղթելով թուրքերին, բուլղարները պաշարեցին Եվրոպական Թուրքիայի խոշոր քաղաք-ամրոց Ադրիանապոլիսը: Հոկտեմբերի 29-ին Լյուլե-Բուրգազում սկսված ճակատամարտը ավարտվեց նոյեմբերի 3-ին՝ թուրքական բանակների չախչախումով: Խուճապահար նահանջող թուրքական ուժերը մեծ դժվարությամբ կարողացան ամրանալ մայրաքաղաքից 35—45 կմ. հեռավորության վրա գտնվող Չաթալջայի դիրքերում:

Հոկտեմբերի 23-ից 24-ը Կումանովոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հաղթելով թուրքերին, նույն ամսի 26-ին սերբերը մտան Սկոպլե: Շարունակելով իրենց առաջխաղացումը դեպի հարավ, եռօրյա ճակատամարտից հետո, նոյեմբերի 18-ին սերբերը գրավեցին Բիտոլիան: Դուրս գալով Ադրիատիկ ծով՝ սերբական զորքերը չեռնոգորցիների հետ պաշարեցին Շկոդերը (Սկուտարի):

Նշանակալից էին նաև հունական 90 հազարանոց գործող բանակի հաջողությունները: Էպիրոսյան բանակը, գեներալ Սապունձակիսի հրամանատարությամբ, կարճ ժամանակում մաքրում է Էպիրոսը հակառակորդից և պաշարում Յանինան: Հունական բանակի մյուս՝ թեսալիական խմբավորումը, որի հիմնական խնդիրն էր Սալոնիկի գրավումը, արդեն հոկտեմբերի 19-ին վերցնում է Էլասոնը: Շարժվելով դեպի հյուսիս՝ թեսալիական բանակը թագաժառանգ, գլխավոր հրամանատար Կոստանդինի ղեկավարությամբ ազատագրում է մակեդոնական քաղաքներ Սերվիան, Կոզանան, Գրեկենան, Քաթերինին: Հիմնական ուժերով ուղղվելով դեպի հյուսիսարևմուտք և նոյեմբերի 2-ին Յանիցայի (Յենիջե-Վարդար)



մոտ ջախջախելով թուրքական 25 հազարանոց բանակը՝ հույները գրեթե առանց դիմադրության շարժվում են առաջ և նոյեմբերի 7-ին երեկոյան ժամը 11-ին մտնում Սալոնիկ:

Այսպիսով, ընդամենը երեք շաբաթվա ընթացքում հունական բանակը գրավում է Էպիրոսը և Մակեդոնիայի հարավային մասը՝ Սալոնիկ նավահանգստով: Այդ համեմատաբար հեշտ հաղթանակները ձեռք բերվեցին շնորհիվ բուլղարական մարտունակ բանակի հաջողությունների, որն իր վրա էր կրում թուրքական բանակների ջախջախման հիմնական ծանրությունը:

Եթե թուրքական բանակները համեմատաբար համառ դիմադրություն էին ցույց տալիս ցամաքում, ապա միանգամայն այլ էր պատկերը ծովում: 34 ռազմանավերից բաղկացած հունական Էգեյան նավատորմը փոխծովակալ Պավլոս Կունդուրիոտիսի հրամանատարությամբ լիակատար գերիշխանություն է հաստատում Էգեյան ծովում: Բացառությամբ երկու աննշան ընդհարումների, տեղի չի ունենում ոչ մի լուրջ ծովամարտ: Թուրքական նավատորմը, որ լուրջ պարտություն էր կրել իտալա-թուրքական պատերազմում, ապավինելով Դարդանեղի առափնյա պաշտպանությանը՝ դատապարտվում է անգործության: Չհանդիպելով որևէ դիմադրության, Էգեյան նավատորմը աստիճանաբար սկսում է ազատագրել թուրքական տիրապետության տակ գտնվող Էգեյան ծովի կղզիները: Միաժամանակ, ջրջափակելով թուրքական ծովափը, հունական նավատորմը խանգարում է 250 հազարանոց թուրքական բանակի ափանումը Եվրոպական Թուրքիա: Հունաստանի և նրա դաշնակիցների ռազմական փայլուն հաղթանակների շնորհիվ կարճ ժամանակում թուրքական տիրապետությունից ազատագրվեցին Թեսալիան, Էպիրոսի, Մակեդոնիայի, Թրակիայի մեծագույն մասը, ինչպես նաև Էգեյան ծովի կղզիների որոշ մասը: Դեռևս օրհասական պաշտպանություն էին մղում Ադրիանապոլիսը, Սկուտարին և Յանինան:

Հետագա պարտություններից ու տերիտորիալ կորուստներից խուսափելու համար Քյամիլ փաշայի կառավարությունը դիմում է տերություններին՝ խնդրելով զինադադար: Ընդամենը, նա պայման էր դնում, որ կնքված հաշտությունը պետք է անձեռնմխելի թողնի Օսմանյան կայսրության տարածքային



ամբողջականությունը<sup>2</sup>: Ծիգերի գերագույն լարումով նա կարողացավ նույնների վերջերին կասեցնել բուլղարական մարտունակ բանակի առաջընթացը: 4. Պոլսի մատույցներում՝ Չաթալջայում մղված արյունահեղ մարտերում անհաջողություն կրելով, Բուլղարիան հարկադրվեց նույնների 26-ին զինադադարի բանակցություններ սկսել Թուրքիայի հետ: Նրան միացան Սերբիան ու Չեոնոգորիան:

Հունաստանը, որը գտնվում էր ռազմական աննախադեպ հաջողությունների շրջանում, հանդես էր գալիս Թուրքիայի դեմ ռազմական գործողությունները մինչև վերջ շարունակելու առաջարկով, նշելով, որ միայն այդ ճանապարհով կարելի է հակառակորդ տերությանը հարկադրել ընդունելու հաշտության իրենց պայմանները: Միաժամանակ, հունական կառավարությունը պահանջում էր նախ և առաջ համաձայնություն ձեռք բերել Եվրոպական Թուրքիան դաշնակից երկրների, մասնավորապես Հունաստանի և Բուլղարիայի միջև բաժանելու վերաբերյալ, հակառակ դեպքում՝ այդ կնճռոտ հարցը հանձնել Անտանտի տերությունների հաշտարար միջնորդությանը<sup>3</sup>:

Չնայած դրան՝ Հունաստանը նույնպես իր ներկայացուցիչներն ուղարկեց Չաթալջայում ընթացող զինադադարի բանակցություններին: Հունական կողմը պահանջում էր ազատ արձակել Սև ծովում արգելափակված, ինչպես նաև՝ թուրքական իշխանությունների կողմից բռնագրավված հունական առևտրանավերը: Բացի այդ, հույները ցանկություն ունեին մինչև հաշտություն կնքելը Էգեյան ծովում շարունակել ռազմական գործողությունները: Ամենաեականը, սակայն, այն էր, որ հույները պահանջում էին իրենց հանձնել պաշարման վիճակում գտնվող Էպիրոսի Յանինա բերդաքաղաքն ու Էգեյան ծովի դեռևս թուրքական տիրապետության տակ գտնվող կղզիները<sup>4</sup>:

Այս պայմանները մերժվեցին թուրքական պատվիրակության կողմից, ուստի Հունաստանը հրաժարվեց միանալ դեկտեմբերի 3-ին Չաթալջայում կնքված զինադադարին: Այսուհանդերձ, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն

<sup>2</sup> Տե՛ս Y. H. Bayur, Türk inkilâbı tarihi, cilt II, kısım II, s. 60, Ankara, 1943:

<sup>3</sup> Տե՛ս A. A. Могилевич, М. Э. Айрапетян, նշվ. աշխ., էջ 136:

<sup>4</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 135—136:



Հունաստանը մասնակցելու էր 1912 թ. դեկտեմբերի 16-ին  
Լոնդոնում սկսվելիք հաշտության բանակցություններին:

Բալկանյան պատերազմի առաջին շրջանը, հակառակ իր  
կարճատևությանը, խիստ արդյունավետ եղավ դաշնակիցների  
համար. նրանց ձեռքն անցավ գրեթե ամբողջ Եվրոպական  
Թուրքիան՝ մինչև Չաթալջայի բլուրները: Իրենց անկման շր-  
ջանն էին ապրում պաշարված Յանինան, Սկուտարին և Ադ-  
րիանապոլիսը: Այնինչ թուրքական կառավարությունը չէր էլ  
ցանկանում հաշվի առնել Բալկաններում ստեղծված ռազմա-  
քաղաքական իրադրությունը և հանդես էր գալիս կորցրած  
տարածքները կայսրության կազմում պահելու համառ ձրգտ-  
մամբ: Այդպիսի դիրքորոշումը նախապես ազդարարում էր  
դաշնակիցներին, որ հաշտության բանակցությունները տեղի  
են ունենալու դիվանագիտական անգիջում պայքարի իրա-  
դրության մեջ:

Թուրքական կառավարող շրջանները մեծ նշանակություն  
էին տալիս Հունաստանի դեմ Էգեյան ավազանում ծավալվող  
ռազմածովային գործողություններին: «Ուստի, — նշում է Բա-  
յուրը, — դեկտեմբերի առաջին կեսին ծավալվող ռազմական  
գործողությունները պատերազմող երկու երկրների՝ Թուրքիա-  
յի և Հունաստանի համար, Լոնդոնի հաշտության բանակցու-  
թյունների վրա ազդելու տեսակետից, ստանում էին առանձ-  
նահատուկ նշանակություն»<sup>5</sup>: Ժովում և ցամաքում թուրքական  
ուժերի ծանր վիճակին հակառակ, — շարունակում է նա, —  
թուրքական կառավարությունը այն աստիճան սխալ էր գնա-  
հատում ստեղծված ռազմական իրավիճակը, որ նույնիսկ դեկ-  
տեմբերի 17-ի ծովամարտը համարվում էր որպես թուրքական  
նավատորմի ակնառու հաջողություն: Այդ պատրանքը առա-  
ջացրել էր այն համոզումը, որ թուրքական նավատորմը ի վի-  
ճակի է վերագրվելու Էգեյան ծովի կղզիները և հաշտության  
բանակցությունների ընթացքում կբացառվի դրանք Հունաս-  
տանին զիջելու հնարավորությունը<sup>6</sup>: Այդ էր պատճառը, որ  
թուրքական պատվիրակությանը ուղարկված դեկտեմբերի 18-ի  
հրահանգում չէր առարկվում հաշտության բանակցություն-  
ներին հունական պատվիրակության մասնակցությունը<sup>7</sup>:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 183:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 184:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում:



Իսկ որոշք էին Հունաստանի պայմանները: Մակեդոնիայի ու Թրակիայի վերաբերյալ նա Թուրքիային պահանջներ չէր պարող ներկայացնել, որովհետև այդ հարցերը լուծվելու էին դաշնակիցների միջև՝ պատերազմի հաղթական ավարտից հետո: Ուստի հունական կառավարության պահանջները հիմնականում վերաբերում էին Կրետեին և Էգեյան ծովի կղզիներին: Հանդես գալով այդ խնդրի շուրջ՝ Վենիզելոսը նշում է, որ Հունաստանի նպատակը Էգեյան ծովի բոլոր կղզիները, այդ թվում նաև իտալացիների գրաված Ռոդեկանեզը, վերադարձնելն է: Այդ դեպքում, հունական կառավարության կարծիքով, կվերանար հույն-թուրքական հարաբերությունների բարելավմանը խանգարող ամենամեծ արգելքներից մեկը<sup>8</sup>: Նա շեշտում էր նաև, որ կղզիները թուրքական տիրապետության տակ թողնելու դեպքում Էգեյան ավազանում ավելի էր սաստկանալու ազգային-ազատագրական շարժումը: Նկատի առնելով այս հեռանկարը՝ Վենիզելոսը նշում էր, որ հարցը հոգուտ Թուրքիայի լուծելու դեպքում տերությունները իրենց դնելու են մի շարք բարդությունների առջև, որոնց հետ նրանք արդեն ծանոթ են Կրետե կղզու փորձից<sup>9</sup>:

Բալկանյան դաշնակիցների ու թուրքերի միջև հաշտության բանակցություններն սկսվեցին 1912 թ. դեկտեմբերի 16-ին Լոնդոնում: Հաղթողները պահանջում էին, որ Թուրքիան Բալկաններում հրաժարվեր Սև ծովի Միդիա և Մարմարա ծովի Ռոդոստո քաղաքների միջև ձգվող ուղղաձիգ սահմանագծից արևմուտք ընկած ամբողջ տարածությունից, բացառությամբ Ալբանիայի ու Գալիպոլի թերակղզու: Դա նշանակում էր թուրքական դարավոր տիրապետության լիակատար կործանում Թեսալիայում, Էպիրոսում, Մակեդոնիայում և Թրակիայի մեծագույն մասում: Նման սահմանագծի հաստատման դեպքում Թուրքիան ամբողջովին դուրս էր մղվելու Հարավ-արևելյան Եվրոպայից և նրան էր մնալու սոսկ Էնոս—Միդիա սահմանագծից մինչև Կ. Պոլիս ընկած տարածությունը: Եվրոպական Թուրքիայից բացի դաշնակիցները պահանջում էին Կրետեն ու Էգեյան ծովի բոլոր կղզիները<sup>10</sup>:

<sup>8</sup> Տե՛ս «С. Петербургскіе ведомости». 16(29).XII, 1912:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս DDF, 3—V, № 115, էջ 136, Դը Ֆլորիոն՝ Պուանկարեին, 23 դեկտեմբերի, 1912 թ.:



Լիովին մերժելով Եվրոպական Թուրքիայից հրաժարվելու պահանջը՝ թուրքական պատվիրակությունը ներկայացրեց իր պայմանները: Ռրանց համաձայն՝ Ադրիանապոլսի նահանգը ամբողջությամբ մնալու էր Օսմանյան կայսրությանը, իսկ Մակեդոնիային շնորհվելու էր ինքնավարության իրավունք՝ սուլթանի գերիշխանության ներքո<sup>11</sup>: Կրետե կղզուն վերաբերող բոլոր հարցերը պետք է կարգավորվեին միայն մեծ տերությունների և Օսմանյան կայսրության կողմից: Ինչ վերաբերում է Էգեյան ծովի կղզիները հանձնելու պահանջին, ապա թուրքական պատվիրակությունը հայտարարեց, որ դրանք պաշտպանում են իրենց ասիական տիրույթները, ուստի և չեն կարող անցնել մեկ ուրիշի<sup>12</sup>: Սակայն դաշնակիցների միահամուռ ճնշումը թուրքերին հարկադրեց անելու որոշ տերիտորիալ զիջումներ. 1913 թ. հունվարի 1-ի 7-րդ նիստում նրանք հրաժարվեցին Ադրիանապոլսի նահանգից (Մեստա գետից) արևմուտք գտնվող բոլոր տարածություններից, սակայն այն պայմանով, որ հիշյալ նահանգը մնա կայսրության կազմում<sup>13</sup>:

Թուրքական կառավարությունը կտրականապես մերժեց Էգեյան ծովի կղզիներից հրաժարվելու դաշնակիցների պահանջը: Այսուհանդերձ, նա հարկադրված էր նշել, որ անհրաժեշտության դեպքում այդ կղզիների հետ կապված հարցերը կըքննարկվեն մեծ տերությունների հետ միասին<sup>14</sup>: Ինչ վերաբերում է Կրետե կղզուն, ապա թուրքական կառավարությունը հայտարարեց, որ ինքը առանց որևէ առարկության կընդունի այն որոշումը, որն ընդհանուր համաձայնությամբ կկայացնեն տերությունները<sup>15</sup>: Զլամիլ փաշայի կառավարությունը դեռևս հույս ուներ օգտվել տերությունների միջև եղած հակասություններից և խուսանավելու քաղաքականությամբ նպաստել հարցը հոգուտ կայսրության լուծելուն:

Դաշնակիցները մերժում են ոչ միայն Ադրիանապոլսի նա-

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, № 139, էջ 162, Դը Ֆլորիոն՝ Պուանկարեին, 23 դեկտեմբերի, 1912 թ.:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>13</sup> Տե՛ս DDF, 3—V, №.159, էջ 186, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 2 հունվարի, 1913 թ.:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում:



հանգը Օսմանյան կայսրության կազմում պահելու թուրքական կառավարության հավակնությունը, այլև պահանջում են դեռևս պաշարողական վիճակում գտնվող ամրոցները<sup>16</sup>: Իսկ կղզիների ու Կրետեի վերաբերյալ դաշնակիցները իրենց պատասխանը խմբագրել էին հետևյալ կերպ. «Հավասարապես անընդունելի է թուրքական առաջարկը Էգեյան ծովի կղզիների ու Կրետեի վերաբերյալ: Դաշնակիցները ուժի մեջ են պահում Էգեյան ծովի կղզիները զիջելու և Կրետեի նկատմամբ Թուրքիայի ունեցած բոլոր իրավունքներից հրաժարվելու իրենց նախկին պահանջները»<sup>17</sup>:

1913 թ. հունվարի 3-ի նիստում թուրքական պատվիրակությունը գնում է նոր զիջումների և համաձայնվում Ադրիանապոլսի նահանգի Կըրջաալի կազան և Գյումուլշինե սանջակի արևմտյան կեսը հանձնել դաշնակիցներին<sup>18</sup>: Բացի այդ, թուրքական կառավարությունը Կրետեի նկատմամբ ունեցած իր իրավունքները զիջում էր մեծ տերություններին, սակայն այն պայմանով, որ Էգեյան ծովի բոլոր կղզիները մնան Թուրքիային<sup>19</sup>:

Մերժելով թուրքական կառավարության առաջարկները՝ դաշնակիցները վերջին անգամ պահանջում են, որ թուրքական կառավարությունը հրաժարվի Կրետեի վրա ունեցած բոլոր իրավունքներից, Էգեյան ծովի կղզիներից ու Ադրիանապոլսից<sup>20</sup>: Լոնդոնի ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը, վերլուծելով ստեղծված իրադրությունը, եզրակացնում էր, որ թուրքական պատվիրակության բացասական պատասխանը բանակցությունները հանգեցնելու է խզման<sup>21</sup>:

Ինչպես որ պետք էր սպասել, 1913 թ. հունվարի 5-ին Կ. Պոլսում հավաքված մի նիստրների խորհուրդը վճռականապես մերժեց Էգեյան ծովի կղզիները և Ադրիանապոլիսը զիջելու դաշնակիցների պահանջները<sup>22</sup>: Այդ վերջինի համար թուրքա-

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 214:

<sup>19</sup> Տե՛ս DDF, 3—V, № 170, էջ 201, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 4 հունվարի, 1913, հավելված 1:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, հավելված 3:

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 199:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, № 175, էջ 210, Բոմպարը՝ Պուանկարեին, 5 հունվարի, 1913 թ.:



կան կառավարությունը պատրաստ էր վերսկսելու ռազմական գործողությունները<sup>23</sup>: Հիմնվելով Կ. Պոլսից ստացած հրահանգի վրա՝ թուրքական պատվիրակության ղեկավար Ռեշիդ փաշան հունվարի 6-ի նիստում փորձեց ապացուցել, որ իրենք արդեն ընդունել են դաշնակիցների տերիտորիալ պահանջները՝ բացառությամբ Ադրիանապոլսի և Էգեյան ծովի կղզիների: Նա կրկին մերժեց Ադրիանապոլիսը հանձնելու պահանջը՝ պատճառաբանելով, որ դրանով անմիջականորեն կվտանգվի նեղուցների ու Կ. Պոլսի ապահովությունը: Պատվիրակության ղեկավարը պատրաստակամություն հայտնեց բանակցելու այնպիսի սահմանագծի հաստատման շուրջ, որով Ադրիանապոլիսը մնար կայսրության կազմում:

Թուրքական կառավարությունը կտրականապես դեմ էր Էգեյան ծովի կղզիները զիջելու պահանջին՝ նշելով, որ Ղարդանեղի շրջանում գտնվող Սամոթրակիա, Իմբրոս, Լեմնոս և Թենեդոս կղզիները Հունաստանի սուվերենության ներքո հարատև սպառնալիք կներկայացնեն Թուրքիային: Կայսրության ղեկավար շրջանների համոզմամբ նույնիսկ այդ կղզիների ապառազմականացումը չէր կարող կայուն երաշխիք լինել նեղուցների և Կ. Պոլսի անվտանգությանը: Ուստի թուրքական կառավարությունը որոշեց Կրետեի զոհաբերումով սահմանափակել կղզիների հարցում Հունաստանի պահանջները: Այս առթիվ Ռեշիդ փաշան հայտարարեց. «Կրետեի նկատմամբ մեր բոլոր իրավունքներից հրաժարվում ենք այն պայմանով, որ չպահանջվի Էգեյան ծովի կղզիներից և ոչ մեկը: Այս հսկայական զոհաբերությունից հետո դաշնակիցները եթե չկամենան հաշտություն կնքել և գնան բանակցությունների խզման ուղիով, ապա դրա պատասխանատվությունը կծանրանա նրանց վրա և ցայսօր կատարած մեր բոլոր զոհաբերությունները կհամարենք անվավեր»<sup>24</sup>: Դաշնակիցները անբավարար համարեցին թուրքական պատվիրակության պատասխանը և հայտարարեցին բանակցությունների խզման իրենց որոշումը:

Բալկանյան պատերազմը ոչ միայն Օսմանյան կայսրության

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, № 147, էջ 167, Բոմպարը՝ Պուանկարեին, 30 դեկտեմբերի, 1912 թ.:

<sup>24</sup> DDF, 3—V, № 189, p. 219, Annexe 1.



և բալկանյան երկրների միջև եղած խոր հակասություններ հետևանքն էր, այլև իմպերիալիստական տերությունների հկամարտ շահերի արդյունք: Բալկանյան դաշինքը ստեղծվորպես հակազդող ուժ Ավստրո-Հունգարիային և Օսմանյսկայսրությանը: Այն ցույց տվեց նաև Անտանտի երկրների հըկայական շահագրգռվածությունը Բալկանների, նեղուցների Մերձավոր Արևելքի նկատմամբ: Մյուս կողմից, Եռյակ դաշինքը չէր կարող թույլ տալ, որ հակառակորդ խմբավորումը բալկանյան երկրների միջոցով տնօրիներ Բալկանների և Մերձավոր Արևելքի խնդիրները: Այդ հակասությունների հետևանքըն եղավ այն, որ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան թուրք-բալկանյան կոնֆլիկտում հանդես եկան եռանդուն միջամտությամբ՝ նրա «կարգավորման» պատրվակով պատերազմող կողմերին պարտադրելով իրենց շահերին համապատասխան որոշումներ:

Որպես բալկանյան հարցերի լուծման յուրօրինակ գերագույն ատյան 1912 թ. դեկտեմբերի 17-ին Լոնդոնում իր աշխատանքն սկսեց հիշյալ վեց տերությունների դեսպանների կոնֆերանսը: Օրակարգում պատերազմի հետևանքով առաջացած հրատապ հարցերի քննարկումն էր, որոնց լուծման համար պահանջվեց գրեթե կես տարի: Դրանց շուրջը դրսևորվեցին իմպերիալիստական տերությունների անհաշտելի տարաձայնությունները, որոնցից ամենաեականը նաև Էգեյան ծովի կղզիների խնդիրն էր: Վերջինիս լուծմամբ հավասարապես շահագրգռված էին բոլոր իմպերիալիստական տերությունները, որոնք կղզիների հարցը դիտում էին որպես Բալկաններում ու Մերձավոր Արևելքում իրենց ազդեցությունն ուժեղացնելու միջոց: Խնդիրն, ի վերջո, առնչվում էր բալկանյան երկրների ու Թուրքիայի նկատմամբ տերությունների վարած քաղաքականության, ինչպես նաև նեղուցների ու ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող կղզիների հարցի հետ: Գործը բարդանում էր նրանով, որ Եռյակ դաշինքի անդամ Իտալիան 1911—1912 թթ. պատերազմում Թուրքիայից գրավելով Դոդեկանեզյան արշիպելագը՝ հավակնում էր իր ազդեցությունը տարածել Արևելյան Միջերկրականում:

Ռուսական դիվանագիտությանը առաջին հերթին անհանգըստացնում էր Էգեյան ծովում Հունաստանի գերիշխանության հաստատման հեռանկարը, որը կարող էր սպառնալ նե-



ղուցների անվտանգությանը: Արտաքին գործերի մինիստր Սազոնովը այդ առթիվ հայտարարել է. «Այն օրը, երբ Էգեյան ծովում հույները ունենան տաս Դրեդնոտ, ապա ի՞նչ արժեք կունենա նեղուցների ազատությունը»<sup>25</sup>: Էգեյան ծովում Հունաստանի, հետևաբար՝ Անգլիայի գերիշխանության հաստատումը Սազոնովին ստիպում էր հանդես գալու բոլոր կղզիները Օսմանյան կայսրության կազմում պահելու օգտին: Դեռևս բալկանյան պատերազմի սկզբում նա հրապարակեց իր կառավարության կարծիքն այն մասին, որ Հունաստանը կստանա Կրետեն, «բայց ուրիշ և ոչ մեկ կղզի»<sup>26</sup>: Սակայն, երբ հունական նավատորմը գրավեց կղզիները, Սազոնովը սկսեց որոնել նեղուցների անվտանգությունը ապահովող լուծում:

Այդ առումով առաջին պլանի վրա էր դրվում նեղուցների շրջանում գտնվող Իմբրոս, Լեմնոս, Թենեդոս և Սամոթրակիա կղզիների պատկանելիության հարցը, որոնք իրենց աշխարհագրական դիրքով և ռազմաստրատեգիական նշանակությամբ կապվում են նեղուցների հետ: Չափազանց բարձր գնահատելով այդ կղզիների դերը նեղուցների պաշտպանության գործում՝ ռուսական դիվանագիտությունն առաջարկում էր դրանք թողնել Թուրքիայի կազմում: Պետերբուրգում համոզված էին, որ այդ կղզիները հետամնաց և թույլ Թուրքիայի ձեռքում չեն կարող Ռուսաստանի համար էական սպառնալիք ստեղծել, այնինչ դրանց անցումը մեկ այլ պետության, նեղուցների անվտանգության առումով, կհարվաժեր իրենց շահերին<sup>27</sup>: Ուստի վերոհիշյալ կղզիների, առանձնապես՝ Լեմնոսի և Թենեդոսի անցումը Հունաստանին ռուսական դիվանագիտությունը համարում էր բացարձակապես անթույլատրելի, «որովհետև դրանք իրենցից ներկայացնում են Դարդանելի մուտքը շրջափակող բանալի»<sup>28</sup>:

Նեղուցների համար մղվող պայքարը Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության հիմնական հարցն էր: Այդ պըրոբլեմի միակ արմատական լուծումը Բոսֆորի ու Դարդանելի

<sup>25</sup> DDF, 3—VIII, № 140, էջ 175, Դուլսեն՝ Պիշոնին, 11 սեպտեմբերի, 1913 թ.:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Տե՛ս DDF, 3—V, № 85, էջ 103, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 18 օգոստոսի, 1912 թ.:

<sup>28</sup> ЦГАБМФ, ф. 418, оп. I, д. № 2936, л. 28.



ոազմական գրավումն էր<sup>29</sup>: Նեղուցների անվտանգությունը ապահովելու համար Ռուսաստանը պետք է գրավեր նաև հարակից կղզիները<sup>30</sup>:

Ֆրանսիան հանդես էր գալիս Էգեյան ծովի բոլոր կղզիները հունական ճանաչելու ծրագրով: Դա վերաբերում էր նաև Դոդեկանեզյան արշիպելագին, որը գրավել էին իտալացիները: Նման մոտեցումը բխում էր ոչ թե կղզիների բնակչության ազգային պատկանելության սկզբունքից, այլ Արևելյան Միջերկրականում ու Լևանտի երկրներում ֆրանսիական շահերը պաշտպանելու քաղաքականությունից<sup>31</sup>: Բացի այդ, Իտալիան ելյակ դաշինքի անդամ էր և այդ հանգամանքը Փարիզում գնահատվում էր որպես լուրջ վտանգ: «Հունաստանի առընչությամբ դրված խնդիրը ավելի քան կարևոր է, — գրում էր Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը, — դա վերաբերում է Միջերկրականում մեր անվտանգությանը»<sup>32</sup>: Թվում էր, թե Ֆրանսիան պաշտպանում է հունական պետության շահերը, այնինչ նա ձգտում էր կանխել իտալական էքսպանսիան Արևելյան Միջերկրականում և Լևանտում՝ Հունաստանը դիտելով Իտալիային հակազդող ոազմաքաղաքական ուժ: Միաժամանակ Հունաստանը մրցման մեջ էր մտնելու իտալական բուրժուազիայի հետ, կանխելով կամ նվազեցնելով նրա տնտեսական գործունեությունը տվյալ շրջանում<sup>33</sup>:

Էգեյան կղզիների հարցում անգլիական կառավարությունը հետապնդում էր մեկ հիմնական նպատակ. թույլ չտալ Էգեյան ավազանում որևէ մեծ տերության գերիշխանության հաստատումը: Ուստի Լոնդոնում խիստ բացասաբար էին վերաբերվում Դոդեկանեզում հաստատվելու Իտալիայի ջանքերին: «Անգլիան, հավանաբար, ավելի քան մենք, վախենում է Արևելյան Միջերկրականի ավազանում Իտալիայի հաստատումից

<sup>29</sup> Տե՛ս История дипломатии, т. II, էջ 761:

<sup>30</sup> Տե՛ս ЦГАВМФ, ф. 418, оп. 1. д. № 2936, л. 28:

<sup>31</sup> Տե՛ս DDF, 3—V, № 70, էջ 85—86, Պուանկարեն՝ Պոլ Կամբոնին, 15 դեկտեմբերի, 1912 թ.:

<sup>32</sup> Նույն տեղում, հ. 7, № 498, էջ 540, Պիշոնի անտառցիան, 29 հուլիսի, 1913 թ.:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 540, Դը Բիլլին՝ Պիշոնին, 29 հուլիսի, 1913 թ.:



և փափագում է այդ կղզիների շուտափույթ եվակուացիան», — հաղորդում էր Լոնդոնի ֆրանսիական դեսպանը<sup>34</sup>:

Գերմանիայի կառավարող շրջաններում էգեյան ծովի կղզիների խնդրում գոյություն ունեւ երկու տեսակետ: Արտաքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատողները Թուրքիային դիտելով որպէս ապագա պատերազմում իրենց դաշնակից, հանդես էին գալիս նրա շահերի պաշտպանությամբ: Մյուս կողմը, կայզերի գլխավորությամբ, ենթադրում էր, որ Գերմանիան ունի ազդեցության բավականաչափ միջոցներ ու լծակներ, որոնցով կկարողանա Թուրքիային թեքել իր կողմը, ուստի կղզիների հարցում պաշտպանելով Հունաստանին, աշխատում էր վերջինիս ներգրավել Եռյակ դաշինքի մեջ: Ռա իր արտացոլումը գտավ կղզիների հարցի քննարկման ընթացքում<sup>35</sup>:

Յուրահատուկ էր իտալական կառավարության դիրքավորումը: Նա լավ էր ըմբռնում, որ բոլոր կղզիները հունական ծանաչելու առաջարկի մեջ թաքնված է Արևելյան Միջերկրականում Իտալիայի ազդեցությունը վերացնելու Անգլիայի ու Ֆրանսիայի մտադրությունը: Այստեղից էլ բխում էր այն համառ դիմադրությունը, որ ցուցաբերում էր Իտալիան կղզիները հունական ծանաչելու հարցում:

Որպէս փոխհատուցում Թուրքիայի հետ համագործակցելուն, Իտալիան կոնցեսիաներ էր պահանջում Արևմտյան Անատոլիայում, մասնավորապէս Ադալիա-Այդըն երկաթուղագիծը կառուցելու գործում<sup>36</sup>: Մյուս կողմից, իտալական կառավարությունը նշում էր, որ Ռոդէկանեզը Թուրքիային վերադարձնելու դեպքում ինքը հենակետ է պահանջելու Ադալիայի ծոցում<sup>37</sup>: Իտալիան հավակնություններ էր ներկայացնում նաև Փոքր Ասիայի արևմտյան մասի նկատմամբ և ձգտում էր իր

<sup>34</sup> Նույն տեղում, № 556, էջ 596, Պոլ Կամբոնը՝ Պիշոնին, 6 օգոստոսի, 1913 թ.:

<sup>35</sup> Տե՛ս A. C. Аветян, նշվ. աշխ., էջ 47—48:

<sup>36</sup> Տե՛ս DDF, 3—VIII, № 505, էջ 639, Պոլ Կամբոնը՝ Պիշոնին, 19 նոյեմբերի, 1913 թ.:

<sup>37</sup> Տե՛ս Նույն տեղում, հ. 7, № 593, էջ 632, Ռ Բիլլին՝ Պիշոնին, 9 օգոստոսի, 1913 թ.:



ձեռքը վերցնել Ղողեկանեզի տեղական ժանդարմերիայի և վարչական մարմինների կառավարման գործը<sup>38</sup>:

Ավստրո-հունգարական կառավարությունը կղզիների հարցում հետևում էր իր դաշնակիցներ Գերմանիային ու Իտալիային:

Այսպիսին էր Էգեյան կղզիների հարցում իմպերիալիստական տերությունների դիրքորոշումը Լոնդոնի դեսպանաժողովի գումարման շրջանում:

Հանդես գալով որոշ կղզիներ Թուրքիային թողնելու առաջարկի դեմ՝ Ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը հայտարարեց, որ իր կառավարությունը ոչ մի առարկություն չունի Էգեյան կղզիները Հունաստանին զիջելու հարցում: Այնուհանդերձ նա նշեց, որ եթե ռուսական կառավարությունը ցանկանում է որոշ վերապահումներ անել, ապա կարելի է ապահովականացնել նեղուցներին կից կղզիները<sup>39</sup>:

Ֆրանսիական առաջարկին հավանություն տվեց դեսպանաժողովի նախագահ, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Էդ. Գրեյը: Սակայն նա առաջարկեց ապահովականացման սկզբունքը տարածել Էգեյան ծովի բոլոր կղզիների վրա<sup>40</sup>: Ղա համապատասխանում էր բոլոր մեծ տերությունների շահերին, քանի որ այդ պարագան փոխադարձորեն կչեզոքացներ Էգեյան ծովում ռազմակայաններ փնտրող յուրաքանչյուր տերության հնարավոր փորձերը: Դրանով, նրանք, դեռևս սկզբունքորեն չլուծած կղզիների հետագա ճակատագիրը, կանխարգելում էին միմյանց ագրեսիվ նպատակները:

1913 թ. հունվարի 2-ին, հակասությունների և փոխադարձ անվստահության մթնոլորտում, դեսպանները կրկին անդրադարձան Էգեյան կղզիներին: Ռուսական դեսպան Բենկենդորֆը ներկայացրեց իր կառավարության նոր առաջարկությունը, որովհետև նախկինը հանդիպել էր Ֆրանսիայի առարկությանը և հույներին տրամադրել էր ռուսական կառավարության

<sup>38</sup> Տե՛ս նույն տեղում, հ. 8, № 633, էջ 790, Պոլ Կամբոնը՝ Դումերգին, 16 դեկտեմբերի, 1913 թ.:

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղում, հ. 5, № 85, էջ 103, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 18 դեկտեմբերի, 1912 թ.:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում:



դեմ<sup>41</sup>: Ելնելով ստեղծված իրադրությունից՝ Սազոնովը ստիպված էր համաձայնվել Էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանին միավորելու գաղափարի հետ: Սակայն նա պայման էր դնում, որ Ղարդանելի շրջանում գտնվող չորս կղզիները պետք է ապառազմականացվեն, ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող երեք չօգտագործվեն և չտրամադրվեն որևէ մեկ այլ տերության<sup>42</sup>:

Կղզիների հարցում ռուսական դիվանագիտության շրջադարձը, այնուամենայնիվ, պայմանավորված էր նեղուցների հանդեպ հավակնություններից հրաժարվելու և ապագայում ռուսական կողմնորոշում վարելու Հունաստանի խոստմամբ<sup>43</sup>:

Այսպիսով, Ռուսաստանը միացավ Էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանին զիջելու Ֆրանսիայի տեսակետին: Դրանով ամրացավ Եռյակ համաձայնության քաղաքականությունը, որը հետապնդում էր Միջերկրական ծովի արևելյան շրջանը իտալական ազդեցությունից զերծ պահելու նպատակ: Ֆրանսիայի պրեզիդենտ Պուանկարեն, ոգևորված այդ միասնությունից, գրեց. «Ես խորին գոհունակությամբ եմ դիտում այն փաստը, որ կղզիները Հունաստանին զիջելու խնդրում միասնական տեսակետ գոյություն ունի Գրեյի, Ռուսաստանի և մեր միջև»<sup>44</sup>: Այդ միասնությունը գրավականն էր Իտալիայի նկատմամբ տարվող դիվանագիտական հաղթանակի: «Իտալիայի գաղտնի դիտավորությունը չի կարող չամրապնդել մեր տեսակետը», — եզրափակում է Պուանկարեն<sup>45</sup>:

Արտահայտելով Անտանտի միասնական տեսակետը՝ հունվարի 4-ին Գրեյը առաջարկեց ընդունել հետևյալ որոշումը. Թուրքիան պարտավորվում է լքել Էգեյան ծովի բոլոր կղզիները, բալկանյան դաշնակիցները ևս պետք է բավարարություն ստանան ինչպես կղզիների հարցում, այնպես էլ մնաց-

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում, № 160, էջ 188, Պոլ Կամբոնը՝ Պուանկարենի, 2 հունվարի, 1913 թ.:

<sup>42</sup> Տե՛ս DDF, 3—V, № 160, էջ 188, Պոլ Կամբոնը՝ Պուանկարենի, 2 հունվարի, 1913 թ.:

<sup>43</sup> Տե՛ս А. А. Могилевич, М. Э. Айрапетян, նշվ. աշխ., էջ 157:

<sup>44</sup> DDF, 3—V, № 189, էջ 235, Պուանկարեն՝ Պոլ Կամբոնին, 8 հունվարի, 1913 թ.:

<sup>45</sup> Նույն տեղում:



լալ պահանջներում<sup>46</sup>: Թուրքիային հանգստացնելու համար նշվում էր, որ տերությունները ջանքեր կգործադրեն ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող կղզիներում ստեղծել այնպիսի վարչություն, որը ղեկավարվեր ապառազմակա-նացման սկզբունքներով: Դրանով կբացառվեր Թուրքիային ռազմական սպառնալիք ստեղծելու հնարավորությունը:

Սակայն Կենտրոնական տերությունները վճռականորեն դեմ արտահայտվեցին Անտանտի՝ Էգեյան ծովի բոլոր կղզիները Թուրքիայից վերցնելու տեսակետին: Իտալական դեսպան Իմպերիալին նշեց, որ «բոլոր տերությունները իրենց հավանությունը չեն տվել Էգեյան կղզիները Հունաստանին հանձնելու վերաբերյալ, ուստի և տերությունների համաձայնությունը այդ որոշման առթիվ չի կարելի ընդունված համարել»<sup>47</sup>:

Կղզիների հարցում իր վերաբերմունքը դրսևորեց նաև կայ-գերական կառավարությունը: Հունվարի 6-ին գերմանական դեսպան Լիխնովսկին նշեց, որ «արդարության ու չեզոքության սկզբունքը» հակառակ է Ադրիանապոլիսն ու բոլոր կղզիները Թուրքիայից վերցնելու գաղափարին: Նրա կարծիքով, եթե թուրքական կառավարությունը զիջեր Ադրիանապոլսի հարցում, ապա անհրաժեշտ կլիներ նրան թողնել Դարդանելի ջրջանի կղզիները, ինչպես նաև Քիոսն ու Միթիլենը<sup>48</sup>: Գերմանական իմպերիալիզմը վճռականորեն հանդես էր գալիս Ռուսաստանի դեմ ապագա պատերազմում իր պոտենցիալ դաշնակից Թուրքիայի շահերի նախանձախնդիր պաշտպանությամբ:

Հաշտության բանակցություններում միակ համաձայնությունը, որ կղզիների հարցում կայացավ տերությունների միջև, վերաբերում էր Կրետեին ու Թասոսին: Անգլիական դիվանագիտությունը, երկար տարիների համառ դիմադրությունից հետո, վերջապես իր համաձայնությունը տվեց կրետացիների՝ Հունաստանի հետ միավորվելու ազգային բաղձանքին: Հունվարի 2-ի նիստում դեսպանաժողովի նախագահ Էդ. Գրեյը

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղում, հ. 5, № 167, էջ 195, № 170, էջ 199, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 4 հունվարի, 1913 թ.:

<sup>47</sup> Նույն տեղում, հ. 5, № 170, էջ 199:

<sup>48</sup> Տե՛ս նույն տեղում, № 188, էջ 232, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 7 հունվարի, 1913 թ.:



հայտարարեց, որ իր կառավարությունը համամիտ է Կրետեն Հունաստանին զիջելուն:

Կրետական հարցը հոգուտ Հունաստանի լուծելուն արտահայտվեցին ոչ միայն Ֆրանսիան ու Ռուսաստանը, այլև Եռյակ դաշինքի տերությունները: Սակայն Իտալիայի դեսպանը այդ հարցին մոտեցավ որոշ վերապահությամբ, նշելով, որ դրա փոխարեն Հունաստանը պետք է չափավորի իր հավակնությունները Ալբանիայի հարավի նկատմամբ<sup>49</sup>: Ընդհանրապես, պաշտպանելով Բալկաններում իրենց հետագա զավթողական նպատակները՝ թե՛ Իտալիան և թե՛ Ավստրո-Հունգարիան Լոնդոնի դեսպանաժողովում ձգտում էին նոր կազմավորվող Ալբանական պետության հարավում ընդգրկել հունական հողերը, այդպիսով ըստ հնարավորին հետ մղելով Հունաստանի հյուսիսային սահմանը<sup>50</sup>:

Լոնդոնի դեսպանաժողովում տերությունները, քաղաքական տարբեր նկատառումներով, ընդունեցին Թասոս կղզին Բուլղարիային զիջելու՝ Ֆրանսիական դեսպանի առաջարկը:

Հունական կառավարությանը խոր մտատանջություն էր պատճառում կղզիների հարցը: Նրան լրջորեն անհանգստացրեց Լեմնոս, Իմբրոս, Թենեդոս և Սամոթրակիա կղզիները Օսմանյան կայսրության կազմում թողնելու ռուսական առաջարկը, որը արտակարգ դժգոհություն առաջացրեց Պետերբուրգի կառավարության հանդեպ: Սակայն ռուսական նոր առաջարկը, որը համընկնում էր Ֆրանսիայի տեսակետին, հանգստացրեց նրան: Վենիզելոսի և ռուսական դեսպան Բենկենդորֆի միջև կայացած զրույցների ժամանակ հունական կառավարության ղեկավարը լավատեսությամբ համակվեց և նրան այլևս չէր հուզում կղզիները ապառազմականացնելու որոշումը: Նա պատրաստ էր, առանց նվազագույն առարկության, ենթարկվելու տերությունների վճռին, միայն թե նրանք բոլոր կղզիները, առանց բացառության, շնորհեին իր երկրին: Դրանով կղզիները Հունաստանին միացնելու հիմնական խնդիրը կլուծվեր<sup>51</sup>:

<sup>49</sup> Տե՛ս DDF, 3—V, № 160, էջ 189, Պ. Կամբոնը՝ Պուանկարեին, 2 հունվարի, 1913 թ.:

<sup>50</sup> Տե՛ս Ю. А. Писарев., նշվ. աշխ., էջ 150:

<sup>51</sup> Տե՛ս DDF, 3—V, № 160, էջ 189, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 2 հունվարի, 1913 թ.:



ինչպես նշեցինք, հունվարի 3-ի նիստում դաշնակիցները թուրքերից վճռականապես պահանջեցին ընդունել իրենց բոլոր պայմանները: Այդ վճռականությունը Անտանտին հանգեցրեց այն եզրակացության, որ բանակցությունների խզումն անխուսափելի է: Իսկ այդ հանգամանքը հղի էր միջազգային լուրջ բարդությունների վտանգավոր հեռանկարով: Լոնդոնի հաշտության բանակցությունների նախօրյակին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը թուրքիային սպառնաց, որ եթե նա հրաժարվի դաշնակիցների պահանջները բավարարելուց ու ձգձգի բանակցությունները, և կամ դրանք խզվեն, ապա «Ռուսաստանի չեզոքությունը չի կարող երաշխավորվել»<sup>52</sup>: Այդ սպառնալիքն անհիմն չէր: Կովկասյան սահմանում կատարվում էին բանակային խոշոր կենտրոնացումներ: Իրադարձությունների նման ծավալումը, որն անխուսափելիորեն առաջ էր բերելու Փոքր Ասիան բաժանելու խնդիրը, սպառնում էր համաեվրոպական պատերազմի վտանգով:

Լրջորեն անհանգստացած Ռուսաստանի ելույթից՝ Ֆրանսիան ու Անգլիան որոշեցին գործին տալ ընդհանուր բնույթ և արագացնել հաշտության պայմանների ընդունումը: Հունվարի 4-ին Գրեյը առաջարկեց կազմակերպել տերությունների ընդհանուր ելույթ՝ դաշնակիցների պահանջները թուրքական կառավարությանը հարկադրելու նպատակով<sup>53</sup>:

Սակայն Եռյակ դաշինքի երկրները շարունակում էին դիմադրել բոլոր կղզիները Հունաստանին հանձնելուն: Գերմանական դեսպան Լիխնովսկին ընդգծեց, որ Հոռմի, Բեուլինի ու Վիեննայի միջև տեղի ունեցած բանակցությունների հետևանքով Եռյակ դաշինքը վերջնականապես հանգել է այն եզրակացության, որ թուրքիային պետք է թողնվեն Դարդանեղիս կից կղզիները, ինչպես նաև՝ Քիոսն ու Միթիլենը<sup>54</sup>: Իսկ Ռոդեկանեզի հարցը Եռյակ դաշինքը շրջանցում էր, այն չհամարելով կոնֆերանսի քննարկման ենթակա հարց՝ դրանով իսկ

<sup>52</sup> Նույն տեղում, № 111, էջ 132—133, Բոմպարը՝ Պուանկարեին, 23 դեկտեմբերի, 1912 թ.:

<sup>53</sup> Տե՛ս DDF, 3—V, № 167, էջ 195, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 4 հունվարի, 1913 թ.:

<sup>54</sup> Տե՛ս Նույն տեղում, № 188, էջ 232, Պոլ Կամբոնը՝ Պուանկարեին, 7 հունվարի, 1913 թ.:



փաստորեն ճանաչելով իտալացիների կողմից կղզիների գրավումը:

Եռյակ դաշինքի տերությունները լավ էին ըմբռնում, որ Էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանին հանձնելու դեպքում Անգլիան ու Ֆրանսիան իրենց լիակատար գերիշխանությունը կհաստատեն Միջերկրական ծովում և այն կվերածեն «անգլո-ֆրանսիական լճի»<sup>55</sup>: Սրանով պետք է բացատրել այն դիմադրությունը, որ կղզիների հարցում դրսևորում էր եռյակ դաշինքը: Վերջինս կտրականապես հրաժարվեց նաև Թուրքիայի վրա ձնշում գործադրելուց. «Եվրոպան, — հայտարարեց Վիլիելմ II-ը, — պետք է ձեռնպահ մնա ամեն մի միջամտությունից»<sup>56</sup>:

Լոնդոնի դեսպանաժողովում քննարկվող հարցերի շուրջ եռյակ դաշինքի վերաբերմունքը թուրքական կառավարող շրջաններում ընդունվեց խորին գոհունակությամբ: Ի նշան երախտագիտության Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը հունվարի 10-ին պաշտոնապես շնորհակալություն հայտնեց գերմանական կառավարությանը<sup>57</sup>: «Տերությունների մի խումբ ճանաչում է կղզիների վրա ունեցած մեր իրավունքները», — հայտարարեց գեներալ Օսման Նիզամի փաշան<sup>58</sup>: Իսկ նավալին ցույցից հրաժարվելը Լոնդոնի թուրքական պատվիրակության ղեկավար Ռեշիդ փաշային հիմք տվեց հայտարարելու, որ «տերությունների հարկադրանքը ծովային ցույցով կամ առանց դրա, միևնույն է, կմնա անհետևանք»<sup>59</sup>: Ի վերոջ, գործնավարտվեց տերությունների սոսկ դիվանագիտական ելույթով: 1913 թ. հունվարի 17-ին թուրքական կառավարությանը հրդած նոտայով Էվրոպական տերությունները նախազգուշացրին, որ պատերազմը կարող է տարածվել նաև կայսրության ասիական նահանգների վրա: Իրադարձությունների նման ընթացքի ծավալման դեպքում, նշում էին նրանք, թուրքական կառավարությունը չպետք է ակնկալի, որ տերությունները

<sup>55</sup> Նույն տեղում, № 507, էջ 607, ժոննալը՝ Պոլ Կամբոնին, 3 մարտի, 1913 թ.:

<sup>56</sup> Նույն տեղում, հ. 5, № 210, էջ 262, ժյուլ Կամբոնը՝ Պուանկարեին, 12 հունվարի, 1913 թ.:

<sup>57</sup> St' u Y. H. Bayur, Türk Inkılâbi tarihi, cilt. II, kısım II, S. 235:

<sup>58</sup> «Le Temps», 18. I. 1914.

<sup>59</sup> «С. Петербургские ведомости», 1(14).I.1914.



կփրկեն նրան այն վտանգներից, որոնց վերաբերյալ իրենք նախօրոք արդեն նախազգուշացրել են: Տերությունները հավաստիացնում էին, որ հաշտության կնքումից հետո իրենք թուրքական կառավարությանը կաջակցեն նյութապես ու բարոյապես՝ պատերազմի հասցրած վերքերը բուժելու, Կ. Պոլսում վիճակը կայունացնելու և ասիական լայնարձակ տիրույթներում արտադրությունը կարգավորելու համար: Այդ բոլորի դիմաց նրանք պահանջում էին, որ թուրքական կառավարությունը դաշնակիցներին զիջի Ադրիանապոլիսը և իրենց թողնի Էգեյան ծովի կղզիների հետագա վիճակը կարգավորելու հարցը: Միաժամանակ, նրանք երաշխավորում էին կղզիների հարցը լուծել առանց սպառնալիք ստեղծելու Թուրքիայի անվտանգությանը<sup>60</sup>: Թուրք պետական գործիչները պարզ տեսնում էին, որ, Եռյակ դաշինքի դիվանագիտական եռանդուն աջակցությանը հակառակ, պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում, վերջնականապես կործանվելու էր թուրքական տիրապետությունը Բալկաններում: Հունվարի 22-ին Քլամիլ փաշայի կառավարությունը բարձրաստիճան ավագանու հետ քննարկեց կայսրության արտաքին վիճակը և հաշտության կնքման հնարավորությունը: Գրեթե բոլորը արտահայտվեցին հոգուտ հաշտության կնքման, սակայն ներքաղաքական իրադարձությունները ձախողեցին այն:

Օգտագործելով բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը և այդ առթիվ առաջացած դժգոհությունը՝ երիտթուրքերը ծավալեցին հակակառավարական լայն պրոպագանդա, պախարակելով «մահմեդական սրբավայր» Էդիրենն (Ադրիանապոլիսը) դաշնակիցներին զիջելու մտադրությունը: Թուրքիայի հաղթանակը ապահովելու և կորցրած տերիտորիաները վերագրավելու ամենաառատ խոստումներով նրանք նախապատրաստում էին պետական իշխանության գրավումը:

Հունվարի 22-ին կայացած կառավարության արտակարգ նիստում, երբ որոշվեց հաշտության հարցը, երիտթուրքերը իրենց ելույթի պահը համարեցին խիստ բարենպաստ: Օգտվելով գերմանական դիվանագիտության աջակցությունից՝ հունվարի 23-ին նրանք իրագործեցին պետական հեղաշրջում և

<sup>60</sup> St'a DDF, 3—V, № 204, էջ 254—255:



կայսրության ղեկը կրկին վերցրին իրենց ձեռքը: «Երիտա-  
սարդ թուրքերը, — այդ կապակցությամբ նշեց բուլղարիկյան  
«Պրավդան», — որոշեցին օգտվել կառավարության թուլությու-  
նից և դժվարին կացությունից, որպեսզի հայրենասիրություն  
խաղան ու կրկին զավթեն իշխանությունը»<sup>61</sup>: Նույնիսկ թուրք  
պատմաբաններն են նշում, որ երիտթուրքերի կողմից իշխա-  
նության գրավումը բացատրվում է ոչ թե կայսրությունը վը-  
տանգից փրկելու մղումից, այլ իշխանությունը նորից զավթե-  
լու ձգտումից: «Իթթիհատականները Քյամիլ փաշայի կառա-  
վարությունը տապալեցին, — գրում է Բաղդբը, — ոչ թե հայ-  
րենիքը փրկելու, այլ պետական իշխանությունը ձեռք գցելու  
նպատակով»<sup>62</sup>: «Էդիրենն (Ադրիանապոլիսը) ազատագրելու  
նրանց պրոպագանդան, — նշում է Բայուրը, — դարձավ այդ  
նպատակին հասնելու արտահայտությունը»<sup>63</sup>:

1913 թ. հունվարի 23-ին երիտթուրքական պարագլուխնե-  
րը փաստորեն զենքի ուժով տապալեցին Քյամիլ փաշայի կա-  
ռավարությունը և քաղաքական ասպարեզից հեռացրին իրենց  
հակառակորդ «Ազատություն և համաձայնություն» կուսակցու-  
թյանը: «Մենք հնարավորություն չունենալով ղեկավարության  
սանձերը թույլ, անգոր կառավարության ձեռքից օրինական  
ձևերով խլելու, հարկադրված էինք դիմելու պետական հե-  
ղաշրջման», — բացահայտորեն խոստովանում էր Ջեմալ փա-  
շան<sup>64</sup>: Պետական իշխանության բռնագրավումից հետո նոր  
կառավարությունը ամբողջությամբ կազմվեց երիտթուրքական  
պարագլուխներից՝ մեծ վեզիր Մահմուդ Շեֆքեթ փաշայի գլը-  
խավորությամբ: Իրականում ամբողջ փաստական իշխանու-  
թյունը անցավ Էնվերի, Թալեաթի ու Ջեմալի եռապետությա-  
նը: Նոր իշխանության խնդիրը դարձավ արյունալի տեռորով  
պահպանել ու ամրապնդել երիտթուրքական վերնախավի բռն-  
նապետությունը հնարավոր հակահեղաշրջումից:

1913 թ. հունվարյան երիտթուրքական հեղաշրջումը լիովին  
փոխեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը: Կ. Պոլ-  
սում իշխանությունը զավթեցին գերմանական կողմնորոշման  
մոլի կողմնակիցները, որոնք հույս ունեին կալվերական Գեր-

<sup>61</sup> «Правда», 17.1.1913.

<sup>62</sup> М. Вагър, նշվ. աշխ., էջ 88:

<sup>63</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 2, էջ 273:

<sup>64</sup> Джемаль паша, Записки, 1913—1919, Тифлис, 1923, стр. 8.



մանիայի անմիջական ռազմաքաղաքական ու դիվանագիտական աջակցությամբ ամրապնդել իրենց դիկտատուրան և պահպանել կայսրությունը:

Երիտթուրքական հեղաշրջումը, որ կատարվեց գերմանական դիվանագիտության եռանդուն օժանդակությամբ, շփոթմունք առաջացրեց ոչ միայն բալկանյան դաշնակիցների, այլև Անտանտի շարքերում: Քաջատեղյակ լինելով, թե երիտթուրքական հեղաշրջումը ում օգնությամբ է կատարվել, Եռյակ համաձայնության երկրները հաշտության պայմանների շուրջ սկսեցին անմիջականորեն բանակցել Բեռլինի հետ: Հեղաշրջումից անմիջապես հետո Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները դիմեցին Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Յագովին՝ նշելով, որ անհրաժեշտ է հունվարի 27-ի նոտայի սկզբունքներին հավատարիմ մնալու տերությունների որոշումը հաղորդել թուրքական նոր կառավարությանը: Կայզերական մինիստրը Անտանտի ներկայացուցիչներին հավաստիացրեց, որ իր կառավարությունը չի շեղվի դեսպանների նոտայի սկզբունքներից, սակայն ավելացրեց, որ Գերմանիան ոչ միայն վճռականորեն հրաժարվում է Թուրքիայի վրա ծնշում գործադրելուց, այլև դեմ է այդ ուղղությամբ կատարվելիք ամեն մի ինքնուրույն ելույթի<sup>65</sup>:

Գերմանիայի նման դիրքորոշումը ստիպեց Անտանտի երկրներին հրաժարվել նավային ցույցի մտադրությունից, սակայն նրանք, Անգլիայի գլխավորությամբ, պնդեցին տերությունների նոտայում առաջ քաշած հաշտության պայմանները: Գրելը Թուրքիայի դեսպանին հայտարարեց, որ ռազմական գործողությունների վերսկսումը հնարավոր է կանխել միայն այն դեպքում, եթե թուրքական կառավարությունը բարյացակամորեն արտահայտվի տերությունների նոտայի նկատմամբ: Այս զգուշացումը Կ. Պոլսում կրկնեց նաև Անգլիայի դեսպանը<sup>66</sup>: Սակայն երիտթուրքերը, օգտվելով Գերմանիայի ռազմադիվանագիտական աջակցությունից, սկսեցին տենդագին կերպով պատրաստվել ունանշի: Հենվելով գերմանական

<sup>65</sup> Տե՛ս DDF, 3—V, № 280, էջ 352, Ժյուլ Կամբոնը՝ Ժոննարին, 29 հունվարի, 1913 թ.:

<sup>66</sup> Տե՛ս նույն տեղում, № 284, էջ 361, Պոլ Կամբոնը՝ Ժոննարին, 19 հունվարի, 1913 թ.:



դիվանագիտության եռանդուն աջակցության վրա՝ երիտթուրքերի կառավարությունը կտրականապես մերժեց դաշնակիցների պահանջները: Օսմանյան պառլամենտի նախագահ խալիլ բեյը հայտարարեց, որ իրենք չեն կարող հրաժարվել Էգեյան ծովի կղզիներից, մասնավորապես նրանցից, որոնք հարակից են Փոքր Ասիային<sup>67</sup>:

4. Պոլսում ֆրանսիական դեսպան Մ. Բոմպարի հետ ունեցած հանդիպումների ժամանակ, հիմնավորելով երիտթուրքերի պահանջները Ադրիանապոլսի ու Էգեյան ծովի կղզիների նկատմամբ, Ջեմալ փաշան պնդում էր. «4. Պոլսի պաշտպանության համար անհրաժեշտ է որոշակի պլացդարմ, որը, համենայն դեպս, պետք է տարածվի մինչև Ադրիանապոլիս: Մյուս կողմից, — շարունակում էր նա, — եթե անհրաժեշտություն առաջանա պաշտպանելու Անատոլիան, անհրաժեշտ կլինի մեր տրամադրության տակ ունենալ նաև մեր ափագծով ձգված կղզիները»<sup>68</sup>: «Ադրիանապոլսի և կղզիների հարցը մենք համարում ենք կյանքի և մահու հարց մեր պետության համար»<sup>69</sup>:

Տերություններին հղած հունվարի 30-ի պատասխան նոտայում երիտթուրքերը նշում էին, որ Էգեյան կղզիները, հանդիսանալով կայսրության ասիական տիրույթների անբաժանելի մասը, անհրաժեշտ են 4. Պոլսի ու Փ. Ասիայի անվտանգության ապահովման համար: Հարցի յուրաքանչյուր լուծում, եթե տանում է դեպի թուրքական իշխանության թուլացում, չի կարող չանդրադառնալ Փ. ասիական ափագծի հանգստության ու խաղաղության վրա: Հետևաբար, նշված էր նոտայում, թուրքական կառավարությունը կարող է միանալ տերությունների այնպիսի որոշմանը, որը հաշվի կառնի կղզիների վերաբերյալ վերոհիշյալ նկատառումները<sup>70</sup>: Միաժամանակ, Թուրքիան հրաժարվում էր Ադրիանապոլիսը գիջել դաշնակիցներին:

Թուրքիայի անհանդուրժողականությունը դաշնակիցների պահանջների նկատմամբ փետրվարի 3-ին հանգեցրեց ուղ-

<sup>67</sup> Տե՛ս «Le Temps», 26.1.1913:

<sup>68</sup> Джемаль паша, նշվ. աշխ., էջ 13:

<sup>69</sup> Նույն տեղում:

<sup>70</sup> Տե՛ս DDF, 3—V, № 293, էջ 372—373, Բոմպարը՝ ժոննաքին, 30 հունվարի, 1913 թ.:



մական գործողությունների վերսկսմանը: Պարտվող կողմը դարձյալ Թուրքիան էր:

Թուրքական բանակների անընդմեջ պարտությունները և տերիտորիալ նոր կորուստները օսմանյան կառավարող շեր-ջաններում ի վերջո առաջացրին խորին հուսալքություն: Նըրանք հասկանում էին, որ բալկանյան դաշնակիցների հաղթանակները վերջնականապես կործանելու էին թուրքական դարավոր տիրապետությունը ոչ միայն Բալկաններում, այլև օրակարգի հարց էին դարձնելու Օսմանյան կայսրության հետագա գոյությունը: «Մենք պետք է դառնությամբ ընդունենք, — գրում էր «Թասվիր-ը Էֆքյար» թերթը, — որ մենք այժմ դեմ առ դեմ կանգնած ենք անխուսափելի կործանման առջև»<sup>71</sup>:

Կայսրությունը ծանր վիճակից դուրս բերելու և բալկանյան խնդիրներում դիվանագիտական աջակցություն ստանալու համար երիտթուրքերի կառավարությունը նախկին մեծ վեզիր Հակկը փաշային արտակարգ լիազորություններով գործուղեց Լոնդոն՝ «Թուրքիայի և Անգլիայի միջև ծառացած բոլոր հարցերը լուծելու, տարաձայնությունները վերացնելու և թյուրիմացությունները հարթելու նպատակով»<sup>72</sup>: Միաժամանակ, Հակկը փաշային հանձնարարված էր անգլիական դիվանագիտության նախաձեռնությամբ կազմակերպել տերությունների ելույթը՝ դաշնակիցներին ընդունել տալու համար հաշտության այն պայմանները, որ թուրքական կառավարությունը շարադրել էր հունվարի 30-ի նոտայում<sup>73</sup>: Որպես հատուցում անգլիական դիվանագիտական աջակցության, թուրքական կառավարությունը պատրաստ էր զիջումներ անել Բաղդադի երկաթգծի վերջին հատվածի և Զուլեյթի հարցերում<sup>74</sup>:

Միաժամանակ, երիտթուրքերը հույս ունեին հայկական բարենորոգումների հարցում առանձին համաձայնության գալ Անգլիայի հետ<sup>75</sup>:

Անգլիական դիվանագիտությունը չաճապարեց այդ հարցերի շուրջ համաձայնություն կայացնել՝ նկատի ունենալով, որ քաղաքական իրադարձությունների հետագա ծավալումը

<sup>71</sup> «Le Temps», 18.II.1913.

<sup>72</sup> Gén. M. Moukhtar, նշվ. աշխ., էջ 202:

<sup>73</sup> Տե՛ս «Le Temps», 13.II.1913.

<sup>74</sup> Տե՛ս «Le Temps», 14.II.1913.

<sup>75</sup> Տե՛ս Gén. M. Moukhtar, նշվ. աշխ., էջ 202:



թուրքերին կդարձնի ավելի զիջող ու հաշտվողական: Անգլիական կառավարությունը իր այդ դիրքը բացատրեց տերությունների հետ «համատեղ գործելու սկզբունքին հավատարիմ մընալու ցանկությամբ»: «Անգլիայի համար անհնարին է հրաժարվել այն դիրքից, — գրում էր «Թայմզը», — որ նա ընդունել է, ստորագրելով տերությունների համատեղ նոտան»<sup>76</sup>: Թերթը միաժամանակ նշեց, որ Պարսկական ծոցի հարցի կարգավորումը կարագացնի հաշտության կնքումը Թուրքիայի և դաշնակիցների միջև<sup>77</sup>: Ակնարկը նշանակում էր, որ հիշյալ շրջանում Անգլիային կատարած զիջումների փոխարեն վերջինս պատրաստ էր հանդես գալու հաշտությունը կնքելու «միջնորդի» դերում: Մյուս կողմից, անգլիական դիվանագիտությունը պետք է պատժեր երիտասարդ թուրքերին՝ նրանց գերմանական կողմնորոշման համար: Նա ուզում էր ցույց տալ, որ միակ երկիրը, որ կարող է աջակցել Թուրքիային, Անգլիան է: Լոնդոնում Հակկը փաշան եկավ այն եզրակացության, որ թուրքական կառավարությունը այսուհետև չպետք է ակնկալի Եոյակ դաշինքի օգնությունը, քանի որ, ինչպես ինքն էր նշում, «Արդի շրջանում Եվրոպայի բախտը գտնվում է Եոյակ համաձայնության ձեռքերում»<sup>78</sup>:

Հունաստանի և Բուլղարիայի միջև Եվրոպական Թուրքիայի վերաբերյալ ընդհանուր համաձայնության բացակայությունը շատ շուտով ունեցավ իր բացասական հետևանքները: Հույն-բուլղարական դաշնակցային պայմաններում թուրքական տերիտորիաների բաժանում և սահմանագծում չէր նախատեսվում: Հոկտեմբերի 5-ին կնքված ռազմական կոնվենցիայով նախատեսվում էին այն ուժերը, որոնք պետք է հանեին երկու երկրները Թուրքիայի դեմ, ընդ որում բուլղարները պարտավորվում էին հարձակվել Կոստվոյի, Բիտուլիայի և Սալոնիկի ուղղությամբ:

Երբ արդեն կանխորոշված էր պատերազմը Թուրքիայի դեմ, հունական կառավարությունը հարց բարձրացրեց Մակեդոնիայի բաժանման մասին, որի հետևանքով հույն-բուլղարական վեճը նորից սկսվեց: Պատերազմից մի քանի օր առաջ, հոկ-

<sup>76</sup> «Le Temps», 14.II.1913:

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>78</sup> «Новое время», 15(28).II.1913 г.



տեմբերի 10-ին, Հունաստանի արտաքին գործերի մինիստր Կորոմիլասը հայտարարեց բուլղարական դեսպանին, որ անհրաժեշտ է համաձայնության գալ ապագա սահմանների շուրջ, ընդ որում Հունաստանին պետք է անցնեին «զուտ հունական քաղաքները, ինչպես, օրինակ, Ադրիանապոլիսը, Մելնիկը, Ստրումիցան, Դեդեաղաձը և Կավալան»<sup>79</sup>։ Պատերազմը սկսելուց քիչ անց, հոկտեմբերի 31-ին, հունական կառավարությունը ներկայացրեց իր նոր պահանջները, որ տարածվում էին արդեն Բիտոլիայի (Մոնաստիր), Սալոնիկի, Սերեզի և Կավալայի վրա։ Հունաստանի սահմանը արևելքում պետք է լիներ Մեստա (Նեստոս) գետը<sup>80</sup>։

Միաժամանակ Վենիզելոսը նշեց, որ սահմանների շուրջ համաձայնության չհանգելու դեպքում Հունաստանը «կձգտի իր շահերը պաշտպանել» դաշինքից անկախ պայմաններում<sup>81</sup>։ Այդպիսով, պատերազմի հենց սկզբից Հունաստանի և Բուլղարիայի միջև տերիտորիալ վեճերը ստացան սուր բնույթ ու խոր ձեղքվածք առաջացրին նրանց փոխհարաբերություններում։ Առանձնապես սուր էր Սալոնիկի պատկանելության շուրջ ծավալված վեճը, որի նկատմամբ հավակնություն ուներ Բուլղարիան։ «Հուլների կողմից Սալոնիկի գրավումը, — հաղորդում էր Սոֆիայի ռուսական դեսպանորդը, — Հունաստանի իհանդեպ այստեղ առաջացրեց միանգամայն անբարյացակամ ու թշնամական տրամադրություն»<sup>82</sup>։ Բուլղարիան այդ փաստն ընդունեց արտակարգ դժգոհությամբ, և նույնիսկ զինված բախումներ սկսվեցին երկու դաշնակից բանակների միջև։ Անգամ Լոնդոնի հաշտության բանակցությունների ընթացքում, երբ դիվանագիտական բուռն պայքար էր գնում ընդհանուր թշնամու դեմ, մասնավոր հանդիպումներում Սալոնիկի պատկանելության վերաբերյալ դրամատիկ ընդհարումներ էին տեղի ունենում Վենիզելոսի և բուլղարական պատվիրակության ղեկավար Դանսի միջև<sup>83</sup>։

Տերիտորիալ հակասությունները ճակատագրական ազդե-

<sup>79</sup> А. Тошев, նշվ. աշխ., հ. 2, էջ 43:

<sup>80</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>81</sup> Տե՛ս В. А. Жебокрицкий, Болгария во время балканских войн, 1912—1913 гг., Киев, 1961 г., էջ 51:

<sup>82</sup> А. А. Могилевич, М. Э. Айрапетян, նշվ. աշխ., էջ 137:

<sup>83</sup> Տե՛ս С. Kerofilas, նշվ. աշխ., էջ 83:



ցութիւնն ունեցան Թուրքիայի դեմ բալկանյան երկրների ազատագրական պայքարի վրա և անդարմանելի վնաս հասցրին բալկանյան դաշինքին: Հույն պատմաբան Կորդատոսը, խոսելով հիշյալ խնդրի մասին նշում է, որ Սալոնիկը գրավելուց հետո հույն-բուլղարական դաշինքը այլևս դադարեց գոյութիւնն ունենալուց<sup>84</sup>:

Բալկանյան պատերազմի ամենահիմնական նպատակներից մեկը Էպիրոսի, Թեսալիայի, Մակեդոնիայի ու Թրակիայի ազատագրումն էր թուրքական դարավոր տիրապետությունից: Միանգամայն առաջադիմական այս խնդրի իրականացման շնորհիվ Բուլղարիան և Հունաստանը թեակոխելու էին պատմական զարգացման նոր փուլ: Հունաստանի և Բուլղարիայի միապետական-բուրժուական շրջանների հակամարտությունը, սակայն, հղի էր քաղաքական լուրջ հետևանքներով: «Հույների հավակնությունները Բիտուլիայի, Սերեզի և Ռամայի նկատմամբ, սպառնում են լիակատար խզում առաջացնել Բուլղարիայի և Հունաստանի միջև: Նրանց մեջ արդեն փաստորեն ստեղծվել է անհաշտելի թշնամություն», — նշում էր Սոֆիայի ռուսական դեսպանորդը՝ իր կառավարության ուշադրությունը հրավիրելով բալկանյան դաշինքին սպառնացող լուրջ վտանգի վրա<sup>85</sup>:

Լավատեղյակ լինելով բալկանյան դաշնակիցների, առանձնապես հույն-բուլղարական սահմանային տարաձայնություններին՝ Լոնդոնի հաշտության բանակցություններում թուրքական պատվիրակները մեծ ջանքեր էին գործադրում այդ հակասությունները խորացնելու և բալկանյան դաշինքը քայքայելու համար: Այդ նպատակով թուրքական պատվիրակության ղեկավար Ռեշիդ փաշան գաղտնի բանակցություններ էր վարում բուլղարական պատվիրակության ղեկավար Ռանսի, իսկ գերերալ Օսման Նիզամի փաշան՝ Հունաստանի արտաքին գործերի մինիստր Ստրելյուի հետ՝ փորձելով անջատ համաձայնություններով կործանել Թուրքիայի դեմ ստեղծված ընդհանուր ճակատը<sup>86</sup>:

Լոնդոնի հաշտության բանակցություններում թուրքական կառավարության համառությունը բացատրվում էր նաև բալ-

<sup>84</sup> Տե՛ս Դ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 297:

<sup>85</sup> Տե՛ս Ա. Ա. Могилевич, М. Э. Айрапетян, նշվ. աշխ., էջ 137:

<sup>86</sup> Տե՛ս С. Керofilas, նշվ. աշխ., էջ 77:



կանյան դաշնակիցների միջև առկա անհաշտ հակասություններով:

Հուլիս-բուլղարական գծությունը հանդիպեց առաջադեմ հասարակայնության պարսավանքին: Ֆրանսիացի ականավոր սոցիալիստ Ժ. Ժորեսը այս առթիվ իրավամբ ենթադրում էր, որ էական հարցերը դաշնակիցների կողմից լուծում չեն ստացել, քանի որ նրանք գործում են փոխադարձ անվստահության ու մրցակցության մթնոլորտում: «Բուլղարները ցանկանում են վերցնել Կ. Պոլիսը և պահել այն: Սակայն բալկանյան երկրների միությունը կգոյատևի՝ մինչև այդ օրը: Արդյո՞ք նրանք իրականում համաձայնության են եկել հաշտության և հաղթանակից օգտվելու պայմանների վերաբերյալ»<sup>87</sup>, — տարակուսում էր նա: Ժորեսը իրավացիորեն կասկածում էր բալկանյան դաշինքի կայունությանը և հարատևությանը: «Եթե Բյուզանդիայի սրտում, — նշում է նա, — հույները, բուլղարները և սերբերը իրար հետ չկռվեն, ապա դա կլինի պատերազմի ամենամեծ հրաշքներից մեկը: Միայն այդ փորձով ի հայտ կգա, թե բալկանյան պետություններն իրոք ընդունակ են քաղաքակրթական միսիա կատարելու»<sup>88</sup>:

Հուլիս-բուլղարական սուր տարաձայնությունները թուրքական կառավարության կողմից ճարպկորեն օգտագործվեցին բալկանյան դաշինքի հետագա պառակտումը ավելի խորացնելու համար: Ավելին, թուրքական քաղաքագետները շտապեցին այդ հակասությունները անմիջականորեն ծառայեցել իրենց շահերին: 1912 թ. դեկտեմբերին, թուրքական կառավարության նախաձեռնությամբ, Կ. Պոլսում կայացան թուրք-բուլղարական գաղտնի բանակցություններ, որոնք փաստորեն ուղղված էին Հունաստանի դեմ: Մեծ վեզիրի և արտաքին գործերի մինիստրի հետ ունեցած հանդիպումներում բուլղարական ներկայացուցիչներն առաջարկում էին Բուլղարիային զիջել Ադրիանապոլիսը և հարձակողական ու պաշտպանական դաշինք կնքել երկու երկրների միջև: Ընդամին, Թուրքիան պետք է նպաստեր, որպեսզի Սալոնիկը անցներ Բուլղարիային: Սակայն այդ երկրների միջև համաձայնություն չկայաց-

<sup>87</sup> «L'Humanité», 4.XI.1912.

<sup>88</sup> Նույն տեղում:



վեց, որովհետև թուրքական կառավարությունը հրաժարվում էր Ադրիանապոլսի վիլայեթը զիջել բուլղարներին<sup>89</sup>:

Բուլղարների հետ սեպարատ հաշտություն կնքելու հեռանկարը խանդավառել էր թուրքերին, որոնք դրանում տեսնում էին Հունաստանի հետ առանձին հաշվեհարդար տեսնելու դյուրին ուղին: Արդեն Հունաստանի կողմից զինադադարին չմիանալը թուրքական մամուլի կողմից գնահատվեց որպես հույն-բուլղարական դաշինքի խզում և թուրք-բուլղարական համագործակցության հաստատում: Թուրքական թերթերից մեկը այդ առնչությամբ չկարողացավ զսպել իր ոգևորությունը և գրեց. «Չաթալջայում կենտրոնացված օսմանյան բանակները ազատ անցում կունենան բուլղարական դիրքերով՝ Թեսալիայում հույների վրա հարձակվելու համար»<sup>90</sup>:

Համաձայնության չհանգեցնող Թուրքիայի հետ՝ բուլղարական կառավարությունը մակեդոնական հարցը կարգավորելու համար Վենիզելոսին հրավիրեց Սոֆիա: Սոֆիայի ոռոսական դեսպանորդի հետ քննարկելով հույն-բուլղարական տարաձայնությունները՝ բուլղարական կառավարության ղեկավար Գեշովը նշում էր, որ հարցի կարգավորման համար հույները պետք է իրենց զիջեն Կալալան, Ղրաման, Սերեզը, Կուկուշը և Բիտոլիան: Միաժամանակ Գեշովը շեշտում էր, որ իրենք չեն կարող հրաժարվել Սալոնիկից, Խալկիդիկայից (բացառությամբ Աթոնի), Ենիջե-Վարդարից, Վերրիից, Վոդենայից ու Ֆլորինայից<sup>91</sup>:

Սոֆիայում կայացած բանակցությունների անարդյունք ավարտից հետո բուլղարական կառավարությունը շարունակեց իր ձնշումը հանուն Սալոնիկի, որի հետևանքով հաճախակի դարձան արյունալի ընդհարումները երկու դաշնակից բանակների միջև:

Թուրքիայի հետ սեպարատ հաշտություն կնքելու բուլղարական կառավարության ցանկությունը խանդավառությամբ ընդունվեց գերմանական դիվանագետների կողմից, որոնց համար դա կատարյալ հայտնություն էր բալկանյան դաշինքը

<sup>89</sup> St'a A. Тошев, նշվ. աշխ., հ. 2, էջ 146—147, 151:

<sup>90</sup> V. de La Jonquière, նշվ. աշխ., էջ 441:

<sup>91</sup> St'a Сборник дипломатических документов, касающихся событий на Балканском полуострове, Август 1912—июль 1913, С. Пет., 1914, № 133, стр. 94, Неклюдов-Сазонову, от 27 января, 1913 г.:



քայքայելու իրենց ջանքերի իրականացման ճանապարհին: Տեղեկանալով թուրք-բուլղարական բանակցությունների մասին՝ Վիլհելմ II-ը անմիջապես հրահանգեց իր պետական քարտուղարին. «Մենք պետք է այդ (թուրք-բուլղարական համաձայնությունը — Գ. Բ.) օգտագործենք Բալկաններում մեր քաղաքականության իրականացման համար: Ուստի Ավստրո-Հունգարիան պետք է անհապաղ դաշինք կնքի բուլղարների և թուրքերի հետ, իսկ մենք կօգնենք այդ դաշինքը հզորացնելուն: Նման դաշինքի առկայության դեպքում Սերբիան և Հունաստանը իրենց «անկախությունը» պահպանելու համար հարկադրված կլինեն դիմելու Ավստրո-Հունգարիային: Հիշյալ ծրագրի իրականանալու դեպքում Ավստրո-Հունգարիան տիրապետող ուժ կդառնա Բալկաններում»<sup>92</sup>:

Գերմանական դիվանագիտությունը մտադիր էր այդ դաշինքին միացնել նաև Ռումինիային և դրանով ստեղծել պետությունների նոր խմբավորում՝ ուղղված Անտանտի և նրա դաշնակիցների դեմ: Թուրքիայի, Բուլղարիայի և Ռումինիայի այդ դաշինքը, նշում էր Վիլհելմը նույն հրահանգում, Միջին Արևելքում սպառնալիք է ստեղծելու անգլիական տիրապետությանը, Ռուսաստանին դուրս է մղելու Բալկաններից և վերջիններիս տակ է դնելու նրա սևծովյան ափը: «Այդպիսով, — եզրակացնում էր կայզերը, — եթե հաջողվի ստեղծել այդ եռյակ դաշինքը, ապա դա տիրապետող կդառնա ոչ միայն Միջերկրական ծովում, այլև իր ազդեցությունը կտարածի ամբողջ բազմամիլիոն մահմեդական արևելքում»<sup>93</sup>:

Այդ քաղաքականության հաջողության դեպքում Բալկաններում կկազմալուծվեր Սերբիան՝ հարավային սլավոնների ազգային-ազատագրական պայքարի ամրոցը և Ռուսաստանի դաշնակիցը: «Սերբիայի հետ հաշիվը կմաքրվի և մենք կկարողանանք իրականացնել մեր հին թուրքական քաղաքականությունը», — ինքնավստահությամբ եզրակացնում էր Վիլհելմը: Այս ծրագիրը շուտափույթ կերպով կենսագործելու և բալկանյան դաշինքը քայքայելու նպատակով, կայզերը հրամա-

<sup>92</sup> Г. М. Трухнов, Германская политика провокаций в начале первой балканской войны. «Ученые записки», вып. 10, сер. ист.-Минск, 1950, стр. 145.

<sup>93</sup> Նույն տեղում:



յեց հրահանգել Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին, որպեսզի «նա համառորեն խորհուրդ տա թուրքական կառավարությանը՝ ընդունելու դաշինքի վերաբերյալ բուլղարական առաջարկները»<sup>94</sup>:

Թուրք-բուլղարական գաղտնի բանակցությունները լրջորեն անհանգստացրին ռուսական դիվանագիտությանը, որը երկյուղ էր կրում բալկանյան դաշինքի փլուզման և այստեղ իր քաղաքական ազդեցությանը սպառնացող հետևանքներից: Ուստի Սազոնովը խիստ բացասաբար վերաբերվեց Թուրքիայի հետ համաձայնության հանգելու Բուլղարիայի ձգտմանը և հրահանգեց Կ. Պոլսի դեսպան Գիրսին ձախողել այդ բանակցությունները<sup>95</sup>:

Տերիտորիալ հարցերի շուրջը բորբոքված ու խորացող զրգարությունը հանգեցրեց այն բանին, որ հունական կառավարությունը ևս որոշեց համաձայնության գալ երիտթուրքերի հետ: Այդ ուղղությամբ կատարված քայլերը շատ որոշակի էին: 1913 թ. փետրվարի 9-ին թուրքական «Իսթիքբարաթ» թերթը գրեց, որ Սալոնիկի շուրջ հույն-բուլղարական թշնամության հետևանքով Վենիզելոսը «կաշխատի գինակիցներեն զատ Թյուրքիո հետ հաշտության եզր մը գտնել»<sup>96</sup>: Երբ հույները մարտի 6-ին գրավեցին Էպիրոսի գլխավոր քաղաք Յանինան, հունական կառավարական շրջաններում երիտասարդ թուրքերի հետ համաձայնություն ձեռք բերելու ձգտումը ուժեղացավ: Հույն-բուլղարական տարաձայնությունները չափազանց ձեռնտու էին թուրքերին: Թուրքական կառավարությունը անհապաղ դիմեց գործնական քայլերի: Օսմանյան պառլամենտի նախկին հույն անդամներից մի քանիսը մեկնեցին Աթենք՝ որոշելու համար երկու երկրների միջև կայանալիք համաձայնության պայմանները: Սակայն հենց այդ ժամանակ, մարտի 18-ին, Սալոնիկում սպանվեց Հունաստանի թագավոր Գևորգը: Հույն-բուլղարական հակամարտությունը ավելի սրելու նպատակով թուրքական մամուլը այդ քաղաքական սպանությունը վերագրեց բուլղարներին<sup>97</sup>: Հունաստանի թագավորին

<sup>94</sup> Նույն տեղում:

<sup>95</sup> Տե՛ս А. Топев, նշվ. աշխ., հ. 2, էջ 147:

<sup>96</sup> «Ազատամարտ», 29.1. (11.2), 1913:

<sup>97</sup> Տե՛ս «Речь», 15(28). III, 1913:



ներկայացնելով որպես հույն-թուրքական հարաբերությունների բարելավման ջատագով՝ թուրքական մամուլը նրա սպանությունը գնահատում էր որպես բուլղարների կողմից այդ համաձայնությունը ձախողելու փորձ:

Թուրքական կառավարության հետ տարվող գաղտնի բանակցություններում միջնորդի դեր ստանձնեցին Էպիրոսի Յանինա բերդաքաղաքի պաշտպանության նախկին ղեկավարներ Էսադ և Վեհիբ փաշաները, որոնք, որպես գերի, գտնվում էին Աթենքի արվարձաններից մեկում: Անձամբ տեսակցելով նրանց հետ՝ Վենիզելոսը որպես համաձայնության պայման առաջարկեց, որ թուրքերն ընդունեն հույների կողմից Էպիրոսի, Էգեյան ծովի կղզիների ու արևմտյան Մակեդոնիայի գրավման փաստը: Սակայն երիտասարդ թուրքերի կառավարությունը և մասնավորապես Էնվերը կտրականորեն հրաժարվեցին այդ պայմանները որպես համաձայնության հիմք ընդունել, մինչդեռ, եթե հիշյալ պայմանները ընդունվեին, Վենիզելոսը պատրաստ էր ստորագրելու հույն-թուրքական դաշինքի պայմանագիրը<sup>98</sup>: Հունական կառավարությունը, սակայն, չհրաժարվեց թուրքական կառավարության հետ համաձայնության եզր փնտրելու իր ջանքերից, որոնք շարունակվեցին նաև հետագայում:

Բալկանյան պատերազմը թուրքական իշխանություններին առիթ ընձեռեց սաստկացնելու Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների դեմ ճնշումը: Այն հանգամանքը, որ կայսրության վրա հանդգնել էին գենք բարձրացնել քրիստոնյա չորս փոքր պետություններ, որոնք ոչ այնքան հեռու անցյալում գտնվում էին նվաճված ու ստրկացած վիճակում, ծայրահեղ գրգռված ու թշնամանքի թունոտ մթնոլորտ էր ստեղծել երկրում բնակվող քրիստոնյա ժողովուրդների համար: Պատերազմական գործողությունների շրջաններում մահմեդական բնակչությունը կառավարությունից ստացած գենքը ուղղեց տեղի անգեն քրիստոնյաների դեմ՝ նրանց վրա թափելով թուրքական բանակների կրած պարտության ամբողջ մաղձը:

Հույն ազգաբնակչության շրջանում կատարվող ձերբակալությունները, ամենատարբեր բռնությունները, հալածանքներն

<sup>98</sup> St' u F. Korðátou, նշվ. աշխ., էջ 318—319:



ու սպանությունները կրկին դարձան մշտական երևույթ: Դրու-  
թյունը ծանրացավ հատկապես այն ժամանակ, երբ երիտթուր-  
քերը նորից կանգնեցին պետական իշխանության գլուխ: Է-  
գեյան ծովափում և հունաբնակ այլ շրջաններում երիտթուր-  
քերը ստեղծեցին ահաբեկիչ մթնոլորտ: Այդքնի վիլայեթում  
նրանք կազմեցին ազատ հրաձիգների գումարտակներ, որոնց  
կցվեցին հոճաներ՝ մահմեդական մոլեռանդությունը բորբոքե-  
լու և «մահմեդականների կրոնը» «գլավուրներից» պաշտպա-  
նելու համար: Սակայն երիտթուրքերի կիրառած ամենահիմ-  
նական միջոցառումը հույների զանգվածային արտաքսումն էր  
էգեյան ծովափից դեպի Անատոլիայի խորքերը: Այս քաղաքա-  
կանությունը հետապնդում էր տեղաբնիկներին արմատախիլ  
անելու, այդ շրջանում թուրք բնակչության բացարձակ մե-  
ծամասնությունն ստեղծելու և այն ընդմիջտ օսմանյան պետու-  
թյան կազմում պահելու նպատակ: Մարմարայի ափին տարած-  
ված հունական գյուղերը ենթարկվեցին անկանոն հեծելա-  
զորի ասպատակություններին: Հրկիզվեցին հունական գրե-  
թե բոլոր բնակավայրերը, և ջարդի ենթարկվեց խաղաղ բնակ-  
չության մեծագույն մասը<sup>99</sup>: Զարդի մղձավանջը համակել էր  
նաև Օսմանյան կայսրության մայրաքաղաքի քրիստոնյա բը-  
նակչությանը: «Խուճապը, որ թագավորում է Կ. Պոլսում,  
աննկարագրելի է», — այդ օրերին գրում էր ֆրանսիական  
«Թանը»<sup>100</sup>: Բազմաթիվ քրիստոնյաներ ապաստան էին որո-  
նում օտարերկրյա հիվանդանոցներում, հյուպատոսարաննե-  
րում, դեսպանություններում: Անատոլիայի խորքերում հույների  
հետ մեկտեղ հալածանքների ու բռնությունների էին ենթարկ-  
վում հայերը: Հաճախ օգտագործվում էր երիտթուրքական այն  
պրոպագանդան, որ իբր հայերն են բալկանյան պատերազմի  
հեղինակներն ու կայսրության բացահայտ թշնամիները: Ուս-  
տի աննկարագրելի էր այն մթնոլորտը, ուր ապրում էին հա-  
յերը: Բալկաններում թուրքական բանակների առաջին իսկ  
պարտությունների հետևանքը եղավ հայերի կոտորածը ոչ  
միայն մերձձակատային շրջաններում, այլև Ադանայում, Դիար-  
բեքիրում, Էրզրումում և Վանում<sup>101</sup>:

<sup>99</sup> *St'a* Lieutenant Selim bey, Carnet de campagne d'un officier  
turc (Octobre-décembre 1912), p. 116, P., 1913, "Le Temps", 21.II.1913:

<sup>100</sup> «Le Temps», 21.II, 1913:

<sup>101</sup> *St'a* «Правительственный вестник», 6((19).XI, 1912:



Զավթելով իշխանությունը, երիտթուրքերը չկարողացան իրականացնել ոչ միայն Թուրքիայի հաղթանակը ապահովելու իրենց խոստումները, այլև կրեցին նոր ուղղմական պարտություններ:

1913 թ. մարտի 6-ին գրավելով Էպիրոսի կարևորագույն քերդաքաղաք Յանինան՝ հունական բանակը թուրքերին ստիպեց թողնել նաև Երզերին ու Թեբեդելենը, իսկ նավատորմը ազատագրեց Էգեյականի ամենախոշոր կղզիներից մեկը՝ Սամոսը: Մարտի 26-ին, 149-օրյա պաշարումից հետո, բուլղարական բանակը գրոհով վերցրեց սովից ու ժառապած և ուղղամտերքի սուր կարիքի մեջ ընկած Ադրիանապոլիս քաղաք ամրոցը: Նրա պարիսպների տակ գամված բուլղարական զորքերը համալրեցին օսմանյան մայրաքաղաքի ուղղությամբ շարժվող բանակի շարքերը:

Ադրիանապոլսի անկումը ուղղմական ու բարոյական մեծ հարված հասցրեց թուրքական բանակին և երիտթուրքերի քաղաքական հեղինակությանը: «Ադրիանապոլսի գրավումից հետո թուրքերի մոտ նկատվում է ոգու անկում, վիատություն, — նշված է այդ շրջանի ուղղմական զեկուցագրերից մեկում, — Զորքերը բարոյալքված են: Ռաշնակիցների ուժեղ ծնշման դեպքում թուրքերը չեն կարող պահել դիրքերը, բոլորը կփախչեն 4. Պոլիս, այդ դեպքում, հավանաբար, կառավարությունը կտապալվի»<sup>102</sup>:

Ուղղմական պարտությունները մեծ դժգոհություն առաջացրին երիտթուրքերի քաղաքական հակառակորդների շրջաններում:

Դժգոհությունը բացահայտ դարձավ բանակում: Մեծ վեգիրին ներկայացվեց հուշագիր, որով սպաների մի խումբ պահանջում էր կառավարության հրաժարականը՝ պատճառաբանելով, որ երիտթուրքերի ղեկավարությունը վատթարացրեց գործերի վիճակը<sup>103</sup>: Օգտվելով երիտթուրքերի տեռորիստական վարչակարգի դեմ առաջացած դժգոհությունից՝ քաղաքական ընդդիմադիր ուժերը աշխուժացրին իշխանության գլուխ անցնելու իրենց գործունեությունը: Երիտթուրքերի քաղաքական նկարագիրը բացահայտող պարսավագրերում ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչները նշում էին. «Միություն

<sup>102</sup> ЦГАБМФ, ф. 418, оп. I, д. № 2933, л. 305.

<sup>103</sup> Ст'ю «Речь», 5(18). II. 1913:



և առաջադիմություն» կուսակցության առաջնորդները ոչ այլ  
ոք են, քան մարդասպաններ, որոնց ձեռքերը թաթախված են  
արյունով»<sup>104</sup>։ Անբավականությունն ընդգրկեց նաև երիտա-  
սարդ թուրքերի մի մասին։

Բալկանյան պատերազմում Թուրքիայի կրած պարտություն-  
ները և Հարավ-Արևելյան Եվրոպայում թուրքական տիրապե-  
տության խորտակումը հարված էին հասցնում նաև Բալկան-  
յան թերակղզու նկատմամբ Գերմանիայի ու Ավստրո-Հունգա-  
րիայի ռազմաքաղաքական ու տնտեսական նվաճողական ծրա-  
գրերին։ Փաստորեն Բալկանները լիովին ընկնում էին Ան-  
տանտի երկրների քաղաքական ազդեցության տակ։ Վերանում  
էր այն կամուրջը, որը Կենտրոնական տերություններին պետք  
է միացնել Թուրքիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի հետ։

Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի ղեկավար շրջան-  
ները հիասթափված էին երիտթուրքերից։ «Վիեննայում և  
Բուդապեշտում, ինչպես նաև Բեռլինում այդ հիասթափությու-  
նը ավելի մեծացավ, — գրել է Բյուլովը, — երբ 1913 թ.  
մարտին բուլղարները գրավեցին Ադրիանապոլիսը, գերի վերց-  
րին 29 փաշա և սպառնում էին Կ. Պոլսին»<sup>105</sup>։

Բալկաններում թուրքական տիրապետության տապալման  
և միավորված, ընդարձակված ազգային ուժեղ պետություն-  
ների՝ Սերբիայի, Չեոնոգորիայի, Բուլղարիայի, Հունաստանի  
կազմավորման հետևանքով ստեղծվում էր հզոր պատնեշ, որը  
վերջնականորեն արգելափակելու էր Սալինիկով դեպի Էգե-  
յան ծով Ավստրո-Հունգարիայի առաջխաղացումը։ Եռյակ դա-  
շինքի, մասնավորապես՝ Գերմանիայի ղեկավար շրջանները  
փորձում էին Թուրքիային փրկել վերջնական կործանումից և  
երաշխավորել «պատվավոր» հաշտություն։ Պատերազմի ըն-  
թացքը Թուրքիայի օգտին փոխելու երիտթուրքերի համառու-  
թյունը, նրանց կարծիքով, հղի էր նոր վտանգներով։ «Ան-  
հրաժեշտ է գտնել բանակցությունների վերսկսման ինչ որ  
մի այլ ուղի, հենց դրանում մենք պետք է օգնենք նրանց»<sup>106</sup>, —

<sup>104</sup> Джемаль паша, նշվ. աշխ., էջ 16։

<sup>105</sup> Б. Бюлов, Воспоминания, М.-Л., 1935, стр. 410.

<sup>106</sup> Г. М. Трухнов, Второй этап первой Балканской войны и германская политика в феврале—марте 1913 г., Белорусский гос. университет им. В. И. Ленина. «Ученые записки», вып 30, сер ист., М., 1956, стр. 184.



գրում էր կանցլեր Բետման-Հոլվեգը Բեռլինից: Հիմնավորելով Թուրքիայի համար նպաստավոր հաշտություն կնքելու անհրաժեշտությունը՝ Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմը գրում էր. «Մենք պետք է Թուրքիային ցույց տանք գործնական օգնություն, եթե ցանկանում ենք պահպանել մեր տնտեսական ու քաղաքական շահերը Փ. Ասիայում, հակառակ դեպքում առհավետ մեր առջև կփակենք այդ ուղին»<sup>107</sup>: Գերմանական դիվանագիտության մանևրները, սակայն, հաջողություն չունեցան:

Օսմանյան կայսրության ծանր վիճակը երիտթուրքերին հարկադրում էր մտածել հաշտության մասին: Ի վերջո փետրվարի 28-ին նրանք ընդունեցին տերությունների միջնորդությունը: Մարտի 12-ին և 14-ին բալկանյան դաշնակիցները, տերությունների ճնշմամբ, վերջնականապես ձևակերպեցին հաշտության իրենց պայմանները: Հրաժարվելով Ռոդոստո-Միդիա նախկին սահմանագծից՝ նրանք այժմ պահանջում էին Էգեյան ծովի Էնոս և Սև ծովի Միդիա քաղաքների միջև ձրգված ուղղագիծ սահմանից արևմուտք գտնվող բոլոր տարածքները, բացառությամբ Ալբանիայի: Այդպիսով, տերությունների անմիջական ճնշմամբ դաշնակիցները Թուրքիային էին զիջում Մարմարայի Ռոդոստո քաղաքից մինչև Մարիցայի գետաբերանն ընկած տարածությունը՝ դրանով իսկ սահմանը նշանակալիորեն հեռացնելով նեղուցների շրջանից ու Կ. Պոլսից: Միաժամանակ, դաշնակիցները պահանջեցին Կրետեն ու Էգեյան ծովի բոլոր կղզիները, նաև՝ կայսրության մեջ առևտրի, օսմանահպատակ իրենց ազգակիցների, ուղղափառ եկեղեցու շահերը պաշտպանելու իրավունքը: Բալկանյան երկրները առաջ քաշեցին նաև Թուրքիայից ռազմատուգանք վերցնելու պահանջ և նշեցին, որ ռազմական գործողությունները շարունակվելու են ընդհուպ մինչև հաշտության կնքումը<sup>108</sup>:

Ամբողջ Եվրոպական Թուրքիայի կորուստը բնավ դուր չէր գալիս իմպերիալիստական տերություններին, որոնց շահերը (թեև խիստ հակասական) ստիպում էին հանդես գալու Կ. Պոլսը և նեղուցները Օսմանյան կայսրության կազմում թողնելու պահանջով: Անգլիան և Ռուսաստանը Կ. Պոլսի ու նե-

<sup>107</sup> Նոյն տեղում, էջ 185:

<sup>108</sup> Տե՛ս DDF, 3—V, № 567, 587:



դուցների խնդիրը համարում էին «Արևելյան հարցում» իրենց քաղաքականության հիմնաքարը: Եթե թուրքական կառավարությունն անգամ ի վիճակի չլիներ պաշտպանելու Կ. Պոլսը և նեղուցները, ապա տերությունները, մասնավորապես Անգլիան, հանդես էին գալու կայսրության շահերի «պաշտպանությամբ»:

Ռեոկա բալկանյան պատերազմի առաջին իսկ օրերին, Անգլիայի և Ռուսաստանի կարծիքով, Կ. Պոլսի իրական անվտանգության ընդհանուր շահերից ելնելով, Եվրոպայում թուրքիայի քաղաքական քարտեզի սահմանագիծը պետք է անցներ Մարիցայի գետաբերանից մինչև Սև ծով, ընդ որում Ադրիանապոլիսը պետք է մնար սուլթանի գերիշխանության ներքո<sup>109</sup>: Սակայն հետագայում, դաշնակիցների ռազմական հաղթանակների հետևանքով, Ռուսաստանը և Անգլիան հանդես եկան նաև Ադրիանապոլիսը բալկանյան դաշնակիցներին հանձնելու անառարկելի պահանջով<sup>110</sup>:

Այժմ արդեն, երբ Օսմանյան կայսրությանը սպառնում էր Եվրոպական թուրքիայից լիովին և անվերադարձ զրկվելու վտանգը, անգլիական կառավարությունը փետրվարի 27-ին դեսպան Թեվֆիկ փաշային հավաստիացրեց, որ Կ. Պոլսի անվտանգությունը ապահովելու համար տերությունները հանդես կգան Ինեադան, Լյուլե-Բուրգազը և Բաբա-Էսկին կայսրության կազմում թողնելու վճռական պահանջով<sup>111</sup>: Կ. Պոլսի և նեղուցների անվտանգության նկատառումներից ելնելով, Գրեյը առարկություն չցուցաբերեց Էնոս-Միդիա սահմանագծի վերաբերյալ: Ելույթ ունենալով պառլամենտում, Անգլիայի արտաքին գործերի մինիստրը նշեց, որ նման սահմանագծմամբ «կշրջանցվեն Կ. Պոլսին, Ղարդանեին, ինչպես նաև Փ. Ասիային վերաբերող հարցերը»<sup>112</sup>: Նա մերժեց Էգեյան ծովի կղզիները Հունաստանին հանձնելու դաշնակիցների պահան-

<sup>109</sup> SH<sup>a</sup> Материалы по истории франко-русских отношений за 1910—11 гг, М., 1922, Телеграмма Сазонова—послам от 20 окт. 1912, № 293:

<sup>110</sup> SH<sup>a</sup> Сборник дипломатических документов, № 63, стр 45, Сазонов—Гирсу, от 8 декабря, 1912 г.:

<sup>111</sup> SH<sup>a</sup> DDF, 3—V, № 472, p. 569, Annexe:

<sup>112</sup> «Le Temps», 27.III.1913:



ջը՝ շեշտելով, որ դրանց հետագա ծակատագիրը պետք է որոշեն իրենք՝ տերությունները: «Բայց, — ավելացրեց նա, — այդ չի վերաբերում Կրետեին, որից Թուրքիան պետք է հրաժարվի առանց որևէ պայմանի»<sup>113</sup>:

Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան չէին ցանկանում նաև Թուրքիայի ֆինանսական թուլացումը: Ահա թե ինչու Գրեյը մերժեց Թուրքիայի վրա ռազմատուգանք դնելու դաշնակիցների պահանջը՝ նշելով, որ նրա սնանկացումը «չի համապատասխանում Փ. Ասիայում հատուկ հետաքրքրություն ունեցող տերություններից և ոչ մեկի շահերին»<sup>114</sup>: Ընդհակառակը, նա պահանջեց, որպեսզի բալկանյան երկրները մասնակցեն օսմանյան պարտքի վճարմանը<sup>115</sup>: Այդպիսով, բացի Էգեյան ծովի կղզիներից ու Թուրքիայից պահանջվող ռազմատուգանքից, Գրեյը սկզբունքային այլ առարկություն չուներ հաշտության պայմանների նկատմամբ: Նա հաղթողներին էր վերապահում Էնոս-Միդիա գծից արևմուտք ընկած բոլոր տերիտորիաների բաժանումը, բացառությամբ Ալբանիայի: Սակայն Գրեյը իր հայտարարության մեջ սպառնաց, որ «Եթե դաշնակիցները Թրակիայի համար պահանջեն այնպիսի սահմանագիծ, որն հարուցի Կ. Պոլսի ու նեղուցների հարցը, կամ եթե պատերազմը այնքան ծավալվի, որ մեջտեղ գա Փ. Ասիայի հարցը, ապա այնժամ, անկասկած, տերությունները Արեւելքի իրադարձությունների խնդրում հանդես չեն գա իբրև անշահախնդիր միջնորդներ»<sup>116</sup>: Այս սպառնալիքից հետո նա պահանջեց, որ պատերազմող կողմերը տերությունների առաջարկած հաշտության պայմանները ընդունեն առանց առարկության<sup>117</sup>:

Անգլիայի արտաքին գործերի մինիստրի կարծիքը դարձավ ապագա հաշտության հիմքը: Բոլոր տերությունների կողմից այն արժանացավ հավանության<sup>118</sup>: Միայն Ռուսաստանը, որի

<sup>113</sup> Նույն տեղում:

<sup>114</sup> Նույն տեղում:

<sup>115</sup> St'ua DDF, 3—V, № 550, էջ 550, Պոլ Կամբոնը՝ Ժոննարին, 10 մարտի, 1913 թ.:

<sup>116</sup> «Le Temps», 27.III.1913:

<sup>117</sup> St'ua Նույն տեղում:

<sup>118</sup> St'ua DDF, 3—V, № 292, էջ 707, 1913 թ. մարտի 14-ի անգլիական նոտան:



տնտեսական ու ֆինանսական ազդեցությունը Թուրքիայում թույլ էր, ռազմատուգանքի հարցում առարկում էր Գրեյի կարծիքին<sup>119</sup>: Թուրքիայի հետագա թուլացման նպատակով Պետերբուրգի կառավարությունը ռազմատուգանքի հարցում պաշտպանում էր բալկանյան երկրների պահանջը: Սակայն Ռուսաստանի տեսակետը տերությունների շրջանում աջակցություն չգտավ:

Մարտի 31-ին թուրքական կառավարությանը հանձնաժողովում տերությունները նշում էին հաշտության պայմանները, որոնց ընդունման դեպքում նրանք համաձայնվում էին հանդես գալ որպես միջնորդ<sup>120</sup>: Նոտայի հանձնումը զուգահեռաց Ադրիանապոլսի անկմանը: Կ. Պոլիսը կորցնելու հավանականությունից տագնապահար, երիտթուրքերը անմիջապես, հաջորդ օրն իսկ, առանց վերապահության ընդունեցին տերությունների առաջարկած հաշտության պայմանները<sup>121</sup>: Սակայն ելնելով իրենց ռազմական խոշոր հաջողություններից, դաշնակիցները առարկեցին տերությունների առաջ քաշած հաշտության պայմաններին: Նրանք հայտարարեցին, որ Էնոս-Միդիա ուղղագիծ սահմանը իրենց չի բավարարում և համաձայնվում էին այն ընդունել սոսկ որպես ապագա սահմանի հիմք: Դաշնակիցները կրկին պնդեցին Էգեյան ծովի կղզիներն իրենց հանձնելու և Թուրքիայից ռազմատուգանք ստանալու պահանջը<sup>122</sup>, որ կրկին քննության առնվեց Լոնդոնի դեսպանաժողովում: Ապրիլի 8-ի նիստում Գրեյը և դեսպանները համաձայնվեցին Էնոս-Միդիա ուղղագիծ սահմանագծի վերաբերյալ դաշնակիցների ցանկության հետ: Սակայն գերմանական խմբավորումը կրկին հանդես եկավ Էգեյան ծովի կղզիները Հունաստանին հանձնելու պահանջի դեմ: Իտալիայի դեսպան Իմպերիալին հայտարարեց, որ իր կառավարությունը չի կարող լքել Ղոդեկանեզյան արշիպելագը, քանի դեռ Թուրքիան չի կատարել Լոզանի պայմանագրից բխող իր պարտա-

<sup>119</sup> Տե՛ս DDF, 3—VI, № 2, էջ 4, Պոլ կամբոնը՝ Ժոննաբին, 15 մարտի, 1913 թ.:

<sup>120</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>121</sup> Տե՛ս նույն տեղում, DDF, 3—VI, № 147, էջ 188, Թուրքական կառավարության պատասխան նոտան տերություններին, 1 ապրիլի, 1913 թ.:

<sup>122</sup> Տե՛ս նույն տեղում, № 200, էջ 249, Բալկանյան դաշնակիցների նոտան տերություններին, 5 ապրիլի, 1913 թ.:



վորությունները<sup>123</sup>: Իսկ գերմանական դեսպան Լիխնովսկին կրկնեց Ռարդանելի շրջանում գտնվող չորս կղզիները, ինչպես նաև Քիոսն ու Սիթիլենը Թուրքիային վերադարձնելու նախկին առաջարկությունը<sup>124</sup>: Ավելին, նա շեշտեց, որ դաշնակիցներին հղվելիք պատասխան նոտայում նույնիսկ չպետք է նշել, թե որ կղզիներն են անցնում Հունաստանին<sup>125</sup>:

Վերջապես, ավելի քան հինգամսյա դիվանագիտական կատաղի պայքարից հետո, եվրոպական տերությունները մշակեցին հաշտության պայմանագրի վերջնական նախագիծը: Դրա համաձայն Թուրքիան պետք է հրաժարվեր Էնոս-Սիդիա ուղղագիծ սահմանագծից արևմուտք գտնվող բոլոր տարածքներից, բացի Ալբանիայից: Հունաստանին էր անցնում Կրետեն: Էգեյան ծովի կղզիների հետագա ծակատագրի որոշումը վերապահվեց միայն մեծ տերություններին<sup>126</sup>:

Ալբանիայի սահմանների (մասնավորապես՝ հարավային սահմանի) և Էգեյան ծովի կղզիների հարցի լուծման հետաձգումը բողոքի բուռն ալիք առաջացրեց Հունաստանում: Աթենքի պաշտոնական «Պատրիս» թերթը հայտարարեց, որ Հունաստանը չի կարող ստորագրել հաշտության նախնական պայմանները, քանի դեռ սկզբունքորեն չի լուծվել Էպիրոսի և Էգեյան ծովի կղզիների հարցը<sup>127</sup>: Ի հակադրություն Հունաստանի, նրա դաշնակիցները բավարարված էին պատերազմի արդյունքներով, ուստի ոչ մի առարկություն չունեին հաշտության պայմանագրի հողվածների դեմ: Հաշտությունը անհապաղ ստորագրելու ձգտումը չէին թաքցնում նաև երիտթուրքերը: Այսպիսով, միակ երկիրը, որը չէր ընդունում հաշտության պայմանագիրը իր նախնական ձևով, Հունաստանն էր:

Անգլիական դիվանագիտությունը անհանգստանալով բալկանյան դաշինքի ներսում եղած լուրջ տարաձայնություններից՝ որոշեց արագացնել հաշտության կնքումը: Արտաքին գոր-

<sup>123</sup> Տե՛ս DDF, 3—VI, № 241, էջ 298, Պոլ Կամբոնը՝ Պիշոնին, 8 ապրիլի, 1913 թ.:

<sup>124</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>125</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>126</sup> Տե՛ս նույն տեղում, № 479, էջ 541—542, Հաշտության պայմանագրի նախագիծը:

<sup>127</sup> Տե՛ս «Le Temps», 20.I.1913:



թերի մի նիստրի տեղակալ Արթուր Նիկոլսոնը հունական պատվիրակությանը բացատրեց, որ հաշտության պայմանագիրը սոսկ համաձայնություն է Թուրքիայի ու դաշնակիցների միջև և որ Հունաստանը, ստորագրելով այն, չի հրաժարվում կղզիներին և Հյուսիսային Էպիրոսին վերաբերող պահանջներից<sup>128</sup>։ Մյուս կողմից, անգլիական կառավարությունը Աթենքի իր դեսպանի միջոցով փորձեց ազդել Վենիզելոսի վրա<sup>129</sup>։

Հունական կառավարության համառությունը հանգեցնում է այն բանին, որ մայիսի 27-ի առավոտյան Գրեյը իր մոտ է կանչում պատվիրակներին և հրամայում անհապաղ ստորագրել հաշտության պայմանագիրը, հակառակ դեպքում, սպառնում է նա, հրաժարվող կողմը թողնելու է Լոնդոնը<sup>130</sup>։

Մեկուսացման վտանգից վախեցած՝ հունական կառավարությունը հարկադրվում է ընդունել իրեն թելադրված պայմանները։ Վերջապես, 1913 թ. մայիսի 30-ին, բալկանյան դաշնակիցների ու Օսմանյան կայսրության միջև կնքվում է հաշտության պայմանագիր։ Հունաստանը անվերապահորեն ստանում էր Կրետե կղզին։ Էգեյան ծովի կղզիների հետագա ձակատագրի որոշումը վերապահվում էր մեծ տերություններին։ Այդ հարցում դրսևորված հակասություններն այն աստիճանի սուր էին, որ հաշտության բանակցություններում եվրոպական տերությունները չկարողացան վերջնական որոշում կայացնել։ Ինչ վերաբերում էր Էնոս-Միդիա ուղղագիծ սահմանից արևմուտք ընկած նախկին Եվրոպական Թուրքիային, ապա դրա բաժանումը և սահմանագծումը կատարվելու էր բալկանյան դաշնակիցների փոխադարձ համաձայնությամբ։

Առաջին բալկանյան պատերազմի քաղաքական հետևանքները խիստ առաջադիմական նշանակություն ունեցան հույների ու սլավոնական ժողովուրդների համար։ «Պատմության մեջ բազմիցս եղել են պատերազմներ, — գրում է Վ. Ի. Լենինը, — որոնք, չնայած բոլոր սարսափներին, գազանություններին, արհավիրքներին ու տառապանքներին, որ անխուսա-

<sup>128</sup> Տե՛ս DDF, 3—VI, № 541, էջ 616, Դը Ֆլորիոն՝ Պիշոնին, 14 մայիսի, 1913 թ.։

<sup>129</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>130</sup> Տե՛ս նույն տեղում, № 627, էջ 729, Պոլ Կամբոնը՝ Պիշոնին, 27 մայիսի, 1913 թ.։



փելիորեն կապված են ամեն մի պատերազմի հետ, եղել են առաջադիմական, այսինքն օգուտ են բերել մարդկության զարգացմանը, օգնելով կործանելու առանձնապես վնասակար ու ռեակցիոն հաստատությունները (օրինակ, ինքնակալությունը կամ ճորտատիրությունը), Եվրոպայի ամենաբարբարոսական բռնակալությունները (թուրքականն ու ռուսականը)»<sup>131</sup>։ Հույների ու սլավոնների ազգային-ազատագրական դարավոր պայքարը թուրքական ամենաբարբարոսական բռնակալության դեմ ավարտվեց լիակատար հաղթանակով։ «Բալկանները — բալկանյան ժողովուրդներին», դա արդեն նվաճված է»<sup>132</sup>, — գրում է Վ. Ի. Լենինը՝ համարելով այն հիշյալ ժողովուրդների պատմական զարգացման կարևոր գործոններից մեկը։ Թուրքական հետամնաց տնտեսական ու քաղաքական կարգերի ոչնչացումը բալկանյան երկրներին ընձեռեց բուրժուական արագ զարգացման լայն հնարավորություններ։ Բալկանյան երկրների հաղթանակները, — գրում է Վ. Ի. Լենինը, — «նշանակում են, որ Մակեդոնիայում խախտվել է ֆեոդալիզմի տիրապետությունը, նշանակում են, որ ստեղծվել է քիչ թե շատ ազատ գյուղացի հողատեր դասակարգ, նշանակում են, որ ապահովվել է բալկանյան երկրների ամբողջ հասարակական զարգացումը, որ կասեցված էր աբսոլյուտիզմով և ճորտատիրական հարաբերություններով»<sup>133</sup>։ Այդ առումով Լենինը նշում է. «Բալկանյան պատերազմը Ասիայում և Արևելյան Եվրոպայում միջնադարի փլուզումը նշանավորող համաշխարհային իրադարձությունների շղթայի օղակներից մեկն է»<sup>134</sup>։

Վերացնելով թուրքական տիրապետությունը՝ հույները և սլավոնները ազատագրվեցին օտարերկրյա դարավոր ճնշումից։ Ղրանով ազգային հարցը Բալկաններում հսկայական առաջընթաց քալլ կատարեց դեպի իր լուծումը<sup>135</sup>։

Իհարկե, թուրքական ֆեոդալիզմի դարավոր տիրապետությունը Բալկաններում թողեց իր ծանր հետքերը, որոնք ապա-

<sup>131</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 26, էջ 378—379։

<sup>132</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 22, էջ 188։

<sup>133</sup> Նույն տեղում, էջ 226։

<sup>134</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 23, էջ 44։

<sup>135</sup> Տե՛ս Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 22, էջ 189։



գա տասնամյակների ընթացքում դեռևս իրենց զգալ էին տա-  
լիս, սակայն պատմական այդ խոշոր իրադարձությունները,  
որոնց հետևանքով արևելյան Եվրոպայում վերացվեցին միջ-  
նադարյան կարգերը և թուրքական ճնշումը, Լենինը բնութա-  
գրեց որպես «համաշխարհային պատմության նոր գլուխ»<sup>136</sup>:

---

<sup>136</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 22, էջ 188:



# ԹՈՒՐԶ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՍՐՈՒՄԸ

Եվրոպական Թուրքիայի, Կրետեի և Էգեյան ծովի կղզիների կորուստը չափազանց ծանր քաղաքական ու տնտեսական վիճակ ստեղծեց Թուրքիայի համար և մեծ հարված հասցրեց երիտթուրքական կառավարող կուսակցության հեղինակությանը: Երիտթուրքերը չկարողացան իրականացնել պատերազմի ընթացքը փոխելու իրենց հավաստիացումներն ու խոստումները, կրեցին նորանոր ռազմական պարտություններ, ջախջախվելով իրենց արկածախնդրական ծրագրերի կատարման մեջ:

Թուրքական պատմագրությունը չափազանց խիստ է արտահայտվում երիտթուրքերի արտաքին քաղաքականության մասին, նրանց ներկայացնելով Եվրոպական Թուրքիայի և Էգեյան ծովի կղզիների կորստյան անքավելի մեղադրանքը: Բայուրը նշում է, որ երիտթուրքերի հունվարյան հեղաշրջումից սկսած՝ քաղաքական իրադարձություններն իրենց վերջնական արդյունքում Օսմանյան կայսրության համար եղան չափազանց աղետաբեր<sup>1</sup>: Բնական է, որ այդ պայմաններում քաղաքական ընդդիմադիր ուժերի ամբողջ դժգոհությունը պետք է ուղղվեր կառավարող կուսակցության դեմ, նրան համարելով կայսրությանը պատճառված բոլոր դժբախտությունների պատճառը: «Ուստի, — եզրակացնում է Բայուրը, — այդ շրջանում երիտթուրքերի քաղաքական կացությունն ավելի քան վատթար էր ու անհուսալի»<sup>2</sup>:

<sup>1</sup> Şek'a Y. H. Bayur, Türk inkılâbı tarihi, cilt II, kısım II, Ankara, 1943, էջ 314—315:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 316:



Քաղաքական օպոզիցիան, որ գլխավորում էին հունվարյան հեղաշրջումով իշխանությունից հեռացված իթիլաֆականները, անցավ հարձակման: 1913 թ. հունիսի 11-ին Կ. Պոլսի Բալագեդի հրապարակում սպանվեց սադրազամ Մահմուդ Շեֆքեթ փաշան: Քաղաքական բնույթ կրող այդ սպանությամբ իթիլաֆականները հետապնդում էին ոչ միայն պետական հեղաշրջում կատարելու նպատակ, այլև փորձում էին ֆիզիկական հաշվեհարդար տեսնել երիտթուրքական կուսակցության բոլոր ղեկավարների և նրանց կողմնակիցների հետ<sup>3</sup>:

Սակայն սկսված դավադրությունը դրանով էլ ավարտվեց: «Մենք ձերբակալեցինք բոլորին»<sup>4</sup>, — հեղաշրջման փորձը ձրնջելու կապակցությամբ գրում է Ջեմալը: Կ. Պոլսում մտցվեց պաշարողական դրություն: Երիտթուրքերը արյունալի հաշվեհարդար տեսան իրենց քաղաքական հակառակորդների հետ կանխելով նոր պետական հեղաշրջումը<sup>5</sup>: Բոլոր ընդդիմադիր կուսակցությունները հայտարարվեցին օրենքից դուրս, իսկ շուրջ 300 հայտնի գործիչներ բանտարկվեցին Սինոպի ամրոցում: Դրանց թվում էին նաև Օսմանյան սոցիալիստական կուսակցության ղեկավարներ Մուստաֆա Սուբխին և Հյուսեին Հիլմին<sup>6</sup>: Հաստատելով ռազմական դիկտատուրա և դաժան հաշվեհարդարի միջոցով ոչնչացնելով իր քաղաքական հակառակորդներին՝ երիտթուրքական կուսակցությունը դառնում է կայսրության միակ տիրակալը: Այդ ճանապարհով ամրապնդելով իրենց դիրքերը երկրի ներսում և ուժեղացնելով դասակարգային ծնշումն ու ազգային-կրոնական հալածանքները՝ երիտթուրքերը ուղիներ էին որոնում կայսրությունը արտաքին քաղաքական ծանր վիճակից հանելու և ռևանշիստական, զավթողական քաղաքականություն իրականացնելու համար: Բալկաններում ստեղծված լարված քաղաքական իրավիճակը, որ անմիջական հետևանք էր բալկանյան դաշնակից պետությունների միջև առկա սահմանային լուրջ տարաձայնությունների, ռևանշի և զավթումների մեծ հույսեր ու հեռանկարներ էր ներշնչում երիտթուրքերին:

<sup>3</sup> Տե՛ս Джемаль паша, Записки, 1913—1919, Тифлис, 1923, էջ 30:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>5</sup> Տե՛ս ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 2933, л. 393:

<sup>6</sup> Տե՛ս Г. З. Алиев, նշվ. աշխ., էջ 230:



Ավստրո-Հունգարիայի ճնշման հետևանքով ելք չստանալով դեպի Ադրիատիկ ծով, 1913 թ. փետրվարին Սերբիան դիմեց Բուլղարիային՝ որպես փոխհատուցում առաջարկելով վերանայել սերբ-բուլղարական դաշնակցային պայմանագրով նախատեսված Մակեդոնիայի սահմանները: Հունաստանը, չբավարարելով իր տերիտորիալ պահանջները հյուսիսային Էպիրոսում, նույնպես ձգտում էր փոխհատուցում ստանալ հարավային Մակեդոնիայում և Թրակիայում<sup>7</sup>:

Մակեդոնիայի բաժանման վերաբերյալ դաշնակիցների միջև առաջացած սուր հակասությունները և, մասնավորապես, Սալոնիկի պատկանելության շուրջ Հունաստանի և Բուլղարիայի անհաշտ պայքարը հետզհետե ստանում էին սուր բնույթ: Մասնակի զինված ընդհարումները սպառնում էին Բալկաններում վերածվել նոր պատերազմի՝ ռազմաքաղաքական ամենալուրջ հետևանքներով: Պարզ էր դառնում, որ սերբ-բուլղարական հավանական զինված բախումը անխուսափելիորեն առաջ էր բերելու Ռումինիայի ելույթը՝ ստեղծված հանգամանքներում իր տարածքային հավակնությունները բավարարելու համար<sup>8</sup>:

Քաղաքական իրադրությունը Բալկաններում բարդանում էր նաև նրանով, որ երիտթուրքերը կանխատեսելով հավանական պատերազմը դաշնակից պետությունների միջև՝ նախապատրաստվում էին ապագա իրադարձություններին<sup>9</sup>: Իրենց հերթին, Եռյակ միության տերությունները աշխատում էին խորացնել հակասությունները Բուլղարիայի, Հունաստանի ու Սերբիայի միջև և պայթեցնել Անտանտի ազդեցության տակ գտնվող բալկանյան երկրների խմբավորումը:

Պետերբուրգից Սոֆիա, Աթենք և Բելգրադ ուղղվեցին «փոխադարձ զիջումների անհրաժեշտության»<sup>10</sup> և «երկպառակությունները անհապաղորեն դադարեցնելու»<sup>11</sup> կոչեր: Անտանտի

<sup>7</sup> *ՏԵՄ* История дипломатии, т. II, էջ 754—755:

<sup>8</sup> *ՏԵՄ* Сборник дипломатических документов, № 145, стр. 101, Телеграмма посланника в Бухаресте от 9 апреля 1913 г.:

<sup>9</sup> *ՏԵՄ* նույն տեղում, № 184, էջ 130, Телеграмма Гирса от 16 мая 1913 г.:

<sup>10</sup> *ՏԵՄ* նույն տեղում, № 132, էջ 94, Сазонов-Неклюдову, от 8 декабря, 1912 г.

<sup>11</sup> *ՏԵՄ* նույն տեղում, № 136, էջ 96, Сазонов-Неклюдову, от 25 февраля, 1913 г.



ազդեցությունը Հունաստանում պահպանելու նպատակով ռուսական կառավարությունը լրջորեն մտախոգված էր հուլն-բուլղարական տարաձայնությունները հարթեցնելու խնդրում: Պետերբուրգում տիրող տեսակետի համաձայն, Սալոնիկը Հունաստանին հանձնելու պայմանով հնարավոր կլիներ Մակեդոնիայի վերաբերյալ փոխադարձ համաձայնություն կայացնել երկու դաշնակից պետությունների միջև<sup>12</sup>:

1913 թ. մայիսի 9-ին Պետերբուրգում կայացած դեսպանաժողովում եվրոպական տերությունները դիվանագիտական նոր քայլեր ձեռնարկեցին բալկանյան պետություններում իրենց քաղաքական ազդեցությունը ամրապնդելու համար: Դեսպանաժողովի որոշման համաձայն թեև Սիլիստրիան տրվում էր Ռումինիային, այնուամենայնիվ նրա տերիտորիալ մյուս հավակնությունները չէին բավարարվում:

Ավստրո-Հունգարիան և Իտալիան, Բուլղարիային Եռյակ դաշինքի ոլորտը ներգրավելու և հուլն-բուլղարական հակասությունները խորացնելու նպատակով, որպես փոխհատուցում Սիլիստրիայի, հանդես էին գալիս Սալոնիկը Բուլղարիային հանձնելու առաջարկով: Հարցի նման լուծումը Հունաստանին կհեռացներ Անտանտից, մյուս կողմից՝ կբավարարվեր Ավստրո-Հունգարիայի Սալոնիկով (որը կպատկաներ Բուլղարիային) Էգեյան ծով դուրս գալու ձգտումը, որը բնավ չէր համապատասխանում Եռյակ համաձայնության տերությունների ռազմաքաղաքական շահերին: Այդ է պատճառը, որ Սալոնիկը Բուլղարիային հանձնելու ավստրո-իտալական առաջարկությունը Պետերբուրգի դեսպանաժողովում վճռական դիմադրության հանդիպեց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից<sup>13</sup>:

Ի վերջո, Հունաստանի և Սերբիայի տերիտորիալ սուր տարաձայնությունները Բուլղարիայի հետ հանգեցրին բալկանյան դաշինքի պառակտմանը: Դեռևս հակաթուրքական պատերազմի ընթացքում Սերբիան գաղտնի բանակցություններ էր սկսել Հունաստանի հետ՝ իրենց դաշնակից Բուլղարիայի դեմ դաշինք կնքելու նպատակով<sup>14</sup>: Հունական կառավարող շեր-

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, № 128, էջ 90, Сазонов-посланнику в Афинах, от 23 ноября, 1912 г.:

<sup>13</sup> Տե՛ս А. А. Могилевич, М. Э. Айрапетян, նշվ. աշխ., էջ 155:

<sup>14</sup> Տե՛ս Сборник дипломатических документов, № 140, стр. 99. Телеграмма Сазонова от 4 апреля 1913 г.



ջանները մեծ նշանակություն էին տալիս Սերբիային՝ ըմբռնելով այն կարևոր դերը, որ կարող էր նա խաղալ Բալկանների ռազմաքաղաքական կյանքում: Պաշինքը Սերբիայի հետ որոշակի հնարավորություններ կստեղծեր Հունաստանի համար՝ ամրապնդելու ազգային անկախությունը և իրականացնելու իր արտաքին քաղաքական պլանները: «Բալկանյան թերակղզում ուժեղ Սերբիայի գոյությունը մի կապիտալ է, որը պատկանում է նաև Հունաստանին»<sup>15</sup>, — նշել է վարչապետ Է. Վենիզելոսը:

Սերբ-հունական բանակցությունների հետևանքով 1913 թ. մայիսի 5-ին Աթենքում ստորագրվեց գաղտնի արձանագրություն, որը նախատեսում էր երկու երկրների միասնական քաղաքականությունը Բուլղարիայի դեմ: Որպես արձանագրության հավելված, մայիսի 14-ին կնքվեց նախնական ռազմական կոնվենցիա: 1913 թ. հունիսի 1-ին Սալոնիկում ստորագրվեց հույն-սերբական դաշինքը և ռազմական կոնվենցիան, որն ուղղված էր նաև Ավստրո-Հունգարիայի դեմ: Սերբիան և Հունաստանը պայմանավորվեցին իրար մեջ բաժանել Վարդար գետից արևմուտք ընկած տարածքը, ինչպես նաև՝ Ալբանիան, և ընդհանուր սահման հաստատել երկու երկրների միջև: Ինչ վերաբերում էր Մակեդոնիային, ապա նրանք համաձայնվեցին այն բաժանել այնպես, որ Բուլղարիային մնա 1912 թ. սերբ-բուլղարական պայմանագրով նախատեսված տարածքի խիստ աննշան մասը<sup>16</sup>:

Հույն-սերբական դաշինքին փաստորեն միացավ Ռումինիան, որը նույնպես տերիտորիալ հավակնություններ ուներ Բուլղարիային պատկանող հարավային Ղոբրուջայի նկատմամբ<sup>17</sup>:

Հույն-բուլղարական լարվածության պայմաններում հունական կառավարող շրջանները Թուրքիային սկսեցին դիտել որպես ապագա դաշնակցի, որը մեծ դեր պետք է կատարեր բուլղարական մարտունակ բանակը ջախջախելու և Սոֆիայի ագրեսությունը Բալկաններում նվազեցնելու գործում:

Ղեկնա Լոնդոնի հաշտության կնքման նախօրեին երիտ-

<sup>15</sup> E. Vénizélos, Cinq ans d'histoire grecque, 1912—1917. P., 1917, p. 51—52.

<sup>16</sup> См. В. А. Жебокрицкий. Болгария во время Балканских войн 1912—1913 гг., Киев, 1961, էջ 166—167.

<sup>17</sup> См. История дипломатии, т. II, էջ 755:



թուրքերին հայտնի դարձավ, որ Բուլղարիայի դեմ դաշինք կնքելու դեպքում հունական կառավարությունը պատրաստ է հրաժարվելու Էգեյան ծովի մի քանի կղզիներից ու ռազմատուգանքից<sup>18</sup>։ Սակայն թուրքական կառավարությունը անմիջապես ընդառաջ չգնաց հունական առաջարկությանը։ Մայիսի 28-ին արտաքին գործերի մինիստր Սաիդ Հալիմ փաշան նըշեց, որ արտաքին իրադրության խիստ բարդության հետևանքով իրենք հարկադրված են ընդունել սպասողական դիրք և առժամանակ հրաժարվել զանազան բնույթի քաղաքական համաձայնություններից<sup>19</sup>։

Աթենքում շտապում էին՝ զգալով հույն-բուլղարական խըզման վերահաս վտանգը։ Մայիսի 30-ին Բեռլինի թուրքական դեսպանը կրկին հեռագրեց, որ հունական կառավարությունը դրսևորում է Թուրքիայի հետ համաձայնություն կայացնելու և Բուլղարիայի դեմ ռազմական դաշինք կնքելու ցանկություն<sup>20</sup>։ Համաձայնության գալուց հետո Հունաստանը 100 հազարանոց բանակ էր կենտրոնացնելու բուլղարների դեմ<sup>21</sup>։

Որպես համաձայնության հիմք, Հունաստանը ճանաչում էր Բուլղարիայից Թրակիան վերանվաճելու Թուրքիայի իրավունքը<sup>22</sup>։ Միաժամանակ Վենիզելոսը խոստանում էր, որ հույն-թուրքական համաձայնության ու դաշինքի կնքման հետևանքով Հունաստանը քաղաքական շրջադարձ կկատարի դեպի Գերմանիան<sup>23</sup>։ Սակայն Հունաստանի առաջարկած պայմանները բնավ չէին բավարարում երիտթուրքերին։ Նրանք պահանջում էին թուրքական ճանաչել ոչ միայն Իտալիայի կողմից 1912 թ. օկուպացված Դոդեկանեզյան արշիպելագը, այլև առաջին բալկանյան պատերազմում Հունաստանի տիրապետության տակ անցած Էգեյան ծովի կղզիները, մասնավորապես՝ նեղուցների շրջանում գտնվող Սամոթրակիան, Իմբրոսը, Լեմնոսը, Թենեդոսը, ինչպես նաև՝ Փոքր Ասիայի ափագծով ձգված Միթիլենը, Բիոսը, Կալիմնոսը, Սամոսը, Կոսը

<sup>18</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 2, էջ 382։

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 383։

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 384։

<sup>22</sup> Տե՛ս Die Grosse Politik der Europäischen Kabinette, 1871—1914. Berlin, 1927, 35. Band, № 13382.

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, № 13371։



և այլն: Երիտթուրքերը խոստանում էին թուրքական գերիշխանության ներքո պահպանել Սամոս կղզու ներքին ինքնավարության իրավունքը: Երիտթուրքերը առաջ էին քաշում նաև Բուլղարիայից Թրակիան հետ նվաճելու պայմանը: Հունաստանը պարտավորվում էր ապագայում բալկանյան երկրների հետ ինքնուրույն քաղաքականություն վարել, սեպարատ դաշինք ու համաձայնություններ կնքել միայն Թուրքիայի համաձայնությամբ: Հունաստանի կողմից այս պայմանների ընդունման դեպքում երիտթուրքերը համաձայնվում էին 120 հազարանոց բանակ հանել Բուլղարիայի դեմ<sup>24</sup>:

Երիտթուրքական կառավարության մի շարք անդամների և մեծ վեզիր Մահմուդ Շեֆքեթի կարծիքով համաձայնությունը Հունաստանի հետ Թուրքիայի համար առավել շահավետ էր դառնում հետևյալ քաղաքական նկատառումներով. նախ, Հունաստանի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու հետևանքով Թուրքիայում բնակվող հույները կթուլացնեն ազգային շարժումը կամ «նվազ վտանգ կներկայացնեն», ապա՝ Բուլղարիայի հանդեպ ձնշում գործադրելու դեպքում կարելի կլիներ տեղի հույներին գրգռել Սոֆիայի կառավարության դեմ: Մեծ վեզիրը կարծում էր, որ Էգեյան ծովի կղզիներին «անկախություն» շնորհելով կարելի կլիներ ընդմիջտ վերացնել երկու երկրների լարված հարաբերությունները: Աթենքի կառավարող որոշ շրջանների՝ գերմանացիների հետ սերտորեն համագործակցելու ձգտումը երիտթուրքերին հույս էր ներշնչում, որ Հունաստանը մոտ ապագայում կկողմնորոշվի դեպի Գերմանիան և այդպիսով կդառնա Գերմանիան Թուրքիայի հետ միացնող կամուրջ: Քաղաքական այս իրավիճակը, ի վերջո, կհարկադրեր Բուլղարիային մոտենալու Թուրքիային<sup>25</sup>: Բեուլինը բարյացակամորեն վերաբերվեց այդ բանակցություններին և աշխատում էր նպաստել համաձայնության գոյացմանը: Անձամբ որոշակի ջանքեր գործադրեց Վիլհելմ II-ը<sup>26</sup>: Միաժամանակ երիտթուրքերը համաձայնության գաղտնի բանակցություններ էին վարում Բուլղարիայի հետ ընդդեմ Հունաստանի<sup>27</sup>:

<sup>24</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 2, էջ 384:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 384—385:

<sup>27</sup> Տե՛ս Die Grosse Politik, 36. Band, № 13373:



Ի վերջո, միջբալկանյան հակասությունների սրումը, որ  
ֆորահրվում էր նաև Կենտրոնական տերությունների խարդա-  
վանքներով, հանգեցրեց նոր պատերազմի: 1913 թ. հունիսի  
29-ին բուլղարական զորքերը հանկարծակի հարձակվեցին  
հունական ու սերբական զորքերի վրա: Սկսվեց 2-րդ բալկան-  
յան պատերազմը: Երիտթուրքերը որոշեցին անմիջապես օգտ-  
վել Բալկաններում ստեղծված քաղաքական նոր իրադրությու-  
նից, որպեսզի խլեն Կորցրած տերիտորիաների թեկուզ որոշ  
մասը և, հնարավորին չափ, թուլացնեն իրենց ռազմաքաղա-  
քական պարտության հետևանքները: Հունաստանի կառավա-  
րող շրջանները ձգտում էին այդ հանգամանքը օգտագործել  
Բուլղարիային գլխովին ջախջախելու, Հարավային Սալեդո-  
նիայից ու Թրակիայից նրան դուրս մղելու և Բալկաններում  
Սոֆիայի ազդեցությունը վերացնելու համար: Այս հարցում  
Հունաստանի և Թուրքիայի կառավարող շրջանների քաղա-  
քական ծրագրերը համընկնում էին:

Հուլիսի 5-ին Աթենք ժամանեց Բեռլինի թուրքական դես-  
պանության խորհրդական Գալիբ Բեմալի բեյը (Սուլեմեզո-  
լու), որը նախկինում Օսմանյան կայսրության դեսպանորդն  
էր Հունաստանում և հայտնի էր որպես թուրք-հունական հա-  
րաբերությունների բարելավման ու համագործակցության ջա-  
տագով: Երիտթուրքական կառավարության կողմից նա օժտ-  
ված էր թուրք-հունական համաձայնության և դաշինքի ստո-  
րագրման արտակարգ լիազորություններով<sup>28</sup>:

Թուրքական լիազոր ներկայացուցիչը Աթենք ժամանեց  
Հունաստանի համար ստեղծված ծանր շրջանում: Բուլղարա-  
կան բանակը հարձակման առաջին իսկ օրվանից հույների  
դեմ տարավ մի շարք հաղթանակներ: Հունիսի 30-ին գրավեց  
Գևգելին և հունական զորքերից մաքրեց Պանգեոնը: Հաջորդ  
օրը, հուլիսի 1-ին, բուլղարական 2-րդ բանակի հրամանատա-  
րությունը իր հիմնական ուժերը կենտրոնացրեց Կուկուշ-նե-  
րովան գծում՝ նախապատրաստելով ռազմաճակատից 35 կմ.  
հեռավորության վրա գտնվող Սալոնիկի գրավումը: Այդպիսով,  
երկօրյա հարձակողական գործողությունների շնորհիվ բուլ-  
ղարական 2-րդ բանակը գրավեց ռազմաճակատի գիծը 130 կմ.  
երկարությամբ՝ Վարդարի վրա գտնվող Գևգելի քաղաքից մին-

<sup>28</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 237:



չև Օրֆոն՝ Էգեյանի ափին<sup>29</sup>: Սակայն հետագա երկու օրերում հունական բանակը նպատակասլաց հարձակումով հետ մղեց բուլղարներին ռազմաճակատի ամբողջ լայնությամբ, բաց Կուկուշի մոտ հաջողություն չունեցավ և կրեց լուրջ կորուստներ: Դրությունը մնում էր անորոշ, և Թուրքիան, հունական կառավարող շրջանների կարծիքով, կարող էր վճռական դեր կատարել պատերազմի մեջ արմատական բեկում մտցնելու գործում: Թուրքական լիազոր ներկայացուցչի հետ հուլիսի 6-ին տեղի ունեցած առաջին իսկ հանդիպման ժամանակ Հունաստանի պետական գործիչները նրան շատ պարզորեն հասկացրին, որ որոշակի պայմաններով իրենք պատրաստ են ստորագրելու Բուլղարիայի դեմ ուղղված համաձայնագիր: Թուրքիայի անհապաղ ելույթը ապահովելու նպատակով Հունաստանը պատրաստ էր Օսմանյան կայսրությանը զիջել Էգեյան ծովի այն կղզիները, որոնք հունական տիրապետության տակ էին անցել առաջին բալկանյան պատերազմի ժամանակ, բացի Քիոս, Սիթիլեն, Սամոս, Իկարիա, Փսարա, Կասոս, Կարպատոս և Կաստելորիզո կղզիներից<sup>30</sup>: Հունական կառավարությունը Թուրքիային զիջում էր նաև իրեն հասանելիք ռազմատուգանքի կեսը<sup>31</sup>: Սակայն այդ զիջումների փոխարեն հունական կառավարությունը պայման էր դնում, որ Ադրիանապոլսի նահանգը վերագրավելու դեպքում թուրքական կառավարությունը ստանձներ այդտեղ բարենորոգումներ անցկացնելու պարտավորությունը<sup>32</sup>: Հունական բնակչության սովոր զանգվածի առկայության պայմաններում բարենորոգումները կապահովեին Հունաստանի ազդեցությունը այդ մարզում<sup>33</sup>: Սակայն թուրքական կառավարությունը պահանջում էր նաև Քիոս և Սիթիլեն կղզիները: Միայն այդ պայմանով էր նա համաձայնվում 120 հազարանոց բանակ հանել բուլղարների դեմ<sup>34</sup>: Ինչ խոսք, որ Բալկաններում ստեղծված բարդ իրադրությունը վերջին հաշվով խիստ հավանական էր դարձնում Թուրքիայի ելույթը:

<sup>29</sup> St'а B. A. Жебокрицкий, նշվ. աշխ., էջ 202:

<sup>30</sup> St'а Galib Kemali bey (Söylemezoğlu), Hattıraları, Atina Sefareti (1913—1916), İstanbul, 1946, էջ 11:

<sup>31</sup> St'а նույն տեղում, էջ 10:

<sup>32</sup> St'а նույն տեղում:

<sup>33</sup> St'а Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 239:

<sup>34</sup> St'а G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 11:



դեռևս Լոնդոնի հաշտության պայմանագրի կնքման նախօր-  
յակին մեծ վեգիր Մահմուդ Շեֆքեթ փաշան նախատեսում էր  
պատերազմ դաշնակիցների միջև, ուստի երիտթուրքերը իրենց  
բանակը պահում էին պատրաստ վիճակում ապագա իրադար-  
ձություններից օգտվելու համար<sup>35</sup>։ Նման պայմաններում կըղ-  
զիների հարցում ձեռք բերված յուրաքանչյուր առաջընթաց  
թուրքերի համար կարող էր լինել դիվանագիտական մեծ հա-  
ջողություն։

Հունաստանի և Սերբիայի ռազմական հաղթանակների հե-  
տևանքով Աթենքի կառավարության դիրքը Թուրքիայի հան-  
դեպ դարձավ նվազ գիջողական. Վենիզելոսը նույնիսկ նշեց,  
որ Բալկաններում ստեղծված քաղաքական նոր հանգամանք-  
ներում թուրք-հունական դաշինքը այնքան էլ կարևոր չէ։ Հու-  
նական վարչապետը անգամ ակնարկեց, որ Բուլղարիայի դեմ  
Թուրքիայի ռազմական ելույթը չի կարող չառաջացնել Ռու-  
սաստանի միջամտությունը<sup>36</sup>։ Այսպիսով, Հունաստանի համար  
ստեղծված բարենպաստ պայմաններում Վենիզելոսը ցանկա-  
նում էր Թուրքիայի ելույթը փոխհատուցել ոչ մեծ գիջումնե-  
րով, ուստի ռազմատուգանքի հարցում շարունակելով պահ-  
պանել նույն մոտեցումը, նա Թուրքիային էր գիջում միայն  
Թասոսը և Կաստելորիզոն, ինչպես նաև իտալացիների կող-  
մից գրավված Դոդեկանեսը։ Հունաստանի վարչապետը միա-  
ժամանակ պահանջեց, որ Թասոս ու Կաստելորիզո կղզիները  
ստանան վարչական բնույթի լայն արտոնություններ<sup>37</sup>։ Հու-  
նաստանի քաղաքական դերը Բալկաններում բարձրացնելու  
նպատակով Վենիզելոսը առաջ քաշեց Սոֆիան հույն-թուր-  
քական զորքերով գրավելու պայմանը<sup>38</sup>։

Հակառակ այս ամենի, Աթենքում թուրքական ներկայացու-  
ցիչը իր կառավարությանը խորհուրդ էր տալիս չխուսափել  
համաձայնությունից։ Կայսրության արտաքին իրադրությունը  
գնահատելով նպաստավոր՝ նա նշում էր, որ օսմանյան բա-  
նակը եթե ի վիճակի է ծավալելու ռազմական գործողություն-  
ներ, ապա պետք է աճապարի վերագրավելու Ադրիանապոլիսը,

<sup>35</sup> St'a Сборник дипломатических документов, № 184. стр. 129—  
130, Гирс-Сазонову, от 16 мая, 1913 г.:

<sup>36</sup> St'a G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 13:

<sup>37</sup> St'a նույն տեղում:

<sup>38</sup> St'a նույն տեղում:



մյուս կողմից համաձայնություն ստորագրելով Հունաստանի հետ, համակերպվի նրա առաջարկած կղզիները հետ ստանալու պայմանին: «Մեր հզորության պայմաններում մի քանի կղզիների կորուստը, անկախ դրանց ունեցած նշանակությունից, մեզ չի կարող վշտացնել», — գրում էր նա<sup>39</sup>: Այնուհետև նա հույս էր հայտնում, որ պատերազմի ընթացքը ի վնաս դաշնակիցների փոխվելու դեպքում հնարավոր կլինի Քիոսի ու Միթիլենի վերաբերյալ որոշում կայացնել ի նպաստ կայսրության<sup>40</sup>:

Բայց Հունաստանի առաջարկած պայմանները չէին գոհացնում երիտթուրքերին: Այդ կապակցությամբ մեծ վեզիրը Աթենքին ուղղված իր պատասխանում նշեց, որ դաշինքի վերաբերյալ Հունաստանի առաջարկած զիջումները շատ չնչին են<sup>41</sup>: Ուստի նա հրահանգեց ջանքեր գործադրել Քիոսն ու Միթիլենը օսմանյան տիրապետության տակ վերադարձնելու համար: Այդ տիրապետությունը կարող էր արտահայտվել Միթիլենում և Քիոսում թուրքական զինված ուժերի առկայությամբ և տեղական բնակչությանը «ինքնավարության լայն իրավունքների» շնորհմամբ<sup>42</sup>:

Թուրքերի հետ տարվող բանակցությունների ընթացքում ռազմաքաղաքական իրադարձությունները Բալկաններում սկսեցին ծավալվել ի վնաս Բուլղարիայի: Հուլիսի 10-ին ռումինական բանակը անցավ Դանուբը և ռազմական գործողություններ սկսեց Հարավային Դոբրուջայում: Այժմ արդեն Թուրքիայի դերը չէր կարող վճռական լինել հույն-սերբական բանակների վիճակը թեթևացնելու գործում: Ստեղծված պայմաններում Հունաստանի կառավարող շրջաններին այլևս չէր շահագրգռում Թուրքիայի ռազմական ելույթը: Ավելին, Վենիզելուսի համոզմամբ, դա միայն վնաս էր հասցնելու իրենց տերիտորիալ ձեռքբերումներին<sup>43</sup>: Հուլիսի 12-ին, տեսակցելով թուրքական ներկայացուցչի հետ, Վենիզելուսը, որպես հրատապ խնդիր, նշեց Հունաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման կարևորու-

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 14:

<sup>40</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>41</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 241:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Տե՛ս G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 25:



թիւնը: Դրա համար նա առաջարկեց կնքել Լոնդոնի արձա-  
նագրութիւնից բխող հույն-թուրքական համաձայնագիր: Իսկ  
այդ նշանակում էր, որ Թուրքիան պետք է ծանաչեր առաջին  
բալկանյան պատերազմում Հունաստանի տարածքային ձեռք-  
բերումները: Այնուհետև հունական կառավարության ղեկավա-  
րը առաջարկեց կնքել բարեկամության համաձայնագիր<sup>44</sup>: Վե-  
նիզելոսը հրաժարվեց կղզիների որոշ մասը Թուրքիային զի-  
ջելու իր նախկին առաջարկից, ուստի հաղորդեց, որ կղզինե-  
րի պատկանելության հարցը պետք է թողնել տերութիւնների  
վճռին<sup>45</sup>: Այս պայմաններում Աթենքի թուրքական լիազոր ներ-  
կայացուցիչը հասկացաւ, որ Թուրքիան այլևս քաղաքական  
կամ տերիտորիալ որևէ ակնկալություն չի կարող ունենալ:  
«Կղզիների ու դաշինքի վերաբերյալ համաձայնության հան-  
գելու մեր ջանքերն այլևս անիմաստ են, — հաղորդեց նա: Առ-  
կա միակ հնարավորությունը նրա հետ դիվանագիտական հա-  
րաբերութիւնների վերականգնումն է»<sup>46</sup>:

Ստեղծված պայմաններում երիտթուրքական կառավարու-  
թիւնը որոշեց աճապարել և օգտվելով խառը իրադրութիւնից,  
մեկ հարվածով հետ վերցնել այն, ինչ հնարավոր էր: «Իրերի  
վիճակը պահանջում էր, — հետագայում գրել է Ջեմալ փա-  
շան, — որպեսզի մենք օգտվեինք ստեղծված հարմար դրու-  
թիւնից և ինքներս հարձակվեինք բուլղարների վրա՝ Ադրիա-  
նապոլիսը մեզ վերադարձնելու համար... Մեր կուսակցության  
բոլոր անդամները ենթադրում էին, որ կառավարութիւնը կըն-  
դունի հենց այդպիսի որոշում և հույս ունեին, որ բանակին  
հարձակման հրաման կտրվի»<sup>47</sup>:

Սակայն սոսկ Ադրիանապոլսի վերագրավումը չէր բավա-  
րարում երիտթուրքական պարագլուխներին: Բացահայտելով  
իրենց ռևանշիստական նպատակները՝ Ջեմալը գրում է. «Մենք  
չէինք կարող բավարարվել միայն Ադրիանապոլսի գրավումով:  
Պարզ էր, որ Մարիցան պետք է մնար թուրքական գետ, իսկ  
Դեդեաղաձը համենայն դեպս պետք է մեզ պատկաներ, որով-  
հետև նա ստեղծում է մեր բնական սահմանը Էգեյան ծովում:  
Երկրորդ. Ադրիանապոլսի անվտանգութիւնը ապահովելու նը-

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>45</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>46</sup> Նույն տեղում. էջ 32:

<sup>47</sup>



պատակով մենք պետք է մեզ վերադարձնեինք Տիմոթիկան և Սաֆֆանտին: Բացի այս, եթե հիշենք, որ Գլումուլչինայի, Իսկեչի և Նրա մերձակայքի բնակչության 85 տոկոսը կազմում են մուսուլմանները, ապա մեր սրբազան պարտականությունն էր տիրել և այդ վայրերը»<sup>48</sup>:

Այնուամենայնիվ, երիտթուրքական կառավարության անդամների մեծամասնությունը վարանում էր ռիսկի դիմել, վախենալով քաղաքական լուրջ բարդություններից, որ կարող էին ստեղծվել Թուրքիայի համար՝ Լոնդոնի հաշտության պայմանագրով հաստատված Էնոս-Միդիա սահմանագիծը խախտելու հետևանքով: «Կառավարության անդամների մեծ մասը, այնուամենայնիվ, ենթադրում էր, որ հարձակումը մեզ համար կարող է ունենալ կործանարար հետևանքներ», — գրում է Ջեմալը<sup>49</sup>: Կառավարող շրջաններում տիրող տարակարծությանը հակառակ, մեծ վեզիր և արտաքին գործերի մինիստր Սաիդ Հալիմ փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթը, ռազմաժողովին մինիստր Ջեմալը և Նրանց կողմնակիցները պնդում էին Բուլղարիայի վրա անհապաղորեն հարձակվելու և ուսանշ վերցնելու իրենց տեսակետը: «Մենք ջանում էինք Նրանց համոզել այն բանում, որ մենք կկորցնենք պետությունը ղեկավարելու բարոյական իրավունքը և ստիպված կլինենք հրաժարական տալ, եթե չորոշենք օգտվել ստեղծված հնարավորությունից և ետ չվերադարձնենք Ադրիանապոլիսը, ինչի համար էլ մենք կատարեցինք պետական հեղաշրջումը»<sup>50</sup>:

Ի վերջո ուսանշիստական տրամադրությունները հաղթանակ տարան: Հուլիսի 16-ին հարձակվելով անպաշտպան բուլղարական սահմանի վրա՝ թուրքական զորքերը առաջացան Ադրիանապոլսի ուղղությամբ, մի քանի օրվա ընթացքում գերավելով Արևելյան Թրակիան, Ադրիանապոլսով հանդերձ:

Թուրքիայի ռազմական ելույթը լրջորեն անհանգստացրեց հունական կառավարությանը, որը բնավ չէր ցանկանում կորցնել այն տարածքները, որոնք Նրան ավելի էին մոտեցնելու օսմանյան մայրաքաղաքին: Թուրքերի և հույների միջև սկսվեց մրցավազք, որի նպատակն էր առավել շուտ խորանալ

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 36—37:



թշնամու տերիտորիան: Այդ հողի վրա նրանց միջև առաջացան գինված բախումներ: Էգեյան ծովափից դուրս մղելով բուլղարներին՝ հույները տենդորեն ամրացնում էին գրավված քաղաքները, մասնավորապես՝ Դեդեադաճը, որին անմիջական սպառնալիք էին ստեղծել թուրքական զորքերը:

Այժմ արդեն, երբ բուլղարները քշված էին Թրակիայից, հունական կառավարությունը առաջարկեց Թուրքիային Ադրիանապոլսի նահանգին շնորհել որոշ ներքին ինքնավարություն: Վճռականորեն առարկելով հունական այդ առաջարկության դեմ՝ երիտթուրքերի օրգան «Թանհինը» գրեց. «Թրակիայի ինքնավարությունը նշանակում է միություն Հունաստանի հետ»<sup>51</sup>: Արդեն Բուլղարիայի դեմ կատարած ռազմական ռեվանշի ժամանակ թուրքական կառավարությունը այդ հարցը լուծեց տեղաբնիկ քրիստոնյա բնակչությանը բնաջնջելով: «Հարձակվելով արևելյան Թրակիայի վրա, — գրում է ռուսական «Նովոյե վրեմյա» թերթը, — օսմանյան բանակը հող է պատրաստում նոր Թուրքիայի համար: Այդտեղ նա ոչնչացնում է քրիստոնյա բնակչությանը, այրում և հողին է հաժախարհեցնում նրանց գյուղերն ու քաղաքները՝ ազատվելով Թուրքիայի համար անցանկալի տարրերից, և այդպիսով բնակչության հիմնական մասով դրանք վերածում զուտ թուրքական մարզերի»<sup>52</sup>: Թերթը նշում էր, որ Չաթալջայից Ադրիանապոլիս հարձակվելու առաջին իսկ օրերին թուրքական զորքերը իրենց ճանապարհին կոտորեցին 15 հազար քրիստոնյաների, հիմնականում՝ հույների: «Բնաջնջելով քրիստոնյա բնակչությանը, — շարունակում է թերթը, — թուրքական կառավարությունը գրաված տերիտորիաներում աճապարում է վերաբնակեցնել մահմեդական փախստականներին, որոնք զավթում են բնաջնջված քրիստոնյաների հողերն ու գույքը: Նա վերադարձնում է նաև Թրակիան լքած ու Փ. Ասիա տեղափոխված մահմեդականներին»<sup>53</sup>: Թերթը նշում է, որ թուրքական բանակների և բաշիբոզուկների կողմից քրիստոնյա բնակչության կոտորածով կառավարությունը միանգամից իրականացնում է երկու նպատակ. վերանում են քրիստոնյա բնակավայրերի

<sup>51</sup> «Речь», 16(29).VII, 1913.

<sup>52</sup> «Новое время», 17(30).VI, 1913.

<sup>53</sup> Նույն տեղում:



արտաքին հատկանիշները և գործեց գլխովին արմատախիլ է արվում թուրքական կառավարությանը անցանկալի բնակչության մի մասը: «Հաղթանակում է բուն թուրքական քաղաքականությունը», — եզրակացնում է թերթը<sup>54</sup>:

Երկրորդ բալկանյան պատերազմը ավարտվեց Բուլղարիայի ռազմական լիակատար պարտությամբ: Հուլիսի 30-ին Բուրանսը: Այդտեղ նորից ցայտուն կերպով արտահայտվեց Բալկաններում գերիշխանության համար պայքարող իմպերիալիստական տերությունների կատաղի մրցակցությունը, որի հետևանքով քննարկվող բոլոր հարցերն էլ ուղղություն և ընթացք էին ստանում նրանց կողմից: Կոնֆերանսում սուր բռնույթ ստացավ Էգեյան ծովի կարևորագույն նավահանգիստներից մեկի՝ Կալալայի պատկանելության խնդրի շուրջ Բուլղարիայի և Հունաստանի միջև ծավալված համառ պայքարը: Հունաստանը իր պահանջները հիմնավորում էր նրանով, որ «Կալալան հունական ազգային միջնաբերդ է Արևելյան Մակեդոնիայում»<sup>55</sup>, որ Կալալան կիզորացներ Բուլղարիային և կթառայեր որպես ռազմական հենակետ՝ անխուսափելի պատերազմի հարատև սպառնալիք ստեղծելով Հունաստանի համար<sup>56</sup>:

Իմպերիալիստական տերությունների հակամարտ շահերի բախումը առանձնապես դրսևորվեց Կալալան վիճարկող երկու երկրների պահանջները պաշտպանելիս: Բուլղարիային իրենց կողմը գրավելու համար Ռուսաստանը և Ավստրիան ձգտում էին հարցը լուծել հոգուտ Սոֆիայի: Իտալական դիվանագիտությունը ևս ուղղված էր Հունաստանի դեմ՝ նպատակ ունենալով ամեն կերպ արգելել նրա, որպես ծովային պետության, տերիտորիալ ընդարձակումը և ուժեղացումը, որը սպառնալիք կստեղծեր իտալական Էքսպանսիային արևելյան Սիշերկրականում<sup>57</sup>:

Կալալայի հարցում Աթենքի կառավարությունը հիմնակա-

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> DDF, 3—VII, № 501, էջ 541—542, Communication de la Légation Grèce, Paris, 13 juillet, 1913.

<sup>56</sup> St'ou E. Venizelos, նշվ. աշխ., էջ 8:

<sup>57</sup> St'ou DDF, 3—VII, № 498, թ. 540, Դը Բիլին՝ Պիշոնին, 29 հուլիսի, 1913 թ.:



նում աջակցություն էր հայցում Ֆրանսիայից, որն իր հերթին կողմնակից էր այդ քաղաքը հունական ճանաչելուն<sup>58</sup>։ Ֆրանսիայի այդ բարյացակամությունը պայմանավորված էր Թուրքիայից ստանալիք ռազմատուգանքից Հունաստանի հրաժարվելու և օսմանյան հանրահռչակ պարտքին մասնակցելու հանգամանքով<sup>59</sup>։ Մյուս կողմից, Ֆրանսիական կառավարությունը մտածում էր, որ այդ քաղաքը Բուլղարիային հանձնելու դեպքում Ժխախտտի ամբողջ արտադրությունը կարող էր բռնագրավվել բուլղարների կողմից<sup>60</sup>։

Ֆրանսիական կառավարությանը չէր կարող չանհանգրստացնել նաև այն պարագան, որ Կալալայի հարցում Գերմանիան բացահայտորեն հանդես էր գալիս Հունաստանի հավակնությունների պաշտպանությամբ։ Նման քաղաքականությունը վիճելիմշտրասեռում սկսեցին շեշտված կերպով դրսևորել մասնավորապես հունական թագաժառանգ Կոստանդինի գահ բարձրանալուց հետո, որը կարողանում էր հմտորեն օգտագործել գերմանական արքունիքի հետ ունեցած իր դինաստիական կապերը։ Հայտնի է Վիլհելմ II-ի հեռագիրը Բուխարեստ՝ Ռումինիայի թագավորին (որը նույնպես պատկանում էր Հոհենցոլերների դինաստիային), ուր խորհուրդ էր տալիս հարցը լուծել Հունաստանի օգտին<sup>61</sup>։ Սակայն վճռականը, անտարակույս, երկու արքունիքների դինաստիական կապը չէր, այլ այն, որ Հունաստանը Գերմանիայի համար ավելի հուսալի դաշնակից կարող էր լինել, քան Բուլղարիան։ Կալալայի խնդրում աջակցելով Հունաստանին, Գերմանիան կարող էր նրան ներքաշել Եռյակ դաշինքի քաղաքականության ոլորտը։ Այդ դեպքում լրջորեն կվտանգվեին Ֆրանսիական շահերը Սերձավոր Արևելքում, և Ֆրանսիան կգրկվեր հունական նավատորմի ստրատեգիական աջակցությունից<sup>62</sup>։

<sup>58</sup> Տե՛ս DDF, 3—VII, № 502, թ. 543, Պիշոնը՝ դեսպաններին, 31 հուլիսի 1913 թ.։

<sup>59</sup> Տե՛ս նույն տեղում, № 420։

<sup>60</sup> Տե՛ս Материалы по истории франко-русских отношений за 1910—1914 гг., М., 1920, էջ 400։

<sup>61</sup> Տե՛ս С. Фей, Происхождение мировой войны, М., 1931, т. I, էջ 318։

<sup>62</sup> Տե՛ս Ю. А. Боев, Ближний Восток во внешней политике Франции (1898—1914), Киев, 1964, էջ 343։



Հունաստանում իրենց քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու ձգտումն էր, որ ստիպում էր Ֆրանսիային ու Գերմանիային հանդես գալ Հունաստանի տերիտորիալ հավակնությունների համառ պաշտպանությամբ: Միաժամանակ, Կապալայի հարցում Հունաստանին պաշտպանելու հանգամանքը լրջորեն վտանգում էր Ֆրանսիայի դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի հետ:

Բուլղարական կառավարությունը քանիցս դիմեց Ֆրանսիային՝ խնդրելով աջակցել մակեդոնական Կապալա, ինչպես և՛ Շտիպ, Ռադովիշ, Կոչանի և Ստրումիցա քաղաքների նըկատմամբ իր պահանջները բավարարելուն: Ընդամին, Ֆերդինանդի կառավարությունը հաշվի էր առնում Բալկաններում նոր խմբավորում ստեղծելու Ֆրանսիայի մտադրությունը և խոստանում էր մասնակցել այդ դաշինքին: Սակայն այն հանգամանքը, որ Բուլղարիան գաղտնի բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ, չէր կարող խիստ բացասական վերաբերմունք չառաջացնել Փարիզում, մանավանդ որ բուլղարական կառավարությունը դաշնակցության առաջարկներ էր ներկայացնում նաև Ավստրո-Հունգարիային<sup>63</sup>:

Ի վերջո, գործն ավարտվեց Հունաստանի հաղթանակով, որի կողմում Գերմանիայից ու Ֆրանսիայից բացի կանգնեց նաև Անգլիան<sup>64</sup>: 1913 թ. օգոստոսի 10-ին Բուխարեստում կնքված հաշտությամբ Հունաստանը ստացավ Հարավային Մակեդոնիան և Արևմտյան Թրակիայի մի մասը՝ Կապալա քաղաքով: Սերբիան ստացավ Մակեդոնիայի մեծ մասը, իսկ Ռումինիան՝ Հարավային Դոբրուջան<sup>65</sup>:

Սեպտեմբերի 29-ին Բուլղարիան Կ. Պոլսում հաշտության պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, նրան զիջելով Արևելյան Թրակիան՝ Ադրիանապոլսով հանդերձ<sup>66</sup>: Այսպիսով, Լոնդոնի պայմանագրով որոշված Էնոս-Միդիա սահմանագիծը դադարեց գոյություն ունենալուց: Հունաստանը, Սերբիան և Ռումինիան կնքեցին պայմանագիր՝ պարտավորվելով փոխադար-

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 344:

<sup>64</sup> Տե՛ս История дипломатии, т. II, էջ 757:

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 757—758:

<sup>66</sup> Տե՛ս В. А. Жебокрицкий, նշվ. աշխ., էջ 249—250:



ձորեն երաշխավորել Բուխարեստի համաձայնագրի պայմանները<sup>67</sup>:

Երկրորդ բալկանյան պատերազմից հետո Հունաստանի սահմանները նախկին 64 հազ. քառ. կիլոմետրից հասան 120 հազարի: Հունաստանի բնակչության թիվը 2 մլն. 800 հազարից հասավ 5 միլիոնի: Ընդլայնվեց երկաթուղային ու խճուղային ճանապարհների ցանցը: Երկաթուղային գծերի երկարությունը հասավ 500 կմ., իսկ խճուղայինը՝ 2000 կմ.<sup>68</sup>: Հունական պետության սահմանների ու բնակչության կրկնապատկումը, երկաթուղային ու խճուղային ցանցի մեծացումը նոր ազդակ էին Հունաստանում կապիտալիզմի և բուրժուական հարաբերությունների հետագա զարգացման համար:

Երկրորդ բալկանյան պատերազմից հետո քաղաքական իրադրությունը Բալկաններում սրվեց նոր ուժով: Ռումինիան, Սերբիան և Հունաստանը՝ բավարարված ձեռք բերած արդյունքներով հանդես եկան Բալկաններում ստեղծված քաղաքական իրավիճակը պահպանելու ձգտումով: Պարտված Բուլղարիան, փոխվրեժի և կորցրած տարածքները հետ վերադարձնելու ցանկությամբ, շրջադարձ կատարեց դեպի Եռյակ դաշինքը:

Երկրորդ բալկանյան պատերազմը ռազմաքաղաքական ուժերի նոր հարաբերակցություն ստեղծեց Բալկանյան թերակղզու պետություններում: Անտանտի տերությունների ազդեցության տակ գտնվող նախկին միասնական բալկանյան դաշինքի փոխարեն այժմ ձևավորվեցին երկու թշնամական խմբավորումներ. մի կողմից Սերբիան, Հունաստանը և Ռումինիան, մյուս կողմից դեպի Եռյակ դաշինքը քաղաքականապես կողմնորոշված Թուրքիան և նրա հետ դաշինքի ձգտող Բուլղարիան<sup>69</sup>:

Երկրորդ բալկանյան պատերազմը նոր հարված հասցրեց Բալկաններում Եռյակ դաշինքի քաղաքական ազդեցությանը: Բուլղարիայի պարտությունն ու թուլացումը «տազնապ ու նյարդայնություն»<sup>70</sup> առաջացրին Բեռլինում և հատկապես՝ Վրեն-

<sup>67</sup> Ст'ю 'Ю. А. Боев, նշվ. աշխ., էջ 345:

<sup>68</sup> Ст'ю Г. Корδάτου, նշվ. աշխ., էջ 341:

<sup>69</sup> Ст'ю История дипломатии, т. 2, էջ 758—759.

<sup>70</sup> Б. Бюлов, նշվ. աշխ., էջ 410:



նայում: Թուրքիան թեև վերանվաճեց Ադրիանապոլիսը և այդպիսով կառչեց Եվրոպային, բայց հիմնականում դուրս չպըրտվեց Բալկաններից: «Շատ ափսոս, — այդ առումով գրել է Բյուլովը, — որ Թուրքիայի վրա ծախսած մեր բոլոր աշխատանքներն ու ջանքերը, ինչպես նաև նրա հետ հաստատած հարաբերությունները իզուր անցան»<sup>71</sup>:

Բուլղարիայի, մասնավորապես՝ Թուրքիայի հետ կապված Կենտրոնական տերությունների ռազմաքաղաքական ծրագրերը խորտակվեցին: «Բալկանյան պատերազմների հետևանքով Բալկանյան թերակղզում իրադրությունը մեզ համար դասավորվեց անբարենպաստ, — գրել է Բյուլովը: Այն ժամանակ, երբ թուրքերը և բուլղարները ջախջախվեցին, Սերբիայի և Ռումինիայի հզորությունն ու ազդեցությունը ուժեղացավ: Այդ տիպի է մեզ և վտանգավոր՝ Ավստրո-Հունգարիայի համար»<sup>72</sup>:

Ստեղծված պայմաններում իմպերիալիստական տերությունները վերսկսեցին դիվանագիտական պայքարը նոր խմբավորումներում իրենց ազդեցությունը ամրապնդելու համար:

Միաժամանակ, այդ պայքարում առանձնահատուկ նշանակություն էր ստանում Օսմանյան կայսրության դերը, որի արտաքին կողմնորոշումը որոշակի ազդեցություն էր ունենալու երկու խմբավորումների ռազմաքաղաքական հաշվեկշռում: Հունաստանի և Օսմանյան կայսրության նկատմամբ տերությունների վարած քաղաքականությունը որոշակիորեն դրսևորվեց Էգեյան ծովի կղզիների հարցում:

Դեռևս 2-րդ բալկանյան պատերազմի վերջնական հետևանքները չպարզված՝ Լոնդոնում շարունակվող դեսպանաժողովում օգոստոսի 1-ին երկարատև վիճաբանություններից ու քննարկումներից հետո, ամփոփելով Էգեյան ծովի կղզիների վերաբերյալ մեծ տերությունների տեսակետները, Էդ. Գրեյը առաջարկեց հետևյալ լուծումը. Հունաստանին են անցնում հունական ռազմածովային ուժերի կողմից գրավված հունական բնակչությամբ կղզիները, Թուրքիային՝ Դարդանեյի շրջանում գտնվող Թենեդոսը և Իմբրոսը: Տերությունները համաձայնվում էին նաև Թուրքիային գիշել Դոդեկանեզյան արշիպելագը, եթե նա իր զորքերը դուրս բերեր նախկին աֆրիկյան

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 411:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 413:



նահանգներ Տրիպոլիտանիայից ու Կիրենայից և դրանք վերջնականապես հանձներ Իտալիային, ինչպես նաև Բուլղարիային վերադարձներ 2-րդ բալկանյան պատերազմում վերադարձված Ադրիանապոլիսը: Միաժամանակ, Թասոս կղզին տրվում էր Բուլղարիային<sup>73</sup>:

Լոնդոնի դեսպանաժողովում էդ. Գրեյի առաջարկած ծրագիրը հաջողություն չունեցավ, իսկ քաղաքական իրադարձությունների հետագա զարգացումը նոր բարդություններ ստեղծեց կղզիների հարցի վերջնական կարգավորման գործում: Փաստորեն ընկնելով մեծ տերությունների հովանավորության տակ, Էգեյան ծովի կղզիները դարձան մանր դրամ նրանց խոշոր քաղաքական պայքարում<sup>74</sup>:

Հետագայում, 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանում կնքված հաշտության պայմանագրով, Թուրքիան ստացավ Իմբրոսը և Թենեդոսը և Էգեյան ծովափից մինչև 3 մղոն հեռավորության վրա գտնվող կղզիները: Դոդեկանեզյան արշիպելագը տրվեց Իտալիային: Էգեյան ծովի մնացյալ կղզիները, այդ թվում նաև Լեմնոսը, Սամոթրակիան, Սիթիլենը, Քիոսը, Սամոսը անցան Հունաստանին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Դոդեկանեզյան արշիպելագը նույնպես տրվեց Հունաստանին:

Երկրորդ բալկանյան պատերազմից հետո թուրք-հունական հարաբերությունները շարունակում էին լարված մնալ: Բուլղարիայի դեմ տարած հաղթանակը և Ադրիանապոլսի վերանվաճումը որոշակիորեն ամրապնդեց երիտթուրքերի ներքին քաղաքական դրությունը և լիցքավորեց նրանց արտաքին քաղաքական եռանդը: Ուստի Հունաստանի հետ հաշտության բանակցություններում նրանք կրկին անցան ուժի դիրքերից ելնող քաղաքականության: Ժայռահեղ իթթիհատականների օրգան «Թասֆիր-ը Էֆքյար» թերթը սպառնաց, որ եթե Հունաստանը կղզիների հարցում չընդունի Թուրքիայի պահանջները, ապա կդապատարտվի կորցնելու Սալոնիկը և Էպիրոսը՝ մինչև նախկին սահմանները<sup>75</sup>: Երիտթուրքերին օգնում էր

<sup>73</sup> Տե՛ս DDF, 3—VII, № 516, էջ 559—560, Պոլ Կամբոնը՝ Պիշոնին, 1 օգոստոսի, 1913 թ.:

<sup>74</sup> Տե՛ս Փ. И. Нотович, նշվ. աշխ., էջ 113:

<sup>75</sup> Տե՛ս «Le Temps», 1.IX.1913:



այն հանգամանքը, որ բուլղարական կառավարող շրջանները Բուխարեստի հաշտության պայմանները վերացնելու համար համագործակցության էին ձգտում Օսմանյան կայսրության հետ: Թուրք-բուլղարական հաշտության պայմանները մշակելու ընթացքում բուլղարական կողմն առաջարկեց երկու երկրների միջև կնքել ռազմական դաշինք: Ծուտով երկուստեք մշակվեց այդ դաշինքի նախագիծը: Դա հարձակողական և պաշտպանական մի պայմանագիր էր, որն ուղղված էր Հունաստանի և Սերբիայի դեմ<sup>76</sup>: Ինչ վերաբերում էր տերիտորիալ ձեռքբերումներին, որ տեղի էին ունենալու Հունաստանի դեմ Թուրքիայի ու Բուլղարիայի համատեղ ռազմական ելույթի դեպքում, ապա բանակցող երկրները հետևյալ կերպ էին տնօրինելու գրավված հողերը: Եթե Բուլղարիան գրավեր Կավալան ու Դրաման, ապա Դեդեադաձը պետք է անցներ Թուրքիային, իսկ բուլղարների՝ իրենց սահմանը մի կողմից մինչև Ստրումա, Մոնաստիր և Օխրիդա, իսկ մյուս կողմից մինչև Ուսկյուբ (Կոսովո) ընդարձակելու դեպքում, թուրքերը ստանալու էին արևմտյան Թրակիան՝ Կարա-Սու գետով հանդերձ: Այնուհետև, եթե Բուլղարիան նվաճեր Սալոնիկը, Կարաֆերին և Վոդենան, ապա թուրքերը հասնելու էին մինչև Ստրումա գետը<sup>77</sup>:

Ամփոփելով Հունաստանի դեմ ընդհանուր ճակատ կազմելու շարժառիթները՝ երիտթուրքերի պաշտոնական օրգան «Թանինը» նշում էր. «Ծափերի ընդհանրությունը, որ գոյություն ունի Թուրքիայի ու Բուլղարիայի միջև, ռևանշի նույն տրամադրությունը Մակեդոնիայի ու կղզիների խնդրում, ոգեշնչում է երկու երկրներին»<sup>78</sup>:

Թուրք-բուլղարական համաձայնության ուղղությամբ կատարվող քայլերը անդրադառնում էին թուրք-հունական հաշտության բանակցությունների վրա: Թուրքական կողմը, ելնելով Բուլղարիայի հետ համագործակցելու հեռանկարից, ձրգձրգում էր հաշտության պայմանագրի կնքմանը, հուսալով մոտ ապագայում գեներալ ուժով լուծել կղզիների հարցը:

Թուրք-բուլղարական մերձեցման հեռանկարը հնարավորու-

<sup>76</sup> *SH* «Джемаль паша, նշվ. աշխ., էջ 43:

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>78</sup> «Le Temps», 24.I.1914:



թիւն տվեց երիտթուրքերին Հունաստանին ահաբեկել կազմավորվող խմբավորումով: Պահանջելով վերադարձնել Էգեյան ծովի կղզիները՝ երիտթուրքերը սպառնում էին, որ հակառակ դեպքում Հունաստանը և նրա դաշնակից Սերբիան կենթարկվեն թուրք-բուլղարական միացյալ ուժերի հարձակմանը: Արտահայտելով այդ տրամադրությունները, թուրքական «Թերջուման-ը հաքիքաթ» թերթը գրում էր. «Հունական կառավարությունը պետք է հասկանա, որ եթե Թուրքիան փոխհատուցման լայն հողի վրա համաձայնություն ստորագրի Բուլղարիայի հետ, ապա Հունաստանը կկորցնի ոչ միայն Կափալան ու Սալոնիկը, այլև կղզիների մի մասը»<sup>79</sup>:

Թուրք-հունական հաշտության բանակցություններում լուրջ տարաձայնություններ կային մի շարք կարևոր այլ հարցերում, օրինակ՝ վակուֆների, սուլթանի և կայսերական տան անդամների անշարժ սեփականության պահպանման և այլն: Թուրքիան պահանջում էր, որ Հունաստանին անցած տարածքներում որպես վակուֆներ ձանաչվեին բոլոր նախկին պետական թուրքական հողերը: Նման պահանջի ընդունման դեպքում հունական իշխանությունը Մակեդոնիայում կդառնար սոսկ անվանական, քանի որ վակուֆները մահմեդական կրոնական համայնքների սեփականությունն էին և ազատ էին պետական հարկերից: Հունական կառավարությունը և հույն բուրժուազիան կգրկվեին Մակեդոնիան տնտեսապես շահագործելու հնարավորությունից: Մակեդոնիայում, հանձինս վակուֆների, պահպանվելու էր ֆեոդալական շահագործում, որը խոշոր արգելք էր բուրժուական հարաբերությունների զարգացմանը:

Վերջապես 1913 թ. նոյեմբերի 13-ին Աթենքում կնքվեց թուրք-հունական հաշտության պայմանագիրը և նույն օրն իսկ վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները: Բոլոր պայմանագրերն ու համաձայնությունները, որ կնքվել էին նախքան դիվանագիտական հարաբերությունների խզումը, նույնությամբ մտան ընթացքի մեջ: Երկու կողմերն էլ ըստացան հյուպատոսարանները վերականգնելու և իրավական դեմքեր նշանակելու փոխադարձ իրավունք: Հունաստանին անցած տարածքների մահմեդական բնակիչները դարձան հունա-

<sup>79</sup> «С. Петербургские ведомости», 13(30).IX, 1913.



հայատակներ: Հունական կառավարությունը պարտավորվեց հարգել նրանց սեփականատիրական իրավունքները, սովորույթները, հավատը, կրոնական արարողություններն ու ծեսերը, ինչպես նաև անձեռնմխելի թողնել առկա ու ապագա մահմեդական համայնքների ինքնավարությունն ու հիերարխիկ կառուցվածքը, ճանաչել նրանց պատկանող շարժական ու անշարժ սեփականությունը, վակուֆները: Մահմեդական բնակիչները ստացան երեք տարվա ընթացքում Հունաստանի սահմանները թողնելու և օսմանահայատակ դառնալու իրավունք: Չնայած դրան, նրանք մնում էին այդտեղ թողած սեփականության տերերը: Հունական կառավարությունը ճանաչում էր Հունաստանում գտնվող սուլթանի ու կայսերական տան անդամների անշարժ սեփականության իրավունքը<sup>80</sup>: Համաձայնություն կայացվեց նաև այլ հարցերի շուրջ:

Այսպիսով, Աթենքի հաշտության պայմանագիրը կարգավորեց թուրք-հունական հարաբերությունների մի շարք հարցեր: Ամենահիմնականը, սակայն, այն էր, որ վավերացվեցին Հունաստանի տարածքային ձեռքբերումները Բալկանյան թերակղզում: Սակայն երկու պետությունների համար էլ հաշտության պայմանագիրն ուներ խոցելի կողմ. դա Էգեյան կղզիների հետագա ճակատագրի անորոշությունն էր: Չկարողանալով հասնել վերջնական համաձայնության՝ երկու կողմերը հանգեցին կղզիների հարցը տերությունների վճռին ներկայացնելու որոշմանը:

Թուրք-հունական հաշտության պայմանագիրը 4. Պոլսում ընդունվեց դժգոհությամբ: Երիտթուրքական կուսակցության գործիչ Է. Կարասոն, որը Սոֆիայում բանակցություններ էր վարել հակահունական ռազմական դաշինքի շուրջը, թուրք-հունական հաշտության վերաբերյալ հայտարարեց, որ այն կրում է սոսկ ժամանակավոր բնույթ<sup>81</sup>: Թուրքական կառավարող շրջանների դժգոհությունը հիմնականում բխում էր կղզիների հետագա ճակատագրի անորոշությունից: «... Կղզիների հարցը դեռևս չի լուծվել, իսկ այն մեզ համար հանդիսանում է հիմնական կենսական հարց, — գրում էր թուրքա-

<sup>80</sup> St' u St. Strupp, La situation internationale de la Grèce (1821—1917), NCI, Zurich, 1918:

<sup>81</sup> St' u DDF, 3—VIII, № 505, էջ 639, Պոլ Կամբոնը՝ Պիշոնին, 19 նոյեմբերի, 1913 թ.:



կան «իկդամ» թերթը, — ուստի կնքված հաշտությանը հակառակ, երկու երկրների հարաբերությունները չեն կարող անմիջապես մտնել նորմալ հունի մեջ: Բալկանյան թերակղզում կայուն խաղաղություն կարող է հաստատվել կղզիների հարցի վերջնական լուծման դեպքում, և այդ հարցը պետք է լուծվի այնպես, որպեսզի երաշխավորվեն Օսմանյան կայսրության իրավունքները և կենսական շահերը»<sup>82</sup>:

Կղզիների հարցի միակ լուծումը, ըստ երիտթուրքերի, կայանում էր օսմանյան սյուզերենության վերականգնման մեջ Փ. Ասիայի ափագծով ձգված բոլոր կղզիներում՝ Միթիլենից մինչև Ռոդոս: Երիտթուրքերը Հունաստանին էին թողնում միայն Դոդեկանեսյան արշիպելագի մի շարք կղզիները, որոնք գրավված էին իտալացիների կողմից, և Սամոթրակիան: Երիտթուրքերը խոստանում էին թուրքական գերիշխանությանը վերադարձված Էգեյան կղզիներին շնորհել «ինքնավարության լայն իրավունքներ»: Նրանց համոզմամբ հարցի նման լուծումը կվերականգներ ներդաշնակությունը Թուրքիայի և Հունաստանի միջև<sup>83</sup>:

Կղզիների հարցում դրական արդյունքների հասնելու նըպատակով հունական կառավարությունը որոշակի ջանքեր գործադրեց ապահովելու եվրոպական երկրների ռազմաքաղաքական ու դիվանագիտական աջակցությունը: 1913 թ. դեկտեմբերից մինչև 1914 թ. փետրվար ամիսը վարչապետ Է. Վենիզելոսը այցելեց եվրոպական մայրաքաղաքները, այդ թվում՝ և Պետերբուրգ: Բուխարեստում նա համաձայնության եկավ Սերբիայի ու Ռումինիայի հետ: Սերբական կառավարության ղեկավար Պաշիչը հավաստեց, որ Հունաստանի վրա որևէ տերության հարձակման դեպքում Սերբիան հանդես կգա ի պաշտպանություն իր դաշնակցի<sup>84</sup>: Մյուս կողմից, ռումինական կառավարությունը հայտարարեց, որ բուլղարական տարածքով Հունաստանի վրա թուրքական զորքերի հարձակման դեպքում Ռումինիան այդ կհամարի որպես Բուխարեստի տրակ-

<sup>82</sup> «С. Петербургские ведомости», 7(20), XI, 1913.

<sup>83</sup> Տե՛ս DDF, 3—IX, № 142, էջ 162, Բոպպը՝ Դումերգին, 24 հունվարի, 1914 թ.:

<sup>84</sup> Տե՛ս МОЭИ, с. III (1914—1917), т. I(14.I—4.VIII.1914), № 105, стр. 166, Арсеньев.—Сазонову от 23/10 февраля 1914 г.:

<sup>85</sup> Նույն տեղում:



տատի խախտում<sup>85</sup>: Սերբիայի և Ռումինիայի նման դիրքավորման հետևանքով Բալկաններում «նվազ հավանական դարձավ Թուրքիայի ռազմական ելույթի վտանգը»<sup>86</sup>:

Թուրքական ագրեսիան կանխելու գործում, սակայն, ամենավճռական նշանակությունն ունեցավ Ռուսական կայսրությունը:

Ռուսաստանը շահագրգռված էր հունական ազգային տարածքների քաղաքական միավորման և միասնական ուժեղ հունական պետության ստեղծման խնդրում: Ռուսական դիվանագիտության ղեկավարները լիովին համոզված էին, որ ծառացած լուրջ դժվարություններին հակառակ, Հունաստանի միավորումը ոչ թե անիրականանալի է, այլ սոսկ ժամանակի հարց է: Ինչպես նշում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության պաշտոնաթերթը, «Մեծ Հունաստանի» վերականգնումը և մայր հայրենիքի հետ բոլոր մարզերի միավորումը, ուր գերակշռում է հույն բնակչությունը, անխուսափելի է մոտ կամ հեռու ապագայում»<sup>87</sup>: Ռուսաստանում լիափույս էին, որ ի վերջո Հունաստանի հետ կմիավորվեն Էգեյան ծովի բոլոր կղզիները, այդ թվում և Ռոդեկանեզյան կղզիախումբը, Բալկանյան թերակղզու հունական հողերը՝ ներառյալ Հյուսիսային Էպիրոսը<sup>88</sup>:

Հունաստանը համարելով Թուրքիային հակակշիռ ուժ՝ ռուսական դիվանագիտությունը չթաքնված գոհունակությամբ էր դիտում մասնավորապես հունական ռազմաժողային ուժերի աճը: Գնահատելով Հունաստանի դերը՝ արտաքին գործերի մինիստր Սազոնովը նշում էր. «Քաղաքական տեսակետից մենք չենք կարող չհետաքրքրվել Թուրքիայի և Հունաստանի ծովային մրցակցությամբ, և մեզ համար ցանկալի է լավագույն հարաբերությունների պահպանումը Հունաստանի հետ, մանավանդ եթե նա իրոք դառնա հզոր ծովային տերություն»<sup>89</sup>:

Սակայն քաղաքական մի շարք շարժառիթներ, որոնք բխում էին ռուս-բուլղարական հարաբերություններից, հարկա-

<sup>85</sup> Նույն տեղում:

<sup>87</sup> "Journal de St.-Petersbourg", 26.I.(8.II).1914.

<sup>88</sup> Նույն տեղում:

<sup>89</sup> МОЭИ, с. III (1914—1917), т. I (14.I—4.VIII.1914), № 85, стр. 140. Докладная записка Сазонова—Николаю II-ому от 26/13 января 1914 г.



որում էին Ռուսաստանին տվյալ ժամանակաշրջանում խուսափել Հունաստանի հետ որևէ պարտավորեցուցիչ համաձայնագիր կնքելուց: Այնուամենայնիվ, Պետերբուրգում Վենիզելուսին ցույց տրվեց անկեղծ և բարյացակամ ընդունելություն, իսկ ցարը նրան հավաստիացրեց, որ Հունաստանը կարող է հուսալ Ռուսաստանի աջակցությունը բոլոր հանգամանքներում<sup>90</sup>:

Թուրքական կառավարությունը ևս փորձեց ստանալ ռուսական դիվանագիտության աջակցությունը: Նկատի ունենալով նեղուցների կարևորությունը Ռուսաստանի համար, թուրքական կառավարողները կրկին փորձեցին Ռուսաստանի հետ մերձենալ և կղզիների հարցում ստանալ վերջինիս օժանդակությունը: Սակայն Գերմանիայի փաստացի դաշնակից դարձած երիտթուրքերի դիվանագիտական ճարպիկ խաղը Պետերբուրգում ընդունվեց հեգնանքով:

Նեղուցների ուժիմի նախատեսվող փոփոխությունը կենսական նշանակություն ուներ Ռուսաստանի համար, իսկ այն կարող էր կատարվել եվրոպական բոլոր տերությունների համաձայնությամբ, և, ինչպես ցույց էր տվել փորձը, այդ հարցում Ռուսաստանը հանդիպում էր նրանց համառ ու անկոտրում դիմադրությանը: Ուրեմն, նեղուցների հարցում ձեռք բերված թուրք-ռուսական համաձայնությունը կլիներ ձևական և իրավական ուժ չէր ունենա: Այդ է պատճառը, որ Սազոնովը կտրականապես հրաժարվեց թուրքական պայմանները քննարկելուց և Կ. Պոլսի իր դեսպանին ուղղած պատասխանում նշեց. «Մենք հնարավոր չենք համարում բավարարել կղզիների հարցում Հունաստանի վրա ներգործելու Թուրքիայի խնդրանքը»<sup>91</sup>:

Կղզիների հարցում Ռուսաստանի օժանդակությունը ստանալու թուրքական կառավարության փորձերը հետագայում ևս ավարտվեցին անհաջողությամբ:

1914 թ. փետրվարի 24-ին մեծ վեզիրը հունական կառավարությանը առաջարկեց ուղղակի բանակցություններ սկսել Էգեյան ծովի կղզիների հարցի շուրջ: Ընդ որում նա նշեց,

<sup>90</sup> Տե՛ս նույն տեղում, տ. I, № 172, стр. 211, Венизелос-греческому королю, от 4 II (22.I), 1914 г.:

<sup>91</sup> Նույն տեղում, տ. I, № 108, стр. 169, Гулькевич-Сазонову, от 24/II февраля, 1914 г.: № 109, стр. 170, Сазонов-Гирсу, от 25/12 февраля, 1914 г.



որ թուրքական կառավարությունը պատրաստակամություն է հայտնում հունական ծանաչել արշիպելագի Փսարա, Իկարիա, Լևիտա, Աստիպալեյա, Կարպատոս և Կասոս կղզիները, իսկ Փ. Ասիայի ափագծի խոշոր կղզիները շարունակելու են կազմել կայսրության բաղկացուցիչ մասը<sup>92</sup>: Թուրքական կառավարությունը ենթադրում էր, որ նման պայմանները կգոհացնեն հունական կառավարությանը: «Հուսով ենք, — նշում էր մեծ վեզիրը, — որ իր տիրապետության տակ անցած լայնարձակ տարածքների դիմաց Հունաստանը հեշտությամբ կհամաձայնվի վերոհիշյալ կղզիների փոխանակմանը»<sup>93</sup>:

Սակայն ափագծի կղզիների փոխանակումը արշիպելագի փոքր կղզիների մի մասի հետ բոլորովին ձեռնտու չէր հույներին: Թուրքական կառավարության առաջարկության վերաբերյալ նույնիսկ թուրք պատմաբաններն են նշում, որ դա միանգամայն անընդունելի էր Հունաստանի համար, քանի որ փոխանակման ենթակա վեց կղզիներից առաջին երկուսը, տերությունների որոշմամբ, արդեն տրված էին Հունաստանին, իսկ վերջին չորսը գտնվում էին իտալացիների ձեռքին և Քիոսի ու Միթիլենի համեմատությամբ բացարձակապես ոչ մի արժեք չէին ներկայացնում<sup>94</sup>: Այնուամենայնիվ, Վենիզելուսը ենթադրում էր, որ թուրքական առաջարկության մեջ պետք է հիշատակվեր նաև Ռոդոս կղզին<sup>95</sup>: Մյուս կողմից, կղզիների հարցում դրական լուծում ստանալու համար Հունաստանը, Եռյակ դաշինքի ծնշմամբ, հարկադրված էր հրաժարվել հյուսիսային Էպիրոսից՝ հոգուտ Ալբանիայի: Մինչդեռ Աթենքի կառավարությունը նոր զիջումների գնալ չէր կարող, որովհետև նման փոխանակումը կառավարության դեմ կգրգոեր հասարակական կարծիքը, որն առանց այն էլ լրջորեն հուզված էր Էպիրոսում կատարվող զիջումների պատճառով<sup>96</sup>: Ուստի մարտի 6-ին հանդիպելով թուրքական դեսպանի հետ՝

<sup>92</sup> Տե՛ս G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 154—155:

<sup>93</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>94</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 264:

<sup>95</sup> Տե՛ս G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 155:

<sup>96</sup> *Ст"в МОЭИ*, с. III (1914—1917), т. I (14, 1—13.III.1914), № 370, էջ 485, Гирс-Сазонову, от 3.III./18.II, 1914 г.:



վենիգելուսը նշեց, որ առաջարկվող պայմանները շատ հեռու են գոհացուցիչ լինելուց<sup>97</sup>:

Հունական կառավարությունը պատրաստակամություն էր հայտնում երիտթուրքերի հետ բանակցել միայն կղզիների հետ առնչվող մասնակի հարցերի շուրջ, ինչպես, օրինակ, մաքսային գոյության դեմ պայքարելու, հյուպատոսների փոխարեն սուլթանական կոմիսարներ նշանակելու, մահմեդական բնակչությանը հիմնավոր երաշխիքներ շնորհելու և այլն<sup>98</sup>: Հունաստանի արտաքին գործերի մինիստր Ստրետլը ապրիլի 1-ին դեսպան Գալիբ Բեյին հաղորդեց, որ հունական կառավարությունը պատրաստ է լայն իրավասություններով թուրքական կոմիսար նշանակել Քիոսում և Միթիլենում<sup>99</sup>: Մեծ վեզիրը, մերժելով հունական այդ առաջարկը, համառում էր կղզիները փոխանակելու իր տեսակետի վրա<sup>100</sup>:

Կղզիների հարցում Հունաստանի հետ համաձայնության հասնելու համար մարտի սկզբին թուրքական կառավարությունը դիմեց Սերբիայի և Ռումինիայի միջնորդությանը: Վերջիններս, ելնելով Բուլղարիային մեկուսացնելու անհրաժեշտությունից, շահագրգռված էին թուրք-հունական շուտափույթ համաձայնություն կնքելու: Սերբական կառավարությունը իր դաշնակից պետության անունից թուրքերին առաջարկեց Էգեյան ծովի մի քանի կղզիներ օսմանյան տիրապետության տակ թողնելու դիմաց Հունաստանին շնորհել օսմանյան հույներին ու պատրիարքարանին հովանավորելու որոշ իրավունքներ: Բայց երիտթուրքերը կտրականապես մերժեցին համաձայնության այդպիսի հիմքը: Բայուրը, մեկնաբանելով այդ առաջարկությունը, գրում է, որ դրա իրականացման դեպքում Հունաստանը ձեռք կբերեր կայսրության ներքին գործերին խառնվելու այնպիսի լայն իրավունքներ, որոնցից չէր օգտվում մեծ տերություններից և ոչ մեկը: «Հետևաբար, — եզրափակում է նա, — անհնարին էր խորհրդածել անգամ նման մի առաջարկության շուրջը»<sup>101</sup>:

Ռումինական կառավարությունը առանձին շահագրգռվա-

<sup>97</sup> Տե՛ս G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 155:

<sup>98</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 157:

<sup>99</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 159:

<sup>100</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 161:

<sup>101</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մաս 3, էջ 266:



ծությամբ ներգրավվեց թուրք-հունական հարաբերություններում միջնորդի դեր կատարելու և նրանց միջև համաձայնություն կայացնելու գործում՝ հետապնդելով Օսմանյան կայսրության, Հունաստանի և իր միջև հատուկ դաշնակցային պայմանագիր ստորագրելու նպատակ<sup>102</sup>։ Սակայն ձախողվեց նաև թուրք-հունական համաձայնություն կայացնելու Ռումինիայի միջնորդությունը<sup>103</sup>։

Քաղաքական ու դիվանագիտական պայքարին զուգահեռ, Թուրքիան, հավատարիմ իր ռազմատենչ սովորություններին, շարունակում էր ռևանշիստական պատրաստությունները։ Հուլյան չունենալով բանակցություններով հասնել հաջողության՝ պատրաստվում էր հարձակվել Քիոսի և Միթիլենի վրա։ Թուրքական մամուլը աղմկում էր կղզիների նկատմամբ թուրքական իրավունքների մասին և կոչ էր անում «շարունակել Ադրիանապոլսի գրավման փառավոր քաղաքականությունը»<sup>104</sup>։ Ռուսական զինվորական ներկայացուցիչը մարտի 19-ին հաղորդում էր. «Հունաստանի հանդեպ թուրքական կառավարության թշնամական վերաբերմունքը շարունակում է մնալ ուժեղ, քան երբևէ։ Կ. Պոլսում պատրաստ են օգտագործելու առաջին իսկ առիթը, որպեսզի պատերազմ սկսեն»<sup>105</sup>։

Էգեյան կղզիները Հունաստանից վերագրավելու համար թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ իր նավատորմը վերանորոգելուն և համալրելուն։ Անհապաղորեն վերանորոգման կանգնեցին «Բարբարոսա», «Տուրդուտ» և «Մեսուդիե» ռազմանավերը։ Սակայն թուրքական ռազմածովային մինիստրության ու, մասնավորապես, նրա ղեկավար Ջեմալ փաշայի գլխավոր նպատակն էր Անգլիայում իրենց պատվերով կառուցվող «Սուլթան Օսման» և «Ռեշադիե» ռազմանավերի ջրարկումը, որոնց հետ այնքան մեծ հույսեր էին կապում նրանք։ Այնուհետև, 1914 թ. ապրիլին թուրքական կառավարությունը անգլիական «Արմատորնգ» և «Վիկկերս» ֆիրմաներին պատվիրեց վեց ականակիր, երկու սուզանավ և նորագույն սիստեմի մեկ դրեդնոտ, որին տրվեց «Սուլթան

<sup>102</sup> SH" ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4261, л. 42:

<sup>103</sup> SH" МОЭИ, с. III (1914—1917), т. II, № 152, стр. 200, Посланник в Бухаресте-Сазонову, от 4.IV.22.III, 1914 г.:

<sup>104</sup> «Le Matin», 16.III, 1914:

<sup>105</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 2964, л. 20.



Մեհմեդ Ֆաթիհ» անունը: Միաժամանակ, այդ ֆիրմաներին պատվիրվեցին ուազմանյութեր՝ հին նավերի համար<sup>106</sup>: Որոշ ժամանակ անց, Թուրքիայի ուազմաժողովային մինիստրությունը նույն անգլիական ուազմական ֆիրմաներին պատվիրեց չորս թեթև հաժանավ և չորս ականակիր: Հենց այդ ժամանակ էլ թուրքական պառլամենտը հաստատեց Ջեմալ փաշայի կողմից մշակված նոր ուազմաժողովային ծրագիրը, որը նախատեսում էր թուրքական նավատորմը համալրել նոր դրեդնոուտներով<sup>107</sup>:

Թուրքական կառավարությունը 1914 թ. գարնանը պատվերներ տվեց նաև Ֆրանսիական ուազմական ֆիրմաներին: Վերջիններիս հետ ունեցած բանակցությունների արդյունքը եղավ այն, որ դրանք համաձայնվեցին Թուրքիայի համար կառուցել վեց կործանիչ, իսկ «Կրեզո» ֆիրման՝ երկու սուզանավ<sup>108</sup>:

Անգլիայում և Ֆրանսիայում պատվիրված այդ ուազմանավերը, ինչպես նաև «Ֆաթիհ» դրեդնոուտը պատրաստ էին լինելու 22 ամիս հետո: «Սուլթան Օսման» դրեդնոուտը թուրքական ջրերն էր ժամանելու 1914 թ. հուլիսի վերջին, իսկ «Ռեշադիեն»՝ 1915 թ. սկզբին: Ռազմաժողովային նավատորմի նոր ծրագրի իրականացման հետևանքով երիտթուրքերը հույս ունեին 1916 թ. իրենց տրամադրության տակ ունենալ նոր նավատորմ՝ բաղկացած երեք դրեդնոուտներից, երկու թեթև հաժանավերից, տասներկու ականակիրներից և չորս սուզանավերից, որոնք նախկին գծանավերի հետ գերակշռություն էին ստանալու հունականի հանդեպ<sup>109</sup>: «Նոր նավեր կառուցելու և հները վերանորոգելու շտապողականությունը, — նշել է ուազմաժողովային մինիստր Ջեմալ փաշան, — պայմանավորվում էր մեր նավատորմը հունականից հզոր դարձնելու ցանկությամբ»<sup>110</sup>:

Թուրքական ուազմաժողովային նավատորմը վերակառուցելու և հզորացնելու միջոցառումները մեծ տազնապ առաջացրին չունաստանում: Այնտեղ շատ լավ էին հասկանում, որ օգտվելով նավատորմի գերակշռությունից, Թուրքիան պետք է շտապեր վերագրավելու կղզիները: Էգեյան ծովում գերիշխանու-

<sup>106</sup> Տե՛ս Джемаль паша, նշվ. աշխ., էջ 77:

<sup>107</sup> Տե՛ս А. С. Силин, նշվ. աշխ., էջ 120:

<sup>108</sup> Տե՛ս Джемаль паша, նշվ. աշխ., էջ 78:

<sup>109</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>110</sup> Նույն տեղում:



թյունը պահպանելու և թուրքական ագրեսիան կանխելու մը-  
տահոգությամբ հունական կառավարությունը ևս կատարեց իր  
նավատորմը համալրելու և հզորացնելու մի շարք միջոցա-  
ռումներ: Ֆրանսիային պատվիրվեց մեկ դրեդնոտ և վեց ա-  
կանակիր: Նույնքան ալանակիրներ պատվիրվեցին նաև Գեր-  
մանիային<sup>111</sup>:

Անդրադառնալով հունական նավատորմը հզորացնելու աշ-  
խատանքներին, թուրքական ռազմածովային մինիստրը գրում  
էր. — «Հունական նավատորմի համալրումը մեզ չէր անհան-  
գըստացնում: Օգոստոսի վերջին ստանալով «Սուլթան Օս-  
մանը», մենք հուլյներից կլինենք ավելի ուժեղ: Հինգ կամ  
վեց ամիս անց, ստանալով «Ռեշադիեն», մենք արդեն ծովում  
կլինեինք ավելի ուժեղ, քան Հունաստանը: Մենք չէինք վա-  
խենում անգամ Ֆրանսիայում կառուցվող հունական դրեդնո-  
տից, որովհետև նկատի ունենք մեր «Ֆաթիհ» նոր դրեդնո-  
տը»<sup>112</sup>: Այդպիսով, ռազմածովային ուժերի հարաբերակցությու-  
նը նման պայմաններում փոխվելու էր հոգուտ թուրքիայի:  
Նույն կարծիքն էր արտահայտում նաև Կ. Պոլսում ռուսական  
դեսպան Գիրսը: Համեմատելով երկու հակառակորդ երկրնե-  
րում ստեղծվող ծովային ուժերը և ժամկետները, 1914 թ. ապ-  
րիլի 27-ի զեկուցագրում նա նշում էր, որ, համենայն դեպս,  
վեց ամսվա ընթացքում առավելությունը լինելու էր թուրքա-  
կան ռազմական նավատորմի կողմը: «Նման վիճակը, հատ-  
կապես արդի շրջանում, չի կարող ուժեղ ազդեցություն չգոր-  
ծել հունական կառավարության վրա», — եզրակացնում էր  
ռուսական դեսպանը<sup>113</sup>:

Հունական կառավարությանը առանձնապես լրջորեն էր  
մտահոգում թուրքական նավատորմի թվական ավելացումը:  
1913 թ. դեկտեմբերին Անգլիայում Բրազիլիայի համար կա-  
ռուցվող «Ռիո դը Ժանեյրո» (վերանվանյալ «Սուլթան Օսման»)   
զրահանավի գնումը փաստորեն խախտելու էր ռազմածովա-  
յին ուժերի հարաբերակցությունը, իսկ թուրքական նավատոր-  
մի հետագա հզորացումը իրական սպառնալիք էր հունական  
ծովային գերիշխանությանը: Հունական կառավարությունը ո-

<sup>111</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>112</sup> Նույն տեղում:

<sup>113</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4261, л. 69.



րոշել էր թուրքական նոր ռազմանավերը Զիբրալթարից ներս մտնելու դեպքում դիմել ակտիվ գործողությունների: «Քանի դեռ չի պարզված կղզիների հարցը, — Դեմիդովի հետ ունեցած գրույցում հայտարարեց թագավոր Կոստանդինը, — Հունաստանը ոչ մի դեպքում չի կարող թույլ տալ թուրքական նավատորմի ուժեղացումը և չի վարանի պատերազմ հայտարարելու Թուրքիային, եթե հայտնի դառնա, որ նոր ձեռք բերված լինի այդ թեկուզ անգլիական կամ գերմանական: Պատերազմ հայտարարելով, Հունաստանը գործադրելու է բոլոր ջանքերը՝ թուրքերի նոր դրեդնոուտները պայթեցնելու և ոչնչացնելու համար»<sup>114</sup>: Սյուս կողմից, 1913 թ. սեպտեմբերից հունական կառավարությունը ամենաշտապ միջոցներ ձեռնարկեց կղզիները, մասնավորապես՝ Սիթիլենը, Քիոսը և Սամոսը թուրքական հարձակումից պաշտպանելու համար: Անհապաղ այդ կղզիներն ուղարկվեցին հունական բանակի մի քանի ջոկատներ, խոշոր տրամաչափի մեծաքանակ թնդանոթներ և ռազմամթերք: Փոքրասիական ափերի դիմաց գտնվող կղզիների ստրատեգիական վայրերն ամրացվեցին: Միաժամանակ, հունական ականակիրները գիշերները սկսեցին հսկել Իզմիրի ծովաժողից մինչև Դարդանեղ<sup>115</sup>: Պաշտպանական մեծ աշխատանքներ կատարվեցին նաև ցամաքային Հունաստանում: 1913—1914 թթ. ձմռան ամիսներին հունական խոշոր ուժեր կենտրոնացվեցին Մակեդոնիայում: Գլխավոր շտաբը մշակեց նաև հարձակման պլան՝ նշելով հավանական ուղղությունները<sup>116</sup>: Հունական գլխավոր շտաբի պետ Յ. Մետաքսայի կարծիքով 1914 թ. մարտին Հունաստանը պատրաստ էր պատերազմին<sup>117</sup>:

1914 թ. ապրիլին Վիլիելմ II-ի և կանցլեր Բետման-Հոլվեգի Կորֆու կատարած այցելությունը Աթենքում ստեղծեց քաղաքական աշխուժության մթնոլորտ: Անմիջապես գերմանական կայսրին այցելեցին հունական թագավորական ընտանիքը, Վենիզելոսը և արտաքին գործերի մինիստր Ստրեյտը: Հատ-

<sup>114</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4258, л. 22.

<sup>115</sup> *St'u MOЭH*, с. III (1914—1917), т. II, № 61, էջ 64, Гирс-Сазонову, от 22/9 марта, 1914 г.:

<sup>116</sup> *St'u* Γ. Κορδάτου, նշվ. աշխ., էջ 393:

<sup>117</sup> *St'u* 'Ο. 'Ι. Μεταξάς, նշվ. աշխ., էջ 238:



կանչական է, որ Կ. Պոլսից Կորֆու ժամանեց գերմանական դեսպան Վանգենհայմը: «Այդ կանչը վկայում է այն մասին, որ այդտեղ տեսադաշտից չեն կորցնում թուրք-հունական հարաբերությունները»<sup>118</sup>, — նշում էր Աթենքում ոռոսական ներկայացուցիչ Դեմիդովը:

Ցանկանալով մասնակցել Կորֆու կղզում կատարվելիք տեսակետների փոխանակմանը՝ Աթենքի թուրքական դեսպան Գալիբ Բեմալի Բեյը խնդրեց իր կառավարության թույլտվությունը: Սակայն Կ. Պոլսից եկած պատասխանը բացասական էր: Մարտի 20-ին մեծ վեզիր և արտաքին գործերի մինիստր Սաիդ Հալիմ փաշան հեռագրեց, որ դեսպանի ներկայությունը Կորֆու կղզում նպատակահարմար չէ<sup>119</sup>:

Կղզիների հարցում դրական լուծման հասնելու համար վենիզելոսը փորձում էր ընդունել քաղաքական նոր կողմնորոշում, որի նպատակն էր հույն-թուրքական դաշինքը՝ Գերմանիայի հովանավորության ներքո<sup>120</sup>: Այդ նպատակին հասնելու համար Վենիզելոսը դիմեց գերմանական կայսրի միջնորդությանը՝ համաձայնվելով Քիոսի և Միթիլենի վրա պահպանելու Օսմանյան կայսրության անվանական սյուզերենությունը: Այդպիսով նա հնարավոր էր համարում թուրք-հունական մերձեցումն ու դաշինքը, սակայն պայմանով, որ կղզիների նկատմամբ թուրքական սյուզերենությունը առկա լինեի դաշինքի հարատևությունից: Այդ գաղափարի համաձայնությամբ Վենիզելոսը Գերմանիային ընդունում էր որպես անվերապահ հաշտարար այն բոլոր հիմնական հարցերում, որոնք Թուրքիայի և Հունաստանի միջև կարող էին առաջանալ արևելյան Միջերկրականում<sup>121</sup>:

Կայզերական կառավարությունը, իր հերթին, ցանկանալով Հունաստանը ներքաշել Եռյակի քաղաքականության ոլորտը, ուրախությամբ ընդառաջ գնաց հունական կառավարության ծրագրին: Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին ցուցում տրվեց Հունաստանի պայմանները հավանության արժանաց-

<sup>118</sup> МОЭИ, с. III (1914—1917), т. II, № 226, стр. 312, Демидов-Сазонову, от 15/2 апреля, 1914 г.

<sup>119</sup> Şek'u G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 158:

<sup>120</sup> Şek'u A. F. Frangulis. La Grèce et la crise mondiale, t. I, P. 1926, էջ 111:

<sup>121</sup> Şek'u նույն տեղում:



ներեւ թրիտթորքերի շրջանում: Սակայն թորքական կառավարող շրջանները լսել անգամ չցանկացան Գերմանիային<sup>122</sup>: Երիտթորքերի կառավարությունը համաձայնվում էր հունական կառավարության հետ բանակցել բոլոր կղզիներում թորքական սուվերենիտետը վերականգնելու պայմանով միայն: Այդպիսով, Հունաստանի և Թուրքիայի միջև Գերմանիայի միջնորդությամբ համաձայնություն կնքելու փորձը լիովին ձախողվեց: Այս հանգամանքը կրկին անգամ հաստատեց այն պատմական ճշմարտությունը, որ Գերմանիան չէր, որ թելադրում էր Թուրքիայի արտաքին քաղաքական ուղղությունը: Ինչպես ապացուցում են մի շարք հետազոտողներ, Էնվերն ու նրա համախոհները չէին Էլ մտաժում դառնալ Կենտրոնական պետությունների մարիոնետները<sup>123</sup>:

Կղզիների հարցում Գերմանիայի օժանդակությունը ստանալու հունական կառավարության հետագա ջանքերը ևս ավարտվեցին անհաջող: «Էնթոս» թերթը, անդրադառնալով այդ խնդրին, տպագրում է Վենիգեյլոսին Վիլհելմի տված պատասխանը, որը լիովին բացահայտում էր վերջինիս դիրքորոշումը. «Կղզիների հարցում Գերմանիան ոչինչ չի կարող անել, քանի որ այդ կետում նա կապված է Թուրքիայի հետ»<sup>124</sup>: Միակ օժանդակությունը, որ խոստանում էր Գերմանիան, միջնորդությունն էր փոխադարձ համաձայնության համար<sup>125</sup>:

Թուրք-հունական հարաբերությունների լարվածության հետևանքով սաստկացավ հակահունական կամպանիան Օսմանյան կայսրության մեջ: Տրիպոլիտանիայի ու Կրետեի, ինչպես նաև Էգեյան ծովի կղզիների ու Եվրոպական Թուրքիայի մեծ մասի կորստից հետո անվստահությունը դեպի Թուրքիայում բնակվող ոչ թուրք ժողովուրդները և, մասնավորապես, հույները, դարձավ երտիթորքերի ներքին քաղաքականության ելակետներից մեկը: Հայտնի է, որ Փ. Ասիայում բնակվող հույների թիվը հասնում էր գրեթե 2,5 միլիոնի: Առանձնապես

<sup>122</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>123</sup> Տե՛ս Է. Վերներ, Թուրքիան Եռյակ միության և Անտանտի միջև 1914 թվականին, Պատրանքներ և իրականություն Բոսֆորի ափերին («Լրաբեր հասարակական գիտությունների», 7(326), Երևան, հուլիս, 1970, էջ 30):

<sup>124</sup> «С. Петербургскне ведомости», 2/15.V, 1914.

<sup>125</sup> Տե՛ս նույն տեղում:



համասեռ եր Էգեյան ծովափը, որտեղ հույները կազմում էին ամբողջ բնակչության 48,5 տոկոսը<sup>126</sup>։ Անվստահության մյուս պատճառը Օսմանյան կայսրության մեջ հույների տնտեսական մեծ կշիռն էր։ Հույն բուրժուազիայի ձեռքում էր կենտրոնացած երկրի ներքին ու արտաքին առևտրի, արդյունաբերության, արհեստների զգալի մասը։ Գործունեության մեծ ապարեզ ուներ առևտրական, բանկային ու վաշխառուական բուրժուազիան։ Եթե ավելացնենք նաև հայ բուրժուազիայի եռանդուն գործունեությունը, ապա պարզ կդառնա, որ Անատոլիայում, Եվրոպական Թուրքիայում տնտեսության բոլոր ճյուղերում գերիշխում էին քրիստոնյաները։ Այս հանգամանքը շեշտված է նաև թուրքական պատմագրության մեջ։ Ինչպես նշում է Բայուրը, «Երկրի տնտեսական բնագավառում գրեթե լիովին գերիշխում էին ոչ թուրք տարրերը, հիմնականում՝ հույները»<sup>127</sup>։

Կ. Պոլսում հրատարակված «Արևելյան տարեգիրք։ Օսմանյան կայսրության առևտուրը, արդյունաբերությունը, վարչությունը, դատարանը»<sup>128</sup> վիճակագրական տարեգրքի տվյալների համաձայն 1912 թվականին Կ. Պոլսի 1230 առևտրական տներից ու հիմնարկներից ըստ ազգանունների կատարած մեր հաշվումների, թուրքեր էին 130-ը, հույներ՝ 270-ը, հայեր՝ 290-ը։ Մանուֆակտուրային արտադրության բնագավառում 330 ձեռնարկատերերից թուրքեր էին 37-ը, հույներ՝ 100-ը, հայեր՝ 150-ը։ 123 բանկային տներից ու բանկիրներից թուրքեր էին 2-ը, հույներ՝ 35-ը, հայեր՝ 41-ը։ 206 դրամափոխներից թուրքեր էին 4-ը, հույներ՝ 110-ը, հայեր՝ 60-ը։ 359 ոսկերիչներից թուրքեր էին 5-ը, հույներ՝ 65-ը, հայեր՝ 255-ը։

Մեր կողմից հիշյալ տարեգրքի վիճակագրական նյութերի սկզբնական մշակումից ու ամփոփումից հետո պրոֆ. Զ. Ինսկյանը հանգել է հետևյալ ընդհանրացնող եզրակացությանը. 1912 թ. Թուրքիայում կատարված առևտրում թուրքերը կազմել են 14,9, հույները՝ 43,1, հայերը՝ 22,9 տոկոսը։ Արտադրության ու արհեստների բնագավառներում թուրքերը կազ-

<sup>126</sup> *St'a* L. Maccas, L'Hellénisme de l'Asie Mineure, Son histoire, sa puissance, son sort, P., 1919, էջ 86—87։

<sup>127</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 253։

<sup>128</sup> *St'a* Annuaire Oriental. Commerce, Industrie, Administration, Magistrature de l'Empire Ottoman, C. ple, 1912։



մել են 12,0, հույները՝ 48,5, հայերը՝ 29,7 տոկոսը: Մասնագետների (բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ), ինչպես նաև բանկիրների, դրամափոխների տեսակարար կըշռում թուրքերը կազմել են 13,8, հույները՝ 43,8, հայերը՝ 22,2 տոկոսը<sup>129</sup>:

Հրեական բուրժուազիան իր տեսակարար կշռով գերազանցում էր միայն թուրքերին, և Թուրքիան այն երկիրն էր, ուր հրեաները առևտրատնտեսական, ֆինանսական, արհեստների ու մասնագիտությունների բնագավառում նշանակալիորեն զիջում էին հույներին ու հայերին: Այս հանգամանքը միավորում էր թուրքերին ու հրեաներին՝ հույների ու հայերի դեմ ուղղված տնտեսական պայքարում: «Անմիջական նպատակը, որի համար նրանք աշխատում են,— հրեաների մասին հաղորդում էր Կ. Պոլսի անգլիական դեսպանը,— փաստորեն Թուրքիայի բացարձակ տնտեսական նվաճումն է, և այդ երկրում նոր ձեռնարկումները»<sup>130</sup>: Հրեական բուրժուազիայի կողմից Թուրքիան տնտեսապես նվաճելու և քրիստոնյա բուրժուազիային կործանելու գործին նպաստում էր այն կարևոր քաղաքական հանգամանքը, որ հրեաները իրենց ձեռքում էին պահում կամ վերահսկում էին երիտթուրքական կառավարության մեխանիզմի առանցքային կետերը<sup>131</sup>: Երիտթուրքերի ու հրեաների քաղաքական սերտ համագործակցության պատճառով հրեական բուրժուազիան Թուրքիայում պետական մասշտաբով երբեք չենթարկվեց տնտեսական ավերիչ ճնշման, բոլկոտի, կողոպուտի ու թալանի, իսկ հրեաները՝ հալածանքների ու ջարդերի:

Օսմանյան կայսրության տնտեսության բոլոր հիմնական ձյուղերում հույն և հայ բուրժուազիայի գերիշխանությունը առաջ էր բերում տնտեսապես հետամնաց թուրք բուրժուազիայի նախանձը, զայրույթն ու դիմադրությունը, որը, նեղվելով հրապատակ բուրժուազիայի մրցակցությունից, ձգտում էր պետա-

<sup>129</sup> Տե՛ս Լ. Գ. Ինձիկյան, Թուրքական և ոչ թուրքական կապիտալը՝ Օսմանյան կայսրության տնտեսության մեջ («Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1972 թ., № 3, էջ 140—141):

<sup>130</sup> Զ. Ս. Կիրակոսյան, Անգլիական դիվանագետը երիտթուրքերի մասին («Արևելագիտության հարցեր», ԵՊՀ հրատ., Երևան, 1983, պրակ 1—2, էջ 282):

<sup>131</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 282—283:



կան ավերիչ միջոցներով կործանել և ասպարեզից դուրս մղել նրան: Երկրի կարևոր շրջաններում հունական բուրժուազիայի տնտեսական ազդեցությունը չեզոքացնելու և թուրքական ազգային մեծամասնությունն ստեղծելու նպատակով երիտթուրքերը սկսեցին զանգվածաբար տեղահանել հույներին և Հունաստան արտաքսել: Հակահունական կամայանիայի ծավալման առիթ հանդիսացավ նաև նախկին Եվրոպական Թուրքիայից թուրք գաղթականների՝ մուհաջիրների զանգվածային հոսքը դեպի Անատոլիա, որը սկսվել էր Բալկանյան պատերազմների հետևանքով:

Բալկանյան երկրներից դեպի Փ. Ասիա մահմեդականների զանգվածային գաղթի հիմքում կային նաև քաղաքական ու տնտեսական պատճառներ: Թուրքական կառավարող շրջանները նպատակ ունեին մահմեդականների զանգվածային վերաբնակեցման միջոցով ներքին գաղութացման ենթարկել Անատոլիան, այն վերածել զուտ թուրքական միջավայրի: Այդ քաղաքականությունը, որ սկսել էր Աբդուլ Համիդ II-ը, շարունակեցին երիտթուրքերը, որոնց նպատակն էր թուրքերի վերաբնակեցման միջոցով զորացնել թուրքական տարրը բուն Անատոլիայում և խեղդել հույների և հայերի ազգային շարժումները: Նրանք բալկանյան երկրներից գաղթած թուրքերին տեղավորում էին հույներով խիտ բնակեցված վայրերում, հիմնականում Թուրքիայի Եվրոպական մասում և Էգեյան ծովափում<sup>132</sup>: Ղա բխում էր նվաճված ժողովուրդներին՝ հույներին ու հայերին թուրքացնելու երիտթուրքերի քաղաքականությունից: Ղոկտոր Նազիմը՝ թուրքական ազգայնական շարժման գաղափարախոսներից մեկը, այդ խնդրի մասին հետևյալ կերպ է արտահայտվել. «Մեծ և բարգավաճ Թուրքիա վերստեղծելու համար գոյություն ունի մեկ պարզ միջոց, — արտաքսել օտարներին և նրանց փոխարինել զուտ թուրքական ռասայով»<sup>133</sup>: Նման քաղաքականության հետևանքով քսան տարվա ընթացքում կստեղծվեր մի կայսրություն, որը հիմնականում բաղկացած կլիներ թուրքերից<sup>134</sup>: Այս ռասայական միջոցառման կիրառումը լայն թափ ստացավ հունաբնակ շրջաններում:

<sup>132</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 251:

<sup>133</sup> Տե՛ս Capitaine H. Seignobosc, Turcs et Turquie, P., 1920, էջ 61:

<sup>134</sup> Տե՛ս նույն տեղում:



1913 թ. հոկտեմբերին սկսվեց թուրքական Թրակիայի հունական բնակչության բռնի արտագաղթը դեպի Հունաստան: Տեղական թուրքական իշխանությունները և երիտթուրքական կազմակերպությունները կենտրոնից հրահանգ էին ստացել ամեն միջոց օգտագործել հույներին արտագաղթի հարկադրելու համար<sup>135</sup>: Այդ նպատակով օգտագործվեցին հալածանքի ու բռնության բարբարոսական բազմազան ձևեր ու միջոցներ:

Հակահունական հալածանքներն ու բռնությունները լայն թավալ ընդունեցին նաև Փ. Ասիայի արևմտյան ծովափում, որտեղ հույների տեղահանության գործը հանձնարարված էր Ջմյուռնիայում գտնվող բանակային չորրորդ կորպուսի հրամանատար Պերթե (Ղեմիրհան) փաշային, այդ կորպուսի շտաբի պետ Ջաֆեր Թայար (Էդիլմեզ) փաշային և երիտթուրքական կուսակցության տեղի պատասխանատու քարտուղար Մահմուդ Ջելալ (Բայար) Բեյին<sup>136</sup>: Թուրք բաշիբոզուկների զինված խմբերը, հարձակվելով հունական բնակավայրերի ու գյուղերի վրա, խոշտանգում, ջարդում ու արտաքսում էին բնակիչներին, տիրանում նրանց ունեցվածքին: Առանձնահատուկ մոլեգնությամբ էին համակված մանավանդ Բալկանյան թերակղզուց գաղթած թուրքերը՝ մուհաջիրները, որոնք, հենց Ջեմալի խոստովանությամբ, «լրջորեն անհանգրստացնում էին Այդընի վիլայեթի հույներին»<sup>137</sup>:

Ինչպես միշտ, քրիստոնյա բնակչության դեմ ուղղված հալածանքները վերածվեցին կոտորածների: Թրակիայում և Էգեյան ծովափում հունական բազմաթիվ գյուղեր ու բնակավայրեր կործանվեցին, իսկ բնակիչները ենթարկվեցին ջարդի: Կ. Պոլսի ռուսական դեսպանության աշխատակից Տուխուկյան, որն անձամբ քննել է Ջմյուռնիայի և նրա շրջակայքի հույների վիճակը, հաղորդում է այն սարսափելի սպանդի մասին, որ կատարվել էր հին և նոր Ֆոկեայում: Դրա հետևանքով, նշում է նա, «կոտորվել է գրեթե ամբողջ բնակչությունը»<sup>138</sup>: Մեկ ուրիշ ականատես, ֆրանսիացի հնագետ Ֆելիքս Սարթինոն, նույնպես վկայում է, որ հունական բնակչության ջարդը և

<sup>135</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 251:

<sup>136</sup> Տե՛ս «Milliyet», 1970, 10 eylül, № 8190:

<sup>137</sup> Джемаль паша, նշվ. աշխ., էջ 59:

<sup>138</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4261, л. 201.



արտաքսումը կատարվում էր թուրքական իշխանությունների եռանդուն մասնակցությամբ: Նա գրում է, որ հունական գյուղերի վրա հարձակվող թուրք հրոսակախմբերը տեղական իշխանությունների կողմից զինված էին «Մարտինի» սիստեմի հրացաններով և մուշկետներով<sup>139</sup>: Հույներին արտաքսելու և նրանց բնակավայրերում ավելի քան 160 հազար մահմեդական գաղթականների տեղավորելու քաղաքականությունը իրականացվում էր նաև Անատոլիայի հունաբնակ մյուս շրջաններում, այդ թվում՝ մերձսևծովյան վայրերում: Բնականաբար, հակահունական տրամադրությունները թուրքական մոլեռանդ ամբոխի կողմից օգտագործվում էին նաև հայերին ծնշելու, հալածելու և կողոպտելու նպատակով:

Անգամ գերմանական «Քյոլնիշե ցայտունգ» թերթի թղթակից, իր իսկ բնութագրմամբ՝ մոլի թուրքասեր Հ. Շտուրմերը, սարսափով է գրում ահավոր ավերածությունների և կոտորածների մասին:

Փ. Ասիան թուրք վերաբնակիչներով «ներքին գաղութացման» ենթարկելու և այդպիսով «Անատոլիան ազգայնացնելու» քաղաքականությունը, գրում է նա, մեծագույն մոլեռանդությամբ իրականացվում էր Բրուսայի, Ջմյուռնիա-Այդընի, Էսկիշեհիրի, Ադաբազարի, Անկարայի ու Ադանայի արգավանդ ու ծաղկուն շրջաններում, ուր այնքան մեծ էր հույների ու հայերի դերը և որոնց գերակշռությունը հարուցում էր թուրքերի տագնապը<sup>140</sup>: Անատոլիան լիովին թրքացնելու ճանապարհին, շարունակում է նա, համաշխարհային պատերազմին նախորդած ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում սպանվեցին հազարավոր խաղաղ հույներ՝ տղամարդիկ, կանայք ու երեխաներ, տասնյակ ծաղկուն գյուղեր ու քաղաքներ գազանային ավերածությամբ վերածվեցին մոխրակույտերի<sup>141</sup>: Երիտթուրքերի պաշտոնաթերթ «Թանինը» անգուսպ հըրձվանքով էր գրում, որ Փ. Ասիան թուրքացնելու պետական քաղաքականության հաջողությանն է նպաստում մանավանդ

<sup>139</sup> *St'u* F. Sartiaux, Le sac de Phocée et l'expulsion des Grecs Ottomans d'Asie-Mineure en juin 1914. ("Revue des Deux Mondes", t. 24, P., 1914, էջ 663):

<sup>140</sup> *St'u* Dr. H. Stuermer, Deux ans de guerre à Constantinople, P., 1917, էջ 157:

<sup>141</sup> *St'u* նույն տեղում, էջ 159:



այն հանգամանքը, որ տեղական թուրքական իշխանությունները «լիովին ըմբռնել են ներքին գաղութացման և մուհաջիրների վարվելաձևի ազգային մեծ նշանակությունը»<sup>142</sup>:

Երիտթուրքական իշխանությունները մուհաջիրների հորձանքը ուղղում էին նաև դեպի արևելյան վիլայեթները, դեպի Արևմտյան Հայաստան՝ ստիպելով հայերին իրենց հողերը զիջել թուրք վերաբնակիչներին: Այստեղ նույնպես երիտթուրքերը մուհաջիրների վերաբնակեցմամբ ցանկանում էին զորացնել մահմեդական տարրը՝ դուրս մղելով կայսրության «անբարեհույս» հայ բնակչությանը<sup>143</sup>:

Ջարդերից ու զանգվածային արտաքսումներից զերծ մնաց կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսի և Էգեյականի խոշորագույն նավահանգիստ Ջմյուռնիայի քրիստոնյա բնակչությունը: Այդ կապակցությամբ թուրքական գրականության մեջ տրված է հետևյալ բացատրությունը. «Քաղաքական նկատառումներով Ջմյուռնիայի հույների հանդեպ հալածանքներ չեղան: Ջմյուռնիան չափից ավելի էր գտնվում տեսադաշտում: Նման քաղաքում մեծ տերությունների հյուպատոսների առկայությունը հարկադրում էր խուսափել արտաքսման քաղաքականությունից»<sup>144</sup>:

Իրենց հնագույն պատմական բնօրրանից արտաքսված, թալանված, լլկված ու սովահար հույների բազմահազարանոց խմբերը խոնվեցին առափնյա քաղաքներում՝ սպասելով Հունաստանից ժամանող նավերին: Նրանք այլևս չունեին վերադառնալու ոչ մի հույս, իսկ ապագայի նկատմամբ՝ ոչ մի պատկերացում: «Հույների վիճակը ողբալի է: Սովահար և ամեն բանից զրկված ու կողոպտված, անոնք բացօթյա կը բնակին առանց ապաստան մը ունենալու: Իրենց գույքերը հափշտակված են ու կիները անպատված: Հույների բնակարանները կնքված են իշխանության կողմից, որ տանտերերը կվտարեն»<sup>145</sup>:

Միաժամանակ, երիտթուրքերը վերսկսեցին հակահունական տնտեսական բոլկոտի քաղաքականությունը, որ նրանք կիրառել էին դեռևս կրետական հարցի սրվածության շրջանում:

<sup>142</sup> Նույն տեղում, էջ 157:

<sup>143</sup> Ст'я Г. З. Алиев, նշվ. աշխ., էջ 194:

<sup>144</sup> "Milliyet", 1970, 6 eylül, № 8186.

<sup>145</sup> «Ազատամարտ», 25.VI (7. VII), 1914:



Հակահունական տնտեսական բոլկոտի նպատակն էր խզել առևտրական բոլոր հարաբերությունները հույների հետ և այդպիսով նրանց ենթարկել սնանկացման: Նման ծանապարհով երիտթուրքերը հույս ունեին վերացնել քրիստոնյա բուրժուազիայի տնտեսական գերակշիռ ազդեցությունը և դրանով պայմաններ ստեղծել թուրք բուրժուազիայի ազատ գործունեության համար: Ուրեմն, թուրք բուրժուազիային մրցակցությունից ազատելու և գործունեության լայն ասպարեզ ստեղծելու համար, երիտթուրքերի համոզմամբ, անհրաժեշտ էր «նախ և առաջ սնանկացնել, կործանել տնտեսապես հզորացած հույն բուրժուազիային»<sup>146</sup>: «Ազգային տնտեսություն» ստեղծելու հարմար ուղի նկատվեց բոլկոտի քաղաքականությունը, — զբրուժ է Բայուրը, — որը, երիտթուրքերի կարծիքով, խարխուլով հույների տնտեսական ազդեցությունը, դյուրացնելու էր թուրք բուրժուազիայի խիստ թույլ դիրքերի ամրապնդումը»<sup>147</sup>:

1913 թ. վերջին և 1914 թ. ընթացքում հակահունական տնտեսական բոլկոտը Թուրքիայում (մասնավորապես՝ առևտրական խոշոր քաղաքներում ու նավահանգիստներում) հասավ մեծ չափերի: Իշխանությունների հրահրումով ու դրդմամբ գործակալները, ինչպես նաև մահմեդական հոգևորականությունը կատաղի պրոպագանդա էին մղում քրիստոնյաների դեմ: «Հայերը, — այդ կապակցությամբ նշում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը, — որոշակիորեն նույնպես ենթարկվում են բոլկոտի հետևանքներին և քրիստոնյաների դեմ ուղղված պրոպագանդային»<sup>148</sup>: Հույների և հայերի դեմ ուղղված տնտեսական բոլկոտը շատ հեշտությամբ վերածվում էր կոդոպուտի ու թալանի:

Տնտեսապես սնանկացնելով, կոդոպուտելով և թալանելով քրիստոնյա բուրժուազիային՝ երիտթուրքերը հույս ունեին բարձրացնել թուրք ազգային բուրժուազիային: Սկզբնական շրջանում դա ինչ-որ չափով հաջողվեց: Էգեյան ծովափում առաջացան թուրքական բանկեր և թուրք բուրժուազիայի ընկերություններ<sup>149</sup>: Սակայն բոլկոտի քաղաքականությամբ թուր-

<sup>146</sup> "Milliyet", 1970, 6 eylül, № 8186.

<sup>147</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 144:

<sup>148</sup> МОЭИ, с. III (1914—1917), т. 3 (14.V—27.VI.1914), № 325, стр. 375, Сазонов-Гирсу, от 22/9 июня, 1914.

<sup>149</sup> Տե՛ս "Milliyet", 1970, 9 eylül, № 8189:



քական բուրժուազիայի տնտեսական դիրքերը բարելավելու և ուժեղացնելու ջանքերը ծախողվեցին: Թուրք բուրժուազիան պատրաստ չէր և ի վիճակի չէր փոխարինելու հպատակ ժողովուրդների զարգացած բուրժուազիային, որի տնտեսական գործունեության արմատները շատ խորն էին: «Տնտեսական բնագավառում թուրքերի տեսակարար կշիռը մեծացնելու փոխարեն, — նշում է Բայուրը, — բոլկոտը ավելի շուտ ծառայեց որպես զոռքաների հարստացման ժամանակավոր միջոց»<sup>150</sup>:

Բորբոքելով հակահունական պրոպագանդան՝ երիտթուրքերը ցանկանում էին նաև ճնշում գործադրել հունական կառավարության վրա՝ հարկադրելով նրան զիջումների գնալ էգեյան ծովի կղզիների հարցում: Դեռևս 1914 թ. հունվարին Աթենքի թուրքական դեսպանը սպառնաց, որ կղզիների հարցում հունական կառավարության դրսևորած համառությունը կարող է տխուր հետևանքներ ունենալ ինչպես Հունաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող հույն բնակչության համար<sup>151</sup>:

Հակահունական հալածանքները և բռնագաղթը արտակարգ հուզմունք ու գրգռություն առաջացրին Հունաստանում: 1914 թ. հունիսի 11-ին Վենիզելոսը խորհրդակցության հրավիրեց Գըլխավոր շտաբի ներկայացուցիչներին, որտեղ քննարկվեց Թուրքիային պատերազմ հայտարարելու հնարավորությունը: Վենիզելոսը մտադիր էր սեփական ուժերով անհապաղ սկսել ռազմական գործողություններ՝ չսպասելով դաշնակից Սերբիայի և Ռումինիայի պատասխանին: Հունաստանը պատերազմի էր դիմում նախ և առաջ Թուրքիայի ռազմածովային ուժերը խորտակելու և ծովում հունական գերիշխանությունը պահպանելու նկատառումով: Հակահունական հալածանքները դիտվում էին որպես պատեհ առիթ՝ Թուրքիայի դեմ պատերազմելու համար: Աթենքի կառավարությունը դիմում էր մեծ ռիսկի և ցանկանում էր սկսել պատերազմը, քանի դեռ Թուրքիան չէր խախտել ուժերի հարաբերակցությունը ծովում<sup>152</sup>: Նույն օրվա երեկոյան, ելույթ ունենալով պառլամենտում, Վենիզելոսը հայտարարեց, որ եթե վերջ չտրվի հակահունական

<sup>150</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 253:

<sup>151</sup> St'u G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 144:

<sup>152</sup> St'u 'O. 'I. Metaξās, նշվ. աշխ., էջ 244—245:



հալածանքներին, ապա հունական կառավարությունը այլևս չի սահմանափակվի սոսկ բողոքներով<sup>153</sup>: Իսկ հունիսի 11-ին Աթենքի թերթերը գրեցին, որ հակահունական հալածանքների շարունակման դեպքում հունական կառավարությունը պատե-  
րազմ է հայտարարելու Թուրքիային<sup>154</sup>: «Իրադրությունը օրըստ-  
օրե վատթարանում է», — Սազոնովին ուղղված հեռագրում  
նշում էր Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսը՝ նկատի ունե-  
նալով կղզիների հարցի և հակահունական կամպանիայի հե-  
տևանքով սրված հույն-թուրքական հարաբերությունները<sup>155</sup>:

Պատերազմի նախապատրաստման ուղղությամբ հունական  
կառավարությունը ծավալեց եռանդուն աշխատանք: Ինչպես  
հաղորդեց հունիսի 4-ին Աթենքի ռուսական ռազմաժողովին  
կցորդը, «Պատերազմի նախապատրաստման ուղղությամբ տե-  
ղի է ունենում տենդագին գործունեություն: Ծովային մի-  
նիստրությանը հրաման է տրված հունիսի 16-ին զորակոչի  
ենթարկել 1908 թ. բոլոր զինվորագրվածներին: Մասնավոր  
և գաղտնի խորհրդակցություններ են կայանում ինչպես ծո-  
վային, այնպես էլ ցամաքային ուժերի մինիստրություններում,  
զեկուցագրեր են հղվում թագավորին: Ռազմանավերը հապ-  
ճեպորեն բեռնավորում են պաշարով, ածխով»<sup>156</sup>: Միաժամա-  
նակ, հունական ռազմաժողովին նավատորմը համալրելու և  
հզորացնելու նպատակով, Վաշինգտոնում Հունաստանի ներ-  
կայացուցիչները բանակցություններ սկսեցին ամերիկյան կա-  
ռավարության հետ՝ «Ալդահո» և «Միսսիսիպի» ռազմանավե-  
րը գնելու համար:

Հունական ռազմաժողովին նավատորմը երկու ամերիկյան  
մարտանավերով համալրելու հնարավորությունը լուրջ տագ-  
նապ առաջացրեց երիտթուրքական կառավարող շրջաններում:  
Միայն այդ երկու ռազմանավերը, գրել է Կ. Պոլսում ամերիկ-  
յան դեսպան Սորգենթաուն, այնքան հզոր էին, որ կարող  
էին ջախջախել ամբողջ թուրքական նավատորմը Էգեյան ծո-  
վում<sup>157</sup>: Հունիսի սկզբին թուրքական կառավարությունը դի-

<sup>153</sup> ՏԵ՝Ս «Правительственный вестник», 31.V. (13.VI), 1914:..

<sup>154</sup> ՏԵ՝Ս G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 115:

<sup>155</sup> ՏԵ՝Ս МОЭИ, с. III (1914—1917), т. 3 (14.V—27.VI.1914), № 228, стр. 278. Гирс-Сазонову, от 12 июня (30 мая) 1914 г.:

<sup>156</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. I, д. № 4258, л. 56.

<sup>157</sup> ՏԵ՝Ս H. Morgenthau, նշվ. աշխ., էջ 54:



մեց ամերիկյան դեսպանին՝ «Այդահո» և «Միսսիսիպի» ռազմանավերը ավելի բարձր գներով Թուրքիային վաճառելու առաջարկությամբ<sup>158</sup>։ Հարցը Թուրքիայի օգտին լուծելու միջնորդությամբ հանդես եկավ նաև գերմանական դեսպան Վանգենհայմը՝ նշելով, որ այդ երկու ամերիկյան ռազմանավերը Հունաստանին վաճառելը կարող է համաշխարհային պատերազմի պատճառ հանդիսանալ<sup>159</sup>։ Ի վերջո, հարցը Հունաստանի օգտին լուծեցին ամերիկյան ֆինանսական շրջանները։ 1914 թ. հուլիսի 8-ին հունական կառավարությունը 12,5 մլն. դոլլարով ԱՄՆ-ից գնեց «Միսսիսիպի» և «Այդահո» զրահանավերը, որոնք վերանվանվելով «Կիլիկիս» և «Լեմնոս», ժամանեցին Հունաստան։ Այդ կերպ Հունաստանը Թուրքիայի հանդեպ ապահովեց իր գերիշխանությունը Էգեյան ծովի ավազանում։

Մեծ աշխատանք էր կատարվում նաև ցամաքային զորքերում։ Ռազմական գերատեսչությանը հրամայվեց անհապաղորեն նախապատրաստվել բանակը նոր զորակոչիկներով համալրելուն<sup>160</sup>։ Հուլն-թուրքական հարաբերությունների ծայրահեղ լարվածության շրջանում թուրքական կառավարությանը հղած հունիսի 12-ի նոտայով Հունաստանը պահանջեց վերջ տալ հույն ժողովրդի համար ստեղծված ողբերգական դրությանը և հնարավորություն տալ նրան վերադառնալու ու տեր դառնալու իր ունեցվածքին։ Հակառակ դեպքում, նշված էր նոտայում, դեպքերի հետագա ընթացքի ամբողջ պատասխանատվությունը բարդվելու է թուրքական կառավարության վրա<sup>161</sup>։

Հունիսի 17-ի պատասխան նոտայում թուրքական կառավարությունը Փ. Ասիայում ծավալվող հակահունական կամպանիան փորձեց ներկայացնել որպես Հունաստանից գաղթած թուրքերի դժգոհության արտահայտություն, որը տեղիք է տրվել որոշ գրգռությունների<sup>162</sup>։ Միաժամանակ, տերություններին ուղղված նոտայում թուրքական կառավարությունը հավաստիացնում էր, որ շնորհիվ իր գործադրած ջանքերի, վերականգնվել է անդորրը։ Դրանում համոզվելու համար նա

<sup>158</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 53—54։

<sup>159</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 55։

<sup>160</sup> Տե՛ս ЦГАБМФ, ֆ. 418, оп. 1, д. № 4258, л. 56։

<sup>161</sup> Տե՛ս G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 121։

<sup>162</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 121—122։



առաջարկում էր տերություններին՝ ուղարկել իրենց ներկայացուցիչներին, որոնք պետք է մասնակցեին տեղահանության վայրերը ներքին գործերի մինիստր Թալեաթի կատարելիք «տեսչական» շրջագայությանը<sup>163</sup>:

Միջազգային հանձնաժողովը, հունիսին այցելելով տեղահանության վայրերը, արձանագրեց, որ հակահունական կամպանիայի հետևանքով այդ շրջանների մեծ մասը վերաժվել է անապատի: Հրդեհված ու կործանված էին հունական գյուղերն ու բնակավայրերը, ավերված էին դաշտերը, այգիներն ու ցանքատարածությունները: Այդ հանձնախմբի անդամ, Կ. Պոլսում ռուսական դեսպանության թարգման Տուխուլկան հաղորդում էր, որ ամբողջ Էգեյան ծովափից հույների վտարման պլանը նախօրոք և մանրամասնորեն մշակված էր կենտրոնական կառավարության կողմից<sup>164</sup>: Նենգափոխելով իրականությունը, Ջեմալը գրում էր. «Հետաքննությունը ցույց տվեց, որ հույներին ոչ ոք չի նեղել: ... Համբերությունից դուրս եկած թուրք գաղթականները, որոնք մեղավոր էին հույների նկատմամբ կատարված հանցագործություններում, խստորեն պատրժվեցին թուրքական կառավարության կողմից»<sup>165</sup>: Սակայն իրողությունն այլ էր: Թուրքական կառավարությունը իսկական պատկերը թաքցնելու նպատակով ցուցադրական պատժիչ միջոցներ էր ձեռնարկում հույն բնակչության դեմ բռնություններ կիրառած թուրք ամբոխի առանձնապես «աչքի ընկած» ներկայացուցիչների նկատմամբ: Այն հանգամանքը, որ հակահունական կամպանիան շարունակվեց նաև Թալեաթի քննչական շրջագայությունից հետո, ցույց է տալիս դրա կազմակերպված բնույթը: Այսպես. հուլիսի 1-ին Կ. Պոլսի ռուսական գինվորական ներկայացուցիչ Սերգեևը հաղորդեց, որ երիտթուրքերի կոմիտեն, Թալեաթի և Ջավիդի մասնակցությամբ, որոշել է «կարգադրել իշխանություններին՝ բոլոր միջոցներով նպաստել արտագաղթին»<sup>166</sup>:

Թալեաթի շրջագայությունը կրում էր սոսկ ձևական բնույթ և ըստ էության հունական և եվրոպական հասարակա-

<sup>163</sup> Տե՛ս «Le Temps», 19.IV, 1914:

<sup>164</sup> Տե՛ս ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4261, л. 201:

<sup>165</sup> Տե՛ս Джемаль паша, նշվ. աշխ., էջ 60:

<sup>166</sup> ЦГАВМФ, ф. 418, оп. 1, д. № 4261, л. 201.



կան կարծիքը հանգստացնելու անհաջող մի փորձ էր: Հրապարակորեն դատապարտելով հակահունական հալածանքներն ու արտաքսումը՝ Թալեաթը տեղական իշխանություններին գաղտնորեն հրահանգում էր ամենայն հետևողականությամբ կիրառել հույների հանդեպ իրականացվող պետական քաղաքականությունը: Այսպես, Բուրսայում հրապարակային մի ելույթից հետո նա իր մոտ է կանչում թուրքական իշխանությունների ներկայացուցիչներին և հրահանգում. «Ոչ մի ուշադրություն չդարձնեք ժողովրդին ուղղված իմ խոսքերին: Մեր պարտքն է մինչև վերջ իրագործել մեր նշած ծրագիրը և շարունակել մեր երկրից քրիստոնյաների վտարումը»<sup>167</sup>:

Պետական այդպիսի քաղաքականության հետևանքով հակահունական հալածանքներն ու արտաքսումները անարգել շարունակվում էին: Հրի ու սրի արյունալի քաղաքականության արդյունքն եղավ այն, որ հիմնականում Թրակիայից ու Էգեյան ծովափից անվերադարձ տեղահանվեց մոտավորապես 200 հազար հույն<sup>168</sup>:

Հակահունական կամպանիան իրականացնելու հետ մեկտեղ երիտթուրքերը ջանում էին իրենցից հեռացնել այդ գործի պատասխանատվությունը: «Կառավարությունը բացարձակապես չէր համակրում այդ շարժումը, — չքմեղանում է Ջեմալը, — որովհետև վախենում էր իր համար անցանկալի հետեւանքներից»<sup>169</sup>: Ինքնաարդարացման համար երիտթուրքերը սկսեցին այլ գործոններ վկայակոչել: Ներքին գործերի մինիստր Թալեաթը հայտարարեց, որ արտագաղթը հիմնականում հունական նոր տարածքները տեղափոխված 12 հազար հույն փախստականների դրդումների արդյունքն է, որոնք կոչ են անում իրենց ազգակիցներին գաղթել և տեր դառնալ տեղի մահմեդականների լքած ունեցվածքին<sup>170</sup>: Բացի այդ, նա պնդում էր, որ բալկանյան պատերազմի ընթացքում մահմեդական բնակչության հանդեպ իբր կատարած վայրագություններ

<sup>167</sup> «С. Петербургские ведомости», 2/15.VII, 1914.

<sup>168</sup> *St'a* DDG, C—X, № 420, էջ 600, Communication de la Légation de Grèce, 21 juin, 1914:

<sup>169</sup> Джемаль паша, նշվ. աշխ., էջ 50:

<sup>170</sup> *St'a* G. Kemalî bey, նշվ. աշխ., էջ 101:



րի փոխվրեժից խուսափելու համար հույները ձգտում են հե-  
ռանալ թուրքական տերիտորիայից<sup>171</sup>:

Աթենքում Օսմանյան կայսրության դեսպանը իր հուշերում  
ևս փորձում է ժխտել հույների դեմ ծավալված հակահունա-  
կան քաղաքականության պետական բնույթը՝ այն ներկայաց-  
նելով որպես պատասխան Հունաստանում բնակվող թուրքերի  
դեմ կատարված բռնությունների: «Իզմիրի շրջակայքում ծա-  
վալված իրադարձությունները հունական Մակեդոնիայում իրա-  
կանացված հակաթուրքական քաղաքականության արդարացի  
հետևանք էին»<sup>172</sup>, — գրում է նա: Նույն տեսակետն է արտա-  
հայտում նաև Բայուրը: Այսուհանդերձ, վերջնականապես չժլխ-  
տելով, որ հակահունական հալածանքները ծավալվել էին  
թուրքական կառավարության հրահանգով, նա նշում է, որ  
վերջին հաշվով, դրանք տեղի ունեցան կառավարող շրջանների  
թողությունով<sup>173</sup>: Բռնագաղթի ընթացքում կատարված վայ-  
րագություններին Թալեաթը անդրադառնում է հարևանցիորեն,  
դրանք ներկայացնելով որպես մասնավոր և ոչ էական երե-  
վույթներ, նշելով, որ բռնագաղթի ընթացքում «երբեմն եղել են  
նաև հափշտակություններ, ընդհարումներ և սպանություն-  
ներ»<sup>174</sup>: Նրա՝ թեկուզ հարևանցի հիշատակումները հաստա-  
տում են հույն ժողովրդի դեմ գործված ոճրագործությունները:  
Աթենքի թուրք դեսպանը, ավելի մեղմացնելով Թալեաթի վե-  
րոհիշյալ ժլատ խոստովանությունը, գրեթե ժխտում էր հակա-  
հունական իրադարձությունների արյունալի բնույթը՝ դրանք  
ներկայացնելով ոչ ավելի, քան որոշ «տհաճ երևույթներ»<sup>175</sup>:  
Հարցին համանման մոտեցում է ցուցաբերում նաև Բայուրը:  
Նրա կարծիքով, հույների հանդեպ իրագործված բռնություն-  
ները կրել են խիստ մեղմ բնույթ, և որ «միակ փաստը Այ-  
վալըքի հույների սարսափահար Միդիլլի փախչելու դեպքն  
է»<sup>176</sup>:

Թուրքական գրականության մեջ խիստ կերպով նվազեց-  
ված է Օսմանյան կայսրությունից հարկադրաբար արտագաղ-

<sup>171</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>172</sup> G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 110:

<sup>173</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 251, 253:

<sup>174</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>175</sup> G. Kemali bey, նշվ. աշխ., էջ 106:

<sup>176</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., էջ 253:



թած կամ բռնությամբ վտարված հույների թիվը: Ղեռնս այդ ժամանակ թուրքական աղբյուրները պնդում էին, որ Օսմանյան կայսրությունից գաղթել են միայն 1000 հույներ, ընդամին՝ իրենց սեփական ցանկությամբ և թուրքական վարչության կամքին հակառակ<sup>177</sup>: Նույնն է կրկնում նաև Բայուրը, որը փորձում է հավաստիացնել, թե գաղթել են ընդամենը. «մի խումբ հույներ»<sup>178</sup>: Մինչդեռ, հենց նույնի վկայակոչած աղբյուրներից մեկում, բռնությամբ արտագաղթված հույների թիվը հասնում է մոտ 100 հազարի, որը նույնպես նվազեցված է և չի համապատասխանում իրականությանը, որը, սակայն, որոշակի պատկերացում է տալիս այդ ահավոր իրադարձությունների մասին<sup>179</sup>:

Հակահունական կամպանիայի ու Էգեյան ծովի կղզիների շուրջը սրված հարաբերությունների ընթացքում թուրքական կառավարողները շիկացնում էին պատերազմի մթնոլորտը՝ ունանշի տրամադրություններ բորբոքելով մասնավորապես Հունաստանի դեմ: Պետական խորհրդի նախագահ Խալիլ Բեյը մայիսի 19-ին ելույթ ունենալով պառլամենտում, կոչ արեց վերագրավել այն բոլոր տերիտորիաները, որոնք բալկանյան պատերազմների հետևանքով անջատվել էին Թուրքիայից: «Կխնդրեմ մեր ուսուցիչներին, մեր խմբագիրներին և մեր բանաստեղծներին ու մեր բոլոր մտավորականությունից, որ իրենց դասերով, իրենց գրություններով, իրենց բարոյական ամբողջ ազդեցությամբ միշտ հիշեցնեն ներկա և ապագա սերունդներին թե սահմանագլխին մյուս կողմը փրկելիք եղբայրներ, ազատելիք հայրենիքի բեկորներ կան»<sup>180</sup>:

4. Պոլսում տեղի էին ունենում սպայական խառնաժողովներ, որտեղ երիտթուրքերը բորբոքում էին ռեանշի, իմպերիալիստական զավթումների տրամադրություններ: Այդ ռազմամոլական հավաքներում ցուցադրվում էր Օսմանյան կայսրության հսկա պատմական քարտեզը, որտեղ սև գույնով նշված էին երկու հարյուր տարիների ընթացքում կայսրության կրած տարածքային կորուստները: Այդպիսի ժողովները, ուր սովոր-

<sup>177</sup> Տե՛ս «Правительственный вестник», 31, V.(13.VI), 1914:

<sup>178</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 251:

<sup>179</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>180</sup> Տե՛ս «Ազատամարտ», 7(20). 5. 1914:



րաբար նախագահում էր ռազմական մինիստր Էնվերը, ընթանում էին Օսմանյան կայսրության նախկին հզորությունը և տերիտորիալ ամբողջականությունը վերականգնելու, նոր գաղթումներ կատարելու նշանաբանով<sup>181</sup>:

Թուրքական բուրժուական նացիոնալիզմի շովինիստական դոկտրինաների (թյուրքիզմ, պանթյուրքիզմ, պանթուրանիզմ, պանիսլամիզմ), իմպերիալիստական գաղթումների մոլեռանդ պրոպագանդայով էին զբաղված այսպես կոչված «թուրքական օջախները»՝ «Թյուրք դերնեյի», «Թյուրք յուրդու» և այլ պաշտոնական քաղաքական ակումբներ, որոնք անմիջականորեն ղեկավարվում և ֆինանսավորվում էին երիտթուրքական կառավարության կողմից:

Իմպերիալիստական գաղթումների, միլիտարիզմի և մոլի ազգայնականության պրոպագանդան զուգակցվում էր ռազմական նախապատրաստություններով: Սոտ ապագայում համալրելով իրենց նավատորմը Անգլիայում կառուցվող ռազմանավերով՝ թուրքերը հույս ունեին ամենամոտ ժամանակում ջախջախել Հունաստանի տիրապետությունը Էգեյան ծովում և վերագրավել կղզիները: Ռազմական նախապատրաստությունների հետևանքով 1914 թ. վերջին Թուրքիան ուժեղ էր լինելու նաև ցամաքային ուժերով<sup>182</sup>:

Նկատի ունենալով Թուրքիայի դեմ պատերազմի հավանականությունը՝ հունական կառավարությունը խորհրդակցության կարգով դիմեց իր դաշնակից Սերբիային՝ ռազմական գործողությունների հնարավոր պարագայում նրա դիրքորոշումը պարզելու համար: Սերբիան, նշված է Բելգրադից տրված պատասխանում, թե՛ նյութական և թե՛ ֆինանսական առումով ուժասպառվել և հյուծվել է բալկանյան պատերազմների հետևանքով, ուստի ամեն տեսակի բարդությունները, առավել ևս ռազմական գործողությունները իր համար խիստ անցանկալի են: Պաշիչի կառավարությունը շեշտում էր, որ հույն-սերբական դաշինքը նպատակ ունի պահպանել Բուխարեստի պայմանագրով Բալկաններում հաստատված քաղաքական հավասարակշռությունը, որը «ուղղակիորեն համապա-

<sup>181</sup> St' u Capitaine H. Seignobosc, նշվ. աշխ., էջ 41:

<sup>182</sup> ЦГАБМФ, ф. 418, оп. 1, д. № 4258, л. 58.



տասխանում է Սերբիայի ու Ռումինիայի շահերին»<sup>183</sup>։ Նշանակում է, որ Թուրքիայում կատարվող հակահունական հալածանքները հարվածի տակ չէին դնում երկրորդ բալկանյան պատերազմի քաղաքական արդյունքները և, հետևաբար, չէին կարող Թուրքիայի դեմ պատերազմի առիթ հանդիսանալ ո՛չ Սերբիայի և ո՛չ էլ Ռումինիայի համար։ «Փ. Ասիայում թուրքերի կողմից հույների հալածանքները, — նշված էր սերբական պատասխանում, — զուտ հունական խնդիր են և դաշնակից բալկանյան երկրների համար կարևորություն չեն ներկայացնում»<sup>184</sup>։ Բելգրադի կառավարությունը նշում էր, որ Հունաստանը վերջնագիր ներկայացնելով Թուրքիային, այնուամենայնիվ չի սպառել նրա վրա ազդելու բոլոր միջոցները, օրինակ՝ հակահունական հալածանքները դադարեցնելու խընդրանքով չի դիմել եվրոպական տերությունների միջամտությանը<sup>185</sup>։

Տվյալ հարցում պարզաբանելով իր դիրքորոշումը՝ սերբական կառավարությունը, այնուամենայնիվ, որպես Հունաստանի դաշնակից, դիմում է եվրոպական տերություններին՝ խընդրելով նրանց հանդես գալ ի պաշտպանություն հույն ժողովրդի։ Սիաժամանակ, Պաշիչի կառավարությունը նոտա է հղում Թուրքիային՝ խորհուրդ տալով վճռական միջոցներ ձեռնարկել դադարեցնելու հույների նկատմամբ կատարվող հալածանքները<sup>186</sup>։

Հույն-թուրքական հարաբերությունների ծայրահեղ լարվածության այդ շրջանում վճռական նշանակություն ունեցավ Ռուսաստանի դիվանագիտական միջամտությունը։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսը բազմիցս նախազգուշացրեց երիտթուրքական կառավարությանը այն լուրջ հետևանքների մասին, որ սպառնում էին Թուրքիային՝ Հունաստանի դեմ պատերազմ սկսելու և հակահունական հալածանքները շարունակելու դեպքում։ «Թուրքական կառավարությունը հարկադրում է մեզ նրա հանդեպ կրկին փոխելու մեր բարյացակամ հարա-

<sup>183</sup> МОЭИ, с. 3, (1914—1917), т. 3 (14.5—27.6.1914), № 284, стр. 335—336. Военный агент в Сербии в отдел ген.-квартирмейстера Генштаба от 16/3 июня 1914 г.

<sup>184</sup> Նույն տեղում, էջ 336։

<sup>185</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>186</sup> Տե՛ս E. Venizelos, նշվ. աշխ., էջ 170—171։



բերությունները՝ ուղղափառ բնակչության նկատմամբ նրա միանգամայն անհանդուրժելի վերաբերմունքի պատճառով» — մեծ վեզիրին հայտարարեց Գիրսը<sup>187</sup>։ Միաժամանակ, ռուսական կառավարությունը Հունաստանի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ լարված միջազգային իրադրության պայմաններում պատերազմը Թուրքիայի դեմ կարող է կործանարար հետևանքներ ունենալ Օսմանյան կայսրությունում բնակվող հույն բնակչության համար։ Երիտթուրքերը պարզապես կօգտվեին Հունաստանի դեմ մղած պատերազմից՝ հունական բնակչության զանգվածային կոտորածներ կազմակերպելու համար։ «Հունաստանի ռազմական ելույթը կարող է սոսկ վատթարացնել հույների վիճակը Թուրքիայում՝ առաջացնելով արյունալի հալածանքներ», — նախազգուշացնում էր Սազոնովը<sup>188</sup>։

Ռուսաստանը մտահոգված էր նաև արևմտահայության ճակատագրով։ 1912 թ. դեկտեմբերին կրկին իր ձեռքը վերցնելով հայկական բարենորոգումների նախաձեռնությունը՝ ռուսական կառավարությունը, իր քաղաքական շահերից ելնելով, նույնպես չէր կարող հանդուրժել հայ ժողովրդի նկատմամբ կատարվող հալածանքները։ «Թուրքական կառավարության կողմից հայերի հանդեպ նման միջոցառումների կրկնումը մեզ համար առավել ևս անցանկալի է», — շեշտում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը<sup>189</sup>։

Բալկանների, Մերձավոր ու Միջին Արևելքի համար մղվող պայքարում իմպերիալիստական տերությունները, ելնելով իրենց տնտեսական, քաղաքական ու ռազմական շահերից, ջանում էին կասեցնել թուրք-հունական բախումը։ Այդ ուղղությամբ առանձնապես մեծ ջանքեր էին գործադրում Գերմանիան ու Անգլիան։

Հունաստանի և Թուրքիայի միջև համաձայնություն կայացնելու մտադրությամբ, Վենիզելուսի անմիջական հավանությամբ, 1914 թ. հունիսի վերջին Աթենքից Կ. Պոլիս մեկնեց անգլիա-

<sup>187</sup> МОЭИ, с. III, т. 3 (14.V—27, VI.1914), № 263, прим. 2, стр. 311, Гирс-Сазонову, от 8 июня (26 мая), 1914.

<sup>188</sup> Նույն տեղում, № 269, էջ 316, Սազոնովը Ներատովին, 16/3 հուլիսի, 1914 թ.։

<sup>189</sup> Նույն տեղում, № 325, էջ 375, Սազոնովը՝ Գիրսին, 22/9 հունիսի, 1914 թ.։



ցի հայտնի հասարակական գործիչ ու լրագրող Դիլլոնը: Թա-  
լեաթը առաջարկեց ընդունել Էգեյան ծովի կղզիներում թուր-  
քական գերիշխանությունը և պաշտպանական դաշինք կնքել  
երկու երկրների միջև<sup>190</sup>:

Երիտթուրքերը, այնուամենայնիվ, «համաձայնվում» էին  
կղզիներին շնորհել «ինքնավարության» իրավունք՝ սուլթանի  
գերիշխանության ներքո: Նրանց ներկայացրած բոլոր պայ-  
մանները փաստորեն հանգում էին Էգեյան ծովի կղզիներում  
Թուրքիայի ռազմաքաղաքական գերիշխանության պահպան-  
մանը<sup>191</sup>: Իրականում թուրքական կառավարությունը խուսա-  
փում էր կղզիների հարցում Հունաստանի հետ համաձայնու-  
թյան գալուց՝ փայփայելով մոտ ապագայում դրանք վերագրա-  
վելու նպատակը և գերադասում էր դաշինքը Բուլղարիայի  
հետ<sup>192</sup>: Այդ էր պատճառը, որ հուլիսի 15-ին թուրքերը հրա-  
ժարվեցին քննարկել կղզիների հարցը, փաստարկելով, որ  
Հունաստանի ներկայացրած առաջարկները անընդունելի են<sup>193</sup>:

Այնուամենայնիվ, քաղաքական տարբեր շարժառիթներով  
և ժամանակ շահելու միտումով երիտթուրքերը շարունակում  
էին դրսևորել Հունաստանի հետ համաձայնության գալու պատ-  
րանք: Դեռևս Դիլլոնի ներկայացրած պայմանները քննարկե-  
լիս թուրքական կառավարությունը Անգլիայի պնդմամբ «հա-  
մաձայնվել» էր այդ բանակցությունները վարել բարձր մակար-  
դակով: Ուստի որոշվել էր, որ կղզիների հարցի և ընդհանրա-  
պես թուրք-հունական համաձայնության ու դաշինքի շուրջ  
բանակցությունները Վենիզելոսի հետ անմիջականորեն պետք  
է վարել Թալեաթը: Բայց հուլիսի 12-ին հայտնի դարձավ, որ  
«եռապետության» անդամ, կայսրության ներքին գործերի ազ-  
դեցիկ մինիստրին բանակցություններում փոխարինելու էր մեծ  
վեզիր Սաիդ Հալիմ փաշան: Այդ փոփոխությունը դժգոհու-  
թյամբ ընդունվեց հունական կառավարության կողմից, որով-  
հետև Օսմանյան կայսրության սադրազամը պետական խըն-  
դիրներում փաստորեն նախաձեռնության իրավասություն և  
հեղինակություն չունեի: «Օսմանյան պետության փաստական

<sup>190</sup> Տե՛ս Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 267:

<sup>191</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 267—267:

<sup>192</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 268:

<sup>193</sup> Տե՛ս նույն տեղում:



դեկավարը Թալեաթ Բեյն էր, իսկ Սաիդ Հալիմ փաշան՝ սոսկ նրա կամակատարը»<sup>194</sup>, — նշված է թուրքական պատմագրության մեջ:

Երկու երկրների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որոշվեց հուլիս-թուրքական բարձր մակարդակով բանակցությունները անցկացնել Բելգիայի մայրաքաղաքում՝ Բրյուսելում: Հուլիսի 16-ին Աթենք ուղարկված հեռագրում մեծ վեգիրը շեշտում էր, որ երկու երկրների միջև «լուրջ ու երկարատև համաձայնության» միակ ու վերջնական պայմանը Հունաստանի կողմից Էգեյան ծովի կղզիներում Թուրքիայի գերիշխանության ճանաչումն է<sup>195</sup>:

Մինչ հուլիսի 21-ին Վենիզելոսը դուրս կգար Աթենքից Բրյուսել մեկնելու համար, հունիսի 28-ին Սարանդյում ավստրիական թագաժառանգ, երցհերցոգ Ֆրանց Ֆերդինանդի սպանության առիթով Եվրոպայում արդեն ծավալվում էին այնպիսի քաղաքական իրադարձություններ, որոնք հղի էին անխուսափելի պատերազմի վտանգով: Նման պայմաններում իմպերիալիստական երկու խմբավորումներից որևէ մեկին միանալու անհրաժեշտությունը երիտթուրքերի համար ստանում էր հրատապ քաղաքական նշանակություն: Մյուս կողմից, մոտավորապես պատերազմում Թուրքիայի մասնակցությունը հաշվի էր առնվում իմպերիալիստական տերությունների կողմից: Ուստի և Անտանտն ու Եռյակ դաշինքը սկսեցին շոշափել Թուրքիան իրենց ռազմաքաղաքական ոլորտը ներգրավելու հնարավորությունները:

Հունիսի վերջին ֆրանսիական կառավարության հրավերով, «եռապետության» անդամ Ջեմալ փաշան պաշտոնական այցով մեկնեց Փարիզ՝ ֆրանս-թուրքական հարաբերություններին նվիրված հարցերը քննարկելու համար: Թուրքական կառավարությունը, մասնավորապես Ջեմալը, այդ հրավերն ընդունեց «մեծագույն հաճությամբ»<sup>196</sup>: Թուրքական կառավարող շրջաններն որոշեցին այդ առաքելությունն օգտագործել հիմնականում Էգեյան ծովի կղզիների հարցը հօգուտ իրենց լուծելու նպատակով: «... Մենք օգտվում ենք լուրաքանչյուր հար-

<sup>194</sup> Y. H. Bayur, նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 269:

<sup>195</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 270:

<sup>196</sup> Տե՛ս Джемаль паша, նշվ. աշխ., էջ 85:



մար առիթից, որպեսզի ամրապնդենք մեր բարեկամությունը Ֆրանսիայի հետ, հուսալով մեզ համար չափազանցորեն կարևոր կղզիների հարցի լուծման գործում ստանալ նրա օգնությունը, — ասում էր Ջեմալ փաշային մեծ վեզիրը, — Դուք պետք է անեք ամեն հնարավորը, որպեսզի այդ փափուկ հարցի շուրջը հրավիրեք Ֆրանսիական արագորժմինիստրության ամենալուրջ ուշադրությունը»<sup>197</sup>:

Հուլիսի առաջին օրերին ժամանելով Փարիզ, Ջեմալ փաշան մի քանի անգամ այցելեց Ֆրանսիական կառավարության ղեկավար և արտաքին գործերի մինիստր Վիլիամին: «Արդյոք նա իրոք անկեղծ էր, թե գործում էր պարզապես նրա համար, որպեսզի ալիքի ստանա եռապետության համար, անհայտ է», — կասկածի տակ է առնում Ջեմալի առաքելության անկեղծությունը անգլիացի պատմաբան Գոտլիբը<sup>198</sup>: Պետք է ենթադրել, որ հավանաբար այդպես է մտածել նաև Վիլիամին: Պատրվակելով իր անչափ ծանրաբեռնվածությունը, նա Ջեմալին ուղարկում է արտաքին գործերի մինիստրության քաղաքական ղեկարտամենտի դիրեկտոր Մարժերիի մոտ, տալով վերջինիս անհրաժեշտ ցուցումներ: Հանդիպելով Մարժերիի հետ, Ջեմալը եռանդագին կերպով սկսում է ապացուցել այն օգուտները, որ կարող է ունենալ Անտանտը՝ ստանալով Օսմանյան կայսրության դաշնակցությունը:

«Ամենից առաջ ես կցանկանայի շոշափել կղզիների հարցը, — Մարժերիին է դիմում նա, — որոնք կռվախնձոր են համարվում մեր և հույների միջև: Դուք անհրաժեշտ եք համարում օգնել հույներին, հուսալով, ըստ երևույթին, որ ապագայում նրանք օգտակար կլինեն ձեզ: Հենց որ դուք պաշտպանեք մեր մի քանի պահանջները, հանձինս մեզ դուք Արեւելքում շուտով կունենաք հավատարիմ դաշնակից»<sup>199</sup>:

Մարժերիի այն հարցին, թե կղզիների խնդրում ինչպիսի լուծում կարող է բավարարել թուրքական կառավարությանը, Ջեմալ փաշան պատասխանում է. «Արշիպելագի բոլոր կղզի-

<sup>197</sup> Նույն տեղում:

<sup>198</sup> В. В. Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, стр. 48.

<sup>199</sup> Джемаль паша, նշվ. աշխ., էջ 87:



գիները, ներառյալ նաև Ռոդեկանեզյան կղզիները պետք է տրվեն Թուրքիային»<sup>200</sup>:

Անգլիայի ու Ֆրանսիայի տեսանկյունից թուրքական կառավարության պահանջները անընդունելի էին: Կղզիների հարցի այդօրինակ լուծումը իրենցից կհեռացներ Հունաստանին, մի հանգամանք, որ չէր համապատասխանում Անտանտի շահերին: Քաղաքական այլ հանգամանքներ ևս, ինչպես, օրինակ, երիտթուրքերի մեծամասնության գերմանական քաղաքական կողմնորոշումը և 1913 թ. հունվարյան հեղաշրջումով ամրապնդված գերմանա-թուրքական ռազմաքաղաքական սերտ համագործակցությունը, խոսում էին ոչ հօգուտ թուրքերի: Այդ էր պատճառը, որ Մարտերին խուսափեց հետագա բանակցություններից: Նրա աշխատակիցները, սպասելով պրեզիդենտ Պուանկարեի և Վիլիհանիի պետերբուրգյան այցելության արդյունքներին, հրաժարվեցին Թուրքիայի հանդեպ որևէ պարտավորություն վերցնելուց:

Փարիզում կրած դիվանագիտական անհաջողությունը ամենևին չվիատեցրեց երիտթուրքերին: Վերջին հաշվով նրանք, մասնավորապես գերմանական կողմնորոշման ջատագովները, գերադասում էին դաշինքը Կենտրոնական տերությունների խմբավորման հետ, որի ռազմական հզորության միջոցով հույս ունեին իրականացնել իրենց զավթողական պլանները և ամրապնդել իրենց երեքուն վիճակը երկրի ներսում: Քաղաքական ու դիվանագիտական շրջաններում «ֆրանկոֆիլ» հորջորջված Ջեմալ փաշան ներքուստ գերմանական կողմնորոշման համոզված կողմնակից էր: Հետագայում գերմանա-թուրքական գաղտնի ռազմական դաշինքը Թուրքիայի համար նա անվերապահորեն գնահատեց որպես «մեծագույն պետական կարևորություն ներկայացնող իրողություն»<sup>201</sup>:

Բացահայտելով գերմանական խմբավորման հետ Թուրքիայի դաշնակցելու անհրաժեշտությունը, Ջեմալ փաշան գրում էր. «Նախ և առաջ, դաշնակցելով Գերմանիայի ու Ավստրիայի հետ, բալկանյան փոքր երկրներից և ոչ մեկը չէր համարձակվի խառնվել այդպիսի հզոր տերությունների հետ դաշնակցած երկրի ներքին գործերին. համենայն դեպս, նրանք մեզ հանգիստ կթողներին:

<sup>200</sup> Նույն տեղում:

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 91:



Երկրորդ. Անտանտի երկրներից և ոչ մեկը չէր համար-  
ձակվի ձեռք դնել մեր վրա՝ վախենալով համաեվրոպական  
պատերազմից»<sup>202</sup>:

Գերմանա-թուրքական դաշինքը, այդպիսով, ուղղվելու էր  
Ռուսաստանի, բալկանյան երկրների և ազգային-ազատագրա-  
կան շարժումների դեմ:

Դաշնակցելով Գերմանիայի հետ, երիտթուրքերը հետա-  
պնդում էին նաև տնտեսական մեծ նպատակներ: «Գերմանա-  
կան գիտությունը, նրա տեխնիկան և առևտրական փորձը  
օգնության կգային Թուրքիային»<sup>203</sup>, — գրում է նա:

Դեռևս 1913 թ. վերջին Թալեաթը գերմանական դեսպան  
Վանգենհայմին արտահայտել էր Գերմանիայի հետ ռազմա-  
կան դաշինք կնքելու թուրքական կառավարության ցանկու-  
թյունը<sup>204</sup>: Սակայն կալգերական կառավարությունը պատաս-  
խանել էր, որ Թուրքիան դեռևս ռազմունակ չէ և որ ստեղծ-  
ված քաղաքական հանգամանքներում թուրք-գերմանական դա-  
շինքը նպատակահարմար չի համարվում<sup>205</sup>:

1914 թ. ամռանը Սարաևոյում տեղի ունեցած սպանու-  
թյամբ սկսված հուլիսյան միջազգային ճգնաժամը մեծ հույ-  
սեր ներշնչեց երտիթուրքերին, որոնք համոզված էին, որ  
Բալկաններում բռնկված քաղաքական իրադարձությունները  
լայն հեռանկարներ կբացեն իրենց զավթողական պլանների  
իրականացման համար: «Ստեղծված լուրջ իրադրությունը թե-  
լադրում էր Թուրքիային հմտորեն հարմարվել իրավիճակին՝  
ըստ հնարավորին լավագույն ձևով օգտվելու եվրոպական  
պայթյունից»<sup>206</sup>, — երիտթուրքական դիվանագիտության հիմ-  
նական խնդրի մասին գրել է գեներալ Մահմուդ Մուիթար փա-  
շան: «Երիտթուրքերը համոզված են, — հուլիսի 22-ին Բեռ-  
լին ուղարկած իր հեռագրում հաղորդում էր Վանգենհայմը, —  
որ ռազմական առումով Եռյակ դաշինքն ավելի հզոր է, քան  
Անտանտը, և որ պատերազմի դեպքում Եռյակ դաշինքի հաղ-  
թանակը ապահովված է»<sup>207</sup>:

<sup>202</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>203</sup> Նույն տեղում:

<sup>204</sup> Տե՛ս Gén. M. Moukhtar, նշվ. աշխ., էջ 251:

<sup>205</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>206</sup> Նույն տեղում, էջ 256:

<sup>207</sup> A. F. Frangulis, նշվ. աշխ., էջ 116:



Սարաւոյի քաղաքական իրադարձություններով ծալրաստիճան սրված ավստրո-սերբական հարաբերությունները ակնբխաբար են հղի էին վերահաս պատերազմի վտանգով և անխուսափելիորեն հանգեցնելու էին եվրոպական երկու խնդրավորումների ռազմական ընդհարմանը: Իրադարձությունների ծավալման արդալիսի հեռանկարը այժմ ստիպում էր գերմանական խմբավորմանը շուտափույթ կերպով Թուրքիային ներքաշել Եռյակ դաշինքի ռազմաքաղաքական ոլորտը, որին անհամբերությամբ ձգտում էր երիտթուրքական կառավարող շրջանների մեծամասնությունը: Այդ հանգամանքը չէր կարող անմիջականորեն չանդրադառնալ Բրյուսելում կայանալիք բարձր մակարդակի հույն-թուրքական բանակցությունների վրա:

Հուլիսյան ձգնաժամի շրջանում, գրում է Բայուրը, Սերբիային բնաջնջելու որոշում կայացրած Գերմանիան և Ավստրիան Աթենքում և Ստամբուլում կատարեցին մի շարք դիվանագիտական ելույթներ, որի հետևանքով թուրք-հունական բանակցություններն այլ ընթացք ստացան<sup>208</sup>:

Հուլիսի 23-ին Աթենքի գերմանական դեսպանին ուղղած հեռագրում կանցլեր Բետման-Հոլվեգը նշում էր, որ Եվրոպայում ստեղծված քաղաքական լուրջ իրադրության պայմաններում գերմանական խմբավորման շահերը պահանջում են Հունաստանի հեռացումը իր դաշնակից Սերբիայից, այլապես հույն-թուրքական համաձայնության իրականացումը խիստ կասկածելի է թվում: Միաժամանակ, Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինին Սաիդ Հալիմին խորհուրդ տվեց խուսափել դեպի Անտանտը կողմնորոշվող Հունաստանի հետ որևէ համաձայնություն կայացնելուց՝ զգուշացնելով, որ հակառակ պարագայում Թուրքիան կհայտնվի շատ ծանր և անելանելի կացության մեջ, առանձնապես Եռյակ դաշինքին Բուլղարիայի միանալու խիստ հավանական հանգամանքներում<sup>209</sup>:

Հասունացող պատերազմում Թուրքիային Եռյակ դաշինքի ռազմաքաղաքական ոլորտը ներգրավելու խնդիրը գերմանական դիվանագիտության համար ստացել էր խիստ հրատապ ու կարևորագույն նշանակություն: 1914 թ. հուլիսի 5-ին Վի-

<sup>208</sup> St' u Y. H. Bayur, Նշվ. աշխ., հ. 2, մ. 3, էջ 271:

<sup>209</sup> St' u Նույն տեղում:



հելմ II Նախագահությամբ Պոտսդամում կայացած խորհրդակցության ժամանակ ի թիվս այլ հրատապ ռազմաքաղաքական հարցերի, քննարկվեց նաև ապագա պատերազմում Թուրքիայի՝ որպես Գերմանիայի հավանական դաշնակցի մասնակցության իրական հնարավորությունը: Խորհրդակցությանը հատկապես կանչված Կ. Պոլսի դեսպան Վանգենհայմին հրահանգվեց ամենայն ճշմարտացիությամբ ու հանգամանորեն զեկուցել Թուրքիայի ընդհանուր կացության մասին<sup>210</sup>:

Ախժամանակ, դեպի Գերմանիան քաղաքականապես կողմնորոշված երիտթուրքերը տենդորեն շտապում էին: Հուլիսի 22-ին ռազմական մինիստր Էնվեր փաշան անմիջականորեն դիմեց Վանգենհայմին՝ Եռյակ դաշինքին Թուրքիայի միանալու բացահայտ առաջարկությամբ: Հաջորդ օրը, հուլիսի 23-ին, Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան նույն առաջարկությունը պաշտոնապես ներկայացրեց Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալլավիչինին, շեշտելով, որ Թուրքիան Եռյակ դաշինքի օգնությունն է խնդրում միայն ու միայն Ռուսաստանի դեմ<sup>211</sup>: Պատասխանը Բեռլինից չուշացավ: Հուլիսի 24-ին, Վիլհելմ II-ի անմիջական հրահանգով Վանգենհայմը երիտթուրքական պարագլուխներին հայտարարեց գերմանաթուրքական ռազմական դաշինք կնքելու գերմանական կառավարության պատրաստակամության մասին<sup>212</sup>:

Սակայն կայզերական կառավարությունը, որպես ռազմական դաշինքի անհրաժեշտ ու կարևորագույն պայման, պահանջում էր, որպեսզի Ռուսաստանի դեմ մղվելիք պատերազմում թուրքական բանակի բարձրագույն ղեկավարությունը և հինգ բանակային կորպուսների հրամանատարությունը անպայմանորեն հանձնվեր գերմանական ռազմական միսիայի սպաներին: Վանգենհայմը, որ այս պահանջի հեղինակն էր, Բեռլին ուղարկած իր զեկուցագրում նշում էր նաև այն կարևոր հանգամանքը, որ թուրքական բանակում գերմանական ռազմական միսիայի գերիշխող դերը պատերազմի դեպքում կստիպի Թուրքիային անշեղորեն կատարելու ռազմական դա-

<sup>210</sup> St' u H. Morgenthau, նշվ. աշխ., էջ 81:

<sup>211</sup> St' u M. Bompard, L'entrée en guerre de la Turquie, "Revue de Paris", № 13, 1-er juillet, P., 1921, էջ 81—83:

<sup>212</sup> St' u Gén. M. Moukhtar, նշվ. աշխ., էջ 251:



շինքի պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները<sup>213</sup>:

Հուլիսի 27-ին Կ. Պոլսում պաշտոնապես սկսվեցին գերմանա-թուրքական ռազմական դաշինքի խիստ գաղտնի բանակցությունները:

Հուլիսի 28-ին մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան սուլթան Մեհմեդ Ռեշադի անունից Վանգենհայմին ներկայացրեց Ռուսաստանի դեմ գաղտնի ռազմական դաշինք կնքելու պաշտոնական առաջարկությունը, որի պայմանները մշակել էին Էնվերը և Թուրքիայում գերմանական ռազմական միսիայի ղեկավար, գեներալ Լիման ֆոն Սանդերսը:

Սուլթանական կառավարությունը պարտավորվում էր պատերազմի հռչակման առաջին օրն իսկ գերմանական ռազմական ներկայացուցչությանը հանձնել թուրքական բանակի բարձրագույն ղեկավարությունը և թուրքական բանակի քառորդ մասը կազմող զորամասերի փաստական հրամանատարությունը: Թուրքիան Գերմանիայից չէր պահանջում ոչ ռազմական և ոչ էլ ֆինանսական օգնություն: Չէր ժխտվում նաև պատերազմը անջատ հաշտությամբ ավարտելու հնարավորությունը: Այդ պայմանագիրը ուժի մեջ պետք է մտներ Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելու կամ Եռյակ դաշինքի տերությունների, ինչպես նաև Թուրքիայի դեմ Ռուսաստանի հանդես գալու դեպքում<sup>214</sup>:

Գերմանա-թուրքական բանակցություններն ընթանում էին միջազգային հարաբերությունների խիստ լարված մթնոլորտում: Հուլիսի 28-ին Եռյակ դաշինքի անդամ Ավստրո-Հունգարիան ռազմական գործողություններ սկսեց Սերբիայի դեմ: Հուլիսի 31-ին Ռուսաստանում հայտարարվեց ընդհանուր զորակոչ, իսկ օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին:

